ԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

894·362
Ա-21

ՊԵՏՀՐԱՏ

ՀՍԽՀ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ★ 1933

-6 NOV 2011
894.362
Ա-21

ԱԴՐԲԵՋԱՆՑԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՏՈԼՈԳԻԱ

ГОС. П. БИБ-КА АРМ. С. С. Р.
ОБМЕННЫЙ ФОНД
ИМ. А. МЯСНИКЯНА

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ★ 1933

- .01. 2013

73.640

Պատասխանատու խմբագիր' [redacted] Գ. ՌՈՍ
Տեխնիկական խմբագիր' Տ. ԽԱՉՎԱՆՔՅԱՆ

Պետհրատի տպարան.
պատվեր № 3188.
հրատ. № 2399.
գլավլ. 7968.
տիրաժ
2000

ՀՍԽՀ-ССР

6098
41

ՊԵՏՀՐԱՏԻ ԿՈՂՄԻՑ

Ադրբեջանյան ժամանակակից խորհրդային գրականությունը խոշոր նվաճումներ է ունեցել վերջին մի քանի տարիների ընթացքում: Մեր բանվորական և աշխատավորական ընթերցող մասսաները հատ ու կենտ թարգմանությունների միջոցով հնարավորություն չունեն կանոնավոր կերպով հետևելու հարևան հանրապետության գրական նվաճումներին:

Պարբերական մամուլի էջերում թարգմանաբար տրվող պատահական յերկերը անտարակույս չեյին կարող տալ Ադրբեջանի ժամանակակից գրականության թեկուզ մոտավոր պատկերը: Լիահույս ենք, վոր ընթերցողների ուշադրությանը հանձնարարվող գրական անտոլոգիան վորպես այդ ուղղությամբ ձեռնարկվող առաջին փորձը, հնարավոր թերություններով հանդերձ մեր ընթերցողին առաջին անգամ հնարավորություն կտա թեկուզ ընդհանուր գծերով գաղափար կազմելու այդ գրականության մասին:

Մեզանից անկախ պատճառներով հնարավոր չեղավ կցել անտոլոգիային մի քիչ թե շատ ամփոփ գրական-քննադատական ակնարկ Ադրբեջանի ժամանակակից գրականության մասին: Մեր բոլոր ձեռնարկումներն այդ ուղղությամբ չտվին վոչ մի արդյունք և միայն ձգձգեցին, համարյա մեկ տարուց ավելի, անտոլոգիայի հրատարակությունը:

Լույս ընծայելով անտոլոգիան առանց առաջաբանի, մենք համոզված ենք, վոր այստեղ զետեղված գրական յերկերը իրենք, առանց առաջաբանի էլ, կտան ուշադիր ընթերցողին Ադրբեջանի ժամանակակից գրականության մեջ գոյություն ունեցող ուղղությունների և տենդենցների մասին ևս վորոշ գաղափար:

Վերջում ավելորդ չենք համարում հայտարարել, վոր անտոլոգիայում զետեղված նյութերը հանձնարարված են Պետհրատին Ադրբեջանի գրական համապատասխան հիմնարկների կողմից:

—

ԱԴՐԲԵՋԱՆՑԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս. ԶՑՈՒՍԵՑԻՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԸ

Այս մինիստրը հիմա՛ էլ ապրում է: Ադրբեջանի ժողովրդի անունից, Յեվրոպայում «աշխատող» Թոփչի-Բաշիյ և Մեհեմմեդ Եմին ընկերությունների հետ՝ «գործ է տեսնում»...

1.

Այն օրը գյուղում լուր տարածվեց, թե պրիստավը գալիս է ժողովրդին զինվորագրելու...

Ամեն վոք սարսափում էր այդ լուրից:

Գյուղում տիրող սարսափից ու իրարանցումից անտեղյակ էր միայն Շյուքուրը, վոր մի շաբաթ առաջ հրավիրված էր գյուղում ուսուցչություն անելու, բայց՝ գյուղապետի դժգոհության պատճառով՝ դեռ գործի չէր անցել: Նա կարծում էր, վոր գյուղի այդ խռովահույզ դրության պատճառը զինվորագրության լուրը կլինի միայն:

Շյուքուրը մոտեցավ Բալա անունով մի մարդու, վորը՝ տան դռան առաջ կանգնած՝ շտապ կերպով տրեխներն էր հագնում: Շյուքուրը շատ պարտականություններ ուներ: Նա կանչված էր գյուղում տարածելու գիտության լույսը: Նրա պարտքն էր հասկացնել գյուղացիներին, վոր զինվորագրությունից իսկի էլ չպետք է վախենալ:

— Խեր լինի, Բալա, եդ ո՞ւր ես գնում,—հարցրեց Շյուքուրը:

Բալան 40 տարեկան մի գյուղացի յեր: Ծանր տանջանքներով և թշվառությամբ անցկացրած կյանքը փոխել էր նրա դիմագիծը: Կասկածոտ և հարցական աչքերով նայեց Շյուքուրի յերեսին ու ասաց.

— Գնում եմ անտառ:

— Ինչո՞ւ համար:

— Ասում են՝ պրիստավը գալիս է գյուղ:

Ցյուքուրը չկարողացավ հասկանալ, թե պրիստավի գյուղ գալու և Բալայի անտառ գնալու միջև ի՛նչ կապ կա: Իրարու յետևից տված հարցերից իմացավ, վոր Բալան՝ պրիստավի աչքին չերևալու համար՝ մի քանի օրով ուզում է թաքնվել անտառում:

— Իզո՛ւր տեղ ես վախենում պրիստավից: Մանավանդ, վոր դու խեղճ մարդ ես՝ ուրիշին նեղություն չես պատճառում:

Բալան, առանց պատասխանելու, թողեց հեռացավ:

Ցյուքուրն սկսեց կասկածել Բալայի այդ ընթացքի մասին: Հետրքրքրվեց նրա՝ պրիստավից փախչելու և թաքնվելու հանգամանքով: Հարցուփորձ արաց իր տնատեր Գյուլալուն.

— Բալան ինչո՞ւ յե փախչում պրիստավից:

— Դա նրա հին սովորությունն է,—պատասխանեց Գյուլալին: Ամեն անգամ, յերբ պրիստավի կամ կառավարական վորևե պաշտոնյայի գյուղ գալու լուրն է լսում, փախչում է անտառ ու թաքնվում:

— Ինչո՞ւ:

— Պրիստավներից վախենում է:

Ցյուքուրը վերհիշեց նախկին ցարական պրիստավներին և նրանց՝ գյուղում կատարած ապօրինի գործերը: Ապա դառնալով Գյուլալուն՝ ասաց.

— Բալան փախչելու իրավունք չունի: Նա սխալվում է, վոր մեր ազգային կառավարության ներկայացուցչին հավասարեցնում է ցարական չինովնիկների հետ:

Գյուլալին լռությամբ ընդունեց Ցյուքուրի խոսքերը և, առանց պատասխանելու՝ թողեց հեռացավ:

Ցյուքուրն ուզում էր գնալ, խառնվել մզկիթի առաջ հավաքված գյուղացիների հետ, մասնակցել նրանց խոսակցություններին և, վորպես հարմար միջոց՝ խոսել

զինվորության մասին, հրահրել նրանց դեպի ազգային կառավարության պաշտպանման գործը:

Ցյուքուրն այդ մտքերով ծանրաբեռնված՝ գնում էր: Ճանապարհին հանդիպեց գյուղի աղ-սախկալներից Մեշեդի Հասան-ամուն, վոր գնում էր մի ուրիշ տեղ:

— Հասան ամի, եդ ո՞ւր եք գնում:

— Գնում եմ հարևան գյուղը մի փոքր գործով:

— Անհարմար է, վոր դուք այսպիսի ժամանակ գյուղից դուրս եք գալիս: Գյուղը խառնակ դրության մեջ է: Հարկավոր է ժողովրդին բան հասկացնել:

Ցյուքուրը չկարողացավ Մեշեդի Հասան-ամուն ճանապարհից հետ դարձնել: Հավատաց, վոր նա էլ Բալայի պես ուզում էր գյուղից հեռանալ, վորպեսզի պրիստավի աչքին չերևար:

— Կարելի յե՝ դո՞ւք էլ պրիստավից եք փախչում:

Հասան ամին գլխի շարժումով հաստատեց Ցյուքուրի ասածները:

Ցյուքուրին ջղայնացնում էր այս գյուղի ժողովուրդի տգիտությունը: Մեշեդի Հասան-ամու նման մազ ու մորուք սպիտակացրած, փորձառու մի մարդ, վոր ազգային կառավարության պաշտոնյայի և ցարական չինովնիկների մեջ յեղած տարբերությունը չի կարող ըմբռնել, էլ մյուսներն ի՛նչ պիտի հասկանան:

— Նիկոլայի ժամանակվա պրիստավներից փախչելու իրավունք ունեյիք,—ասաց Ցյուքուրը,—վորովհետև նրանք միշտ ձեր արժանապատվությունը, ձեր քաղաքացիական իրավունքները վոտնահարում էյին: Իսկ մեր ազգային կառավարության նպատակն ու գաղափարը բոլորովին ուրիշ է: Նրա քաղաքականությունը ժողովրդի կամքն է: Նման մի կառավարության պաշտոնյաներին համեմատել ցարական պրիստավների հետ՝ վոչ թե սխալ, այլ թերևս՝ մեծ անխղճություն է:

70-ամյա ծերունի Մեշեդի Հասան-ամին վոր տեսել էր մի շարք պրիստավների և նաչալնիկների, ուշադրությամբ նայելով Ցյուքուրի յերեսին՝ ասաց.

— Տեսնում եմ, վոր լավ, մաքրասիրտ յերիտասարդ ես: Թո՛ղ գնամ իմ գործին, մի հետաձգիր ինձ ճանապարհից:

—Գնալու կարիք չկա:

— Կա՛:

— Ի՞նչն է:

— Պրիստավը գալիս է գյուղ:

— Նրա ով լինելը չես հասկանում: Չէ՞ վոր նա մեր ազգային կառավարության ներկայացուցիչն է:

— Ով ուզում է լինի, ելի պրիստավ է:

Մեշեդի Հասան–ամին, թաթերի բարբառով ավելացրեց նաև հետևյալ առածը·

— Փիադ–փիադ եսթ (սոխը սոխ է):

2·

Շյուքուրը մի շաբաթ է, ինչ յեկել եր գյուղը դպրոց բաց անելու և յերեխաներին կարդացնելու համար: Մինչև հիմա նա վոչինչ չեր արել: Գյուղապետ Քյաբելա Ջեննեթ Ալին ասում եր· «Մինչև նաչալնիկից հարկ յեղած հրամանը չստանամ, վոչինչ անել չեմ կարող»: Իսկ Շյուքուրը, ներկայացնելով լուսավորության մինիստրությունից ստացած հրամանը՝ պնդում եր·

— Այս հրամանը պարտավոր են հարգել թե՛ պրիստավը, թե՛ նաչալնիկը և թե՛ նրանցից բարձր՝ նահանգապետը:

Բայց Շյուքուրի բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Սպասում եր, վոր պրիստավը գա և դպրոց բաց անելու հնարավորություն ստեղծի:

Իրիկնապահին, պրիստավը մի քանի ստրաժնիկների հետ մտավ գյուղը և իջևանեց գյուղապետի հորեղբոր–Քյաբելա Մեհեմմեդ Ջավադի տանը: Պրիստավի հետ յեկել եյին նաև ուրիշ յերկու հոգի, վորոնցից մեկը Զորահավաքի բաժնի կողմից ուղարկված բժիշկն եր:

Շյուքուրը պարզապես տեսնում եր իր շուրջը հավաքված գյուղացիների խռովահույզ դրությունը, վո-

րի պատճառն իմանալու համար Գյուլալուն առանձնացնելով՝ ասաց·

— Ինչո՞ւ համար դժգոհ է ժողովուրդը և իզուր ժամանակ է վատնում:

— Պարոն ուսուցիչ, մեր գյուղում խռովություն կա,—պատասխանեց Գյուլալին: Յեվ սկսեց պատմել բոլոր մանրամասնությունը:

Շյուքուրն իմացավ, վոր գյուղում կա յերկու ընտանիք, վորոնք իրար հետ արյան վրեժ ունեն: Սրանցից մեկը—արու–ել–հասանցիներ են, իսկ մյուսը՝ հաջի ջահանգիրցիներ: Այդ յերկու ընտանիքները, խանության ժամանակաշրջանից մինչև հիմա՝ միշտ ընդհարվել, քաշքշել են իրար: Վրեժխնդրության նպատակով վնասել են միմյանց: Մեկը մյուսի խոտի դեզերն են այրել, կաթնատու կովերը, մատակները և լավ վազող ձիերն են սպանել, գեղեցիկ աղջիկներին ու հարսներին փախցրել: Արյան վրեժխնդրությունը շարունակվում եր մինչև այսոր:

Շյուքուրն ա՛յն էլ իմացավ, վոր գյուղի հանդիստ կյանքը խանգարողները այդ յերկու ընտանիքներն են՝ իրենց անվերջ կռիվներով ու ընդհարումներով: Յեվ վերջապես, այս թշնամական գործողություններից բեզարած գյուղացիները, սրանից 40–45 տարի առաջ մզկիթում յերդում անելուց հետո՝ վորոշում են կայացրել, վոր գյուղում գյուղապետ, միրաբ, դատավոր կամ անտառապետ ընտրելիս՝ աչքի առաջ ունենան այնպիսիների թեկնածությունը, վորոնք այս կամ այն հակառակորդ կողմին պատկանելիս չլինեն: Այս յերկու թայֆաները միշտ էլ հովանավորվել են իրենց մոտիկ ազգականների դիրքից կամ այն հասարակական պաշտոնից, վորին արժանացել են այդ ազգականները, և ոգտվելով հանգամանքից՝ միշտ էլ վնաս են հասցրել մյուս հակառակորդ կողմին, խանգարել են գյուղի ընդհանուր հանգստությունը:

Շյուքուրին զարմացնող մի ուրիշ դեպք էլ կար: Գյուղը, հավատարիմ իր վաղեմի սովորության՝ գյու-

դալետության համար առաջարկել էր բոլորովին չեզոք մի մարդու թեկնածությունը: Իսկ պրիստավը մերժել էր այդ և փոխարենը նշանակել էր մի ուրիշի—Քյարբելա Ջեննեթ Ալուն, վորը՝ լինելով հաջի ջահանգիրցիների մարդկանցից՝ վողջ գյուղի դժգոհությանը պատճառ էր դարձել: Ահա՛ այդ բանը, ամենից շատ, զարմացնում էր Շյուքուրին: Ազգային կառավարության որոշ կատարվող այս դեպքը նա համարում էր մի ապօրինի քայլ՝ ուղղված ժողովրդի կամքի դեմ:

— Գյուղը դժգոհ է Քյարբելա Ջեննեթ Ալու գյուղապետ նշանակվելուց, ասում էր Գյուլալին: Ոգտվելով այդ հանգամանքից, հաջի-ջահանգիրցիները նեղություն պիտի տան արու-ելհասանցիներին, պիտի խանգարեն գյուղի հանգիստ կյանքը:

Շյուքուրը չեր կարող հաշտվել այդ մտքի հետ: Պրիստավը ժողովրդի կամքին հակառակ չեր կարող գործել:

— Բա մինչև հիմա ինչո՞ւ մի տեղ չբողոքեցիք այդ մասին,—հարցրեց Շյուքուրը Գյուլալուց:

— Բողոքել ենք...գյուղացիները մի համախոսական գրությամբ, հատուկ լիազորների միջոցով (ներկայացրված խնդրագրով) դիմել են նահանգապետին, բայց՝ վո՛չ մի հետևանք չի ունեցել:

— Չի կարող պատահել, վոր պատասխան տված չլինեն:

— Այնքան են պատասխանել, թե «դուք գնացեք, մենք մի հանձնաժողովի միջոցով տեղում կստուգենք ձեր ասածները»:

Շյուքուրի յերեսին հույսի մի նշույլ փայլեց:

— Այսօրվա հանձնաժողովը, հավանական է, յեկել է ձեր գործերը քննելու:

— Մենք էլ այդպես կարծեցինք: Բայց հիմա գործը փոխվել է: Պրիստավի և հանձնաժողովի՝ հաջի-ջահանգիրցիներից, Քյարբելա Մեհեմմեդ Ջավադի տանը հյուր լինելուց պարզ կերպով կարելի յե յեզրակացնել, վոր հաջի ջահանգիրցիներն իրենց ուզած մարդկանցը պիտի ընտրեն:

Շյուքուրը, թեև հավատում էր Գյուլալու ասածներին, բայց այնքան էլ կարևորություն չէր ուզում տալ, կարծելով, վոր Գյուլալին՝ արու-ել-հասանցիների թայֆային պատկանելու համար՝ չափազանցրած կլինի իր խոսքերը: Ի՞նչպես կարող է պատահել, վոր կառավարության պաշտոնական ներկայացուցիչը ժողովրդի կամքին հակառակ գործի:

— Այդ մասին բոլորովին չմտածեք—ասաց Շյուքուրը հուսատու տոնով: Հիմա այլևս Նիկոլայի ժամանակը չէ , վոր պրիստավն իր ուզածն անի: Յես ինքս անձամբ կգնամ ու կխոսեմ նրանց հետ:

Շյուքուրն ազգային կառավարության պաշտոնյաներին հավատում էր այնպես, ինչպես իրեն էր հավատում: Բայց Գյուլալին հուսահատեցնելով նրան, ասում էր.

— Դրանից էլ վոչինչ դուրս չի գալու:

— Ինչո՞ւ համար:

— Գիտեմ, վոր վոչինչ չի՛ լինի:

— Վո՞նց թե... եդ վո՞րտեղից գիտես:

Գյուլալին ուզում էր մի բան ասել, բայց տատանվում էր: Քիչ սպասելուց հետո, հանկարծ ավելացրեց.

— Ուզում եք, ձեզ մի բան ասեմ:

— Խնդրե՛մ:

— Գիտե՞ք ինչո՛ւ համար Քյարբելա Ջեննեթ Ալին գյուղի խնդրում ձեզ չի ուզում ողնել:

— Նա սպասում էր պրիստավի գալուն:

— Վո՛չ, պատճառն այդ չէ: Ուրիշ ավելի կարևոր պատճառ կա:

— Այսի՞նքն:

— Այն, վոր դուք իմ տանն եք ապրում, իսկ յես՝ արու-ել-հասանցիներից եմ:

3.

Գյուլալու ասածները ճիշտ դուրս յեկան: Շյուքուրի տեսակցությունը պրիստավի հետ վո՛չ մի արդյունք չունեցավ: Քյարբելա Մեհեմմեդ Ջավադի տանը լավ

չէյին ընդունել Շյուքուրին: Նա զգացել էր ինչ վոր մի թշնամական վերաբերմունք դեպի ինքը: Քյարբելա Մեհեմմեդ Ջավադի վորդի Նիմեթը թույլ չէր տվել, վոր Շյուքուրն իրենց դռնից ներս մտնի: Նույնիսկ մի անծանոթ մարդ սպառնական տոնով այսպես էր ասել.

— Քրոջ վորդի, յեթե ուզում ես այս գյուղում ապահով ապրել, հաջի-ջահանգիրցիների հետ յոլա պետք է գնաս: Քյարբելա Մեհեմմեդ Ջավադն այս գյուղի աստվածն է, ինչ վոր ուզենա՝ կանի: Խե՛ղճ ես:

Այժմ Շյուքուրը Գյուլալու խոսքերին իրավունք էր տալիս: Ճիշտ վոր «գյուղի գլխին մի փորձանք կա»: Հաջի ջահանգիրցիներն ոգտվում էյին պրիստավի վարած կողմնակալ քաղաքականությունից:

Առավոտը շուտ, գյուղի մեջ լուր էր պտտում, թե՝ անցյալ գիշերը պրիստավը՝ Քյարբելա Մեհեմմեդ Ջավադի ցուցմունքով՝ կազմել է գյուղի զինվորացու յերիտասարդների ցուցակը:

Այդ լուրը սարսափեցրեց աբու-էլ-հասանցիներին:

— Նրանք մեր յերիտասարդներին ցուցակագրելուց հետո գյուղից պիտի հեռացնեն, իսկ իրենց մարդկանց պիտի պահեն գյուղում: Ո՞վ գիտի, թե 5—10 որից հետո մեր կին ու յերեխաների գլխին ի՛նչ փորձանքներ պիտի բերեն:

Շյուքուրը տեսնում էր պրիստավի կատարած գործերը, բայց՝ նորից չէր հավատում, վոր նման բաներ կարող են պատահել:

— Յերկիրն անտեր չէ,—ասում էր նա իր շուրջը հավաքված գյուղացիներին,—վոր ամեն մարդ իր ուզածն անի: Զինվորությունն ունի իր առանձին կարգն ու կանոնը: Պրիստավն այդ կանոնը խախտել չի կարող:

Ժամը 10-ին Զորահավաքի հանձնաժողովն սկսեց իր աշխատանքները: Ցուցակագրված յերիտասարդները հավաքվեցին Քյարբելա Մեհեմմեդ Ջավադի բակում: Նրանց մեջ կային նաև Գյուլալին ու Նիմեթը: Բժիշկը քննում էր զինվորացուների տարիքը, վորոշում էր նրանց պիտանիությունը զինվորական ծառայության համար:

6098/41

Զորահավաքի հանձնաժողովը մինչև յերեկո վերջացրեց իր աշխատանքները:

Գյուղում տիրել էր մեծ իրարանցում: Զինվորական տարիք ունեցող յերիտասարդներից վոմանց հանել էյին ցուցակից, վորոնց թվում նաև Քյարբելա Մեհեմմեդ Ջավադի վորդի Նիմեթին: Իսկ ընդհակառակը՝ ցուցակում մտցրել էյին զինվորական ծառայությունից որենքով ազատվողներին, նրանց թվում և Գյուլալուն:

4.

Այդ որից անցել էր յերեք ամիս: Շյուքուրն այդ ժամանակամիջոցում ականատես յեղավ պրիստավի կողմից կատարված մի շարք հանցագործությունների: Նրան պարզ կերպով հայտնի յեղավ, վոր պրիստավը պաշտպանում է հաջի-ջահանգիրցիներին, վորի շնորհիվ գյուղը բաժանվել էր յերկու հակառակորդ մասերի: Որենքի համաձայն զինվորական ծառայությունից ազատ համարվող Գյուլալուն ուրիշ մի շարք ընկերների հետ՝ հեռացրել էյին գյուղից: Մինչդեռ նա, բացի մի-քիչ կաղալուց, ընտանիքի միակ աշխատող ձեռքն էր:

Շյուքուրն էլ կարծում էր, վոր Գյուլալուն զինվոր գնալը թյուրիմացության արդյունք է: Ուստի նա Գյուլալու մոր անունից մի դիմում ներկայացրեց կենտրոնին, հուսալով, վոր մոտ ապագայում նրան կազատեն: Բայց յերբ իմացավ Քյարբելա Մեհեմմեդ Ջավադի վորդի Նիմեթի տմարդի վերաբերմունքը, հավատաց, վոր մեջտեղը գոյություն ունի մի ծանր հանցագործություն:

Նիմեթը փախցրել էր Գյուլալու նշանածին: Այդ մասին գիտեյին բոլոր գյուղացիները: Գիտեյին նաև աղջիկը վո՛րտեղ է թագցված: Թե՛ աղջկա մոր և թե՛ աբու-էլ-հասանցիների դիմում-բողոքներն այդ առթիվ անհետևանք էյին մնացել: Նիմեթը, իրեն նման մի քանի կատաղած յերիտասարդների հետ, հինգ կրականոցը ուսին գցած՝ ման էր գալիս գյուղում: Դա ա-

3188—2

ՀՍՍՀ-ССР

պացույց էր, որ աղ-սախկալներն անկարող էին մի բան անել:

Ծյուքուրը բացեիբաց նկատում էր, որ այս դեպքերի հեղինակը պրիստավն է: Նա ուզում է գյուղում արյուն թափել տա, որպեսզի այդ ճանապարհով իրեն համար յեկամտի աղբյուրներ ստեղծի: Բացի դրանից, որպես Նիկոլայի կառավարության հին պաշտոնյա՝ հավանական է, որ կապ ուներ դենիկինյան ուժերի հետ: Իր ստոր և վնասաբեր գործունեությամբ նա վարկաբեկում էր ազգային կառավարությունը, հող էր պատրաստում դենիկինյանների առաջխաղացումների համար:

Ծյուքուրը չէր կարող լուռ հանդիսատես լինել պրիստավի վոճրագործություններին: Նա ուզում էր անձամբ գնալ գավառի կենտրոն, տեսնվել նահանգապետի հետ և պատմել պրիստավի բոլոր արարքները, որից հետո, իհարկե, նահանգապետը նման անհարազատ և խառնակիչ պրիստավին կտար իր արժանի պատիժը, կվերջանային հաջի-ջահանգիրցիների կատարած լրբությունները:

Ծյուքուրն սպասում էր ձմեռվա մոտալուտ արձակուրդին: Ոգտվելով դրանից, ինքն անձամբ պիտի գնար գավառային կենտրոն՝ տեսնվելու նահանգապետի հետ: Նույն միջոցին Ծյուքուրը սոսկալի մի լուր իմացավ.— Գյուլալին փախել էր զինվորությունից ու պատսպարվել անտառում: Նա ուզում էր վրեժ լուծել հաջի-ջահանգիրցիներից: Աբու-էլ-հասանցիներից մի քանի յերիտասարդներ գնացել միացել էին Գյուլալու հետ:

4.

Ծյուքուրն այլևս չկարողացավ սպասել: Դեպքերը գլխապտույտ կերպով հաջորդում էին իրարու: Գյուղում լուրեր էին շրջում, որ գյուղապետն ու Քյաբելա Մեհեմմեդ Ջավադը, պրիստավի միջնորդությամբ, նահանգապետից զինվորական ուժ ձեռք բերելու և Գյուլալուն հետապնդելու համար գնացել են կենտրոն: Քյա-

բելա Մեհեմմեդ Ջավադը սովորություն ուներ իր ուզածը նման միջոցներով կատարել: Կառավարական պաշտոնյաների մոտ ունեցած ազդեցության և «հավատարմության» շնորհիվ նա միշտ էլ հասել էր իր նպատակին: Բայց, ինչ էլ որ լիներ, պետք էր անպայման նրանից առաջ տեսնվել նահանգապետի հետ, պատռել հաջի-ջահանգիրցիների դիմակը, պարզել խնդիրն իր ամբողջությամբ:

Նման դրությունն ստիպեց Ծյուքուրին, որ նա արձակուրդից առաջ մի քանի որով փակի դպրոցը և գնա գավառային կենտրոնը:

Նահանգապետի դիվանատանն անարխիա յեր տիրում: Դիվանատան դռանը և սանդուխների վրա կարելի յեր տեսնել բազմաթիվ բողոքավորների, որոնցից շատերը գյուղացիներ էին:

Դիվանատան պաշտոնյաները հայհոյում էին նրանց: Առանց փողի և «նվեր»-ի գործ տեսնելն անկարելի յեր:

Ծյուքուրը չկարողացավ մի տեղեկություն ստանալ: Ոչվոք նրան կարևորություն չէր տալիս, նրա հարցերին չէին պատասխանում: Վերջ ի վերջո հերթապահ վոստիկանները նրան մի քանի ուրիշ բողոքավորների հետ շենքից դուրս արին: Վռնդվող բողոքավորները խիստ դժգոհում էին ազգային կառավարությունից: Նրանցից շատերը նախկին ցարական օրերն էին վերհիշում:

Ծյուքուրն այստեղ էլ ուզեց մի քանի խոսք ասել ազգային կառավարության մասին, պաշտպանել նրան: Բայց չհաջողվեց: Վորովհետև ամենուրեք տիրում էր բռնությունն ու անարդարությունը: Գյուղապետների և պրիստավների բռնությունների դեմ բողոքող ձայներին լսող չկար, Ծյուքուրն էլ մեկն էր այդպիսիներից:

Ծյուքուրն այդ որը վոչինչ չկարողացավ անել: Նա շատ հուսահատ էր: Թեյարանում պատահեց գյուղերից յեկած մի քանի հյուրերի, որոնք խոսում էին նահանգապետի կաշառակերության մասին: Ծյուքուրը Նա-

հանդապետի հասցեյին ուղղված այդ խոսքերը չկարողացավ սառնասրտությամբ լսել:

— Դա զրպարտություն է,—ընդմիջեց նա,—նահանգապետը յերբեք կաշառք չի վերցնում: Շատ հավանական է, վոր ստորադաս պաշտոնյաները խաբում են ձեզ և նրա անունով գզլում ձեր փողերը:

Գյուղացիները Շյուքուրի այդ յելույթից մնացին սառած: Ոգտվելով այդ դրությունից, Շյուքուրը շարունակեց.

— Ինչո՞վ եք հաստատում, վոր նահանգապետը կաշառակեր է:

— Վո՛չ մի բանով,—պատասխանեց նրանցից մեկը:—Բայց մենք մեր լսածն ենք ասում:

— Ամեն մի լսածը չի կարելի ասել: Արատավորել նման մի պատվավոր մարդու՝ մեծ հանցագործություն է:

Թեյարանի մի անկյունում նստած էր մի ուրիշ մարդ: Սա, վոր սուս ու փուս նստած և արմունկը պայուսակի վրա հենած լսում էր յեղած խոսակցությունը, գլուխը բարձրացնելով՝ ասաց.

— Եղբո՛ր տղա, չգիտեմ, թե ի՛նչ ես ասում: Արդյո՛ք կա՞ մի մարդ, վոր նահանգապետի կաշառակերության մասին տեղյակ չլինի: Ի՞նչ հիման վրա դուք պաշտպանում եք նրան:

— Ես նահանգապետին պաշտպանում եմ այն հիմնական պատճառով, վոր վստահելով՝ նրան հանձնել են մի գավառի իշխանությունը: Հետևաբար, այդպիսի մի մարդ վո՛չ մի ժամանակ իր ժողովրդին և կառավարությանը անհավատարիմ չի կարող լինել:

Վիճաբանությունը յերթալով յերկարում էր: Քնելու ժամանակն անցել էր: Թեյարանատերը խանութի դռները ներսից փակելուց հետո պատրաստվում էր քնելու: Նա յերեսը Շյուքուրին դարձնելով՝ ասաց.

— Ձեզ մի բան ասե՞մ, իզո՛ւր եք պաշտպանում նահանգապետին:

— Ինչո՞ւ համար:

— Վորովհետև նրան չեք ճանաչում:

— Ճանաչում եմ: Շա՛տ լավ ճանաչում եմ: Բայց ճի՞շտ է վոր նա կաշառակերությամբ է զբաղվում:

Թեյարանատերը գլխի շարժումով հաստատեց:

— Դուք անձամբ նրան կաշառք տվե՞լ եք:

— Ես անձամբ նրան կաշառք չեմ տված, բայց նրան կաշառողներն ամեն որ մեր խանութն են գալիս:

— Նրանցից վորևէ մեկին կարո՞ղ եք ցույց տալ:

— Ուրիշներին մի կողմ թողնենք: Ես կարող եմ ձեզ ցույց տալ հենց ձեր գյուղացի Քյարբելա Մեհեմմեդ Ջավադին: Նա, սրանից յերկու որ առաջ, ճիշտ այս խանութում՝ համրում էր նահանգապետին տալիք կարմիր տասնոցները: Իսկ այսոր էլ գործը դրստեց ու գնաց գյուղ:

Շյուքուրը լռեց: «Էն վո՞նց կարող է լինել» միտքը զբաղեցնում էր նրան:

Մյուս որն առավոտյան Շյուքուրը պոռալով, ճվալով մտավ նահանգապետի դիվանատունը: Շատ էր ջղայնացել, բոլորի վրա բղավելով՝ ասում էր.

— Դուք բոլորդ էլ չարամիտներ եք: Վո՛չ վոքին չեմ հավատում: Ես անձամբ ուզում եմ նրան տեսնել:

Վերջապես, նահանգապետի անձնական քարտուղարը նրան՝

— Մի՛ ջղայնանաք, պարոն,—ասաց, ու մի կերպ հանգստացնելով՝ տարավ իր կաբինետը:

— Ի՞նչ եք ուզում,—հարցրեց քարտուղարը:

— Ես ուսուցիչ եմ: Իմ պաշտոնավարած գյուղում մի մեծ վոճրագործություն, պետական թշնամություն կա: Ուզում եմ նահանգապետին տեսնել:

— Դուք կարող եք հավատալ ինձ:

Շյուքուրը մտածում էր: Մի րոպե յերևակայեց, վոր Քյարբելա Մեհեմմեդ Ջավադի վոսկիներն այս մարդու ձեռքով ստացված կլինեն: Կարելի յե՝ նահանգապետը վոսկիներից տեղեկություն էլ չունի:

— Վո՛չ վոքի չեմ հավատում: Ուզում եմ անձամբ տեսնել:

Վերջապես Շյուքուրին հաջողվեց նահանգապետին անձամբ տեսնել:

Նահանգապետը բարձրագույն կրթություն ստացած, իրավաբան մի մարդ էր: Շյուքուրը չէր կարող հավատալ, վոր նման անձնավորություն, կատարելով կաշառակերության պես ստոր գործ՝ վնաս հասցնի իր կառավարությանն ու ժողովրդին: Նա յուրովի յեզրակացրեց, վոր նահանգապետին շրջապատել են վատ պաշտոնյաներ, վորոնք նրա անունով շահագործում, թալանում են ազգաբնակությունը, իրենց վատ ընթացքով գցում են ազգային կառավարության հեղինակությունը: Հարկավոր է մաքրել կառավարական հիմնարկները նախկին ցարական իշխանությունից մնացած խորթ տարրերից:

Շյուքուրը նահանգապետի առանձնասենյակը մտավ հետևյալ հույսերով.—առաջին հերթին՝ պետք է պաշտոնից հեռացնել և պատասխանատվության կանչել գյուղում թայֆաբազություն սերմանող, նրանց դեմ գրգռող, հօգուտ իր գրպանին յեկամտի հող պատրաստող պրիստավին, պետք է բանտարկել ուրիշի պատիվը բռնաբարող Նիմեթին, հոր տունը վերադարձնել Գյուլալու նշանածին, յուզբաշության (պրիստավի օգնականի) պաշտոնից զրկել Քյարբելա Ջեննեթ Ալուն և Գյուլալին էլ պետք է գար, հանձնվեր կառավարությանը:

Բայց իզուր անցան Շյուքուրի վերը հիշած բոլոր հույսերը:

Նահանգապետին խոսք հասկացնելը դժվար էր: Նա բացեիբաց պաշտպանում էր չարամիտ պրիստավին:

— Ձեզ,—ասաց նահանգապետը,—յերբեք թույլ չե՛մ տա, վոր խառնվեք կառավարական գործերի մեջ: Դուք ուսուցիչ եք, ձեր գործը պետք է լինի միմիայն յերեխաներին դաս տալ, տետրակներն ուղղել: Մենք շատ լավ ենք ճանաչում գյուղում գտնվող մարդկանց:

Նահանգապետն է՛լ թույլ չտվեց, վոր Շյուքուրը խոսի, իր սրտում կուտակված ցավերն ամբողջությամբ դուրս տա: Նա զանգահարեց և ներս մտնող պահակին հրամայեց, վոր Շյուքուրին դուրս անի:

Շյուքուրն էլ ի՞նչ կարող էր անել: Յեթե մի քիչ էլ խոսեր, կբանտարկեյին: Ընկած տրամադրությամբ՝ ստիպված յեղավ գյուղ վերադառնալ:

Շյուքուրը հանգիստ նստել չէր կարող: Նրա սիրտը ճմլվում էր:

Անարգված և զուրկ իր կառավարության աջակցությունից, Շյուքուրը հույսը դրել էր միայն իր բազուկների վրա: Կառավարության ներկայացուցիչները թշվառների, հարստահարվածների իրավունքները պաշտպանելու փոխարեն բռնակալներին էյին պաշտպանում: Քյարբելա Մեհեմմեդ Ջավադների վոսկիներն իրենց ուժի մեջ էյին:

Յեվ, վորպես հետևանք այդ վոսկիների, մի որ էլ գյուղը մտավ 50—60 հոգուց բաղկացած զինվորական մի ջոկատ, զինված գնդացիրներով, այնտեղից էլ հաջիջահանգիրցիների առաջնորդությամբ մեկնեց դեպի անտառի կողմը, ուր թաքնված էր Գյուլալին:

Սաստիկ բարկությունից Շյուքուրն սկսեց լաց լինել:

Գյուղը մեծ սուգ ու շիվանի մեջ էր: Յերկու որ տևող ռազմական գործողություններից հետո հնարավոր չեղավ ձերբակալել Գյուլալուն: Նա փախել, թաքնվել էր: Այդ ռազմական ընդհարումների ժամանակ զինվորներից յերկուսը սպանվել, 6-ը վիրավորվել էյին: Պրիստավն սկսել էր իր «գործունեյությունը»:— Աբու-էլ-Հասանցիների խոտադեզերը վառվում, Գյուլալուն մոտիկ մարդկանց տները թալանվում, ծերերը բանտարկվում էյին:

Շյուքուրը տեսնում էր այդ բոլոր դժբախտությունները, բայց պատճառը չէր իմանում:

— Ինչո՞ւ այդպես յեղավ,—հարցնում էր ինքն իրեն ու մտածում:

Այդ միջոցին Շյուքուրը տեսավ Հասան-ամուն: Վերջինս նկատել էր մի կնոջ, վոր լաց ու աղաղակ բարձրացնելով գնում էր: Թե ուր էյին տանում այդ կնոջ, Հասան-ամին չկարողացավ տեղեկանալ: Միայն՝

— Համբերիր, աղջիկս, համբերի՛ր, քույրս,— ասում եր նա և ավելացնում, վոր «Վո՛չինչ, փիաղ-փիաղ եսթ» (սոխը սոխ ե):

Ծյուքուրը միայն նոր հասկացավ: Խորունկ քնից կարծես նոր զարթնեց: Հասան-ամին ճիշտ եր ասում: Սոխը, ինչ ել վոր լինի, սոխ ե, համը կծու կլինի: Պրիստավը պրիստավ ե, նահանգապետը՝ նահանգապետ: Այլապես, դրանք ե՛լ ուրիշ ի՞նչ կերպ կարող եյին վարվել ժողովրդի հետ...

Ծյուքուրը քաղաքի յերեխա չեր: Ավարտելով միջնակարգ դպրոցը, նա ցանկացել եր մտնել բարձրագույն դպրոց, բայց, ավելի ճիշտն ասած, ինչ-ինչ պատճառներով՝ նրան այդ բանը չեր հաջողվել: 18 թվին ուսանելու համար Ռուսաստան գնալ անհնար եր, իսկ այդ ժամանակն ել Բաքվի համալսարանը դեռ բացված չեր: Ծյուքուրը մտածել եր, վոր նոր կազմակերպված ազգային կառավարության համար ամենից շատ հարկավոր են մտավոր ուժեր: Ուստի նա նախամեծար եր համարել աշխատել գյուղում: Խավարի և տգիտության մեջ խարխափող գյուղը մեծ կարիք ուներ մտավոր ուժերի: Հենց այս նպատակով ել Ծյուքուրը, 18 թվի աշնանը, յեկել եր այս գյուղը պաշտոնավարելու:

Ժողովուրդը զուրկ եր քաղաքական վորոշ գաղափարներից: Գավառում պրոպագանդա եյին մղում յերեք քաղաքական հոսանքների—«Իթթիհատ», «Մուսավաթ» և «Հիմմեթ» կուսակցությունների ներկայացուցիչները: Ծյուքուրը, թեև պաշտոնապես վո՛չ մի կուսակցության չեր պատկանում, բայց համակրում եր «Մուսավաթ»-ին, հարգանքով եր վերաբերում դեպի այդ կուսակցության ղեկավարները: Բաքվում այդ կուսակցությանը պատկանողները շատ եյին:

Ծյուքուրն այժմ պրիստավի դեմ չեր բողոքում: Նա շատ լավ հասկացել եր, վոր պրիստավն ու նահանգապետը համագործակից են իրարու:

Գյուղում ելի շարունակվում եր նախկին թալանը՝ բացարձակ կերպով: Ամենաչնչին բանի համար բան-

տարկվող գյուղացիներից տուգանքի և կամ «նվեր» անվան տակ մի բան պոկում, նրանց բաց եյին թողնում:

Աբու-ել-Հասանցիներին նյութական վնասներ չպատճառելու համար Գյուլալին մի շաբաթ առաջ յեկել, հանձնվել եր կենտրոնական կառավարության: Պրիստավը գյուղում սկսել եր մի նոր քաղաքականություն վարել: Նա այս անգամ գյուղ գալիս իջել եր վո՛չ թե Քյարբելա Մեհեմմեդի, այլ Աբու-ել-Հասանցիներից Հաջի Համզայի տանը: Խոսվում եր նույնպես, վոր Քյարբելա Ջեննեթ Ալուն հանել են գյուղապետության պաշտոնից և տեղը նշանակել աբու-ել-հասանցիներից մեկին: Այսպիսով, ուրեմն, այժմ լայն հնարավորություններ եյին ստեղծվել պրիստավի և նահանգապետի համար՝ շարունակելու իրենց խռովարար քաղաքականությունը, հեշտացնելով աբու-ել-հասանցիների վրիժառության գործը հաջի-ջահանգիրցիների դեմ՝ կարող եյին յեկամտի նորանոր աղբյուրներ ստեղծել հոգուտ իրենց գրպանների:

Այս դրությունը մինչև յե՞րբ պիտի շարունակվեր: Ծյուքուրը պարզ տեսնում եր, թե ի՛նչպես ժողովուրդը Նիկոլայի կառավարության որերին ե սպասում: Յեվ, յեթե վաղը կամ մյուս որը դենիկինյան բանակը սահմանագծին մոտենալով գրավի Ադրբեջանը, ինչպես գրավել եր Դաղստանը, ժողովուրդն այնքան ել չպիտի կարողանար դուրս գալ այդ սև ուժերի դեմ պաշտպանելու հայրենիքը: Կառավարությունը ժողովրդի վրա վո՛չ մի ազդեցություն չունի: Պատճառը՝ իրավագետ, մտավորական նահանգապետի կաշառակեր քաղաքականությունն եր: Հարկավոր եր պատժել նման նահանգապետին, նրա չարիքը վերացնել ազգաբնակության գլխից: Զե՞ վոր յերկիրը դեռ բոլորովին անտեր չե: Կարելի յե կենտրոնը լավ չի ճանաչում նահանգապետին: Հարկավոր ե նրա «ընթացքների» մասին հայտնել համապատասխան մարմիններին և կազմակերպություններին:

Յեվ Ծյուքուրը, ոգտվելով ձմեռվա 2-շաբաթյա

դպրոցական արձակուրդից՝ մեկնեց Բագու: Նա ուղղակի պիտի դիմեր ներքին գործոց մինիստրին:

Բայց այստեղ էլ Շյուքուրին հնարավորություն չէր տրվում տեսակցելու մինիստրի հետ:

— Ինչ որ ուզում ես ասել, գրիր, խնդրագրով հայտնիր,— ասում եյին Շյուքուրին:

Վերջապես Շյուքուրը մինիստրին տեսնելու միջոցը գտավ: Ճարեց մինիստրին ծանոթ պարլամենտի անդամներից մեկին և նրա ընկերակցությամբ գնաց ներքին գործերի մինիստրության շենքը:

Մինիստրը Շյուքուրին ընդունեց իր առանձնասենյակում:

— Ես գավառից եմ գալիս,— սկսեց Շյուքուրը:— Մեր գավառի քաղաքական արդի կացության մասին բավական կարևոր մի զեկուցում ունեմ, որը շոշափում է մեր պետության ու կառավարության պատվին վերաբերող խնդիրներ:

Մինիստրը ժամացույցին մտիկ անելով՝

— Շատ գոհ եմ,— ասաց,— հիմա ժամանակս չի ներում: Երեկոյան յեկեք տուն, մանրամասն կխոսենք:

Արևը մայր մտնելու ժամանակ Շյուքուրը քայլերն ուղղեց դեպի մինիստրի բնակարանը: Մինիստրի դեմ առ դեմ նստած՝ սկսեց պատմել նախ՝ պրիստավի կատարած գործերի մասին: Եվ յերբ պատրաստվում եր նահանգապետի արարքներին անցնելու, մինիստրն ընդհատեց Շյուքուրի խոսակցությունը:

— Դուք,— ասաց մինիստրը,— խոստացել եյիք ինձ հայտնելու պետությանը վերաբերող կարևոր խնդիրների մասին: Իսկ հիմա շոշափում եք ինչ-որ մի շրջանային պրիստավի գործունեությանը վերաբերող հարցերը:

— Ճիշտ է,— ասաց Շյուքուրը:— Բայց յեթե նման պրիստավի կատարած գործերը նվազեցնում են ազգային կառավարության ազդեցությունը ժողովրդի մեջ, դա մի՞թե պետական խնդիր չէ:

— Ո՛չ, սիրելիս, սխալվում եք: Պրիստավի նման

վարմունքի մասին ոչ թե մինիստրության, այլ նահանգապետության դիվանին պետք է դիմեք:

Մինիստրը կրկին նայեց ժամացույցին: Նա ուզեցավ ճամբու դնել Շյուքուրին:

— Ներեցե՛ք,— ասաց Շյուքուրը,— յես միայն չպիտի բողոքեյի պրիստավի մասին: Մինչ այժմ ինչ որ ասել եմ, նախաբանն է իմ բոլոր ասելիքներիս: Ես պետք է խոսեմ նահանգապետի մասին:

— Ի՞նչ պիտի խոսեք նրա մասին: Չլինի՞ թե նահանգապետը բոլշևիկյան պրոպագանդայի ճանապարհն է հարթում:

— Ո՛չ թե բոլշևիկների, այլ դենիկինցիների:

— Աճապարում եմ: Ակումբ պիտի գնամ:— Ապա՝ նորից ժամացույցին նայելով՝ ավելացրեց.

— Խնդրում եմ, կարճ խոսեցեք:

— Մեր նահանգապետի կաշառակերության մասին ամեն տեղ խոսվում է,— շարունակեց Շյուքուրը մի նոր լուր հաղորդելու ձևով:

— Հետո՞,— վրա բերեց մինիստրը խիստ պարզ տոնով:

— Սա ոչ թե լուր է, այլ իրական փաստ:

— Հետո՞:

— Կաշառակեր է ո՛չ թե միայն նահանգապետը, այլև նրա ձեռքի տակ գտնվող բոլոր պաշտոնյաները:

— Հետո՞:

— Նրանք վորոշեցին, վոր բոլոր վայրերն իրենց համար յեկամտի աղբյուր դարձնեն:

— Հետո՞:

— Մեր գյուղի ազգաբնակությունը յերկու Թայֆայի բաժանված՝ միմյանց կոտորում, ոչնչացնում են:

— Հետո՞:

— Է՛լ «հետո»-ներին վերջ չկա: Նահանգապետի կաշառակերության մասին ամեն մարդ գիտի: Գավառում ապահովություն չկա: Ազգային կառավարության հեղինակությունը յերթալով նվազում է: Կարիք յեղած դեպքում հասարակությունը չպիտի կարողանա ամուր պաշտպանել ազգային կառավարությանը: Նահանգա-

պետի նման իրենց պաշտոններն ի չարը գործ դնող պաշտոնյաների չարիքները պետք է վերացնել ժողովրդի գլխի վրայից:

Մինիստրը վերջին անգամ ժամացույցին նայելով՝

— Դուք,—ասաց նա,—տեսնում եմ, վոր մի անփորձ յերիտասարդ եք: Այդքան չնչին բաների համար՝ ինձ իզուր զբաղեցրիք: Հարկավոր եր դրա համար ձեզ մի «խրատ» տալ: Բայց այս անգամ ներում եմ:

Շյուքուրը մոլորվեց:

— Յես ձեզ չնչին բաների համար չեմ դիմել—ավելացրեց նա:—Յես ասում եմ, վոր մի մեծ գավառի ղեկավարությունն ստանձնող նահանգապետը կաշառք է վերցնում:

— Դա արտասովոր և զարմանալի մի յերևույթ չէ,—ասաց մինիստրը ծիծաղելով, ցույց տալով վոսկյա ատամները:

Շյուքուրը չգիտեր, թե ի՞նչ պատասխանի: Ակամայից հարցրեց.

— Դուք «արտասովոր» բառով ի՞նչ եք ուզում ասել:

— Արտասովորն այն կլիներ, յեթե ասեյիք, վոր մեր նահանգապետը կաշառք չի վերցնում: Ապա մեղմ ձայնով ավելացրեց մինիստրը.

— Հատկապես քեզ եմ ուզում ասել, վոր նահանգապետի կաշառակերությանը զարմանալու վոչինչ չկա: Սա սովորական և միաժամանակ բնական մի յերևույթ է:

— Ինչո՞ւ համար:

— Վորովհետև չկա մի նահանգապետ, վոր կաշառք չվերցնի:

Մինիստրը զանգահարեց: Ներս մտնող միլիցիային հրամայեց՝

— Պարոնին ճամբու դրեք՝ թող գնա:

Շյուքուրը՝

— Ձերդ մեծություն, դուք կաշառակերության խնդրին վո՛չ մի կարևորություն չեք տալիս:

— Կարևորություն տալու խնդիր չէ: Բացի դրանից, մենք դեռ մեր գործերը վարում ենք հին Ռուսաստանի որենքներով, վորի մեջ նահանգապետների կաշառակերության մասին հատուկ կետ չկա:

— Համենայն դեպս, պետք է հրատարակել այդպիսի մի որենք:

— Թերևս պետք է լինի: Բայց առայժմ նման փոքրիկ խնդիրներով զբաղվել չենք կարող:

Մինիստրը ուզում եր անցնել մյուս սենյակը: Իսկ Շյուքուրը չեր ուզում դուրս գալ: Նա ավելացրեց.

— Ինչո՞ւ չեք կարող զբաղվել:

Մինիստրը, կռնակը դեպի Շյուքուրի կողմը դարձրած՝ մյուս սենյակն անցնելիս՝ պատասխանեց.

— Վորովհետև մեր առաջ դրած են պետական ավելի խոշոր խնդիրներ:

Մինիստրի այդ խոսքերը Շյուքուրին տարորինակ և անհասկանալի եյին թվում: Յեթե նա այդ խոսքերը մի ուրիշից լսեր մինիստրի մասին, բացի չհավատալուց՝ պիտի առարկեր՝ «Դու մինիստրին զրպարտում ես»: Բայց Շյուքուրն իրավունք ունե՞ր չհավատալու, յերբ մինիստրը նահանգապետի կաշառակերությունը համարում եր վոչ-արտասովոր և բնական յերևույթ: Յեվ յեթե, ըստ ներքին գործերի մինիստրի արտահայտության, կաշառակերությունը նահանգապետներին արատավորող հանցագործություն չէ, ապա ուրեմն, յերկրի ներքին դրությունը ա՛յլ կերպ չեր կարող լինել: Բնական է, վոր ամեն տեղ պիտի առաջանային «արու-ել-հասանցիների» և «հաջի-ջհանգիրցիների» խնդիրներ, ժողովուրդն ականատես պիտի լիներ մի շարք ապորինի գործողությունների:

Այժմ Շյուքուրին մտահոգող խնդիրը վո՛չ պրիստավի ունեցած ընթացքն եր և վո՛չ ել նահանգապետի վարվելակերպը: Նա այժմ ուզում եր վերլուծել մինիստրից լսած խոսքերը, բայց վո՛չ մի բացատրություն տալ չեր կարող: Նշանակում է, վոր մինիստրն ել նահանգապետի բնավորությունն ուներ: Հավանական է, վոր նա ել, իր հերթին, չեր մերժում վորևէ գործի համար իրեն տրվող «վարձատրությունը» ու «նվերները»:

վորովհետև նախկին Ռուսաստանի որենքների մեջ մինիստրների «վարձատրություն» և «նվերներ» ստանալու մասին հատուկ կետ չկար:

Ծյուքուրն այդ մասին շատ մտածեց: Հոռետեսությունը պատել եր նրան: Չնայած դրան, Ծյուքուրն ե՛լի չհուսահատվեց: Յերկու որ չարունակ նստելով՝ դրեց մի յերկար դիմում, վորտեղ արձանագրեց պրիստավի արարքներից սկսած մինչև մինիստրի վերջին խոսքերը: Դիմումի մի պատճենն ուղարկեց պարլամենտի նախագահին, իսկ մյուսը՝ մուսավաթական կուսակցության կենտրոնական կոմիտեյին, քաջ գիտենալով, վոր ներքին գործերի մինիստրը մուսավաթական կուսակցության թեկնածու յե:

Ծյուքուրը յերկու շաբաթ եր ինչ վերադարձել եր գյուղը և վերսկսել իր աշխատանքները: Նա հավատում եր, վոր դրած դիմումն անհետևանք չպիտի մնար: Այդ հույսերի մեջ եր, յերբ կարդացած լրագրից տեղեկացավ կառավարական կաբինետի անկման մասին: Ծյուքուրն այժմ ուրախ եր: Կաբինետի անկման պատճառը վերագրում եր իր ներկայացրած դիմումներին:

Բագվում յեղած ժամանակ Ծյուքուրն ուրիշ մի «խոսք» ել լսել եր: Ռոճիկների և դպրոցական զանազան խնդիրների առթիվ գավառի մի քանի ուսուցիչների հետ դիմել եր լուսավորության մինիստրին: Վերջինիս պատասխանատու աշխատակիցներից մեկն ասել եր.

— Մենք այդ բոլորը ձեզնից ավելի լավ գիտենք: Իհարկե, ապագայում այդ պակասություններն աստիճանաբար կշտկվեն: Առայժմ գնացեք, մի կերպ ապրեցեք: .

Ուսուցիչներից մեկի հարցին, թե՝

— Ի՞նչ կերպով...

Պաշտոնյան պատասխանել եր՝

— Ձեր գիտցած կերպով ապրեցեք:

Ուսուցիչներն այդ «մի կերպ» խոսքի նշանակությունը չեյին կարողացել հասկանալ: Բայց Ծյուքուրը շատ լավ եր հասկացել: «Մի կերպ ապրել» նշանակում

եր ապրել այնպես, ինչպես ապրում են պրիստավը, նահանգապետն ու իր ծառայողները: Ծյուքուրին միայն մի բան անհասկանալի յեր մնում.—պրիստավն ու գավառապետը «մի կերպ» ապրելու հնարավորություն ունեյին—կաշառք եյին ստանում, իսկ ուսուցիչներն ու՞մից կաշառք ստանային:

Ծյուքուրը համարյա թե ազատվեց մի ծանր բեռից: Նա հավատացած եր՝ կաբինետի անկումովը կվերանան բոլոր անիրավությունները: Կարծում եր՝ յերկրում ծայր տվող խառնակությունների պատճառը «մի կերպ ապրեցեք» ասող պաշտոնյաներին կաշառակերության դուռը ցույց տվող «մինիստրներն» եյին, վորոնք յերկիրը չպիտի կարողանային պաշտպանել: Հարկավոր եր կազմել նոր կաբինետ, վորը ժողովրդի ոձիքը պիտի ազատեր պրիստավներից, նահանգապետներից և կաշառակերությունն որինականացնող «մինիստրներից»:

Ծյուքուրն ամեն որ լրագրի յեր սպասում, վորպեսզի տեղեկանար, թե նոր կաբինետում վորո՛նք պիտի անցնեն:

Վերջապես, մի որ ել կարդաց նորակազմ կաբինետի ցուցակը, ուր հիշատակված եյին նորընտիր մինիստրների անունները: Դրանցից մեկի անունը ավելի շատ գրավեց Ծյուքուրի ուշադրությունը: Դա Խալիլբեյ Խաս-Մեհեմմեդովն եր:

Ծյուքուրը հոնքերը կիտեց: Յերեսի գույնը փոխվեց: Ձեռքերը թուլացան: Նա մի անգամ ել կարդաց ցուցակը: Սխալված չեր: Այդ մարդն հենց իրեն ծանոթն եր, վորի անունը տալով՝ միշտ ջղայնանում եր: Ծյուքուրի հույսերը տակնուվրա յեղան: Նա շատ լավ ճանաչում եր այդ մարդուն: Դա այն նախկին ներքին գործերի մինիստրն եր, վորը հիմնվելով հին Ռուսաստանի որենքների մեջ գոյություն չունեցող «մի կետ»-ի վրա՝ իր նշանակած նահանգապետներին կաշառք ստանալու իրավունք եր տալիս և վորն այժմ՝ նոր կաբինետում՝ «արդարադատության մինիստրի» պորտֆելն եր ստացել:

Ցեվ հիմա, յերբ հին մինիստրը գտնվում է արդարադատության գործերի մեջ, այդ դեպքում, հարկավոր է «մի կերպ ապրել»:

Կարծում եմ, վոր դուք այս «մինստր»-ին ճանաչում եք: Թերևս լինեն ձեր մեջ այնպիսի ընթերցողներ, վորոնք կարծեն, թե այդ մինիստրի անձնավորությունը և կամ ժամանակին Շյուքուրին ասած խոսքերը «յերևակայության» արդյունք են: Հավատացնում եմ, վոր սխալվում եք: Մեր նախկին մինիստր Խաս Մեհեմմեդովը «պատմական» մի մարդ լինելով հանդերձ, նրա՝ «նահանգապետի կաշառ ստանալը սովորական և բնական դեպք է» ասելն էլ պատմության էջերում գրելու համար հատկանշական մի խոսք է:

Այս մինիստրը հիմա էլ ապրում է: Ադրբեջանի ժողովրդի անունից՝ Ցեվրոպայում «աշխատող» Թոփչի Բաշիև և Մեհեմմեդ Եմին ընկերությունների հետ «գործ է տեսնում»...

ՄԻ ՓՈՂՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I

Ցինծու և կամ յերևակայական մի բան չէ այս պատմությունը, այլ մեր մոտիկ անցյալի, իրական կյանքի էջերից մեկը:

Փողոցը, վորի պատմությունն ենք ուզում անել, գտնվում էր Ադրբեջանի Թուրքերի այժմյան և 25—30 տարի առաջվա կուլտուրական և քաղաքական կենտրոնը համարվող Բագու քաղաքում: Նրա մի ծայրում գտնվում էր «Կասըմ բեկ», մյուս ծայրում՝ «Թազա փիր», իսկ արևելյան և արևմտյան սահմաններում «Հաջի Փիրվերդի» և «Հաջի Աբուլ հասան» մզկիթները:

Այս փողոցն իր մեջ էր պարփակում Արևելքի մտածումն ու Արևմուտքի գաղափարը, իսլամական քաղաքակրթությունն ու յեվրոպական կուլտուրան, մեր անցյալի կյանքն ու գալիք նոր կենցաղը:

Այստեղ կային չորս-հինգ հարկանի հոյակապ ապարանքներ, ինչպես նաև, հենց նրանց կողքին, ցածլիկ, արևագուրկ փոքրիկ տնակներ: Մի կողմից մեջնադարյան «մեդրեսե»-ներ*) և մոլլաների չենքեր, մյուս կողմից նոր ձևի նախակրթարաններ ու միջնակարգ դպրոցներ: Մի կողմում ապրում էյին գլխարկների ու մեջքի գոտիների վաճառականներ, և սրանց կողքին, հաստավիզ, փողկապավոր հանքատեր-գործարանատերեր, փաթթոցավոր ախունդներ (կրոնական յերգողներ) ու ցիլինդրավոր մտավորականներ, կուլակ-վաշխառուներ, և ապա—իրենց ձեռքի աշխատանքով ապրող բանվորներ, վորոնք՝ ինչպես մի ընտանիքի զավակներ՝ իրար ճանաչում, միմյանց բախտակից էյին:

Մի ժամանակ շատ կենդանի ու շեն էր այս փողոցը: Հաջի Ասլանը «հոգին» էր այս փողոցի: Այս փողոցում

---

*) Թուրք կրոնավորների դպրոց:

չկար մեկը, ծեր թե յերիտասարդ, կին թե տղամարդ, մեծ թե փոքր, վոր լսած չլիներ Հաջի Ասլանի հայհոյանքները, նրա ձեռքում միշտ ման ածվող հսկա չիբուխի չափ կոպիտ կատակները: Նրա ձայնը միշտ լըսվում եր այս փողոցում:

Նա այս փողոցի ամեն ինչն եր՝ թե՛ աղան, թե՛ պետը, թե՛ սպիտակամորուսը և՝ յեթե հարմար ե այսպես անվանել՝ մարմնի յերակներ: Բագվի քաղաքապետարանումն ել նրան ճանաչում եյին իբրև «ժողովրդի փոխանորդի» և «ներկայացուցչի»: Հաջին հարգանք եր վայելում վո՛չ միայն մեծ առևտրականների ու նավթատերերի մոտ, այլև Յեվրոպայում և Ռուսաստանում բարձրագույն ուսում ստացած իրավագետների ու այլ կարգի անձնավորությունների շրջանում: Նրա խոսքն ու կարծիքն անցնում եր չայխանաներում (թեյարաններում), խաղատներում և գետնահարկերում հավաքվող մութ անցյալի տեր մարդկանց մոտ: Փողոցում պատահած յուրաքանչյուր վոճիրի, կամ ծանր դեպքերի մասին Հաջուն տեղեկություն եր տրվում. սրանց մի մասը նա նույնիսկ կատարվելուց 2—3 որ առաջ իմանում եր:

Մի խոսքով Հաջի Ասլանը «մեծ մարդ» եր, վորովհետև նա պատվավոր վաճառական, ազդեցիկ թաղապետ ու սպիտակամորուսն եր, ամեն տեղ խոսքն անցնող «ժողովրդի ներկայացուցիչն» եր:

***

Գարնանամուտ եր, Նովրուզի բայրամը, փողոցում լիքը բազմություն. մարդիկ այցելում են միմյանց, շնորհավորում գարնանամուտը:

Բայց Հաջի Ասլանը հրամայել եր, վոր թաղում գտնվող բոլոր տների դռներն ամենուրեք փակվեն, վորովհետև նա վորոշել եր այդ որն իր նորահաս վորսկան շներին վարժեցնել նապաստակ վորսալու:

Հաջին իր ծանր մարմնով նստել եր ձիու վրա և վորոշ հեռավորությունից իր նորավարժ շնիկներին

ցույց եր տալիս դաշտից բռնված մի նապաստակի: Ինքն ել վազող շների յետևից «հա, հայրիկս, հա՛» գոռալով քշում եր ձին:

Մեծ աղմուկ եր ընկել փողոցում, կին ու յերեխա իրար եյին անցել: Ամեն վոք իր անձի յերկյուղից մի անկյուն եր կծկվել: Խեղճ նապաստակը մի անկյուն եր փնտռում մտնելու: Հենց այդ միջոցին նրա առջև մի հին տուն բացվեց: Նապաստակն իրեն այս տան բակը գցեց՝ դռան ներքևում բացված ջրի ճանապարհից, և այնտեղ ել թաքնվեց: Շները միահամուռ հարձակում գործեցին այս դռան վրա, Հաջի Ասլանի հայհոյալից ճղավոցներն ել միացան շների հանած աղմուկին:

Հաջին կատաղել եր: Թաղում վո՛չ վոք չեր համարձակվում նրա խոսքից դուրս գալ: Տնատերը թեև դուռը կողպ եր պահել, բայց չեր մտածել ներքևի անցքն ել փակել: Հաջին նրա յերեսին հայհոյում եր նրա ամեն ինչը՝ և՛ կնոջը, և՛ զավակներին: Իսկ խեղճ մարդն ահաբեկված՝ անընդհատ ներողություն եր խնդրում: Տանը կինն ու յերեխաներն իրար անցած՝ լալիս եյին: Հաջին հայհոյելով ավելի յեր բարկանում, և բարկության աստիճանի համաձայն ել հայհոյանքն ավելի յեր բարդացնում:

— Ուզո՞ւմ ես,—ասում եր նա,—ես սահաթիս եգռանդ մեջ լցող կնոջդ ու յերեխաներիդ քաշեմ փողոցի մեջտեղ և եսքան ժողովրդի ներկայությամբ փայտե ցցի վրա նստեցնեմ...

Հաջի Ասլան իր ուզածն անող մարդ եր: Մի քանի անգամ պատահել եր, վոր նա իր խոսքից դուրս յեկող, կամ պատահաբար իրեն չբարևող մարդկանց, կանանց ու աղջիկներին անպատվել եր իր ցանկացած ձևով: Ամեն վոք գիտեր Հաջու ձեռքով գողացվող յերիտասարդ աղջիկների և ջահել աղջիկների մասին, վորոնք մի քանի որ «անհայտ» տեղերում պահվելուց հետո՝ վերադառնում եյին իրենց տներն արտասվալից աչքերով:

Հիմա խեղճ մարդը, դեմքի ու շրթունքների գույնը գցած, ներողություն եր խնդրում իր հանցանքի համար:

— Հաջի բե՛կ, դուք միայն հրամայել եյիք դռները պինդ կողպել և ուրիշ վոչինչ չեյիք ասել. այլապես՝ ո՞վ կհամարձակվի ձեր հրամանին դեմ գործել...

Թեև Հաջին բարկությունն իջնելու վո՛չ մի նշանցույց չեր տալիս, բայց «ո՞վ կհամարձակվի ձեր հրամանին դեմ գործել» խոսքը նրան դուր յեկավ:

Նա սիրում եր լսել նման հնազանդություն հայտնող խոսքեր: Փափկացավ: Նրա հանցանքը ներեց:

— Ես անգամ կներեմ հանցանքդ,—ասաց նա դոռոզաբար:

— Աստված կյանքդ յերկար անի, աստված ձեր հովանին մեր վրայից անպակաս անի...

Այժմ արդեն ամբողջ թաղն սկսեց Հաջու վեհանձնության և մեծահոգության մասին խոսել:

***

Սա, իհարկե, այնքան սովորական ու հասարակ դեպք եր, վոր շատ քիչ ուշադրություն կարող եր գրավել: Յերկու որ հետո ամենքն ել արդեն մոռացել եյին Հաջու նապաստակ վորսալու պատմությունը: Վորովհետև այս թաղի ժողովուրդը նման «հասարակ դեպքերն» որական մի քանի անգամ տեսել, նրանց վարժվել եր: Սակայն մի ուրիշ դեպք այս փողոցի կյանքում իսկապես վոր մեծ իրարանցում առաջացրեց, շատ-շատերին լացացրեց:

Այս փողոցում ամենքը սիրում եյին Մուրսակուլուն, վորովհետև Մուրսակուլին վորքան հանդուգն, իգիթ, վոտ ու ձեռքով եր, նույնքան ել պատվավոր և անիրավությունից խույս տվող մարդ եր: Սա Հաջի Ասլանի մոտ վարձու բանվոր եր*): Իր առած ռոճկով պահում եր յերկու ընտանիք,—իր և իր այրի քրոջ զավակներին:

Թաղի մեջ միայն Մուրսակուլին եր, վոր համարձակվում եր Հաջի Ասլանի և նրա մարդկանց անարդարացի արարքների դեմ առարկել, կամ տրտունջ հայտ-

*) Աշխատում եր Հաջու նավում:

նել: Շատ անգամ նա կարողացել եր Հաջի Ասլանի մարդկանց այս կամ այն «գործ»-ի ծրագիրը խանգարել: Մինչև իսկ մի քանի անգամ միայնակ ընդհարվել եր նրանց հետ և վոչ մի անգամ չեր պարտվել:

Ինքը—Հաջի Ասլանն ել միշտ գնահատում եր Մուրսակուլու հանդգնությունն ու խելքը, և մտադիր եր նրան ել իր «մարդկանց» շարքն անցկացնել, բայց Մուրսակուլին այս մասին արած առաջարկները մերժել եր: Նա ցանկանում եր ապրել միշտ պատվավոր կերպով և յերբեք չխլել ուրիշի աշխատանքի արդյունքը: Յեվ վորպեսզի Հաջին կարողանար նրան նյութապես ընկճել և դժվար դրության մեջ դնել, նրան իր գործից դուրս եր արել:

քիչ եր ազդել, վորովհետև նա իր համար ուրիշ աշխա-
Այս հանգամանքը սակայն Մուրսակուլու վրա շատ
տանք եր ճարել: Յեվ առաջին անգամն եր, վոր «ամենակարող» Հաջին իր կյանքում չեր կարողանում իր ուզածն անել. նա փաստորեն տկար եր մնում Մուրսակուլու առաջ, և հետզհետե ընկնում եր դժվար դրության մեջ: Հասարակության մեջ, գնալով՝ ավելանում եր Մուրսակուլու ազդեցությունը: Հետզհետե կարող եր թաղում ստեղծվել այնպիսի դրություն, յերբ բացի Մուրսակուլուց, ուրիշներն ել սկսեյին Հաջու խոսքերին կարևորություն չտալ: Սրա համար ել Հաջին միայն մի բան ուներ անելու.—Մուրսակուլուն մեջտեղից վերացնել, վորպեսզի ուրիշներին խրատ լինի: Իսկ այս նրա համար մի այնքան ել դժվար բան չեր. բավական եր Հաջու մի ազդանշանը, և ամեն ինչ վերջացած կլիներ:

Յեվ այդ ազդանշանը տրվեց վերջ ի վերջո:

Իսլամների ծոմապահության որերից մեկում, յերբ ժողովուրդը մզկիթից դուրս եր գալիս, Հաջի Ասլանի մարդկանցից 4 հոգի, զինված, հանկարծ կտրում են Մուրսակուլու առջևը: Մուրսակուլին վիրավոր ընկնում է. վոճրագործները ցանկանում են նրա մարմինը հոշոտել, բայց Մուրսակուլին իր կյանքն այնքան ել եժան տվողներից չեր. նա ընկած տեղից, վիրավոր վի-

ճակում կրակում է. մզկիթի առաջ բացվում է իսկական մի ճակատամարտի տեսարան, կողմնակի մի քանի մարդիկ էլ վիրավորվում են:

Հաջի Ասլանի կազմակերպած այս «գործողության» հետևանքով հրապարակի վրա մնացին չորս անշունչ դիակներ. մեկը՝ ինքը Մուրսակուլին, յերկրորդը՝ ճանապարհից անցնող կողմնակի մի մարդ, յերկուսն էլ հարձակում գործող վոճրագործներից...

Ինքն ըստ ինքյան այս դեպքն այնքան էլ, իհարկե, արտակարգ մի բան չէր. այս փողոցն իր պատմության ընթացքում այսպիսի ճակատամարտներ շատ էր տեսել: Նման դեպքերի հետևանքով յերկու-յերեք մարդկանց վիրավորվելը կամ մեռնելը յերբեք նորություն չէր այդ փողոցում: «Մեծ» համարվող դեպքը սրանից էլ ահարկու և քստմնեցուցիչ էր:

Այդ որն առավոտյան նույն փողոցում չորս դռների առջև դրված էին դագաղներ, իրարից վոչ այնքան հեռու. այդ չորս տներից բարձրացող սգի վողբը բոլոր թաղեցիների վրա թողնում էր վերին աստիճանի տխուր, սարսռեցուցիչ տպավորություն: Ամբողջ թաղը համակված էր քստմնելի վոճրագործության այս վողբերգական հետևանքի տպավորությամբ:

Բայց Մուրսակուլու մահով Հաջու սրտի կատաղությունը դեռևս չէր անցել. թաղում վոչ-վոք իրավունք չուներ նրա համար տխրել, նրա յերիտասարդության ափսոսալ. դա չէր թույլատրված վոչ-վոքի: Մինչդեռ Մուրսակուլու խնամակալած քույրերից մեկի 16—17 տարեկան տղան դռան առաջ դրված դագաղի դիմաց դառն արտասուք էր թափում:

Այս տեսարանը ե՛լ ավելի սաստկացրեց Հաջու կատաղությունը. նա րոպեական մտածեց ու ծրագրեց՝ «Պետք է այստեղ լուծել Մուրսակուլու կողմից սպանված իր մարդկանց վրեժը...»:

Դեռ հազիվ էին դագաղը դռան առջևից բարձրացրել, Մուրսակուլու դռան առաջից փողոցի մեջտեղը քաշեցին նրա քրոջ վորդուն, 16—17 տարեկան ծաղիկ պատանուն, և բազմության ներկայությամբ մարմինը ծակծկեցին...: Տղան մահացավ նույն րոպեյին...:

***

Դուք թերևս կարծում եք, վոր վերոհիշյալ «մեծ դեպքը» միայն այս պատանու սպանությունն է: Վո՛չ, սխալվում եք: Մեզ ծանոթ փողոցի պատմության մեջ առաջին անգամը չէր դարձյալ, վոր թափվում էր անմեղ յերեխաների արյունը: Սրանից առաջ էլ այս փողոցում թափել են մի շարք յերեխաների արյունը: Սակայն այս անգամ տարբերությունն այն էր, վոր մի դեռատի յերիտասարդ սրախողխող էր արվում իր մորեղբոր դագաղի վրա:

Իր՝ սարի պես կտրիճ ու հանդուգն յեղբորը յեղերական ձևով կորցրած քրոջ լացն ու կոծը բնական մի բան էր: Նա տանն իր անհուն վիշտը լալիս, աղի արտասուք էր թափում, յերբ լուր բերեցին, վոր իր զավակին էլ մորթել են՝ հենց փողոցի դռան առաջ...

Թշվառ կինն այս գույժը լսելուն պես, գժի նման ընկնելով ու կանգնելով, դեպի փողոցը վազեց ու իր աչքերով տեսավ իր տղին՝ գետին փռված և արյան մեջ թավալվելիս:

Այս անգամ կինն այլևս դադարեց լաց լինելուց, նրա աչքերում ցամաքեցին արտասուքները, նա միայն սկսեց պատառոտել իր վրայի զգեստները, փետել գլխի մազերը, վայրի, ահարկու մի ձայնով կանչել, իսկ այդ կանչերի ու վայոցների արանքում նրա բերանից մի անուն էր լսվում շարունակ.

— Հաջի Ասլա՛ն...

Այս կինը մի մայր էր, վորդեկորույս մի մայր: Նա այժմ վոչ վոքից չէր վախենում, վոչ-վոքի հրամանին ու սպառնալիքին մտիկ չէր անում: Նա միայն գիտենալով թե չգիտենալով՝ արտասանած անունը կրկնում էր ավելի բարձր ձայնով.

— Հաջի Ասլա՛ն...

Վոչ-վոք իր զավակի դագաղի վրա իրեն սպանող

այս կնոջը մոտիկ չէր գնում: Բոլորն ազդված էին իր զավակի մահվան վրա ինքն իրեն կորցրած այս կնոջ աղաղակներից: Շատերն էին լալիս:

Հաջի Ասլանը դիտում էր այս տեսարանը. նա կարծես զգում էր, վոր շատ «անտեղի» և «չմտածված» էր կատարված այդ վոճիրը: Կինը նրան խայտառակում էր: Անհրաժեշտ էր նրան լռեցնել, հենց այս նպատակով էլ նա մոտեցավ կնոջը և «մխիթարելու» մտքով ասաց.

— Բավական է, այլևս անամոթության հասցրիր, յե՛լ տունդ գնա:

Կինն այս խոսքերը չէր լսում, այդ խոսքերը նրա վրա չէյին թողնում վո՛չ մի ազդեցություն. նա մինչև իսկ չգիտեր, վոր իր գլխին կանգնածը Հաջի Ասլանն էր: Նա շարունակում էր կանչել ու անիծելով անպատվել Հաջուն: Անհրաժեշտ էր անպայման լռեցնել կնոջը:

— Վե՛ր կաց, ասում եմ քեզ, մի բղավիր, ասում եմ քեզ...

Ճար չկար, կինն իր «անամոթությունը» շարունակում էր:

Այստեղ Հաջի Ասլանն ի՞նչ անի՝ լավ է:

— Հիմա յես գիտեմ քեզ լռեցնելու կերպը,— ասում է նա:

Յեվ յերեսը դեպի իր մարդկանց դարձնելով՝ հրամայում է, վոր գնան, կնոջ փոքր վորդուն էլ տան մեջ սպանեն:

Կինը նախապես վոչինչ չէր հասկացել Հաջու այս հրամանից, սակայն հետո, յերբ տեսել էր Հաջու մարդկանց դեպի իր տունը գնալը, սկսել էր հասկանալ Հաջու կրկնած «են մյուս տղին էլ...» խոսքի միտքը:

Ահա տեսնո՞ւմ եք, վոր այս «մեծ դեպքն» արդեն չափից դուրս ահավոր մի վոճրագործություն էր:

Կինը հիմա այլևս չէր լալիս, նա Հաջու վոտքերին փաթաթված, «վայլահ, այլևս չեմ լա» ասելով՝ աղերսում էր: Հետո հանկարծ նրան թողեց. ուզում էր դեպի իր տան կողմը գնալ, բայց վոտքերը չէյին շարժվում:

Նա հազիվ շարժվելով, ընկավ իր զավակին փնտրելու գնացող մարդկանց յետևից:

Նա գոռգոռում ու կանչում էր, բայց չէր լալիս, վոչ-վոքից ոգնություն չէր խնդրում, այլ ծիծաղում էր:

***

Այս բոլորը, ինչպես վերևում ասացինք, չինծու բաներ կամ յերևակայության արդյունք չեն, այլ՝ նորից ենք հիշեցնում, վոր այս դեպքը մեր մոտիկ անցյալի, իրական կյանքի էջերից մեկն է:

II

Այդ փողոցի պատմությունը յերկար է, չա՛տ յերկար. այդպիսի արյունոտ էջեր տասնյակներով, հարյուրներով կարելի կլիներ հաշվել նրանում: Այստեղ Հաջի Ասլանը մենակ չէր, այլ՝ մի քանի ուրիշներ ևս կային, վորոնցից յուրաքանչյուրն իր առանձին հարգանքն ու ազդեցությունն ուներ: Մեջտեղը միայն մի տարբերություն կար, վոր նրանցից վոմանք «փոքր», վոմանք էլ Հաջի Ասլանի նման «մեծ» էյին:

Վերջապես 1905 թվի հեղափոխության ալիքները, անցնելով Կովկասյան սարերից, սկսեցին ալեկոծել Անդրկովկասի ու մանավանդ Բաքվի պես նշանավոր քաղաքի փողոցի կյանքն ևս: Այն ժամանակ դեմ առ դեմ յեկան յերկու ուժեր: Ամենուր սկսվեց ընդվզում ու բողոք անիրավության ու բռնության դեմ: Ընկել էր տեղական կառավարության վարկը, նա այլևս ազդեցություն չուներ:

Քաղաքացիների իրավունքը պաշտպանելու, զոռբաների զուլումին և բռնություններին ու թափվող անմեղ արյանը վերջ տալու նպատակով քաղաքի աղաները, իբրև «ժողովրդից ընտրված ներկայացուցիչներ» հավաքվելով Բաքվի քաղաքապետարանում, մի միություն կազմեցին: Նրանք այս միությունն անվանել էյին «Հաշտություն և բարեկամություն», վորի նպատակն էր պահպանել «կարգն ու կանոնը» այդ հայտնի փողոցում:

Յեթե քրքրելու լինենք Բաքվի քաղաքապետարանի

արխիվները, կամ թերթեք այն ժամանակվա թերթերը՝ իմանալու համար, թե ո՞վքեր եյին այդ ընկերության անդամները, նրա վարչական խորհրդի կազմում կտեսնեք մեզ շատ ծանոթ մի անձնավորության անուն,— ՀԱՋԻ ԱՍԼԱՆ:

***

1905 թվի հեղափոխության որերին Հաջի Ասլանն ունեցել ե մի շարք յելույթներ: Յես շատ լավ եմ հիշում նրա յելույթներից մասնավորապես մեկը:

Հակահեղափոխությունը գլուխ եր բարձրացնում:

Այդ որերին այս հայտնի փողոցում կազմակերպված եր ցուցարարների մի մեծ խումբ, վորի առջևից գնում եր Հաջի Ասլանը: Նրա յետևից գնում եյին հեծելազոր կազակները, նվագում եր դհոլ-զուռնան ու Հաջի Ասլանի մարդիկ պարում եյին:

«Թագա Փիր» մզկիթում հավաքված ցուցարարների այս խումբն անցավ մեծ յեկեղեցու բակը, վորտեղ խմբված Բագու քաղաքի նահանգապետը և այլ պետական պաշտոնյաները ծափահարությամբ ընդունեցին Հաջի Ասլանին:

Յեկեղեցու բակում մի բեմ սարքվեց· Հաջի Ասլանն իր դևի նման մարմնով բարձրացավ այդ բեմի վրա· նա այնտեղից ճառ պիտի խոսեր: Տիրեց լռություն:

Հաջի Ասլանն սկսեց·

— Ժողովուրդ, են ո՞վ ե, վոր թագավորին չի ուզում... յես նրա կնիկը...

— Ժողովուրդ, դուք ել ասեք... թագավորին չուզողին...

Հաջի Ասլանի ցուցարար խմբից մի ահագին աղմուկ բարձրացավ: Ամեն վոք սկսեց բարձրաձայն կրկնել նրա ասած խոսքերը: Կարծես թե այս լոզունգը նրանց հոգու վայրենի հուզմունքը հանդստացնող մի ներդաշնակ յեղանակ լիներ...

***

Բայց վո՞ր գործն ե մինչև վերջը նույն դրության մեջ մնացել... Հաջի Ասլանը մեռավ գնաց: Փողոցի ամբողջ ժողովուրդը լաց յեղավ նրա համար: Ամեն տեղ և ամեն վոք խոսում եր Հաջու առաքինության, մեծության և հավատարմության մասին:

Այս փողոցի ժողովուրդը կորցրել եր իր «աղա»-յին ու «առաջնորդ»-ին: Սակայն մի բան կար, վոր նույն այդ ժողովուրդն առանց «աղա»-յի ու «ղեկավար»-ի չեր մնում: Հաջի Ասլանն այդ փողոցում լայն կերպով սերմանել եր իր սերմերը· ամեն մի անկյունում կանգնած եյին Հաջի Ասլանի վարքն ու բարքն ունեցող, նրա «տակտիկան» բանեցնող մարդիկ, վորոնցից ամեն մեկն ուզում եր մի-մի «Հաջի Ասլան» դառնալ: Նրանք հետզհետե մեծանում, զարգանում, թև առնում, թռչում եյին:

Բայց ժամանակվա ընթացքն այլ կերպարանք եր ստացել: Մեծանում, տերևներ եյին արձակում Հաջի Ասլանի ցանած սերմերը, բայց իրենց ցույց տալ չեյին կարող: Դրա համար հարկավոր եր պատմական մի դեպք: Յեվ այդ դեպքը 1917 թվի Փետրվարյան հեղափոխությունն յեղավ:

Փետրվարյան հեղափոխությունն այս փողոցում, այդ «որհնյալ սերմերի» զարգացմանը նպաստավոր հող պատրաստեց:

Նախկին «Իսլամիյե», ներկայումս «Կուլտուրայի պալատ» կոչված վայրում հրավիրված եր Կովկասյան բոլոր ազգերի ներկայացուցիչների առաջին համագումարը: Այստեղ եյին նաև Հաջի Ասլանի թև ու թիկունք հանդիսացող «սերմերից» վոմանք՝ վորպես «ազգային ներկայացուցիչներ»: Համագումարի որակարգում դրված եր Ադրբեջանի թուրքերին սպառող ճակատագրի լուծման խնդիրը: Առանց չադրայի մի կնոջ յելույթը մեծ իրարանցում առաջացրեց համագումարում: Վոմանք ուզում եյին, «գլխաբաց կնոջը» դուրս անել հա—

մագումարից, իսկ մյուս կողմը, ընդհակառակը, պնդում եր, վոր նա մինչև վերջը մասնակցի:

Հաջի Ասլանի «սերմերն» իրենց ցույց տալու, վորոշ դիրք ձեռք բերելու ժամանակը հասել եր: Այն ժամանակ, յերբ համագումարն զբաղված եր գլխաբաց պատգամավորուհու «չադրայի» խնդրով, Հաջի Ասլանի՝ ժամանակով նորահաս չնիկներին նապաստակ բռնելը սովորեցնելու փողոցում, նրա՝ տակավին լավ չբացված փոքրիկ «սերմերը» չադրաները դեն շպրտող կանանց և աղջիկների վոտքերից չեքմեները հանում, բաշմակի եյին հագցնում:

Ամեն տեղ Հաջի Ասլանները գլուխ եյին բարձրացրել...

***

Փետրվարյան հեղափոխությանը հաջորդեց Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Մի չարք թագնված, մութ ուժերն այս փողոցում Հոկտեմբերյան հեղափոխության մուտք գործելուն արգելք հանդիսացան: Այժմ՝ Հաջի Ասլանի «սերմերն» ուրիշ գույներով եյին ուզում հանդես գալ: Խախտում եր նրանց վոտքերի տակի հողը, չգիտեյին թե հետագայում իրենց ինչ եր սպասում: Աշխատում եյին «նորերի» հետ մի կերպ «յոլա» գնալ: Նրանք յերբեմն ընդհարվում, սրա-նրա վրա հարձակվում եյին: «Կրոն»-ը, «շարիաթն» ու «Կուրան»-ը նրանց ձեռքին մեծ միջոցներ եյին:

Այսպիսի խառնակ ժամանակամիջոցում, այս փողոցի վրայի ստվերները չքացան: Յերկուս ու կես տարուց հետո, Հոկտեմբերյան հեղափոխության ալիքները Կասպից ծովից անցնելով, հորդ հեղեղի նման տարածվեցին այդ փողոցի ամեն մի անկյունում: Ամեն ինչ տակն ու վրա յեղավ: Դարերից ի վեր խոր արմատ գցած ծառերը հիմնովին քանդվեցին, դրանց հետ միասին նաև Հաջի Ասլանի «մեծ» ու «փոքր» սերմերը արմատահան լինելով՝ քշվեցին են կողմի աշխարհը, ուր գնացողն ե՛լ յետ չի դառնում:

***

Անցյալ որ յես անցնում եյի նույն այդ փողոցով: Թաղի բախկալի խանութներից մեկի առաջ տեսա Հաջի Ասլանի «մարդկանցից» մի քանիսին, վորոնք՝ բոլորովին ծերացել, հալից ընկել եյին: Են կողմից գալիս եր պիոներների մի մեծ խումբ: Աղջիկ— տղա իրար եյին խառնվել: Սպասում եյի, վոր նրանք անցնեն, ինձ ճանապարհ բաց անեն: Հաջու «մարդիկ» իմ յետևից խոսում եյին: Նրանցից մեկն անցած ժամանակը հիշելով՝ ընդհատեց ընկերոջ խոսակցությունն ու խոր ա՛խ քաշելով ասաց.

— Հա՛յ գիտի՛, Հաջի Ասլա՛ն, աստված հոգին լուսավորի:

—Ճիշտ վոր՝ Աստված հոգին լուսավորի, մեռնելու մարդ չեր,—խորունկ հառաչելով ասաց յերկրորդը:

Յես էլ յետ դառնալով՝ ասացի.

— Աստված «հոգին լուսավորի»:

ՀԱՋԻ ՍՈՒԼԹԱՆԸ

Հաջի Սուլթանը մեզ հարևան է: Նրան շատ լավ եմ ճանաչում: Ուղիղ քսան տարի առաջ նա ալաֆդար եր, Շամախու ճանապարհի վրա խանութ ուներ:

Այդ ժամանակ գավառներից, Քուռի ափերի և սարի գյուղերից վոչ միայն ուղտերով, այլև սայլերով Բագու յեկող գյուղացիները սիրում եյին Հաջի Սուլթանին ու իրենց բերած հացամթերքները նրան եյին ծախում: Սիրում եյին նրան, վորովհետև թևերը մինչև արմունկները սոթտած՝ շուտ-շուտ աբդեստ եր անում ու «ելրահման» (ամենագթած) խոսքը կարդում եր յուրահատուկ ներդաշնակությամբ: Բոլորն էլ ճանաչում եյին նրան— այդ «արդար» ու «հավատացյալ» մուսուլմանին: Հավատացած եյին, վոր նրանից ստացած փողը թե հալալ և թե բարաքյաթով կլինի:

Հաջի Սուլթանը հալալ առևտուր էր անում: Գնած հացամթերքները կշռում էր իր սեփական կշեռքով: Ուներ յերկու փութանոց մի կլոր քար, վորը, մթերքի գինը սակարկելուց և վաճառողի համաձայնությունն առնելուց հետո, առնում էր ձեռքն ու ցույց տալով գյուղացուն, ասում.

— Վորդի՛, կշռելու ժամանակ յուրաքանչյուր քաշին դրված այս յերկու փութը հալալ կանես ինձ:

Ինչ խոսք, վոր գյուղացին, 6—7 փութ կշռելու ժամանակ, կշեռքի վրա ավելորդ տեղ գրավող այդ յերկու փութանոցի համար ձայն չեր հանում: Այսպիսով օգտվում էր Հաջի Սուլթանը, վորովհետև կշեռքի վրա գտնվող յերկու փութը հավասար էր քսան փութի, իսկ հարյուր փթի տարբերությունն անում էր 6—7 փութ: Գյուղացին այդ բանը չեր իմանում, իսկ Հաջի Սուլթանն որական վաստակում էր 40—50 փութ զանազան տեսակի մթերք:

Հաջի Սուլթանի հարևան խանութպաններն ասում եյին թե նա յերկու փութանոց քարով խաբում է գյուղացիներին, նրանց թալանում: Բայց այդ խոսքերին ականջ չդնելով՝

— Յես հարամի հետ գործ չունեմ,—ասում էր Հաջի Սուլթանը,—հալալությունով եմ առնում: Յես իմ գործիս տեղյակ եմ:

Հաջի Սուլթանի առևտուրը գնալով մեծանում էր: Դրան զուգընթաց մեծանում էր և գյուղացիների հակակրանքը դեպի Հաջի Սուլթանը, և այլևս «քարի քաշը» հալալ չեյին անում նրան: Հաջին էլ, իր հերթին, առևտուրն ընդհատեց հաճախորդ գյուղացիների հետ: Ինքն էլ զգաց, վոր իրոք գյուղացիներն իրենից յերես են դարձրել: Ու այս անգամ Հաջի Սուլթանը թողեց Շամախու ճանապարհն ու տեղափոխվելով ծովի ափն՝ այնտեղ բաց արեց իր առևտրական գրասենյակը: Հյուսիսային Կովկասից առած մթերքները Պարսկաստան էր ուղարկում: Այնտեղից վերցրած ապրանքը—Ռուսաստան փոխադրում: Չբավականանալով հացամթերքի

առևտրով, Հաջին յերբեմն էլ շաքար և այլ ապրանքներ էր առնում-ծախում: Հաջի Սուլթանի գործերը շատ լավ եյին: Բանկում առանձին վարկ ուներ: Մուրհակներն ամեն տեղ ընդունվում եյին:

1908 թվի աշնանը լուր տարածվեց, թե Հաջի Սուլթանի պարտամուրհակները ժամանակին վճարումներ չկատարելու պատճառով բողոքարկված են: Գործն ընկավ դատարան: Պահանջատերերը շատ եյին: Վերջապես Հաջին «սնանկացավ»: Աչքի առաջ ունենալով նյութական կարողությունը, նա ռուբլուն 60 կոպեկ վճարելով՝ թափեց իր պարտքերը: Հաջու ասածին նայելով, բոլոր պահանջատերերը նրան հալալ եյին արել մնացածը:

Յեթե նկատի ունենանք, վոր Հաջի Սուլթանի բողոքարկված մուրհակների արժեքը հավասար էր 70 հազար ռուբլու, ապա ուրեմն պահանջատերերն այս գործից վնաս են կրել 38 հազար ռուբլի: Իսկ վաճառականական լեզվով դուրս է գալիս, վոր Հաջի Սուլթանն այս առևտրում շահեց ուղիղ 28 հազար ռուբլի: Յեթե վնաս աներ, մեկ յերկու տարուց հետո Հաջի Սուլթանը չպիտի կարողանար գնել Ջավեդխանի փողոցում գտնվող կալվածը, վորի համար նա վճարել էր 33 հազար ռուբլի:

Այս դեպքից հետո Հաջի Սուլթանի վարկը բոլորովին ընկավ: Ծովափի առևտրական գրասենյակը փակվեց: Բազարի փողոցում բաց արեց բազազի մի փոքր խանութ ու կամաց-կամաց առևտուր անելով, հացի փողն աշխատում էր: Հետզհետե սկսեց խանութը մեծացնել: Յերկու տարի անցնելուց հետո նա արդեն յերեք աչքից բաղկացած մեծ մաղազայի տեր էր դարձել: Հաջի Սուլթանը միշտ առաջին ձեռքից էր ապրանք առնում: Ծանոթանալով Մոսկվայի և Լոձի ֆաբրիկանտների հետ, նա կեսը կանխիկ վճարով, իսկ մնացածը վեց ամիս ժամանակով, ապրանք էր բերում և ամբողջ հակերով բաժանում մանր վաճառականներին:

Հաջի Սուլթանի գործերը հաջող եյին ընթանում,

մինչև 1912 թիվը, վորից հետո դարձյալ ձախողվեցին։ Պարտատերերն ելի դուռ ու կտուր կտրեցին։ Մուրհակներն հանձնվեցին դատարան։ Տունը, մաղազան ու յեղած կարողությունը հաշվարկի յենթարկելու համար մի հանձնաժողով նշանակվեց։ Բոլոր պահանջատերերի աչքը Ջավեդխանկու փողոցում գտնվող տան վրա յեր։ Բայց վոչ-վոք չեր կարողանում նրան ատամ դիպցնել։ Վորովհետև ութ ամիս առաջ Հաջի Սուլթանն այդ տունը փոխանցել եր իր քրոջ վորդու անվանը։ Յերկար վեճից, ղալմաղալից հետո Հաջի Սուլթանը ռուբլուն 20 կոպեկ վճարելով՝ բավարարեց իր պարտատերերին։

Այս անգամ ել Հաջի Սուլթանի ունեցած պարտքի գումարն եր 80 հազար ռուբլի, վորից 20 հազար ռուբլի պարտատերերին վճարելով, մնացած 60 հազար ռուբլին տակովն արեց։ Վոչ կառավարությունը, վոչ ել պարտատերերը նրան վոչինչ չկարողացան անել, վորովհետև Հաջի Սուլթանն իր գործին տեղյակ մարդ եր։

Մի տարուց հետո Հաջի Սուլթանը Սաբունչի կայարանի մոտ չորս հարկանի մի տուն ել առավ։

Այսպիսով վերջանում ե Հաջի Սուլթանի առևտրական գործունեյությունը։ Նա տասը տարվա ընթացքում ամենաքիչ դրամագլխով, ավելի ճիշտ ասած, 2 փութանոց մի կլոր քարով, տարեկան 10 հազար ռուբլի յեկամուտ բերող յերկու մեծ կալվածքի տեր դարձավ։

Տեսնո՞ւմ եք Հաջի Սուլթանն իր գործին վորքան տեղյակ, յետ ու առաջ նայող մարդ ե։ Վոչ-վոք նրան վոչինչ չի կարող ասել, չի կարող մեղադրել։ Նա վոչ-վոքի պարտք չունի։ Դու վոնց ուզում ես մտածիր նրա մասին, նա իրեն մի «աստծու մարդ» ե անվանում բառիս լայն իմաստով։ Ինչ վոր արել ե նա, գիտենալով, մտածելով, գործը չափել-ձևելով, սպասած արդյունքն աչքի առաջ ունենալով ե արել։

Իր կյանքում Հաջի Սուլթանը յերբեք սխալ բան չի արել։ Նա միմիայն մի սխալ բան արեց, վորը շատ թանկ նստեց ու միաժամանակ ել արատավորեց նրան...Իսկ հիմա ամեն մարդ ել մոռացել ե այդ բանը։

Հաջի Սուլթանին լավ ճանաչելու համար թող ամոթ չլինի, յեթե այստեղ հիշատակենք նրա գործած այդ սխալը։

Հաջի Սուլթանն ուներ Հասան աղա անունով մի քրոջ վորդի, վորը իմ դպրոցական ընկերն եր։ Դեռ մանուկ հասակից Հասանը մոր կողմից վորբացավ ու ապրում եր քեռու՝ Սուլթանի խնամակալության տակ։ Վերջապես, հայրն ել մեռավ ու նա ընդմիշտ ապրում եր քեռու մոտ։ Յերբ Հաջի Սուլթանը բազազի խանութ բաց արեց, Հասան աղան մտավ նրա խանութը, վորպես գործակատար։ Յերկրորդ անգամ, յերբ Հաջին «իրեն» սնանկացած հայտարարեց պարտատերերի ձեռքից ազատվելու նպատակով, Ջավեդխանկի փողոցի տունը գրանցել տվեց Հասան աղայի անվան՝ այն պայմանով, վոր պարտատերերին բավարարելուց հետո, Հասան աղան տունը կրկին յետ վերադարձնի Հաջի Սուլթանին։

Իսկ Հասան աղան, ընդհակառակը, քեռու հետ «ընկույզ եր խաղում»։ Նա ասում եր.

— Տունը քեռիս ծախել ե. յես ել առել եմ։ Նրան վերադարձնելու վոչինչ չունեմ։

Դեռ ավելին. Հասան աղան Հաջի Սուլթանի մի հատիկ աղջկա վրա ել եր աչք տնկել։ Սիրահարվել եր նրա վրա։ Ու իր այդ մտադրությունը հայտնում եր շատ շատերին, քաջ գիտենալով, վոր Հաջի Սուլթանն աղջիկը չպիտի տա իրեն, վորովհետև ուրիշին տալու նպատակ ուներ։ Հասան աղան բացե ի բաց և ամեն տեղ հայտարարում եր. «Վոչ վոք այդ աղջիկն առնելու իրավունք չունի։ Նա իմս ե. սիրում եմ նրան։ Ուշ թե կանուխ, ամուսնանալու յեմ նրա հետ»...

Հաջի Սուլթանը, յերբեմն լեզվի բռնվելով Հասան աղայի հետ, վերջինիս խոստանում եր առևտրական գործերով ուրիշ տեղ ուղարկել, յերբեմն ել սպառնալիքներ եր կարդում։ Իսկ Հասան աղան անդրդվելի մնաց իր վորոշման վրա։ Հաջին անզոր եր մնացել։ Դատ ու դատաստանով վոչինչ չեր կարողանում անել։ Վերջապես, նա մտածեց իր և Հասանի միջև առաջացած վե-

ձը Թաղային ադդեցիկ աղաախկալների— ախունդների միջոցով լուծել:

Ու մի օր էլ ախունդի սենյակում կայացած ժողովին հրավիրվեց և Հասան աղան:

Քեզ տալիս եմ 5 հազար ռուբլի, տունս ինձ վերադարձրու,—ասաց Հաջի Սուլթանը:

— Յես ո՞ւմնից եմ պակաս վոր... Տուր ինձ աղջիկդ, տունդ վերադարձնեմ քեզ,—պատասխանեց Հասան աղան:

Ծանր եր Հաջի Սուլթանի դրությունը: Նա չեր կամենում իր աղջիկը տալ մի մշակի, վորը յերկար ժամանակ ծառայում եր իր տանը, թեկուզ իր քրոջ վորդին էլ լիներ: Մյուս կողմից, Հաջին յերբեք չեր կարող համաձայնվել, վորպեսզի 35—40 հազար ռուբլի արժողությամբ տունը, իր աչքի առաջ, մի ուրիշը յուրացնի: Հարկավոր եր այդ խնդրին մի կերպ վերջ տալ:

Յեվ 1913 թվի ձմեռը, բքաբեր մի գիշերվա լուսաբացին, Հասան աղայի դիակը գտնվեց մզկիթի պատի տակ: Նրան գիշեր ժամանակ հատուկ զենքով խփել, սպանել եյին: Անհայտ վոճրագործին գտնելու համար Հաջի Սուլթանն էլ շատ աշխատեց, ամեն տեղ դիմեց... Կառավարական պաշտոնյաները, նույնիսկ Թաղեցիները այդ գործում կասկածում եյին Հաջի Սուլթանի վրա: Ասում եյին, վոր յերկու օր առաջ Հասան աղան ասած ե յեղել, թե «ինձ պիտի սպանեն, ինձ սպանողին իմ քեռուց կպահանջեք»:

Ահա այն միակ սխալը, վոր Հաջի Սուլթանը կատարել ե իր ամբողջ կյանքի ընթացքում: Չճանաչելով իր քրոջ վորդուն, միայն նրան հավատալով, Հաջի Սուլթանն իր տունը գրանցել եր նրա անունով:

Հաջի Սուլթանն առևտրից ձեռք քաշելով, տներից ստացած վարձագներով փառավոր կերպով ապրում եր: Համաշխարհային պատերազմն սկսվելուն պես, սկսվեց նաև Հաջի Սուլթանի առևտուրը: Բայց այս անգամ՝ «վոտքի վրա»: Չունենալով խանութ կամ առևտրական գրասենյակ, նա հենց իր տանը շինել եր մի մեծ ամբար

(պահեստանոց) ու հանդիպած ամեն ինչ, առանց գները նայելու, առնում, հավաքում եր, հետո առիթը ներկայանալուն պես, ծախում:

Դեպքերն իրար եյին հաջորդում: Ռազմաճակատներում մեծ փոփոխություններ եյին առաջացել, Հաջի Սուլթանը դրանցով չեր հետաքրքրվում: Նա իր առևտրի հետ եր:

1917 թվի փետրվարյան հեղափոխությանը հաջորդեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը: Ճանապարհները փակվել եյին: Ամենուրեք սով, համաճարակ, հիվանդություն: Մարտ և սեպտեմբեր ամիսների անցքերը: Բաքվի գրավումը և հետո վերադարձնելը և այլն, և այլն: Այս բոլոր դեպքերն ու անցքերը Հաջի Սուլթանի վրա վոչ մի ազդեցություն չթողին: Հաջի Սուլթանը քաղաքականության հետ գործ չուներ: Նա ամեն բան առնում, ամբարն եր տեղավորում...

Վերջապես ծագեց 1920 թվի ապրիլյան հեղափոխությունը, վորն սթափեցրեց Հաջի Սուլթանին, բաց արեց նրա աչքերը: Ազգայնացրին Հաջու տները, զրկվեց նա տներից յեկած վարձագներից: Ուրիշների տների հետ ցուցակագրվեցին նաև Հաջի Սուլթանի տնային իրերը: Կնքեցին «ամբար»—ը:

Յերկու օրից հետո, ապրանքները տեղափոխելու համար սայլերը կանգնեցին տան դռան առաջ: Մի խումբ մարդկանց ներկայությամբ դատարկեցին նրա ամբարը: Յես էլ այն ժամանակ հեռվից մոտիկ եյի անում: Ինչե՞ր ասես, վոր չկային Հաջի Սուլթանի ամբարում:

Արշինով ապրանք 8 հակ, Կազանի սապոն 15 սընդուկ, բրինձ 31 քսակ, ձիու պայտի մեխ 23 արկղ, «Զինգեր» մեքենա 7 հատ, կառքի ռեզիններ 18 զույգ, ավտոմոբիլի շիներ 18 զույգ, լրագրի թուղթ 13 հակ, պանիր 9 տիկ, սայլի անիվներ 7 հատ:

Սրանց հետ միասին անհաշիվ մանր ապրանք՝ չաքուր, անիվի թելեր, ձիու պայտեր, գուլպաներ, վոտնամաններ, հոտավետ սապոններ, պարաններ, պաս-

տառներ, լամպոչկաներ, լուցկի, լամպի պատրույգ, սամովարներ, տանիքի թիթեղ, տոպրակներ, և այլն և այլն ...

Հաջի Սուլթանն ամբողջ 8 ամիս տեղ չմնաց, որ չդիմեր: Բազմի հայտնի իրավաբաններին զանազան բովանդակությամբ դիմումներ գրել տվեց: Պատասխանատու պաշտոնյաների առաջ վիզը ծռելով խնդրեց, որ գոնե գրավված տներից մեկը և կամ ապրանքների մի մասն իրան վերադարձվի: Սակայն ապարդյուն: Դես ու դեն ընկնելուց, շատ աշխատելուց հետո միայն հաջողվեց իրեն ձեռք բերել «ինվալիդության» մի փաստաթուղթ:

Այժմ, կարծեմ, Հաջի Սուլթանին լավ ճանաչեցիք: Գիտեմ, որ պիտի առարկեք, թե «Մեզ ներկայացրած Հաջու իսկական անունը Սուլթան չէ, այլ Ռահման է, կամ Ռամազան»: Ըստ իս, դրան այնքան էլ կարևորություն չպետք է տալ: Ուզում է՝ Հաջի Շաբան լինի, Հաջի Աղաբալա, կամ Հաջի Աղաքիշի... Միևնույն է: Ձեզ ներկայացնում են այն Հաջուն, որը մի կլոր յերկու փունտանոցով սկսեց իր առևտուրը, յերկու անգամ «սնանկացավ», ծանոթ գործի պատճառով քրոջ որդուն սպանել տվեց և հիմի էլ ձեռքին ունի «ինվալիդության փաստաթուղթ»:

Այս Հաջին առաջներում իսկի էլ լրագիր չէր կարդում, իսկ այժմ, ամեն որ «Կոմունիստ» թերթ է ստանում, և առաջին հերթին Խորհրդային Միության միջազգային դրության ու յեվրոպական մի շարք պետությունների միջև պատահած կոնֆլիկտների մասին գրված լուրերն է կարդում:

Անցյալ որը փողոցով անցնելիս Հաջին պատահեց ինձ ու սկսեց Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի առթիվ զանազան հարցեր տալ:

— Ի՞նչ է քո կարծիքը, արդյոք «ընդհանուր ներում» չպիտի՞ լինի:

— Հավանական է, որ լինի,— պատասխանեցի յես:

— Ո՞ւմ համար:

— Ի՛նչ ասեմ:

— Ի՞նչ է քո կարծիքը բռնագրավված ապրանքների մասին:

— Տարօրինակ հարց, որին ոչինչ չեմ կարող պատասխանել:

— Ուզում եմ ասել, որ այդ ապրանքներն իրենց տերերին չպիտի՞ վերադարձնեն:

— Ընդհանուր ներում,—ասացի,—կարող է լինել քանտարկյալների համար, տների հետ ոչ մի առնչություն չունի:

— Հաստա՞տ գիտեք:

— Հաստատ ոչինչ չեմ կարող ասել:

— Յես այնպես գիտեմ որ, մի քիչ մտածելուց հետո ավելացրեց Հաջին,—ընդհանուր ներում կլինի ու գրավված տների մի մասն էլ կվերադարձնեն նախկին տերերին:

— Վո՞րտեղից գիտեք:

— Այնտեղից, որ յես իմ տներն աշխատածս հալալ փողերովն եմ առել: Հալալ ապրանքը յերբեք չի կորչի: Յես ինքս էլ «ինվալիդ» եմ—թուղթ ունեմ,— պատասխանեց Հաջին, ու յերեսի վրա ցոլացին հույսի նշույլներ:

Ու մինչ նա ուզում էր ցույց տալ ինձ «ինվալիդության» թուղթը, յես ընդհատեցի նրան ասելով.

— Հարկավոր չէ, Հաջի... ինշալլահ... տունդ քեզ կվերադարձնեն:

— Ինշալլահ... ինշալլահ.. Տերը կամենա... Հալալությամբ վաստակած փողը, հարստությունը չի կորչի,—ասաց նա ու բաժանվեց, բարձր տրամադրության տակ:

«ՈՒՋՈՒՆԴԱՐԱ»

Նա բնավորությամբ առանձնահատուկ գիծ ուներ։ Տուն կամ փողոց նրա համար միևնույն էր։ Ծխած գլանակի մնացորդը միշտ գետին էր գցում, հետո էլ վոտքով տրորում։ Այս իրեն հատուկ զվարճություն էր պատճառում։ Այս սովորությունը կարծես Միրզաղայի մինչև ուղն ու ծուծը թափանցած լիներ։ Գուցե հրաժարվեր դրանից, սակայն մինչև հիմա նա այդ յերևույթի լավ ու վատ կողմերի մասին չէր մտածել։ Յերբ առաջին անգամ հանգստի տուն յեկավ, այդտեղ կարգապահության սովորության ծանոթ չլինելով, չէր իմանում թե ինչպես պետք է մաքրություն պահպանի։ Դրա համար էլ, համաձայն իր մշտական սովորության, ծխած գլանակի մնացորդը գետին գցեց։ Յերբ ուզում էր տրորելով անցնել, մի անծանոթ աղջիկ նրան մոտենալով, ասաց․

— Քաղաքացի, սա մեր հանգստի տունն է, անհրաժեշտ է մաքրություն պահպանել, գլանակի մնացորդը գետին գցել չի կարելի։

Այս աղջիկը Ջեմիլեն էր։ Ինչպես Միրզաղան, նա էլ էր յեկել այստեղ հանգստանալու։ Միրզաղանը կարծեց, վոր նա հանգստի տան տեխնիկական աշխատակից է և կամ պատասխանատու ծառայող։ Շփոթվեց և չէր իմանում ինչպես պատասխանել։ Վորոշ տատանումից հետո կռացավ և վերցնելով վոտքի տակ տրորած գլանակի մնացորդը, ուզեց գրպանը դնել։

— Ինչո՞ւ յեք ձեր գրպանը դնում, հարցրեց Ջեմիլեն։

— Հապա ի՞նչ անեմ։

— Ահա հատուկ ամաններ, վորտեղ կարելի յե գցել գլանակի մնացորդը և այլ նման աղբը։

Դրա վրա Ջեմիլեն հասարակական կյանքի սովորությունների և կրթության անծանոթ Միրզաղայի թևը մտնելով, տարավ նրան 30—40 քայլ այն կողմ սո-

ճի ծառի ստվերում գտնվող թիթեղյա աղբամանի կողմը և ցույց տվեց այն։

Նույն գիշերը Միրզաղանը Ջեմիլեյից մի յերկրորդ նկատողություն էլ ստացավ։

— Ընկեր, միթե՞ չգիտեք, վոր գետին թքել չի կարելի, բա էս ամաններն ինչի՞ համար են։

Ջեմիլեն նորից Միրզաղային ցույց տվեց թքամանը։ Միրզաղանը յերբեմն կայարանի, դրասենյակի պես տեղերում մի անկյունում դրված, վերևի մասը ձագարի նման ամաններին հանդիպել էր մինչ այդ, բայց վոչ հետաքրքրվել, վոչ էլ իմացել էր նրանք ինչի համար են։

Այդ որը Միրզաղայի տրամադրությունը տեղն էր։ Առավոտվա դեպքը՝ Ջեմիլեյի հետ հանդիպումը՝ նրա վրա այլ կերպ էր ազդել։ Չնայած իր յերիտասարդ հասակին, մինչ այդ վորևէ աղջկա կամ կնոջ հետ ծանոթություն կամ ընկերություն չէր հաստատել։ Ջեմիլեն առաջինն էր, վոր նրա յերեսին ժպտել և իր թևն անցկացրել էր նրա թևին։ Նա նոր էր հասկացել, վոր Ջեմիլեն էլ իրեն պես մի հանգստացող էր։ Ջեմիլեյի շարժ ու ձևերը նրան այնքան եյին դյուր յեկել, վոր նա զրույցի ձևով սկսեց նրա հետ վիճել։

— Ինչո՞ւ չի կարելի․․․

Վիճաբանությունը հետզհետե յերկարում էր։ Մի քանի ուրիշ յերիտասարդներ ևս հավաքված՝ մասնակցում եյին վիճաբանության։ Նրանցից մի մասը Ջեմիլեյին եյին իրավացի գտնում, իսկ մի մասն էլ, սոսկ զվարճանալու և Ջեմիլեյին մի քիչ ավելի խոսեցնելու համար, Միրզաղային եյին իրավունք տալիս։ Վերջում Ջեմիլեն նրանց բոլորին հաստատել տվեց իր ասածների ճշտությունը։ Իսկ Միրզաղան, շարունակելով համառել, կրկնում էր․

— Ինչո՞ւ չի կարելի։ Հնարավոր է գետին թքել, հետո վոտքով տրորելով մաքրել։

Հետևյալ առավոտ Միրզաղան յերրորդ անգամ պատահեց Ջեմիլեյին։ Այսոր վիճաբանության նյութը թքամանը չէր։

Միրզաղան ձեռքին խաղացնելու համար պարտեզից մի ճիպոտ էր կտրել։ Նույն րոպեյին Ջեմիլեն նրա գլխին պատրաստ կանգնել էր։

— Ընկեր, քո արածն անթույլատրելի յե։

Այս անգամ վիճաբանության մասնակցողների մեծամասնությունը Միրզաղայի կողմն էր, վորովհետև նրանցից յուրաքանչյուրն իր հերթին Միրզաղայի նման, վորպես հանգստի տան հիշատակ, կամենում եյին պարտեզից մեկ–մեկ ձեռնափայտ կտրել։

Ջեմիլեն թուրքերեն և ռուսերեն լեզուներով պընդում էր դատախազի նման.

— Պետք է վոր մենք հասարակական սեփականության հող տանենք այնպես, ինչպես մեր սեփականության... Այս շենքերը, այգիները, այգիներում և փողոցներում յեղած ծառերը մերն են։ Նրանց պաշտպանել ամեն մի պատվավոր աշխատավորի քաղաքացիական պարտականությունն է։

Այժմ Միրզաղան Ջեմիլեյին ուշադրությամբ լսում և իրավունք էր տալիս նրան։ Ջեմիլեյի խոսքերը նրա փակ աչքերը բաց եյին անում և հասկացնում նրան թե ինչ մի՛ջավայրումն էր գտնվում։

***

Միրզաղան մոտ քսանհինգ տարեկան մի յերիտասարդ էր։ Նա իրեն հատուկ վարք ու բարքը, բնավորությունն ու մտածելակերպն ուներ։ Ծնողների հետ մի բնակարանի մեջ էր ապրում, մի սեղանից ճաշում, մի սենյակում քնում։ Հակառակ յերիտասարդությանը և արդյունաբերության մեջ աշխատող բանվոր լինելուն, այնուամենայնիվ հին հասարակակարգի մտածելակերպից չէր հրաժարվել։

Կյանքում առաջ յեկած քաղաքական, հասարակական և տնտեսական փոփոխությունները Միրզաղայի հին հոգեբանությունը չեյին կարողացել փոփոխության յենթարկել. վոչ միայն նրա հոգեբանությունն ու մտածելակերպը, այլև կենցաղավարական ձևերն էլ դեռևս պահում եյին իրենց նախահեղափոխական բնույթը։ Նա հոռետես էր։ Վոչ մի բանից գոհ չէր։ Միշտ գանգատվում էր, անցած օրերն էր վերհիշում և նրանց վերադարձն էր ցանկանում։ Այս խառնվածքը նա ժառանգել էր իր հայր մաշադի Կուլամ Հուսեյնից։ Անցյալն անհատապես իր համար մութն էր։

Միրզաղան բանվոր էր։ Չնայած դրան, հասարակական և քաղաքական աշխատանքների հանդեպ բացասական վերաբերմունք ուներ։ Հաճախ ընդհանուր ժողովներին և բանվորական հավաքույթներին չէր մասնակցում։ Բանվորական ակումբի անունը լսել էր, բայց չէր գնացել։ Նա ամենից շատ դժգոհ էր միության ոգևոին տված անդամավճարից։ Նա վոչ միայն արհեստակցական միության քաղաքական և դաստիարակչական նշանակության մասին չէր մտածում, այլև նույնիսկ չէր ըմբռնում, վոր անգործության և հիվանդության դեպքում կարելի յե նրա ոգնությանը դիմել։

Միրզաղան մի մտածելակերպ ուներ։ Այս մտածությունն իր հոր կողմից՝ մաշադի Կուլամ Հուսեյնից էր ժառանգել։

— Մարդ պետք է իր ճարպկության և իր ուժին վստահի,—ասում էր։

— Միությունն ինչի՞ս է հարկավոր։

Միրզաղայի դժբախտությունը նրանումն էր, վոր նա չէր կարողացել միջավայրի և ժամանակի հոգեբանությունը վերլուծել և յուրացնել։

Նա չէր էլ կարող այդ բանն անել, վորովհետև միջավայրից և ժամանակից դուրս, առանձնակյաց կյանք էր ապրում—ճիշտ ժամին աշխատանքի յեր գնում, իսկ աշխատանքից հետո Բյուլբյուլ գյուղի իրենց տունն էր վերադառնում։ Ազատ ժամերն էլ անց էր կացնում նպարավաճառ Քյալբալա Ղազանֆարի խանութի առաջ։

Միրզաղան թեկուզ մի անգամ գիտական էքսկուրսիաների կամ ճանապարհորդությունների չէր մասնակցել։ Այն ինչ նրա հետ միասին նույն հանքում աշխա—

տող ընկերները հաճախ ոգտակար մասսայական աշխատանքից և պտույտներից ոգտվել եյին:

Ուրեմն Միրզաղան չնայած հեղափոխության ոջախ հանդիսացող Բագվի նավթահանքերում մոտավորապես տասը տարվա բանվոր եր, այնուամենայնիվ իր միջավայրին ոտար եր: Նա չեր ճանաչում իր միջավայրը: Քանի ժամանակն առաջ եր գնում, Միրզաղան նրանից այնքան հեռանում եր, և քանի հեռանում, այնքան ոտար եր դառնում իր միջավայրին:

Վերջին ժամանակները Միրզաղան տկարություն եր զգում: Գլխացավը նրան տանջում եր, իսկ քնատությունն ուժասպառ անում: Բժիշկը նրան վախեցրել եր. «քեզ համար լուրջ հանգստություն ե հարկավոր, հակառակ դեպքում հիվանդությունդ լուրջ հետևանք կարող ե ունենալ»—ասել եր: Գործարկոմն ել վորոշում եր հանել նրան հանգստյան տուն ուղարկել:

Միրզաղան հեղափոխության յոթներորդ տարում առաջին անգամն եր, վոր հանգստյան տուն գալով, հասարակական կյանքով եր ապրում: Այստեղ ամենից ավելի Ջեմիլեն եր նրան զբաղեցնում: Ջեմիլեն, հյուսիսային կողմի Թուրքերից մի Թաթարի աղջիկ եր: Սովի տարիներում ծնողները կորցրած, վորբանոցում մի քանի տարի ուսում և կրթություն ստանալուց հետո, մի տարի առաջ դուրս գալով՝ հանքային շրջանում «Գորնյակ» ճաշարաններից մեկում ծառայում եր: Ջեմիլեն ուշիմ, աչքաբաց, ապրած միջավայրի հոգեբանությունը յուրացրած մի աղջիկ եր:

Միրզաղան իր հետ կողք-կողքի պառկող ընկերոջ հետ նրա մասին յերկու անգամ խոսակցություն եր ունեցել:

— Այս աղջիկը յերբեք մեր Թուրք աղջիկներին չի նմանում:

Ընկերը պատասխանել եր.

— Ճիշտ ե, լեզվանի, համարձակ և ճարպիկ աղջիկ ե:

— Բացի դրանից, նա մի ուրիշ հատկություն ել ունի:

— Հրաշալի, միանգամայն ժամանակակից աղջիկ ե:

Միրզաղայի ընկերը կես լուրջ, կես կատակ ավելացրել եր.

— Կորիճ տղամարդ ես, արի համաձայնվիր այս աղջիկն առնենք քեզ:

— Կառնեյի, յեթե գար: Նա վատ աղջիկ չե:

* * *

Միրզաղայի արձակուրդի ժամանակը շուտ լրացավ: Նա հանգստի տնից Բյուլբյուլ գյուղի իրենց տունը վերադառնալիս, այնտեղի կոլեկտիվ կյանքի և իր ծնողների հետ անցկացրած միայնակ կյանքի մեջ յեղած մեծ տարբերությունը հասկացավ: Միրզաղան իրենց տան մեջ նեղվում եր, սիրտը յերբեք չեր բացվում: Մոր բոլոր շարժումները հասարակ և ապիկար եր գտնում և հոր բոլոր խոսքերի մեջ տրամաբանություն չեր նկատում: Միրզաղան իրեն զբաղեցնելու համար խոսակից եր փնտրում: Նրան այնպիսի մի մարդ եր հարկավոր, վոր Ջեմիլեյի մասին խոսելիս, նրան իրավունք տար Ջեմիլեյի բարեմասնություններն ընդունել և հաստատել:

Նման մի մարդ Նպարավաճառ Քյալբալայ Ղազանֆարի խանութում չեր կարող գտնել: Նա կարոտում եր Ջեմիլեյին: Հանգստի տանն անցկացրած որերը, տեսած դեմքերն ու դեպքերը կամաց-կամաց հալչում գնում եյին: Իսկ Ջեմիլեն անմոռանալի յեր մնացել նրա հիշողության մեջ:

Միրզաղան ամեն որ հիշում եր նրան: Մի մարդ եր փնտրում, վոր Ջեմիլեյի հետ ունեցած իր կապերի մասին նրա հետ զրույց անի:

Մի գիշեր հանգստի տանը յերեկույթ եր կազմակերպված: Բացօդյա գիշերվա պայծառության մեջ ա-

րևելյան և արևմտյան յերաժշտությունը նվագում եր, տղամարդիկ հանդստի տան կանանց բաժնում գտնվող աղջիկների և կանանց հետ միատեղ, մի ընտանիքի անդամների նման զվարճանում ու պարում եյին։ Ջեմիլեն ել նրանց հետ եր և կարծես յերեկույթը նա յեր ղեկավարում։ Ամեն յեղանակով պարում եր, վոչ վոքի չեր մերժում· և արդեն մի քանի յերիտասարդների հետ պարել եր։ Միրզաղայի մտքից ել անցավ նրա հետ պարել, բայց առաջարկել չեր համարձակվում։ Վայ թե մերժեր։ Այս մասին խորհուրդ հարցրեց կողքի ընկերոջից։

— Ի՞նչ ես կարծում, Ջեմիլեն ինձ հետ կպա՞րի։

— Ինչո՞ւ չի պարի։

— Բայց մի հանգամանք· յես նրանց յեղանակներով պարել չեմ իմանում։ Յես միայն «Ուզունդարա» յեղանակով կարող եմ պարել։

— Ուզունդարա՞։ Դա շատ հին յեղանակ ե։

— Ի՞նչ անեմ։ Նոր յեղանակներ չեմ իմանում։

Այս հանգամանքը Միրզաղային շատ եր տանջել։ Զգում եր, վոր միայն «Ուզունդարայով» նպատակին հասնել անհնարին եր· անհրաժեշտ ե նոր յեղանակներ ել իմանալ։ Չնայած դրան, հանկարծ սիրտ առած Ջեմիլեյին մոտենալով, ասել եր·

— Ինձ հետ կպարե՞ք։

— Ձեզ հե՞տ։

— Կխնդրեյի։

— Լավ, պարենք։ Վո՞ր յեղանակով։

— Յես միայն «Ուզունդարա» յեղանակով կարող եմ պարել։ Ջեմիլեն այդպիսի յեղանակի անունն ել չեր լսել։ Այդ յեղանակով հետաքրքրված, նվագածուներին դառնալով, խնդրեց·

— Ընկեր նվագածուներ, «Ուզունդարա» նվագեցեք։

«Ուզունդարան» վաղուց մոռացության տրված մի յեղանակ եր։ Այս յեղանակը վորպես հին Արևելքի դանդաղաշարժ հոգեբանությունն իր մեջ պարունակող, վորպես հնություն, անհետաքրքիր չեր։

Այժմ ամեն կողմից ծափահարում եյին։ Միրզաղան, մեջտեղ գալով, թեթև քայլերով, վիզը, ուսերը կոտրտելով, պարում եր, Ջեմիլեն ել հետևում եր նրա շարժումներին։

Մի առժամանակ պարելուց հետո, Միրզաղան Ջեմիլեյին բուֆետ առաջնորդեց և նրան պաղպաղակով հյուրասիրեց։ Այս դեպքից հետո նրանք ամեն որ հանդիպում և զբոսնում եյին միասին։ Այս քաղցր ընկերակցությունը միայն մի շաբաթ եր շարունակվել։ Ջեմիլեյի ժամանակը լրանալու հետևանքով, հանգստի տունը պետք ե թողներ։ Միրզաղան նրան ուղեկցել եր մինչև կայարան և բաժանվելու ժամանակ ասել եր·

— Ձեզ հետ ծանոթանալուց հետո միասին զբոսնելն ինձ համար վորչափ վոր հաճույք եր, այժմ ել ձեզնից բաժանվելը նույնքան ծանր ե ազդում։

Միրզաղայի այս անկեղծ արտահայտություններին հանդեպ Ջեմիլեն ժպիտով եր պատասխանել։

Միրզաղան ավելացրել եր·

— Հնարավոր, չե՞ արդյոք, վոր այսուհետև ել յերբեմն տեսնվենք։

— Ինչո՞ւ չե։ Յես ամեն հինգշաբթի յերեկոները մեր շրջանի «26»-ի ակումբն եմ գնում, վորտեղ յերեկույթներ, զեկուցումներ և ներկայացումներ են լինում։ Յեթե այդտեղ լինեք, կարող եք ինձ տեսնել։

Ջեմիլեյի գնալուց հինգ որ հետո, Միրզաղան ել հանգստի տունը թողնելով, հենց առաջին հինգշաբթի որը Բյուլբյուլ գյուղից յեկել և հարցնելով, գտել եր 3-րդ հանքերում գտնվող «26»-ի անվան ակումբը։ Սակայն Ջեմիլեյին այնտեղ չեր գտել։ Ակումբի ձմերային շենքում նորոգություն եր կատարվում։ Աշունը մոտ և յեղանակը անձրևային լինելու հետևանքով, ամառային բաց շենքում վոչ մի հավաքույթ չկար։

***

Այդ որվանից համարյա յերեք ամիս եր անցել։ «26»-ի անվան ակումբի ձմերային շենքի նորոգումը

վերջացել և մոտ վեց շաբաթ է բացվել էր: Ամեն հինգշաբթի յերեկո Միրզաղան անց էր կացնում այդտեղ Ջեմիլեյի հետ միասին: Ջեմիլեյի յուրաքանչյուր շարժ ու ձևին ու նրա խոսքերին առանձին նշանակություն էր տալիս և դրանից իր օգտին յեզրակացություն անում: Անցյալ շաբաթ Ջեմիլեն բավական ուշ էր յեկել ակումբ: Միրզաղան նրա ուշացումից սկսել էր մտահոգվել: Ուզեցել էր վեր կենալ ու գնալ նրան գտնելու: Յեղանակը այնքան էլ լավ չէր. անձրև էր գալիս: Այս մտածումների մեջ էր, Ջեմիլեն ներս մտավ: Դեմքից յերևում էր, վոր հիվանդ է:

— Մի քիչ տկար եմ: Չէյի ուզում գալ, բայց մտածեցի, վոր անցյալ շաբաթ ժամադրություն եմ նշանակել: Խոսքս հարգելու համար յեկա,—ասաց նա:

Ամբողջ շաբաթ Միրզաղան Ջեմիլեյի այս վարմունքը և ասած խոսքերը վերլուծելուց հետո, վորոշել էր նրա հետ ամուսնանալ: Նա վո՞րտեղից պիտի գտներ Ջեմիլեյի պես մաքուր, վոգևորիչ, ընկերական և միաժամանակ ճարպիկ ու գեղեցիկ մի աղջիկ: Միայն մի հանգամանք կար. Միրզաղան Ջեմիլեյի հետ ամուսնանալու մի նախապայմանը չէր գտնում: Ջեմիլեն Բաքվում վոչ մի պաշտպան կամ բարեկամ չուներ, վորպեսզի ըստ պապենական սովորության, խնամախոսի միջոցով նրա ձեռքը խնդրեր: Իր նպատակին հասնելու համար Միրզաղային միայն մի միջոց էր մնում՝ խնդիրը լուծել նոր սովորության համաձայն, այսինքն՝ անձամբ Ջեմիլեյին առաջարկել ու համաձայնություն գալ: Այս նպատակով Միրզաղան այս գիշեր իր հագուստ-կապուստի վրա առանձին ուշադրություն դարձրած՝ ակումբ էր յեկել, ուր նրան սպասում էր Ջեմիլեն: Ակումբում զեկուցում կար: Լսեցին: Զեկուցումից հետո համերգ էր լինելու: Չուզեցին մնալ: Ակումբից դուրս յեկան, լուռ գիշեր էր: Դանդաղ քայլերով, հանքերի միջով անցնող խճուղու վրա կողք-կողքի գնում էյին: Վոչ մի կենդանի եյակ չէր նկատվում, միայն նավթահորերի մեքենաների միօրինակ ձայնն էր լսվում: Իրարու

հետ վոչ մի կապ չունեցող մի շարք հարցերի շուրջ խոսելուց հետո, յերկուսն էլ լռել էյին: Միրզաղան Ջեմիլեյին դիմելով, ասաց.

— Ուզում եմ ձեզ մի բան ասել:

— Խնդրեմ:

— Առանց չադրայի ման յեկող Թուրք աղջիկների հանդեպ յես առաջ լավ կարծիք չունեյի: Այնպես էյի կարծում, վոր նրանք բոլորն էլ անբարոյական են: Դրա համար էլ մինչև հիմա բոլոր կանանց հանդեպ թշնամական վերաբերմունք ունեյի: Ձեզ հետ ծանոթանալուց հետո գաղափարս և կարծիքս բավականին փոխվեցին: Տեսնում եմ, վոր դուք իմ կարծած կանանց և աղջիկներին յերբեք չեք նմանում:

Միրզաղան իր սրտի ցանկությունը չհայտնեց: Նա Ջեմիլեյի հանդեպ իր սերը ցույց տալով, նրա հետ ամուսնանալ էր ուզում: Այդ Ջեմիլեն ինքն էլ էր զգում և վերջին օրերին Միրզաղայից նման առաջարկի յեր սպասում:

— Ձեր այդ ասածներն այնքան կարևոր մի խնդիր չեն, վորի մասին իմ կարծիքին դիմելով, ինձնից թույլտվություն խնդրեյիք: Յեթե դուք առանց չադրայի ման յեկող Թուրք աղջիկներին վատ աչքով եք նայել, այդ հանգամանքն ինքնին ապացույց է այն բանի, վոր դուք ներկա հասարակությունից հետ եք մնացել: Կանանց նկատմամբ թշնամական վերաբերմունք ունենալու մեջ վոչ մի իմաստ չկա: Համենայն դեպս, ինձ համար կարևորը դուք չասացիք:

— Ճիշտ եք ասում, մինչև հիմա ասածներս կարևոր չեյին: Կարևորը կա, ուզում եմ ասել, բայց չեմ համարձակվում:

— Ուրեմն ուզում ես ասե՛լ այն, ինչ վոր սիրտդ չի թելադրում: Դրա համար էլ լեզուդ անկարող է արտահայտել: Նման խոսքը ի՞նչ կարևորություն կարող է ունենալ:

— Չէ, սխալվում եք: Միանգամայն հակառակը:

Այն, ինչ վոր սիրտս ե ուզում ասել, լեզուս անկարող ե արտահայտել:

—Այդ վո՞ր խոսքն ե, վոր ձեր սիրտն ուզում ե, իսկ լեզուն չի կարողանում արտահայտել:

— Դա այն խոսքն ե, վոր դուք ինձ դուր եք գալիս:

— Միայն այդքա՞ն:

— Վոչ միայն դուր եք գալիս, այլև սիրում եմ ձեզ:

Ջեմիլե, յես ձեզ սիրում եմ:

— Ուրեմն ա՞յդ եյիք կամենում ինձ հայտնել—հա՞: Մենք, աղջիկներս ձեզպես յերիտասարդներից նման խոսքեր լսելու սովոր ենք: Շնորհակալ եմ ձեր հարգանքից:

Ջեմիլեյի խոսքերը Միրզաղան յերկու ձևով եր մեկնաբանում: Յերկուսն ել հնարավոր եյին: Ջեմիլեն նրա անկեղծությանը կարող եր հավատալ, կամ չհավատալ:

— Ջեմիլե, հարցը դրանում չե: Սրտումդ կասկած չստեղծես: Յես ուզում եմ ասել, թույլ տվեք իմ սերը հայտնել ձեզ: Մեր կյանքը միացնենք, միասին ապրենք:

Ինչքան ել Ջեմիլեն արդի ժամանակի աղջիկ եր, բայց և այնպես, ելի աղջիկ եր: Նրա դիրքը շատ լուրջ եր, նա իր կյանքի ամենակարևոր րոպեներն եր ապրում: Իրեն համար կյանքի ընկեր ընտրելու նախորյակին եր գտնվում: Միրզաղայի հետ թևանցուկ անելով՝

— Ընկեր ջան, յես քեզ հասկանում եմ և գուցե քեզ հետ ամուսնանամ: Բայց ուզում եյի իմանալ, թե ի՞նչպիսի պայմաններով ես ցանկանում ամուսնանալ ինձ հետ:

Միրզաղան վոչ մի պայման չեր իմանում. նա այդ մասին չեր ել մտածել:

— Ամուսնության պայմանը վո՞րն ե.... Ամուսնությունը պայման չունի, շատ պարզ և հասկանալի:

— Վոչ, դրանց ժամանակն անցել ե: Նրանք ամուսնանում եյին միայն մարդ ու կին լինելու համար: Մենք չենք կարող միայն դրանով բավարարվել:

— Հապա ի՞նչպես պետք ե լինի: Ամուսնության մեջ մարդ ու կին լինելուց բացի ուրիշ բան կա՞:

— Այո, կա—կյանքի ընկեր, տան ընկեր կլինենք:

— Լավ, կյանքի ընկերներ կլինենք: Ուրեմն համաձայն եք:

— Յեթե իմ պայմանները ընդունեք, կհամաձայնվեմ:

Ջեմիլեն սկսեց պարզել իր պայմանները Միրզաղային: Այս պայմանները բավական պարզ եյին: Առաջին՝ Ջեմիլեն պահանջում եր, վոր Միրզաղան իր կապը հին ընտանիքից խզի և նրանց միջավայրից հեռանա: Ազնեվթի կառուցած բանվորական շենքերից իրեն համար մի բնակարան վերցնի և փոխադրվի այնտեղ: Յերկրորդ—թե արտաքին տարազով և թե մտածելակերպով՝ ապրած միջավայրի պահանջներին հարմարվի: Միրզաղան պատրաստ եր ընդունելու Ջեմիլեյի պայմանները:

— Յես դրանց համար կաշխատեմ,—ասաց:

— «Կաշխատեմ»-ով գործը չի վերջանա: Պետք ե ձեռք բերել:

— Ձեռք կբերեմ:

— Ձեռք բերելուց հետո յես նոր բնակարանում քեզ հետ կյանքի ընկեր կլինեմ:

— Յեթե դու համաձայնվես ինձ հետ ամուսնանալ, ամեն ինչ կկարգադրվի:

— Յես կհամաձայնվեմ այդ բոլորը կարգադրվելուց հետո:

Արդեն հասել եյին Ջեմիլեյի բնակարանի դռան առաջ:

***

Միրզաղայի համար իր հոր տունը թողնելը և նրանից հեռու ապրելն ինչքան հեշտ եր, նույնքան ել դժվար եր բանվորական շենքերից բնակարան ձեռք բերելը: Ազատ բնակարան չկար: Բոլորը ժամանակին զբաղեցրած եյին: Մի շարք դիմողներ ամիսներով սպասում եյին: Իսկ նա հենց նոր եր դիմել: Միրզաղայի համար յեր-

կար սպասելուց բացի ուրիշ վոչ մի միջոց չկար: Նա չտապում էր, սպասել հնարավոր չէր: Միայն ամուսնանալով կարող էր իր կյանքին վորոշ ընթացք տալ և հանգիստ կյանք վարել: Բայց առանց բնակարանի ամուսնություն հնարավոր չէր: Ջեմիլեն այս խնդրում չէր զիջում: Միրզաղան իր ամբողջ յեռանդով պետք է հետապնդեր իր նպատակը և իր կամքից չպետք է հրաժարվեր: Նա այդ բանը լավ էր զգում, և դրա համար էլ բոլոր հիմնարկ-ձեռնարկներին դիմել ու բոլոր տեսակի մարդկանց հետ յերես-յերեսի յեր յեկել: Այս հանգամանքը նրա հոռետես խառնվածքը մասամբ փոխել էր: Նա հենց նոր էր հասկացել, վոր կյանքում հաջողություն ձեռք բերելու համար, անհրաժեշտ է հասարակության մեջ դիրք գրավել: Ջեմիլեյի հանդեպ ունեցած սերը նրան սովորեցնում էր կյանքն ու պայքարը: Ուղիղ տասնմեկ ամիս սպասելուց և բավականին հարայ-հրոց բարձրացնելուց հետո, Ռամանիի շրջանում բանվորական ավանում կարողացել էր 2 սենյակից բաղկացած մի բնակարան ձեռք բերել: Այս Միրզաղայի համար մի մեծ հաջողություն էր: Նոր գլխի ընկավ, վոր մարդ միայն իր ճարպկությամբ վոչինչ չի կարող անել: Ներկա կյանքի բոլոր հիմքը կառուցված է կազմակերպությունների վրա:

Միրզաղայի սերն ու խանդաղատանքը Ջեմիլեյի հանդեպ հետզհետե ավելանում էր: Առանց Ջեմիլեյի նա չպիտի կարողանար ապրել: Այդ բանը վաղուց էր զգացել: Ուզում էր, վոր ամեն որ Ջեմիլեյի հետ խոսի: Բայց հեռավորությունը այս ցանկության արգելք էր հանդիսանում: Միայն ուրբաթ օրերն էյին տեսնվում և յերեկոներն էլ «26»-ի անվան ակումբումն էյին անցկացնում: Յերբեմն Ջեմիլեն նրա բնակարանն էր գալիս, նոր գնած տնային իրերն իր ճաշակով տեղավորելու:

Մի շաբաթ առաջ նոր բնակարանում Միրզաղան խնճույքի յեր հրավիրել իր մոտ ընկերներին: Նպատակը—հարսանիքի մասին խորհրդակցելն էր: Վորոշեցին փետրվարի մեջ Միրզաղայի հարսանիքը կատարել: Այժմ

Միրզաղան օրերն էր համարում: Նա այս մասին Ջեմիլեյի համաձայնությունն էր ստացել: Յերեք շաբաթ էլ սպասելու յեր:

***

«26»-ի անվան ակումբում շքեղ մի յերեկույթ էր կազմակերպված: Ակումբի արևելյան և արևմտյան յերաժշտական խմբերը զանազան յեղանակներ էյին նվագում: Թե՛ յերիտասարդ և թե հասակավոր աղամարդիկ ու կանայք պարում էյին: Միրզաղան էլ էր մասնակցում յերեկույթին: Նա հարսանիքի համար նոր կարել տված շորերն էր հագել և իր արտաքին տեսքին այնպիսի ձև էր տվել, վոր Ջեմիլեն հավանի: Ջեմիլեյի հետ թևանցուկ, ակումբի մեծ միջանցքում ծանր քայլերով ման էր գալիս: Զրույցները կամաց-կամաց զվարճաբանության ձև էյին ստանում:

Միրզաղան ասում էր.

— Դու չես իմանում, Ջեմիլե, առանձին մի անկյուն քաշված զույգ ապրելու մեջ ուրիշ մի հաճույք կա: Այսպիսի աղմկալից ակմբի կյանքից ի՞նչ դուրս կգա:

— Ինչ վոր կա՝ այստեղից դուրս կգա: Այստեղ հասարակական կյանք կա: Անհրաժեշտ է ապրել մասսայի հետ և շնչել նրա շնչած օդը: Այստեղի հաճույքը տանը միայնակ անցկացրած կյանքի հաճույքից ավելի օգտակար է:

Միրզաղան չէր ուզում Ջեմիլեյի գաղափարը բաժանել:

— Գուցե,—ասում էր,—վորոշ բաներում կարելի յե ակումբից նյութական օգուտ ստանալ: Յես նյութական բաների մասին չեմ խոսում: Յես ասում եմ, վոր մարդուն բարոյական կյանք է հարկավոր: Իսկ այդ բարոյական կյանքը կարող ենք միայն ստանալ տանը անցկացրած մեր միայնակ կյանքից:

— Միանգամայն հակառակն եք ասում: Մենք բա-

րոյական կյանքը պիտի ստանանք միայն ակումբի միջոցով:

Վիճաբանությունը չէր վերջանում: Միրզաղան ակումբ էր գալիս միայն Ջեմիլեյի համար: Նա ակումբում ուրիշ վոչինչ չէր կարողացել տեսնել: Իսկ Ջեմիլեն ակումբի մշտական անդամներից էր: Նա հետաքրքրվում էր ակումբի բոլոր գործերով և մասնակցում էր մի քանի խմբակների:

Նրանց վիճաբանությունը ընդհատվեց, յերբ արևմտյան յերաժշտախումբն սկսեց նվագել: Հիմա, մեծ և ընդարձակ դահլիճում ծանր և համաչափ քայլերով մասսայական մի վալս էր սկսվել: Իրար հետևից զույգեր ձեռք ձեռքի տված պտտվում եյին դահլիճի մեջտեղում գտնվող նվագախմբի շուրջը: Պարողների հրջանակը հետզհետե լայնանում էր: Ջեմիլեն Միրզաղային պարողների մեջ քաշեց: Մի ձեռքով նրա կողքից բռնելով, մյուս ձեռքն էլ նրա ձեռքը տալով՝ պարելու դիրք բռնեց: Միրզաղան արևմտյան պար չէր իմանում: Նա այս կերպ չէր կարողանում պարել: Չնայած դրան, Ջեմիլեն նրան իր հետ միասին քաշում տանում էր և նա էլ վալս պարողների ներդաշնակ շարժումների հետ դեպի առաջ էր շարժվում: Թեև Միրզաղան յեվրոպական տարազով էր հագնվել, և առաջին անգամ լինելով, ոձիք ու կարմիր փողկապ էր կապել, սակայն այս հասարակության համար օտար էր: Ի՛նչպես շարժվելը չէր իմանում, վոտներն իրար եյին խառնվում: Դրա համար էլ դեմքի վրա դժգոհության նշան կար: Նա, իր հոգին ճնշող այս պարից ուզում էր ազատվել: Անհամբերությամբ վերջանալուն էր սպասում: Այս դրության մեջ էր, յերբ վալսի յերկրորդ յեղանակը սկսեցին նվագել: Ջեմիլեն նրան թողեց: Այժմ բոլոր պարողները իրենց նախկին զույգերը փոխել եյին: Ջեմիլեյի փոխարեն Միրզաղայի մոտ մի ուրիշ կին կար: Միրզաղան կամաակամա նրա հետ մի քանի քայլ արեց: Բայց կնոջ վոտքը կոխելուն պես կինը նրանից հեռացավ: Միրզաղան հեղեղի նման վազող գնացող այս մասսայի մեջ մենակ էր

մնացել և չէր իմանում ինչ անել: Հասարակ քայլերով նրանց մեջ ման էր գալիս և աչքերով Ջեմիլեյին էր փնտրում: Ջեմիլեն հեռվում մի ուրիշ յերիտասարդի թևի տակն էր մտել: Այս հանգամանքը Միրզաղայի «տղամարդու» արժանապատվությունը վիրավորեց: Սառել մնացել էր: Պարողներից մեկը նրան դառնալով, ասաց.

— Քաղաքացի, խնդրում եմ մի կողմ քաշվեք:

Մի յերկրորդն էլ.

— Յեթե պարել չեք իմանում, ուրիշներին մի խանգարեք, — ասաց:

Միրզաղան մասսայի միջից մի կողմ քաշվեց: Պատին կրթնած, աչքերով Ջեմիլեյին էր փնտրում: Քիչ հետո նրան տեսավ բեխերը կտրած, մի հասակավոր մարդու հետ պարելիս, վորը նրա մեջքից բռնել և մարմինը իր մարմնին էր կպցրել: Ջեմիլեն նրա այս արարքի համար վոչ միայն չէր առարկում, այլև գլուխը նրա ուսին հենած, գոհ տրամադրությամբ առաջանում էր:

Այս հանգամանքը Միրզաղայի վրա շատ վատ ազդեց: Նա սպասում էր, վոր Ջեմիլեն այդ մարդու թևից դուրս գալով, նրա սիրտը առնելու համար իրեն մոտ գար: Յեվ սակայն Ջեմիլեն բավարարվեց միայն նրա յերեսին ժպտալով: Բեխերը կտրած մարդու հետ նրա առաջից անցավ գնաց: Միրզաղայի արյունը գլխին խփեց: Ջեմիլեյի այս վարմունքը բացեիբաց նրա «ինքնասիրության» դիպավ: Գլուխը պտտվեց: Աչքերը մըթնեցին: Իրեն կորցրած, հարձակվեց և բեխերը կտրած մարդու գլխին մի բռունցք իջեցրեց:

Իրարանցում սկսվեց: Յերաժշտությունը լռեց:

Այժմ դահլիճում ժխորից և Միրզաղայի գոռգոռոցից բացի, վոչինչ չէր լսվում: Մի քանիսը նրան բռնելով, աշխատում եյին խեղճ մարդուն նրա ձեռքից ազատել: Ջղայնացած հասարակությունը ուզում էր հարձակվել Միրզաղայի վրա, բայց նրան շուտով մի կողմ քաշեցին:

***

Միրզաղայի կատարածը հասարակ մի խուլիգանություն էր: Բայց նա չէր իմանում, որ իր արարքը բանտարկությամբ պատժվող քրեական մի հանցանք էր: Հենց դրա համար էլ չէր զղջում: Նրա բարկությունը դեռևս չէր անցել: Ցեթե հնարավոր լիներ, բեխերը կտրած մարդուն կսպաներ և իր «պասիվը» արտասվող Ջեմիլեյին ոտքի տակ առնելով, կտրորեր: Միրզաղան ակմբի ընթերցարանը քաշված՝ իր շուրջը հավաքվող մի քանի ծանոթների ասում էր.

— Ցերեսը սև լինի, մի անգամ էլ ես ակմբի դուռը չտեսնի: Ցես նրան շուտ ճանապարհի կբերեմ: Նրան ի՞նչ է հարկավոր: Այն ժամանակ, որ նա ինձ է գալիս, յես էլ նրան սիրում եմ, էլ ինչո՞ւ յէ նրա թևը մտնում:

Նույն րոպեյին Ջեմիլեն կանգնեց նրա առաջ: Նրա արյունն էլ պխտորվել էր: Իր հետ կյանքի ընկեր լինելիք մարդու ակումբի պես հասարակական մի վայրում առանց որևէ պատճառի արած խուլիգանությունը չէր կարողանում հասկանալ: Սկսեց նրանից բացատրություն պահանջել:

— Ձեր այս արարքի իմաստն ի՞նչ է:

Միրզաղան զայրացած պատասխանեց.

— Դու այդ բանը շատ էլ լավ հասկանում ես:

— Ցես ոչինչ չեմ հասկանում: Դու ի՞նչ իրավունքով ինձ հետ պարող մարդու վրա հարձակվեցիր:

— Ի՞նչ իրավունքով... այն իրավունքով, որ դու իմ նշանածն ես:

— Հետո ի՞նչ:

— Այն, որ ուրիշ մարդու ձեռքը քեզ չպիտի դիպչի: Իմ ինքնասիրությունը նման բաներ չի ընդունում, հասկացա՞ր:

Ջեմիլեն էլ չուզեց պատասխանել: Մոտենալով, ասաց.

— Վոտքի յելեք, ձեր այստեղ մնալը հարմար չէ:

Ճանապարհ բանալով, դեպի փողոց բացվող դռան առաջը բերեց նրան.

— Ներեցեք, յես ձեզ լավ չեմ հասկացել: Այս վարք ու բարքով մենք չպիտի կարողանանք մոտ ժամանակներում ամուսնանալ: Դուք միայն ձեր հագուստը, արտաքին տեսքն եք փոխել. գնացեք, մի քիչ էլ ձեր միտքը փոխեցեք:

Միրզաղային փողոց դուրս հանելուց հետո, դուռը յերեսին ծածկեց և ինքը կրկին ակումբ դարձավ:

Այժմ Միրզաղան փողոցի մեջտեղում մենակ կանգնած, չէր իմանում ի՛նչ աներ, ո՛ր կողմը գնար: Դիմացը՝ տախտակից շինած մանրավաճառի կրպակից աղոտ լույս էր գալիս, իսկ ակումբում օրգեստրի աղմուկն էր լսվում:

Կարող է, որ դուք Միրզաղայի այս դեպքը միայն մի պատմվածք համարեք և կամ հավատաք, որ նա իրոք կյանքում պատահած մի յերևույթ է:

Ցերկուսի յեզրակացությունն էլ նույնն է՝

Միրզաղայի տրագեդիան հասարակական տրագեդիա յէ:

ՍՈՒԼԵՅՄԱՆ ՌՈՒՍՏԱՄ

Կ Ի Ն Ը

Հյուսեյին Ջավիդին

Որպես անցյալ կռիվների
անպատմելի մի հուշարձան,
դեռ մնում է կախված պատից
իմ ամուսնու հրացանը:

Յեվ պատմում է հրացանն այդ,
այն արնահեղ կռվի մասին,
յերբ չուրջն արյուն, գնդակ ու մահ—
կռվում եր իմ ամուսինը:

Կռվում եր իմ ամուսինը,
իսկ յես տանը մենակ նստած
խորհում եյին նրա մասին,
դեմքս ծածկած ու լեզուս փակ:

Զենքը ձեռքին կռվում եր նա
իր քաջարի ընկերներով,
վորոնք արնոտ դիրքում ընկան,
իսկ ինքն յեկավ հաղթանակով:

Կռիվներից նա տուն դարձավ
իր դաստակին կարմիր վերքը—
և վորպես կռվի հուշարձան,
պատից կախեց նա իր զենքը:

Յեվ յես հիմա մտածում եմ
այն արնահեղ կռվի մասին,
թե ինչո՞ւ յես էլ չեմ կռվել
ամուսնուս հետ և ուս-ուսի:

Բայց իմ ձեռքը ով զենք կտար,
ի՞նչ եյի յես այն ժամանակ—
իրավազուրկ, գլխիս չադրա,
և իմ առջև դռները փակ:

***

Հիմա այլ է կյանքն ինձ համար,
յես նստել եմ դարիս կառքին,
յեթե լինի կռիվ ու մարտ,
յես դուրս կգամ զենքը ձեռքիս:

Փախուկ ուսն իմ դեռ կամրանա
հրացանի ծանրությունից,
գնդակներիս տարափի տակ
կսարսափի մեր թշնամին:

Յես չեմ լինի կռվում մենակ,
իմ քույրերն էլ մարտի կելնեն
կլինի ջարդ, մահ ու գնդակ,
մինչև վերջին բերդը առնենք:

Ազատ կնոջ ձեռքով նետած
վերջին կռվի այդ գնդակը
մահ կբերի մեր թշնամուն
ու կլինի աշխարհացունց:

Յեվ յես հիմա չեմ վախենում
այդ կռվից, վոր դեռ պիտի գա,
յես պայքարի դիրքն եմ կարգում
վոր կռվում մեր միշտ ամրանամ:

(Առաջին փորձ)

Այսօր վոճրագործ բուրժուազիայի ձեռքում
փշրվեց զարի արյունալի դույլի արյունոտ կանթը:
Տեսավ հոսող այս արյունը աչքերով ամեն վոք իր,
ինչպես ե հուները քանդել
կարմիր հետքերով հոսող արյունը,
մեր արյունը,
մեր հոգին....

Մե՛նք.
Ծով ենք այսօր փողոցներում...
Սակայն բուրժուազիան
աշխարհին տիրանալու համար
նստում ե իր յերևակայության վրա ներուժ
և ուզում ե ճուտ հանել փչացած ձվերից...

Ո՛, սուտ չի այս, ների՛ր,
այլ գոյությունով պատած.—
սուտ չի՛,
հավատա՛...:

Այս հոսողը,
ոդում ալիքներ առաջացնողը
արյուն չե...
այս հոսողը—մարդկային մի ծով ե,
վորի յե՛րգը
հոգիների ցասումով ե հնչել:

Վոչ թե յերեկ,
այլ այսօր.—
մեր ուղեղի ռելսերի վրայով սլանում ե
սրընթաց շոգեկառքը, գաղափարով լի.
անհամբե՛ր
հեռուներում շեփորներ են տալիս
սպասողները

այս հոգի բերողին,
այս շոգեկառքին...

Նայեցե՛ք
ընկեր Վորոշիլովը, հերոսության ու փառքի
սիմվոլը—տրիբունի վրա:
Փողոցներում խաչաձևող իրար
հեղե՛ղ,
սիգնա՛լ,
մա՛րշ...

Մայիսի մեկը,
բանալին՝ բաց անող կողպեքը ամուր
և գարնան դուռը թակող բազուկը.
Մայիսի Մեկը,
քանդող, յերկաթե սամում:

Այս մեր յե՛րթն ե,
նայեցե՛ք, նայեցե՛ք...
կանգ չի՛ առնի այս հոսանքը,
վորպես Պեգասը, վորպես հրեղեն ձին.
կանգ չի՛ առնի այս հոսանքը,
անընդհա՛տ, անընդհա՛տ
կքանդի՛, կկառուցի՛...:

Ղ․ ՄԵԼԹԻ

ԽԱՎԵՐ

Ջերքեզը շատ անհանգիստ էր։ Կատարված վերջին դեպքը նրան հալից գցել, լավ ծնվելուց կարմրած՝ դեմքը դեղնել, նախկին ուրախ տրամադրությունը չքացել էր։

— Էն մարդը ճի՛շտ էր ասում։ Նրան մոտիկ չարի… հիմա շա՛տ լավ են անում,—ասում էր Ջերքեզը և մտամոլոր դիտում հողաշեն տան ծխից սևացած պատերը։

Տանը վոչ-վոք չկար։ Ցերբեմն իր ասած ու լսած այդ անկապ ու անհասկանալի խոսքերը խանգարում էին խավարով ծածկված սենյակի լռությունը։

— Ե՛լ յետ չեն վերադարձնում։Պատվից ընկա, ի՞նչ անեմ,—ասում էր Ջերքեզը մրթմրթալով ու կուլ տալիս ծխացող վառարանի տաք օդը։

Ցերեկվա աղմուկը դեռ հնչում էր նրա ականջում, նրան անհանգիստ անում։

Ջերքեզը չքավոր էր։ Նա ճաշակել էր կյանքի բոլոր դառնությունները։ Միայն վերջին յերկու տարում հաջողեցրել էր մի քիչ հանգիստ կյանք վարել։

Ջերքեզի հիշողության մեջ դեռ թարմ էին տան մեջ մենակ անցկացրած, մահվան չափ ծանր ու դժվար օրերն ու մոտիկ անցյալի թանկագին րոպեները։ Նա յերբեք չէր կարող մոռանալ 1920 թվի ընդհարումները և այդ ընդհարումներին ցույց տված հերոսությունները։

Իսկ ա՞յժմ… Այժմ նրան չեյին ուզում ճանաչել, չեյին ուզում գնահատել անցյալում կատարած աշխատանքները… Ո՞վ գիտե։

— Էն մարդը ճի՛շտ էր ասում,—նորից կրկնեց Ջերքեզը և ուզեց հանցանքն իր վրա վերցնել, բայց՝ չհամաձայնվեց։ Ձկարողացավ մոռանալ սոված գայլերի նման հարձակվող մենշևիկ զինվորների, ավերմունք

գործող թնդանոթների գնդակների տակ կես կուշտ, կես սոված ու ծարավ դրության մեջ անցկացրած օրերն ու ժամերը։

Իսկ այդ բոլորի դիմաց այժմ Ջերքեզը վոչնչով չէր վարձատրվում, ընդհակառակը՝ անպատվվում, արհամարհվում էր։ «Բերաններից կաթի հոտ փչող» յերեխաները նրան քննադատում, վատ գործերը յերևան էյին բերում, թերությունների մասին էյին խոսում։

Ջերքեզը չէր կարող դիմանալ այդ բոլորին․ իրեն հե՛ ա՛յնքան էլ անարժեք մարդ չէր համարում։ Հանուն հեղափոխության մի շարք գործեր կատարող Ջերքեզի համար բոլորովին անսպասելի մի բան էր, յերբ կոմսոմոլիստներն իր դեմ նման յելույթներ էյին ունենում։ Ցեվ այդ բոլորից ջղայնացած Ջերքեզն անիծում էր այդ «անխիղճ» ընկերներին։

Նախապես լրագրում լույս տեսած «Գյուղխորհրդի պատուրակ նախագահը» վերնագրով հոդվածի պատմությունը յերբեք Ջերքեզի մտքից չէր հեռանում։ Ջեր կարծում, վոր այդ հոդվածն այնքան խոսքի ու զրույցի, բամբասանքի ու պարսավանքի առարկա պետք է դառնար։

— Ցես ամբողջ կյանքս բարդալությամբ եմ անցկացրել… Վոչ-վոք չի կարող ինձ դիպչել,—ասում էր Ջերքեզը, բայց, միաժամանակ, անտեղի յեր համարում իր այդ ասածները։

Նա նստեց փոքրիկ գորգով ծածկված թախտի վրա և միանգամ ևս սկսեց ուշադրությամբ կարդալ իր մասին գրված հոդվածը։

Այդ միջոցին հանկարծ դուռը բացվեց և դրսից ներս թափանցող լույսի բարակ ցոլքերը լուսավորեցին մութ սենյակը։

Ցեկողը Ջերքեզի կին Խավերն էր։ Գալիս էր կուսժողովից։ Նա աչքի տակից դիտեց Ջերքեզին և հետո բաց անելով գլխի լաչակը, դեն շպրտեց, թափ տվեց վրայի ձյունը և նստեց ամուսնու դեմ ու դեմը։

Խավերի ցրտից կարմրած այտերի վրա խաղում էյին ուրախության հարատև ալիքները։ Նրա բաց ճա-

կատի թեթև շարժումներից շատ բան կարելի չէր հասկանալ:

Զերքեզը դեն գցեց լրագիրը և Խավերի վրա մի հոգնած ակնարկ գցելուց հետո, հարցրեց.

— Ի՞նչ արիք: Ինձ պահելո՞ւ յեք իմ պաշտոնում, թե՛ չէ:

— Այդ մասին վոչինչ չեմ կարող ասել,—կուսակցական ֆրակցիայի վորոշումը չի կարելի հայտնել անկուսակցականներին: Հասկացա՞ր:

— Ա՜խ...յես ինչո՞ւ չանցա կուսշարքերը, ինչո՞ւ,—ասաց Զերքեզը հառաչելով և, շրթունքները կրծելով, նայեց Խավերին, ապա վեր կացավ ու ծանր քայլերով տնից դուրս գնաց:

Յերեխաների աղմուկը լցրել եր սենյակը:

— Մայրի՛կ, քաղցից մեռնում ենք: Հացից-բանից մի բան տո՛ւր ուտենք,—ասացին յերեխաներն ու շրջապատեցին Խավերին:

Ներս մտավ նաև մեծ տղան—Ալին ու անցավ փոքր սենյակը: Նա էլ կուս. և կոմսոմոլի բջիջների միացյալ ժողովից եր գալիս: Մորը մենակ թողնելով, խոսում եր իր ընկերոջ հետ...

Ալին հանեց գլխարկն ու սկսեց տաքացնել ցրտից կապտացած ձեռքերը:

— Մայրի՛կ, գյուղացիները շատ դժգոհ եյին,—ասաց Ալին:— Լավ չեղա՞վ, վոր հորս հեռացրին գյուղխորհրդի նախագահությունից:

— Բայց իմ գործը լավ չեղավ... Յես այդ գործը չեմ կարող հանձն առնել...

Յերեխաները Խավերին նեղացնում եյին: Նրանց հարկավոր եր կերակրել: Իսկ ինքը շատ հոգնած եր, տեղից չեր ուզում վեր կենալ:

Ալին էլ հայտնեց, վոր քաղցած է:

Խավերը վեր կացավ, մի քանի ձվից ձվածեղ պատրաստեց ու տվեց յերեխաներին:

Ճաշելուց հետո, Ալին պառկեց թախտի վրա և ծիծաղելով նայեց մորն ու ասաց.

— Են ի՛նչ կրակ եյիր դարձել հա՛...

***

Ջյուն եր գալիս...փողոցում, բացի գործի շտապող մի քանի մարդուց, ուրիշ վոչ վոքի չեր կարելի տեսնել:

Հին մեջիդի—այժմյան ակմբի առաջ հավաքվել եյին մի խումբ մարդիկ և տաք-տաք վիճաբանում եյին:

— Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ: Կաշառակերին էլ կարելի՞ յե ընտրել գյուղխորհրդի կազմի մեջ,—ասում եր մեկը բարձր ձայնով:

Ժողովականներն իրար եյին խառնվել: Կուսբջջի քարտուղարի խոսքերին միայն յերկու հոգի եյին մտիկ անում:

— Յես շարունակ ասում եյի նրան,—սկսեց քարտուղարն իր ընդհատված ճառը,—բայց նա ինձ չլսեց: Գյուղացիների բողոքները հայտնեցի գավառային գործադիր կոմիտեյին: Հիմա էլ՝ այնտեղից ստացված կարգադրության համաձայն՝ Զերքեզին գյուղխորհրդում չպետք է ընտրենք, վորովհետև խորհրդի նախագահության մեջ կաշառակերությամբ զբաղվող մարդիկ տեղ չունեն, նրանք իշխանության օրենքն ու կանոնները ի չարն են գործ դնում: Ճիշտ է, Զերքեզն իր կյանքն անց է կացրել բատրակությամբ, մասնակցել է հեղափոխական շարժումներին, դրա համար էլ նրան ձայնի իրավունքից չենք զրկում: Մենք այդ բանը չենք ուրանում...

— Ճի՛շտ է... ճի՛շտ է...—լսվեցին ձայներ ամեն կողմից:

– Նա դավաճան դուրս յեկավ, ուղիղ ճանապարհից շեղվեց,—ավելացրին ուրիշները:

Յեվ այսպես, գյուղխորհրդում անցնելու համար, Զերքեզին վոչ-վոք ձայն չտվեց: Նույնիսկ նրա տղան—Ալին դեմ դուրս յեկավ:

Զերքեզը թողեց ժողովն ու հեռացավ: Դրանով ստիպված յեղավ հաստատել, վոր քարտուղարի ասածները ճիշտ են:

***

Ջերքեզի տանը խոսք ու զրույց կար:

Ջերքեզն ուզում եր խեղդել իր տղային, նրան տնից դուրս վռնդել, հացը հարամ անել:

— Դու այլևս հորդ տղան չե՛ս…Ինձ բեաբրուտ արիր… Հացս քեզ հալալ չե…,—ասում եր նա սաստիկ բարկացած:

Բայց ուշ եր արդեն: Հորը հակառակ քվե տվող Ալին, առանց քաշվելու, խոսում եր նրա անվայել ընթացքի, կատարած կեղտոտ գործերի մասին:

— Ա՛յդպես ե պահանջում քաղաքականությունը,—ասում եր Ալին՝ քննադատելով, ցույց տալով հորը, վոր իրոք ինքը շեղվել ե ուղիղ ճանապարհից:

Գյուղխորհրդի ժողովն ե: Գյուղխորհրդի նախագահ պետք ե ընտրել: Կուսֆրակցիայի առաջարկած ցուցակում կար նաև Խավերի անունը:

Նյութական տեսակետից Խավերի՝ գյուղխորհրդի նախագահ ընտրվելը Ջերքեզի համար ձեռնտու յեր, սակայն մյուս կողմից՝ գյուղհամայնքի մեջ կորչում եր իր ազդեցությունը:

Բայց Ջերքեզն անտեղյակ եր այդ բոլորից, կուսակցության վորոշմանը ծանոթ չեր:

Խավերը կաշառք չպիտի վերցներ ու Ջերքեզին առաջվա պես չպիտի կշտացներ: Այսպիսով, ուրեմն, պիտի թառամեյին Ջերքեզի կարմիր այտերը, յերկու տարուց հետո պիտի նիհարեր նրա ճարպակալած փորը:

Ջերքեզը հավատում եր այդ բոլորին, ուստի և սաստիկ վախի ու մտատանջության մեջ եր:

Գյուղխորհրդի ժողովը հրավիրված եր ակումբի շենքում:

Խավերն, առանց նայելու ամուսնու դեմքին, դուրս յեկավ տնից ու քայլերն ուղղեց ակումբի կողմը: Նրա փայլուն ու պարզ դեմքից կարելի յեր հասկանալ, վոր

նա գնում ե այնտեղ մի շատ ծանր ու պատասխանատու պարտականություն ստանձնելու համար:

Իսկ, ընդհակառակը, Ջերքեզն այն աստիճանի յեր հասել, վոր ուզում եր վերադարձնել վերցրած կաշառքներն ու վերընտրվել նախկին պաշտոնում: Բայց կա՞ր, արդյոք, մեկը, վոր հավատար Ջերքեզին: Վո՛չ-վոք չե՛ր ցանկանում նրա վերընտրվելը: Ջերքեզն զգում եր այդ, և նրա ջղայնանալու, սրտնեղության պատճառը հենց դա յեր:

Ջերքեզն իր հանդեպ ցույց տրված նման վերաբերմունքն անվանում եր միանգամայն հակահեղափոխություն: Բացե ի բաց ուզում եր քննադատել կուսբջիջի վարած նման քաղաքականությունը, բայց չեր հաջողվում:

Մի քիչ մտածելուց հետո, զգաց վոր իր կարծիքը սխալ ե: Գյուղխորհրդի կազմի մեջ անպետք, վնասակար մարդիկ չկային: Նա հաստատ համոզված եր, վոր խորհրդի անդամներն իրեն պես չեն:

***

Ջերքեզի ընտանիքի անդամների մեջ շարունակվում եր տաք վիճաբանությունը:

Տղան՝ հորը, կինն ամուսնուն չեր ուզում լսել: Մեկի սիրտը կտրվում, մյուսինը լցվում եր անհուն ուրախությամբ: Իսկ փոքրիկ յերեխաները հեռվից նայում, տեղի ունեցող կռվից վոչինչ չեյին հասկանում:

— Շա՛տ լավ յեղավ: Մենք ել հենց դա՛ եյինք ուզում,—ասում եր Ալին բարձր ձայնով:

Ջերքեզն այդ բոլորն ընդունում եր վորպես մի զրկանք, ուժեղ մի բռնություն՝ կատարված իր անձի դեմ: Ուստի և սաստիկ զայրույթից գցում եր իրեն դես ու դեն, կատաղածի նման լցված եր իր կնոջն սպանելու մոլուցքով: Վրեժխնդրության բոցը վառվում եր նրա աչքերում: Ուզում եր սեղմել կնոջ կոկորդը՝ խեղդելու համար: Բայց այդ բանը չեր կարող անել, նրա բացակա-

լած աչքերը, կարծես, ուզում էին դուրս գալ իրենց տեղերից:

«—Կինն ստեղծված չէ՛ իշխանության գլուխն անցնելու, աղայություն անելու համար: Նա՝ կամ պետք է մեռնի, կամ թե չէ՝ իմ տնից դուրս պետք է գնա»: Այս խոսքերը հեշտությամբ դուրս պրծան Ջերքեզի բերնից: Գյուղխորհրդի նախագահի պաշտոնն ստանձնող կինը հարկավոր չէր նրա համար: Խավերի հրամանով շարժվելը, նրա աշխատանքով ապրելը Ջերքեզի համար անճամուսություն էր: Չնայած Խավերի կուսակցական լինելը Ջերքեզը համարում էր իր համար պատվաբեր մի գործ, բայց այս վերջին դեպքը և Խավերի նախագահ ընտրվելը տակնուվրա արին նրա բոլոր ցանկությունները: Ցեվ այժմ կյանքը Ջերքեզի աչքին յերևում էր մի խաղալիք, աշխատանքը համարում էր ունայն և մարդիկ՝ անհավատարիմ:

— Ցեթե գիտենայի այսպես կլիներ, աշխարհի մալին աչքի ծայրով անգամ չեյի նայի,—ասում էր Ջերքեզը մրթմրթալով:

— Ցես էլ յեթե գիտենայի, վոր բերածդ գառները կաշառքի տեղ եյիր վերցրել, քեզ տուն չեյի թողնի, պատասխանում էր Խավերը ազդու կերպով, վորի այս վերջին խոսքը նիզակի նման ծակում էր Ջերքեզի սիրտը: Վերջինս՝ յեթե հնարավորություն ունենար՝ կճզմեր Խավերի գլուխը, ջարդ ու փշուր կաներ նրա վոսկորները: Բայց յերկյուղից վոչինչ չէր անում:

Գյուղխորհրդի նախագահ ընտրվելու որից, Խավերը հետևում էր Ջերքեզի ամեն մի քայլին, կատարած յուրաքանչյուր սխալ գործին: Ցեվ յեթե վորևէ հանցանք գործած լիներ, նա պիտի պատժվեր առանց այլևայլության:

Ջերքեզն այդ բանը գիտեր, ուստի և յերկար ժամանակ մտածում էր իր ասածների վրա, չափում, կշռում և հետո խոսում: Այլ կերպ լինել չէր կարող: Շատ էլ վոր խոսեր, կգնար Ուզղիչ տուն: Ջերքեզը Խավերից միայն այդ կարող էր սպասել, այն Խավերից, վորը

կուսժողովների վորոշումները ամուսնուն չէր հայտնում և նույնիսկ թույլ չէր տալիս նրան խոսելու այդ առթիվ:

Ջերքեզը գիտեր այդ բոլորը, մտածում էր հետագայում կատարվելիք գործերի մասին, բայց ի՞նչ պետք է անի, վոր իր կինն այս որվանից պետք է իշխի իր վրա, հրամաններ պիտի արձակի:

«Մենք հիմա այլևս առաջվա կանայքը չենք... Մենք այժմ ազատ քաղաքացիներ ենք»—խոսքերը Ջերքեզի մտքից յերբեք չեյին հեռանում:

Ջերքեզը բացեիբաց պահանջում էր Խավերից, վոր ձեռք քաշի նախագահությունից, հասկացնելով նրան, վոր այդ պաշտոնից վո՛չ մի արդյունք դուրս չի գալիս:

— Հիմա ի՞նչ ես ասում, ձեռք չպիտի քաշե՞ս,—ասում էր Ջերքեզը իմանալու համար Խավերի կարծիքը:

Խավերը վո՛չ թե մերժում, այլ լսել անգամ չէր ուզում նման առաջարկությունը:

— Այդ դեպքում յես հենց վաղվանից կտամ քո թուղթը (արձակման) և քեզ տնից դուրս կանեմ: Ե՞դ էլ չեմ կարող անել:

— Տնից դուրս կանե՞ս:

— Այո՛, կանեմ:

— Ո՞ւմ տնից:

— Իմ տնից:

— Քո տնի՞ց:

— Այո՛, իմ տնից:

— Դու եդ տունը վո՞րտեղից առար:

— Ցե՛ս եմ շինել:

— Ցես վոր յեկա, ի՞նչ ունեյիր դու:

— Վոչինչ էլ չունեյի: Միայն՝ յես եմ շինել:

— ? ? ?

!!!

Հարց ու պատասխանի ձևով շարունակվող այդ խոսակցությունից վո՛չ մի յեզրակացություն չստացվեց: Ջերքեզն սպառնում էր Խավերին վռնդել տնից, վորովհետև նրա հետ ապրելը համարում էր մեծ անպատվություն:

—Այսօրվանից վերցրու քո շեյ ու շալակդ ու դո՛ւրս գնա իմ տնից,—ասաց Ջերքեզը սպառնական ձևով:

— Դո՛ւ գնա: Տունն ինձ ու յերեխաներին ե պատկանում: Հասկացա՞ր:

— Շատ մի՛ յերկարացրու, անխե՛լքի աղջիկ, անխե՛լք:

— Ավել-պակաս խոսելու կարիք չկա: Կամ տանը նստիր ու տնտեսությամբ զբաղվիր, կամ թե չե՝ վերցրո՛ւ վերմակդ՝ ո՛ւր ուզում ես—գնա: Ահա՛ իմ վերջին խոսքը: Հասկացա՞ր:

Ջերքեզն ե՛լ չկարողացավ համբերել: Վազեց դռան կողմն ու այնտեղ դրած փայտը վերցնելով՝ կատաղած վագրի նման՝ հարձակվեց Խավերի վրա, մի քանի ուժեղ հարված նրա վողնաշարի վոսկրներին հասցնելուց հետո, մի կերպ կարողացավ զսպել իրեն և յետ քաշվել:

Մյուս կողմից յերեխաները լալիս, ծնողների այսպիսի վերաբերմունքը զարմանքով դիտում և աղամանդի նման փայլուն աչքերից արցունք եյին թափում: Իսկ Ալին, իր հոր վայրենության առաջը չկարողանալով առնել, վազեց միլիցիոներ կանչելու:

***

Շատ չանցած, միլիցիոները յեկավ ու Ջերքեզին ձերբակալած, տարավ Ուղղիչ տուն:

Խավերն այս գործին լուրջ նշանակություն եր տալիս: Նա գիտեր, վոր գյուղում դեռ շատ կան Ջերքեզի պես մարդիկ, վորոնք իրենց նիստ ու կացով, նման կոպիտ վերաբերմունքով խանգարում են տիրող կարգ ու կանոնը: Մյուս կողմից՝ ցավում ու խորը մտածում եր, վոր իր ամուսինն ամբողջ յերկու տարի գյուղխորհրդի նախագահ լինելով, դեռ չեր ուսումնասիրած կանանց մասին գոյություն ունեցող կառավարական որենքները: Կատարված և հետագայում կատարվող նման դեպքերը Խավերին շատ եյին մտահոգում և նրանից լուրջ աշխատանք եյին պահանջում: Յեվ վորպես առաջին փորձ, նա իր ամուսնուն բանտարկեց վոչ թե իր անհատական

չահերի համար, այլ դրանով ուզեց ապացուցել, վոր իրոք կամենում ե ոգնություն ցույց տալ ստրկության ու խավարի մեջ խարխափող իր ընկերուհիներին...

***

Ջերքեզը նստած եր գավառային Ուղղիչ տանը: Նա մեղադրվում եր կնոջը ծեծելու խնդրում:

Կամերայում նստելու առաջին որը, ամեն կողմից հույսը կտրած Ջերքեզը Խավերին մի նամակ գրեց հետևյալ բովանդակությամբ.—

«Աչքիս լույս Խավե՛ր.

Դու ինձ գցում ես վորպես մի անհավատարիմ ամուսին, բայց՝ լավ չես անում: Ինձ ուղարկել են Ուղղիչ տուն: Հավատա՛, վոր ինձ կսպանեն: Այս նամակը բանտից եմ գրում: Խղճա՛ ինձ: Ամեն ինչ քեզանից ե կախված: Դու ինքդ անձամբ արի՛ ու ազատի՛ր ինձ այս չորս պատերի միջից: Մի սխալ ե—արել եմ:

Քեզ սրտանց սիրող՝ ՋԵՐՔԵԶ»:

Խավերը նամակը կարդալուց հետո՝ յերկա՛ր մտածեց: Ջեր ուզում, վոր Ջերքեզը բանտից ազատվի: Նա կանչեց տղային ու նամակը ցույց տալով, ասաց.

— Ջերքեզն Ուղղիչ տունն ե: Նամակից յերևում ե, վոր այնտեղի կյանքը տանել չի կարող: Ի՞նչ ե քո կարծիքը, բա՞ց թողնենք, թե՛ մի ժամանակ ել մնա,— հարցրեց Խավերը:—Յես համաձայն չեմ, վոր բաց թողնեն: Թող մի քիչ զգա իր սխալները, ուղղվի և այնպես գա:

— Ե՛հ, մայրիկ, նա ել ինչքան չլինի, մարդ ե, ամուսինդ ե, միասին հաց ենք կերել. Նամակից ել յերևում ե, վոր խիղճը տանջում ե իրեն:

Մայրն ու վորդին համաձայնեցին և Ջերքեզին հետևյալ նամակն ուղարկեցին:

«Ջերքե՛զ.

Կատարածդ գործի համար հանցավոր ես: Այդ բանը դու ինքդ ել հանձն ես առնում: Մի շաբաթից հետո քեզ

բաց թողնել կտամ: Քեզ հարկավոր է մի քիչ էլ հանգըստանալ: Երկու տարի չե, վոր չես հանգստացել:

Եթե հնազանդվում ես տիրող օրենքին ու կանոններին՝

Ընդունիր բարևս՝ ԽԱՎԵՐ»

Ալին նամակն առնելով, ավելացրեց.

— Մեր կուսակցականներից և նույնիսկ կոմսոմոլներից շատերը վարակված են այս հիվանդությամբ: Ապագան սրանց էլ վերջ կտա: Ի՞նչ անել: Հին անցյալը, բացի ընտանեկան նման կեղտոտ ու զզվելի նմուշներից, ուրիշ լավ բան չեր կարող թողնել: Այդ էլ կարելի չե փոխել, մայրի՛կ:

ՀԱՅ ԱՂՋԻԿԸ

Ընկերս սկսեց պատմել իրեն պատահած դեպքի մյուս մասը:

— Ավտոբուսից ցած իջնելու րոպեյին, մեզ շրջապատեցին մի շարք մարդիկ, վորոնք սրտատրոփ սպասում եյին իրենց ծանոթներին: Վոմանք՝ ձեռքերը կրունկի յետևը կանթած՝ ցավում եյին, վոր չկարողացան տեսնել իրենց սպասած ծանոթներին, վոմանք էլ՝ դիմավորելով վաղուց չտեսած իրենց ծանոթներին՝ քաղցր ու անուշ ժպտում, ձեռքերը սեղմում, իրար համբուրում եյին:

Ես էլ՝ 4—5 քայլ գցելուց հետո՝ հանդիպեցի հայ աղջկան:

Մենակ եր նա: Լուրջ նայվածքով ու համրաքայլ՝ պտտում եր այս ու այն կողմը, և ապա՝ քայլերն ուղղեց դեպի կայարանը:

Չնայած հոգնած եյի, բայց՝ մոռացա ինքզինքս: Անհամբեր կերպով դիտում եյի նրան:—«Վոչինչ, մի անգամ էլ կտեսնեմ»,—ասացի ու ձեռքիս դամբյուղը

վերցնելով՝ յերբեմն նրան, յերբեմն էլ ուրիշ անցորդներին նայելով-նայելով՝ հասա մեր տուն: Երկար ճամբորդությունից բեզարած լինելով՝ տունը հասնելուն պես քնեցի:

***

Մյուս որ առավոտյան, պոստի դրասենյակից դուրս գալու ժամանակ, նրան հանդիպեցի փողոցով անցնելիս: Չնայած մեր կարճատև տեսակցության, յես նրան կարողացա շուտ ճանաչել:

Գրավիչ եր նա—հայ աղջիկը: Վրայի հագուստից պարզ յերևում եր, վոր նա աղքատ ընտանիքի զավակ եր: Այդ յենթադրությունս ավելի քան կրկնապատկեց իմ դեպի նա տածած սերն ու համակրանքը:

Այժմ՝ զբոսնելու, մի բանով զբաղվելու ամենալավ ժամանակն եր: Դիլիջանի նման մի վայրում, տանը նստած՝ միշտ ընթերցանությամբ ու գրելով զբաղվելն անկարելի յեր:

Անուշաբույր անտառների զովարար ստվերների տակ իրարու հանդիպել, անկեղծ սիրո զգացումներով տոգորվելն էլ վատ բան չե:

Այսպիսի մտքերով ծանրաբեռնված՝ հետևում եյի հայ աղջկան: Իսկ նա՝ առանց յետև նայելու՝ լուրջ քայլերով առաջանում եր:

Նա չգիտեր, վոր յես հետևում եմ իրեն, հետաքրքրվում եմ իրենով:

Հագած եր սպորտի հագուստներ, քայլում եր սպորտին հատուկ արագությամբ:

Այդ միջոցին հանդիպեցի ընկեր Միքայելին, վորին մի տարի չեյի տեսել: Չգիտեմ, թե՝ վոնց տեսնվեցի նրա հետ: Նա հետաքրքրվեց իմ հուզված վիճակով:

— Տեսնո՞ւմ ես հայ աղջկան: Երեկ յերեկոյան տեսա նրան,—ասացի ընկերոջս,—նրա ամեն մի նայվածքում նկատվում է առանձին հետաքրքրություն:

— Լա՛վ կլինի, յեթե նրան սպորտի հրապարակում խաղալու ժամանակ տեսնեք,—պատասխանեց ընկերս:

Հենց հիմա ել այնտեղ ե գնում: Ուզո՞ւմ ես գնանք միասին:

Յես համաձայնվեցի ընկերոջս հետ, և միասին իջանք սպորտի հրապարակը:

Հայ աղջիկը դեռ շարունակում եր իր ճանապարհը՝ նույն ուղղությամբ:

— Միքայե՛լ, դու ծանո՞թ ես նրան,—հարցրի յես:

— Ծանոթ եմ,—պատասխանեց Միքայելը,—հիմա յերևեց ինձ ու անցավ:

«Այդ դեպքում՝ լավ կլինի ինձ համար»...մտածեցի ես:

Իջանք հրապարակը և աջ կողմի նստարանին նստեցինք:

Կարմիր վարտիքավոր կոմյերիտները, կարմիր փոխանավոր ու փայլուն յերիզավոր հայ աղջիկները պատրաստվում եյին ֆուտբոլ խաղալու:

Մեր հետապնդած հայ աղջիկն ել միացավ նրանց հետ: Ուրեմն՝ նա ել կոմյերիտուհի յեր յեղել..Նա ամրացրեց կոշիկների կապերը, կարած մազերը չփելուց հետո՝ սանրը անցկացրեց, ցած քաշեց հագած կարմիր շապկի փեշերն ու սկսեց խաղը:

Յես ուշադրությամբ համրում եյի նրա փոքր ու թեթևաշարժ քայլերը:

Յերկու խումբ իրարից բաժանվեցին: Աղջիկներն ել առանձին խմբերի բաժանվելով՝ միացան նրանց հետ:

Խաղն սկսվել եր արդեն:

Ընկերս համառոտ կերպով պատմեց հայ աղջկա մասին:

— Նա հիմա առաջին խաղացողն ե համարվում,— ասաց նա: Վո՛ր կողմը լինի, են կողմն անպատճառ կհաղթի:

Իսկ յես ուզում եյի անձամբ տեսնել այդ բանը.ուստի և սպասում եյի խաղի վերջնական արդյունքին:

Ներկա յեղողների մեջ բարձր վոգևորություն եր տիրում: Խաղի ընթացքում խանդարվում եր նրանց մարմնի բարեձևությունը, զանազան շարժումներից՝

փոխվում եյին նրանց դեմքերի նախկին տեսքն ու արտահայտությունը:

Այս բոլորից հետո, դժվար չեր յերևակայել՝ թե այդ արագ ու թեթև շարժումների դիմաց՝ նրանց մեջ ինչպիսի՛ շնորհք, ինչպիսի՛ ընդունակություններ կային թաղնված:

Հայ աղջիկը տղաներից ավելի՛ արագ, ավելի՛ լավ եր խաղում: Նա մի խումբ ֆուտբոլիստներից առաջ անցավ:

Հրապարակը վողողվեց բուռն ծափահարության ձայներով:

Հայ աղջիկն այդ խմբումն եր:

— Տե՛ս, տե՛ս,—ասաց Միքայելը՝ թևիցս բռնելով:

Յես, առանց նրան ել՝ տեսնում եյի: Հայ աղջիկը ծիծաղում եր հաղթվող խմբի վրա: Գնդակն անցկացնողը նա յեր:

Խաղն իր հերթին շարունակվում եր: Մեր ուշադրությունը գրավել եյին հայ աղջիկն ու նրա լուրջ շարժումները: Տեսնելով այդ բոլորը, իմ մեջս ավելի յեր ուժեղանում նրա հետ շուտով ծանոթանալու ցանկությունը:

— Յեթե մինչև խաղի վերջը նստենք,—ասաց Միքայելը,—քեզ կծանոթացնեմ նրա հետ:

Բայց, ճիշտն ասած, յես շատ անհամբեր եյի, սիրտըս նեղվում եր: Խաղը ուշ պիտի վերջանար. զբաղվելու համար ել՝ հարմար բան չկար:

— Թեև առանձին մի զբաղմունք չունենք,—ավելացրի յես,—գոնե խաղացողներին ել մոտիկ անե՞նք:

Յերկինքը խիստ ամպամած եր: Զգում եյինք, վոր՝ ուր վոր ե՝ անձրև պիտի գա: Մերթ ընդ մերթ փչող քամուց ալեկոծվում եր ոդը:

Հայկական կարմիր բանակայինների հեռվից լըսվող հրացանաձգության ձայները դղրդացնում եյին Դիլիջանի խոր ձորերն ու խիտ անտառները:

Սարի լանջին գտնված գինետնից լսվող թմբուկնե-

րի բութ ձայները խառնվելով այս դղրդոցների հետ՝ տարօրինակ յերգի յեղանակներ եյին առաջացնում:

Մի կողմից լսում եյինք այս ձայները, մյուս կողմից էլ՝ դիտում ֆուտբոլիստների խաղն ու խոսում այդ առթիվ:

Սկսվեց մի բարակ անձրև: Խաղը վերջացավ: Ֆուտբոլիստների խմբերը ցրվելով իջան ներքև:

— Ցելենա՛,—կանչեց Միքայելը:

Նա կանգնեց ու նայեց մեր կողմը:

— Սպասի՛ր այդտեղ: Գալիս եմ,—պատասխանեց Ցելենան:

Ուզում եյի թաղնվել: Կարծում եյի, թե՝ նա ուզում է մեզ խաբել: Բայց, չանցած 2—3 րոպե, նա յեկավ ու նստեց մեր նստարանի վրա:

Անձրևը գնալով սաստկանում եր: Պատսպարվելու համար՝ հարմար տեղ ընտրեցինք մերձակա թատրոնի պատշգամբն ու գնացինք այնտեղ:

— Ծանոթացե՛ք ընկերոջս հետ, Ցելենա՛,—ասաց ընկերս:

Նա ժպտալով յերկարեց ձեռքը՝

— Ցելենա,—ասաց յերկրորդ անգամ ու սեղմեց իմ ձեռքը:

Ցեվ այսպես, այսքան կարճ ժամանակամիջոցում՝ ծանոթանում եյի վաղուց ինձ հետաքրքրող մի հայ աղջկա հետ: Հետաքրքրվում եյի վո՛չ թե նրա համար, վոր նա մի հայ աղջիկ եր, այլ նրա համար, վոր յես նրա մեջ փնտրում եյի վերին աստիճանի պարզություն և, վոր ամենագլխավորն է, արտասովոր մի բարձրություն (վեհություն):

— Այսօրվա խաղը վերջացավ ձեր հաղթությամբ, —ասացի յես.—ցանկանում եմ, վոր հետագայում ավելի բարձր հաղթությունների մեջ գտնվեք:

Նրա բարակ ու անգույն շրթունքների վրա նկատվեցին համեստություն արտահայտող ժպիտներ: Ցերեսըն են կողմը դարձնելով՝ մի քիչ նայեց: Ցես չկարողացա հասկանալ այդ նայվածքի նշանակությունը: Նա,

կարծես, ուրախանում եր տարած հաղթության համար:

Անձրևը դադարել եր արդեն: Մեր վերևի յեղևնիների վրա փայլում եր ծիրանեգոտին: Ցերկար չսպասեցինք: Իջանք ներքև: Նա՝ բաժանվելով մեզանից՝ գնաց դեպի իրենց տան կողմը:

***

Դիլիջանն ապրում եր իր ուրախ օրերը: Մի ժամանակ, արյան ու վրեժխնդրության թատերաբեմ հանդիսացող այս վայրերում՝ այժմ սերմանվել ու արմատացել եյին համերաշխության ու յեղբայրության սերմերը: Դեռ յերեկ, միմյանց արյան ծարավն զգացող յերկու հարևան ազգերն այժմ իրարից չեյին տարբերվում, ապրում եյին փոխադարձ սիրով ու համակրանքով: Այս յերևույթը պայմանավորվում եր մեր այսօրվա յերիտասարդ սրտերի պարզ ու հստակ ուրախությամբ: Մնացել եյին իրենց հին բնավորությանն ամուր կառչող անմիտները, վորոնք դեռ խոսում եյին հայ և թուրք լեզուների, հավատի ու սովորությունների մասին: Իսկ այդ տարբերությունն ու խորությունը վերացնողն ու չմտաբերողները մեր այժմյան կոմյերիտկոմյերիտուհիներն եյին:

Ցելենան այս բոլորի կենդանի օրինակն եր: Նա՝ ութ տարի սրանից առաջ՝ կարո՞ղ եր ծանոթանալ վորևե թուրք յերիտասարդի հետ: Իհարկե վոչ: Ցեվ այդ բանն ինքն էլ ամեն անգամ խոստովանում եր:

— Իմ սիրածն էլ այս համարձակ ու ազատ կյանքն է,—ասում եր Ցելենան:

Օրերն իրար յետևից գալիս անցնում եյին: Ցելենան է՛լի նույն անկեղծ ու համարձակ բնավորության տեր հայ աղջիկն եր մնացել:

Պարզ ու անամպ մի օր եր: Զբոսնում եյինք քաղաքի վերևը գտնվող անտառում: Ցեղևնիների քաղցր բույրերի տակ, դեմ առ դեմ նստած՝ շնչում եյինք մաքուր օդ ու հանգստանում կանաչազարդ գետնի վրա:

Այդ օրն ամեն մեկի մեջ մի առանձին, արտասովոր ուրախություն կար։ Ծաղիկներով զարդարվել, կանաչ խոտերի մեջ լուսանկարվել, գեղեցիկ տեսարաններից նկարներ հանել, պարզասիրտ կոմսոմոլկաների հետ ման գալ ցանկացողները շատ-շատ եյին։

«Յելենա՛»...

Այս անունը հիշելով, մտաբերելով այս հերոս աղջկան, ակամայից հիշում եյի նաև այսօրվա բոլոր հայ աղջիկներին։

Այսօր մեզ զգում եյինք չափազանց ուրախ ու զվարթ։ Յեղևնիներով շրջապատված, կանաչ ու թարմ խոտերով ծածկված մի հարթ տեղում նստած՝ զրույց եյինք անում։

Այդ միջոցին խոսք բացվեց մեր անծանոթ հայ աղջկա մասին։

— Նրան մեր ընկերներից մեկն առավ,—ասացին։

Այս խոսքը լսելուն պես՝ թե՛ ուրախացա և թե՛ տխրեցի։ Ուրախացա, վորովհետև հայ աղջիկը թուրք տղային եր գնում։ Սա նոր կյանքի, նոր կենցաղի արդյունք եր։ Տխրեցի, վորովհետև չեյի հավատում, վոր առած տղան իր պես արժեքավոր մեկը պիտի լիներ։

Ուզում եյի անպայման նրան տեսնել։ Թողեցի ընկերներիս ու ցած իջա։ Մի քանի քայլ անցնելուց հետո, հանդիպեցի նրան փողոցում։

— Յելենա, քեզ մի քանի խոսք ունեմ ասելու,— կանչեցի յես։

— Լա՛վ։ Բարձրանանք վերև, նստենք նստարանի վրա,—պատասխանեց Յելենան։

Յելենայի մի լավ կողմն ել այն եր, վոր շատ եր փափագում լեզու սովորել։ Նա ինձնից ավելի լավ եր խոսում թուրքերեն լեզուն։ Ամեն տարի, իրենց տանն ամարանոց յեկող թուրքերի հետ խոսելով-խոսելով, հետաքրքրվել եր թուրքերեն լեզվով և վերջապես լավ սովորել։

Վերև բարձրանալով՝ նստեցինք նստարանի վրա։ Նա հուզված եր յերևում։ Դեմքի վրա ինչ վոր մեկի դեմ ըմբոստանալու նշաններ կային։

— Ձեր ամուսինն ո՞վ ե,—հարցրի յես։

Ամաչելուց՝ չպատասխանեց։ Նա ուզեցավ խոսել ուրիշ դեպքի մասին։

— Չգիտե՞ս՝ ի՞նչ ե պատահել ինձ։

Նրա այս հանկարծակի հարցը շփոթեցրեց ինձ։

— Սրանից մի ամիս առաջ,—շարունակեց Յելենան,—ծանոթացա ձեր Ղազախեցի մի տղայի հետ։ Նրա ամեն մի շարժումը, բնավորությունը իմ մեջ առաջացրին սիրո զգացմունք։ Միջնակարգ կրթություն ուներ, ծնվել եր չքավոր ընտանիքում։ Գնացի նրանց տուն. մի փոքրիկ խրճիթ եր։ Լինելով նրա պես չքավոր ընտանիքի զավակ, յես ել համաձայնվեցի նրան առնել։ Բայց՝ հայրս ու մայրս համաձայն չեն։ Մնացել եմ կրակի ու ջրի արանքում. չգիտեմ՝ ի՞նչ անեմ։

Մի որ ել՝ «գնում եմ քրոջս տուն» ասացի հորս ու եդ պատրվակով գնացի ձեր գավառ։ Հայրս իմացավ այդ բանը, յեկավ յետևիցս ու բռնի ուժով քաշեց-բերեց տուն։ Բայց յես տված խոսքից յետ չեմ դառնում, սիրտ ել չունեմ դառնալու։ Մեր հին օրենքը թույլ չի տալիս այլազգիի հետ ամուսնանալ։ Բայց յես ինձ համարում եմ նոր կյանքի զավակ։ Ուստի՝ ճիշտ համարեցի ամուսնանալ այդ տղայի հետ։

Յելենան մի քիչ մտածեց։Ապա՝ գլուխը բարձրացնելով՝

— Ի՞նչ ե քո կարծիքը այդ մասին.—հարցրեց նա։

Ի՞նչ պետք ե պատասխանել։ Մտածեցի և մի քիչ հետո՝

— Առանց քո ծնողների համաձայնության ել՝ կարող ես գնալ,—ասացի յես։

— Վո՛չ, նրանց չեմ կարող թողնել։ Նրանք ինձ մեծացրել, 19 տարեկանի յեն հասցրել, միջնակարգ կրթության տեր են դարձրել։ Յեթե ամուսնանամ ել, պետք ե ծառայեմ և ստացած ռոճկով նրանց պետք ե օգնեմ։

— Ուրեմն, ձեր ընտանիքը կարոտ ե ձեր անմիջա-

կան ողնության: Յեթե այդպես է, ապա ուրեմն պետք է ձեռք բերել նրանց համաձայնությունը,—ասացի յես, հայտնելով նաև իմ համաձայնությունս:

— Նրանք չեն համաձայնում,—ավելացրեց Ցելենան,—ինձ զայրացնողն էլ հենց այդ անհամաձայնությունն է: Հիմա ի՞նչ պետք է անել:

— Գնանք խոսենք ձեր հոր հետ:

— Անկարելի բան է: Ձեզ վատ խոսքերով ճամբու պիտի դնի: Իմ արած մեծ սխալը կայանում է նրանում, վոր հորս ու մորս համոզմունքների, մտքերի մեջ իսկական հեղաշրջում չեմ կարողացել առաջացնել:

Յերկար զրույցից հետո ավելացրեց.

— Վորոշել եմ գնալ: Հայրս ու մայրս չթողնեն էլ—կգնամ: Ամենից առաջ՝ այդ են պահանջում իմ գաղափարս ու համոզմունքս:

— Շնորհավորո՜ւմ եմ ձեր նոր կյանքը.—ասացի յես ու բաժանվեցինք իրարից:

***

Հաջորդ օրը, առավոտյան, ավտոբուսը սլանալով անտառապատ ու խորունկ ձորերի միջով՝ մեզ հասցրեց մեր տեղը:

Ամեն անգամ յերբ մտաբերում եյի հայ աղջկա տված խոստումները, նրա անհողդողդ կամքը, հավատում եյի, վոր նա աջողությամբ կհասնի իր նպատակին:

Յեվ մի օր, Ցելենայից ստացա ռուսերենով գրված մի նամակ՝ հետևյալ բովանդակությամբ.—

«Ծնողներս դեռ չարունակում են իրենց համառությունը: Իսկ յես, ժամանակավորապես, ձեռք եմ քաշում այդ մտքից: Բայց՝ տված խոստումը իրական է ու մշտական: Յես կարծում եմ, վոր սեր ասածդ վո՛չ թե պատահականություն է, կամ՝ յերիտասարդական հիվանդություն, այլ՝ մի հզոր միջոց, մի ամուր օղակ, վոր յերկու սիրած սրտերի միացնում է միմյանց հետ՝

մինչև կյանքի վերջին րոպեները: Նման սրտերից մեկը ինձ մոտ, մյուսը՝ սիրածս յերիտասարդի մոտ է: Իմ սիրտս յերբեք չի կարող ինձ հետ դասակարգորեն առընչություն չունեցողի սրտին միանալ: Այս բանը միմիայն մենք պիտի տեսնենք, սրան մե՛նք պիտի արժանանանք»:

Կարդալուց հետո՝ չկարողացա իմանալ թե՝ նամակին ո՞նց պատասխանեմ: Նա իր նամակը վերջացնում էր հետևյալ խոսքերով.—

«Այժմ այլևս բաղդավորություն ու կյանք փնտրելու մեջ չէ իմ ցանկությունս: Իմ լոզունգն է՝ «Ձգտել, նպատակին հասնել»:

***

Ձմեռվան սառն ու ցուրտ օրերը գալիս, անցնում էյին: Ձորս կողմը ծածկված էր թեթև քամիներից թիթեռնիկների նման թռչող ձյունի սպիտակ շերտով:

Դիլիջանի և Ղազախի միջև ավտոբուսային հաղորդակցությունը, համարյա թե, կանգ էր առել: Դիլիջանի ձորը, իր խիտ անտառներով, ձյունի տակ ծածկված՝ մի ընդարձակ հարթավայրի տեսք էր ընդունել: Լայն խճուղուց վոչ մի հետք չէր յերևում:

Այսպիսի ձյունաբեր մի օր իմացա, վոր այդ հայ աղջիկը—Ցելենան Ղարաքիլիսա—Թիֆլիս յերկաթգծով մեկնել էր Ղազախ:

Բայց՝ զարմանալի՜ բան...ինչո՞ւ համար մոտ ճանապարհը թողած՝ այդքան հեռու յե ընկել: Ինչո՞ւ յե գնացել Ղազախ:

Յեթե մարդու յե ուզում գնալ, արդյո՞ք հայրն ու մայրը համաձայնվել են: Յեվ յեթե չեն համաձայնվել, հապա նրանց ի՞նչ պատասխան է տվել:

Այդ հարցերին չեյի կարող պատասխանել: Հարկավոր էր նրան տեսնել, ճիշտ տեղեկություն ստանալ:

Հազար ափսո՜ս, վոր յես նրան չկարողացա տեսնել:

Նրա մասին միայն հետո լսեցի, վոր՝

«Ամուսնացել է իր սիրած Սալեհի հետ»:

ՀԻՍՈՒՆԵՐԿՈՒ

1

Նրա անունը Շուա յեր, բայց գյուղացիք նրան ուրիշ մակդիր ել ավելացնելով՝ «կոմսոմոլ» Շուա անվանեցին: Կարճահասակ, փոքրիկ, կլոր դեմքով, խորհրդավոր աչքերով, բոլորին զարմացնող աշխույժ մի յերիտասարդ եր նա:

Շուան գյուղում անթույլատրելի մի դեպք նկատելիս, խկույն կմտներ ցածլիկ, ցանացան պլակատներով զարդարված հին տունը, ուր տեղավորված եր գյուղխորհուրդը, իրավեկ կաներ նախագահին: Յեթե ավյալ խնդրում ինքն իրավասու յեր, իրեն հատուկ սուր քննադատությամբ հակառակորդին լռության եր դատապարտում: Վերջերս նա չատերի կողմից դեպի ինքը հարգանք զգաց, իսկ վոմանց կողմից՝ խոր ատելություն, դժվար հաղթահարելի մի հակառակություն:

Աշնան լուսնկա մի գիշեր եր, Շուան շրջկենտրոնից եր գալիս, հետը բերելով կոմսոմոլի կոմիտեյից մի պաշտոնական գրություն՝ Հարևան գյուղի բջիջի քարտուղարին: Դրա համար ճամբից շեղվել եր, հեռացել ու նոր հասցրել եր գրությունը: Ձիու հոգնածությունը զգալով, դանդաղ եր քշում: Լուսնկա գիշերվա գեղեցկությունից ազդված, ամփոփվեց ու սուր-բարակ ձայնով սկսեց ինչ վոր յեղանակ դնդնալ:

Խոր, մեռելային լռության մեջ նրա միակն ընկան մենակ ու անպաշտպան ճամբորդներին հրավեր կարդացող քաղցած գայլերը, ձեռքը տարավ դեպի մեջքը ու չկրակելուց ժանգոտած ատրճանակը պատրաստ պահեց: Իսկ ձեռքի նոր խարազանը անողոք շրխկացնելով, առաջ եր շարժվում:

Գյուղին մոտավորապես յերեք վերստ եր մնացել, յերբ դեպի իրեն առաջացող սև ստվերներ տեսավ: Առաջին իսկ հայացքից նա համոզվեց, վոր գիշերվա այս պահին քարավան չեր կարող գնալ և վոր գիշերով նման

քարավանի կարիք ել չկար. իսկ սա քարավանի ել չեր նմանում: Առաջացողները վորչափ ել անհայտ եր թե ուր են գնում, բայց նրանց քայլափոխերից հասկացվում եր, վոր գյուղից հեռու պիտի գնային:

Ուշադիր ձին, թեև հոգնած, բայց յերևացող փոքր ստվերների հանդեպ զգույշ քայլերով առաջանալով, մինչև ճանապարհի անջատման կետը հասավ.—մեծ պարկերով բեռնավորված, յերեք ուղտեր իրար յետևից սուսիկ փուսիկ առաջանում եյին, իսկ նրանց վրա նստած մարդիկ անընդհատ խարազանում եյին նրանց: Շուան, դեմ առնելով այս դավաճաններին, ժանգոտ ատրճանակը ձեռքին, ձիուց ցատկեց ու կանգնեց առաջին ուղտի դեմ:

— Հասան, կոմսոմոլ Շուան ե...—փսփսաց մեջտեղի ուղտապանը:

— Կանգ առեք,—ձայնեց Շուան, իսկ ատրճանակի կրակոցը խրտչեցրեց ուղտերին: Փորձառու ուղտապանն իր նստած ուղտը նշանով չոքեցրեց ու վայր իջնելով, տգեղ, խեղդված, վախից դողդողացող ձայնով ասաց.

— Շուա, հոգուդ մատաղ, վերջին որս ե...—Խոսքերը հազիվ եյին դուրս գալիս նրա շրթերից:

Շուան ճանաչում եր ուղտապանին. սա մինչև անցյալ տարի հարյուրապետ Ասլանի տան վարձովի բատրակ Հասանն եր: Իր ամբողջ յերիտասարդության ժամանակ վողջ գյուղի «ղոչաղ»-ներից համարվելով, մինչև 24 թիվը վոչ վոք նրա հանդեպ ձեն-ծպտուն հանել չեր համարձակվում: Նրան ընդդիմացողը մի անողոք հարվածով գետին եր փռվում: Դատարանով նրան մի քանի անգամ ուղղիչ տուն եյին ուղարկել և մասամբ ել ուղղվել եր: Բայց Հասանը, մանավանդ վերջին յերկու տարում, այնքան եր վախկոտացել, վոնց յերեխան մոր «դևը գալիս ե» խոսքից:

Ուղտապանը հնազանդելով Շուային, քարավանը դեպի գյուղ դարձրեց:

2.

Այս դեպքից 15 որ առաջ, գյուղում, նախկին խորհրդի նախագահի հանդեպ մի մեծ դժգոհություն եր առաջացել.—հարկահավաքման ցուցակի տվյալներով, տեղական ֆինբաժնի կողմից ուղարկված ցուցակում վորոշ անարդարություններ հայտաբերվեցին: Հենց Շուայի բատրակության ժամանակ վաստակած հորթից միակ կովը ավելացրել՝ չորս եյին արել: Նման անճշտություններ եյին յեղել նաև ուրիշների վերաբերմամբ: Շուան այս մասին կուսբջիջի քարտուղարի հետ թեև յերկար խոսեց, բայց վոչ վոք ուշադրություն չդարձրեց:

Գուղթղթակիցների հավաքական ստորագրությամբ թերթերին ուղարկված հոդվածից մի քանի որ անց, նախկին նախագահը պաշտոնից արձակվեց ու նրա տեղ Շուայի ամենամոտիկ ընկերը՝ կուսթեկնածու մի չքավոր գյուղացի յեր ընտրվել: Նոր նախագահը վաղ առավոտ իր ձին հեծնելով, վերի գյուղը հարկեր հավաքելու յեր գնացել ու դեռևս չեր վերադարձել:

Շուան կես գիշերով ուղտերն ու ուղտապանները գյուղխորհրդի պաշտոնատեղին առաջնորդեց, բայց վոչ վոքի չգտնելով, մոտիկ ապրող խորհրդի անդամներից մեկին ձայն տվեց, վորի տնից մի քանի րոպե պատասխան չստացավ: Քիչ հետո, աչքերը շփելով, մորթե փափախով մեկը յերևաց:

Գյուղը խոր լռության մեջ ննջում եր:

— Բաղըր, դո՞ւ յես:

— Ինձ կանչողն ո՞վ ե:

— Յես եմ, Բաղըր, Շուան:

— Ի՞նչ կա, ի՞նչ ե պատահել:

— Ուղտերը տեսե՞լ ես:

Բաղըրը կարծես նոր տեսնելով բեռնավորված ուղտերը, ծիծաղեց ու ծաղրական նայվածքով հարցրեց ուղտապանին:

— Այ բալամ, սրանք ի՞նչ են:

— Մեր աղայի ցորենն ե, ուղարկում եր Բագու:

— Ե՛, տարա՞ք:

— Խորհրդի նախագահն ո՞ւր ե:

— Վերի գյուղում հարկ ե հավաքում, այս գիշեր չի գա:

— Յերևի չի պրծել:

— Հիմա սրանք ի՞նչ անենք:

— Ցորենը՝ խորհրդի սենյակը, իսկ իրենց՝ բանտ:

Վերջին խոսքերը Բաղըրի շրթներից շատ քաղցր տոնով դուրս յեկան: Շուան ուղտապանին նայեց վորպես բոլոր իրավունքներից զրկված մի մարդու:

— Բեռները ցած թափեք:

Ուղտապաններն այս հրամանը վորոշ դժգոհությամբ կատարեցին:

... Մի քանի վայրկյան հետո, գյուղխորհրդի սենյակին կից բանտի ցածլիկ դուռը բաց արին և յերեք հոգին ներս առնելով, կողպեքով ամուր կողպեցին:

3.

Հարյուրապետ Ասլանը յերբ լսեց ուղտերի բռնկելը, հիշեց 20 թիվը և կարծեց թե զինվորական կոմունիզմի շրջանը նորից է սկսվում: Թեև այդ շրջանից տարիներ եյին անցել, բայց նա ամեն բան լավ հիշում եր:

Մինչև Կարմիր բանակի գյուղ մտնելը, Ասլանն իր քաղաքի բարեկամներից ստացած կտորեղենի և ամեն տեսակ ապրանքների առևտրով իր անաշխատ յեկամտին նորանոր վոսկիներ եր ավելացնում:

Յերբ տղան զինվորական դպրոց ուղարկեց, ինքը դեռ հարյուրապետի պաշտոնումն եր, մի պաշտոն, վորի շնորհիվ նա կապ ուներ քաղաքի հետ, ուր հաճախ ականատես եր յեղել իր ծանոթ վաճառականների առևտրական թալանին: Նման առևտուրը իր մեջ ևս ցանկություն առաջացրեց, վորը հետզհետե ուժեղանալով, դարձավ իրականություն:

Տղան վերադառնալով վեցամսյա կուրսից, իրենց

գավառի մեջ սպայության պաշտոն ստանձնեց: Հայրն, իր խնդրանքով, պաշտոնից ազատվեց, առևտրի ձեռնարկեց և վոնց վոր հիշում եր, մինչև կռիվների ժամանակ նա վաճառական եր դառել:

Ի՞նչ ոգուտ վոր, իր բառով ասած, «ավազակները» ունեցած–չունեցածը թալանեցին, տունն ու խանութը Կարմիր բանակի բնակատեղ դարձրին:

Այս դեպքերը նրան հոռետես դարձրին: Քանի քանի անգամ փորձեց անձնասպան լինել, բայց միշտ կյանքը քաղցր թվաց. վորչափ ել այն դառն եր ու զզվելի, սակայն և այնպես ուզում եր ապրել:

23 թիվը նրա առևտրական ցանկությունների համար նոր և ընդարձակ ասպարեզներ բացեց: Ասլանը հողի մեջ թաղած, կարմիր զինվորների ավիններից ազատված վոսկիները հանեց, նոր թափով, նոր յեռանդով իր մեղրածոր առևտրի շարունակությունն սկսեց:

Բայց Ասլանի այս յերջանիկ որերը վաղանցուկ յեղան: Գյուղում բոլշևիկների թողած պլակատները չոր թուղթ լինելուց դադարեցին և սկսեցին նոր մի մեծ գործի հիմք ծառայել:

Գյուղի կոոպերատիվը մի քանի ամիսների ընթացքում գյուղի հասարակության վստահությունը գրավելով, հարյուրապետ Ասլանի շահույթը հետզհետե նվազեցրեց: Վերջապես մի յերեկո «մտից»–ում մի քանի սև կոպեկներ միայն տեսավ:

Դրանից հետո Ասլանը ցանկություն ունեցավ «հալալ» վաստակով ապրել. սկսեց հողագործությամբ պարապել, միայն թե այս վաստակն իրեն հին որերին չհասցրեց:

Ցորենի հավաքման լուրերը գյուղում շրջելու որերին, կնոջ վորպես ոժիտ բերած գորգերը ծախեց, մի քիչ փող դիզեց, քաղաքից պարկեր գնեց և Շուայի յերեկվա բռնած ուղտերով յերկու–յերեք անգամ Բագու գաղտնի ցորեն ուղարկեց:

Շուայի այս քայլը հարյուրապետի մեջ վրեժխնդրական զգացումներ զարթեցրեց, սրտով սպառնալ

սկսեց, բայց դրա մեջ հանդեպ իր անձին լավ հետևանքներ չտեսավ: Ընդհակառակը, մտածեց գործը դնել փոխադարձ համաձայնությամբ:

Առավոտ վաղ վեր կացավ, գիշերվա անքնությունից կարմրած աչքերը շփելով, դուրս յեկավ, դիմեց դեպի գյուղխորհուրդ, նախագահին տեսնելու: Բայց նախագահը դեռևս վերի գյուղից չեր վերադարձել: Գրասենյակում քարտուղարի հետ միասին Շուային տեսավ:

— Բարև ձեզ,—ասելով, կաղնուց շինած աթոռի վրա նստեց:

«Սա անխղճություն ե ախըր, մենք ել մարդ ենք, գոնե ուղտերը տվեք»,—ուզում եր ասել, բայց մտածում եր՝ «գուցե ցորենն ել կարելի լինի ձեռք ձգել»: Այս միջոցին դռանը կարճ սյունին կապված ձին խըրխնջաց. խորհրդի նախագահը յեկել եր:

Ներս մտնելիս նախագահը մեջքի հրացանը խորքում մի մեխից կախեց, բարևեց ու հարցրեց.

— Ի՞նչ կա, ի՞նչ չկա, հարյուրապետ:

Հարյուրապետ Ասլանի սիրտը սեղմվեց. իր անցյալի հուշերը և ապագայի հույսերը տակն ու վրա յեղան, հին անունը չեյին ուզում մոռանալ:

«Յես հարյուրապետ չեմ, ի՞նչ եք ուզում ինձնից, ձեռք քաշեք»,—ուզում եր ասել, բայց ուղտերը, ցորենը միտն ընկան. մի կերպ գործը յոլա տանելու համար զսպված պատասխանեց.

— Վոչինչ, սաղություն:

Ասլանի խոր փոսերում պահված մշուշոտ աչքերը, կնճռոտած ճակատը, փոսացած այտը, շատ ու շատ պատահարների ծանրության տակ կորացած մեջքը վոչ վոքի գութը չեր շարժում: Վոնց եր պատահել, վոր 20 թվին, յերբ Շուան թունավոր գնդակով թշնամիներին գետին եր տապալում, սրան անհաղթելի յեր կարծել:

— Բանն ինչո՞ւմն ե:

— Մեր ուղտերը բռնել են, մատաղ քեզ:

Շուան յերկու ձեռքով դեմքը ծածկելով, անձայն խնդաց. այս խոսքերով նրան չեր կարելի խաբել:

— Ինչի՞ համար։
— Մի քիչ ցորեն...
— Վորոշումից տեղյակ չե՞ս։
— Տեղյակ եմ, հետո՞։
— Պիտի բանտարկվես։

Ավելորդ խոսակցության վերջ տալով, յերեկվա յերեք բանտարկյալների վրա մի հոգի յել ավելացավ։

4·

Շուշան ամեն տեսակ արտասովոր յերեւույթի մի ակնոցով չեր նայում. Նա ինքնուրույն բնավորության տեր եր։ Յեթե ընկերներից վորեւե մեկը գործին սառն վերաբերմունք ցույց տար, նրա հարվածող խոսքերից կամաչեր, մատնանշված սխալներն ըմբռնելով, նման քայլերից զգուշանում եր։

Անցյալները խորհրդի նիստում որենքը խախտողների հարցն եր քննվում։Խորհրդի անդամներից Բաղըրը, հարյուրապետի ցորենը յետ տալու կողմնակից դուրս գալով, խորհրդի անդամների մեջ մեծ վեճերի տեղիք տվեց։ Շատերը Բաղըրի այս պաշտպանողականին լավ մեկնություն չտվին։ Շուշան մտածում եր ու չեր գտնում այն շարժառիթը, վոր Բաղըրին մղում եր նման դիրք բռնելու։ Յերբ վորոշվեց ցորենը գրավել, իսկ բանտարկյալներին ազատել, Բաղըրը նորից փորձեց պաշտպանել իր տեսակետը։

Նիստից մի քանի ժամ հետո գյուղում լուրեր եյին շրջում թե՝ Ասլանի կինը կաշառել ե Բաղըրին։

5·

Շուշան, տուն գալով, մոր պատրաստած հացն ու պանիրն ախորժակով կերավ ու ձայն տալով պզտիկ յեղբորն, ասաց.

— Ալիշան, ձին ջրելու տար, քիչ հետո հեծնելու յեմ։
— Շտապո՞ւմ ես։

— Աբբասալը թաղն եմ գնում, գալիս պետք ե հեծնեմ։

Շուշան գնաց. Բաղըրի հետ քիչ խոսել եր ուզում։ Թաղի կողքով վեր յելնող բլուրի վրա բարձրանալով, ձայն տվեց Բաղըրին։Բաղըրի փոքր քույրը դռան արանքից նայեց ու աներեւութացավ. քիչ անց, ինքը Բաղըրը սկսեց ակամա քայլերով բլուրը բարձրանալ։

Մինչ այդ, Շուշան կանգնած, հյուսիսակողմում բարձրացող սպիտակ շենքն եր դիտում ու մոտիկ անցյալը հիշում. լռություն տիրող այս շենքում ինը տարի առաջ ամեն որ ուրախություն եր հնչում։ Հարյուրապետի տղաները գյուղի մի քանի յերիտասարդների հետ կերուխումի սեղաններ եյին սարքում ու մոտիկ գյուղից հայ զուռնաչիներ կանչելով, քեֆ եյին անում։ Իսկ շատերը բուռն ցանկությամբ նայում եյին գլխիկոր. Հենց Շուշան, Բաղըրի հետ նույն այս կետից կարոտալից հայացքներով շատ եյին դիտել պատշգամբում պարողներին։

Հիմի, հիմի այդ մարդկանցից հետք ել չի մնացել, ամեն մեկը ցրվել ե մի ձորում։

Այս բոլորը հիշելիս, Բաղըրի այս որվա ընթացքին անդրադարձավ. սրտի խորքից ակամա ցավ ու կարեկցություն զգաց. այս միջոցին Բաղըրը, բլուրի փոքրիկ քարերը խշրտացնելով, մոտեցավ Շուշային։

— Հը՞, ինչի՞ համար եյիր կանչում։
- Մի քանի խոսք ունեմ։
— Սայլդ պատրա՞ստ ե։
— Վո՞ր սայլի մասին ես։
— Վո՞նց. Ահմեդի հետ միասին չե՞ք լծում։
— Նրանց տանն ե, քիչ հետո կլծենք։
— Եդ լավ...սաս տեսնեմ, դու ինչի՞ Ասլանի նման արյունարբույին պաշտպանում ես։
—Շուշ, ախըր նրանք ել մեզ են, ել բավական ե։
— Սիրելիս, դեռևս նրան վոչինչ չի յեղել։
— Սրանից ավելի ի՞նչ եր լինելու։
— Ինքդ կուսթեկնածու յես և դեռ ենքանը չես

իմանում, վոր յեթե նրանց մի փոքր առիթ տրվի, քո եդ դատարկ գլուխը ճզմելու յեն:

— Ել հալ մնացե՞լ ե վոր:

— Լավ, հերիք ե,—ասաց Շուան և ջղայնացած գլուխը մի քանի անգամ օրորեց:

Բաղըրի խոսքերը կարծես նրա բերնից դուրս չգային, այնքան անհավատալի եյին թվում:

— Բանը նրանումն ե, վոր յերկու անիծյալ մանեթը քեզ չեղել ե:

— Ի՞նչ մանեթ ե,—Բաղըրն այս հարցը տալիս մինչև ականջները կարմրել եր:

— Յես իմ խոսքի պատասխանատուն եմ, այդ չգիտե՞ս դու:

— Շուա, բանը յեղել ե անցել ե, մի սխալ ե, արել եմ, յես ել մեղք եմ, արի մի կերպ կծկի...

Բաղըրը խեղդված ձայնով այս խոսքերն ասելիս, նմանում եր ուրիշի գրգռումով գողության գնացած ու բռնված դողդողան պատանու:

— Շուա...արի...մի մասն ել դու վերցրու...մի կերպ արա...

— Շնորհակալ եմ, դա կատարյալ անամոթություն ե, քեզ պահիր, բարեկամ...

— Ախըր մարդս ագահ ե, չի լինում, ի՞նչ անես:

— Հետո յերկար կխոսենք. առայժմ գնա սայլդ լծիր, յես ել գնամ զուռնաչիներին ձեն տամ: Ճանապարհի անջատման կետում ինձ սպասեք:

Ասաց ու պոկված, արագ քայլերով տուն դարձավ:

Բաղըրը կանգնած տեղում սառած մնաց. չեր իմանում ինչ անել. զղջացողների հատուկ դրությամբ, յերկար նայեց հեռացող Շուային ու հարբած մարդու քայլերով տուն դարձավ:

6.

Առավոտվա արեգակն իր հատուկ կարմիր ճառագայթներով սպիտակ չենքերի կատարները շոյելով, բարևում եր ճամբորդներին: Շուան մի քանի շաբաթ

առաջ իր նախագահությամբ Սադախլվի և հարևան հայ գյուղի միջև սոցմրցման պայմանագիր եր կնքել հացամթերման կամպանիան հաջող անցկացնելու: Ահա այդ հավաքված հացահատիկը քաղաք փոխադրելու համար, իրիկվանից գյուղխորհրդի նախագահի ձին վերցրած, առավոտ արշալույսին ճանապարհ եր ընկել:

Իսկ գյուղխորհրդի նախագահը, յերեկվա վորոշումը իրագործելու համար, յերբ բաց եր անում բանտի կողպած դուռը, հացահատիկի սայլերը շոսսեյում շարված ճամբա եյին ընկնում:

Ասլան Հարյուրապետն իր ավելի ևս մշուշոտած աչքերը արագ թարթելով, բանտից դուրս գալիս, գնացող սայլերի մեջ իր սեփական պարկերը տեսավ. կյանքում ամենադառը կսկիծը պատճառող այս հարվածը չկարողացավ տանել, ուշագնաց յեղավ: Չորս կողմից հավաքված գյուղի ծերունիները նրա քիթ-բերնին ջուր շաղ տալով, զարթեցրին:

Մինչև նրա զարթնելը, հացահատիկի սայլերը ճանապարհի յերկայնքով անհետացել եյին:

Քուռ գետի յեզերքին, ճանապարհների անջատման այս կետում, շարան-շարան մոտենում եյին հյուսիսից հայ գյուղի, իսկ այս կողմից Սադախլվի սայլերը: Մի ժամանակ Ասլան Հարյուրապետի տունը շենցնող յերեք զուռնաչիներից միակ ապրողն իր յերկար չուխայով, իսկ նոր վարպետները կոմսոմոլի համազգեստով, յեկել եյին իրենց կոմսոմոլի այս հաջող տոնը զվարթացնելու:

Գյուղացիներից շատերը ձորերը դղրդացնող զուռնաների ձենին եյին սպասում, բայց հնից հիշատակ մնացած դափ զարկողի զարկերը ցույց տվին, վոր նրա յեղանակի մեջ անցյալից վոչինչ չի մնացել:

Վարպետներից մեկը, իր իսկ ձեռքով պատրաստած գործիքը հնչեցնելիս, զուռնայի սպասող գյուղացիները սայլերի վրա անշարժացան: Իսկ յերբ յերիտասարդ վարպետը հնչեցրեց իր կլարնետը, թմրած ուղեղները ցնցվեցին նոր, չլսված յեղանակի ձայնից. բոլորը մի ակնթարթ մոռացան իրենց անցյալի վշտերը:

Շուան ականջները սրելով կանգնած տեղում քայլ փոխող իր ձիու՝ Թելլիի մազերն եր շոյում: Բոլորին կարգադրեց ցած իջնել. ծեր թե յերիտասարդ, բոլորը սայլերից իջնելով, շրջապատեցին նվագողներին. ծիծաղն ու պարն սկսվեցին:

Շուան ել, Թելլիի սանձը հանելով, դեմի արոտը քշեց և առաջինը թևերը պարզելով, «կոմսոմոլ» յեղանակը պարեց. կամաց-կամաց անզգալաբար շրջանը սեղմող գյուղացիները ծափ եյին տալիս և ուրախ բացականչություններով թնդացնում ձորերը:

Այս միջոցին Շուան կանգ առավ սպիտակ մազերով, բուռն ուրախությունից իրեն յերիտասարդ զգացող մի ծերունու առաջ:

Բոլորը ծափահարեցին, իսկ ծերունին ամաչեց. նրա դեմքը մի փոքր կարմրեց:

— Այ բալամ, յես այս յեղանակով չեմ կարող պարել: Յեվ խնդրեց «րուհանի» (պարի հին յեղանակ) նվագել: Յերիտասարդները ծիծաղեցին, բայց տարիքոտները, իրենք ել այս «կոմսոմոլ» յեղանակով պարել չիմանալով, չզարմացան ծերունու խնդրի վրա:

Յերիտասարդ վարպետը, հեռատես մարդու դատողությամբ, հին յեղանակներն ել սովորել եր. անմիջապես պարողի պահանջին գոհացում տվեց: Մինչ «րուհանին» նվագում եր ու ծերունին պարում, յերիտասարդներից մեկը բացականչեց.

— Այ Նասիբ ամի, կրիայի տեմպով ես պարում,— և նման արտահայտություններով վոգևորում եր պարողին:

Պարը յերկար շարունակվեց:

— Ժամանակը ուշ ե,— ասաց Շուան,— վերադարձին նորից կպարենք, այժմ պետք ե սայլերը համրել, ում սալերը քիչ են, նրանք են տալու վարպետների վարձը:

—Վարձն ի՞նչ ե, ընկեր Շուա,— առարկեց յերիտասարդ վարպետը:

— Վոչինչ, հանաք եմ անում:

... Ամենքը իրենց սայլերի մոտ գնացին: Ուղտերի բռնված տեղերում սայլերն համրեցին, քառասուն սայլ հանձնողը առաջնություն պիտի ստանար: Հայ գյուղը պատրաստել եր 45-ը, իսկ Շուան իր գյուղից տանում եր հանձնելու հիսուներկու սայլ:

... Քիչ հետո ցորենի 97 սայլ ճանապարհի վոլոր-մոլոր յերկայնքով շարան-շարան դեպի կենտրոնն եր դիմում:

ՌԱՖԻԼ

ԳՅՈՒՂ ՅԵՎ ՔԱՂԱՔ

«Կյանք» անունով մարտ

Մի մեծ քաղաքի գիշերը
գյուղից յեկած յերեխայի նման
տակն ու վրա եյի անում...
Զգխտեմ,
սրան տալ ինչպիսի անուն:
Շրջում եյի անհանգիստ
փողոցները իրար խաչաձևող
իսկ ինչ վոր մի հիվանդություն
նստել եր գանգիս:
Իսկ յերբ ասին,
չհավատացի.—
Այս լայն պողոտան,
այս տաս հարկանի շենքը
լցնում ե սիրտս
ուրախությամբ անծիր:

Հիշում եմ,—
մի մութ ու ցածլիկ հյուղ,
հյուղում մահու նման գեղջին
մի լույս աղոտ.
մայրս այդ լույսի տակ
ալյուր ե մաղում:
Մորս կողքին հանգիստ մրափող,
անփոխան—
յոթ տարեկան մի խոխա...

Ինձ ի՞նչ...
ասում են այդ խոխան
յես եմ յեղել

և լույս աշխարհում
փնտրել եմ անունդ:
Ցերբ գյուղերում վառվել ե
մահու կանթեղը,
Մայրս ծնել ե ինձ,
վորպես կովը հորթ ե ծնում:
Այսոր տեսա այդ հորթին.
ի՛նչ որի յե.
գյուղը չի սիրում,
քաղաքին ե սիրահարվել այդ չան վորդին:

Զեմ մոռացել.
Վազվզելով յերեխաների հետ անհանգիստ
քշում եյինք յեղեգե ձիերը մեր.
բոլոր ծառերի
և թռչունների անունները
գիտեյի անգիր....
Ո՞վ եր ասողը,
յերբ ռեզինե իմ հրացանով
բարձրանում եյի վորսի
մի չափազանց նեղ կածանով:

Իմ հայրը գյուղացի յե.
հիշում եմ:
Սպիտակ մարմինը իմ
ծածկված ե խիտ մազերով.
հորս հոնքերը,
վորպես կտրված գերու.
կրծում ե չոր հաց ու պանիր,
վոր գնա բանի...
յես ի՞նչ իմանայի, թե ինչու համար ե
նրա աչքերի լույսը մարել...

Աշուղների տաղերում
շատ են լողացել աչքերս,
վորոնք այժմ
վոսկրե ակնոցներ են կրում:
Ցես վոչինչ չեմ մոռացել.

չեմ մոռացել.
ինձ նույնպես չեն պատճառում յերկյուղ
կյանքիս
մազերը սանրող
սանրի վրայի
այս բծերը յերկու...

Այլ ցանկություն է իջել իմ սրտին,
յերբ քսան գարուն ունեմ Թևակոխած,
յես հիշում եմ՝ արևի տակ
և ձմեռվա ցրտին
անփոխան — այն խոխան:
Մեր գյուղը նման է ամեն մի գյուղի,
ուր խարխուլ տները
թաղվել են յերկյուղից:
Թոնիրների ծուխը յերկինքը բարձրացող,
ամպերի ծվենները տանիքների վրա,
հյուղերը լիքը մանուկներով
հյուղերը լիքը մանուկներով
ու չորս հացով
իսկ մնացածը ինչ վոր գիտեք—
յերազ...

Այսպես ձգվում է մեր գյուղի ղաշտը,
վորը ծծել է քրտինքը,
արյունը մարդու,
վորպես մի անտես վիշապ,
ուր հայրս քրտնել է
գիշեր ցերեկ արթուն
մի փոր հացի համար
և ուրիշ վոչինչ...

Արևը դեղին փետուրներով
ծագում է ամեն անգամ,
նայում է պատռված արևներիս
ժպիտով մի ներող...
Արևը ասում է նորից,
արևը դեղին, Թիկնեղ—

գնա հողը փորիր.
այս տարի նա
շատ է հոգնել:
Նրան շատ պիտի գուրգուրես.
ո՞վ ասաց...
Թող արտերը հացով թուրեն,
հա՛ց է պետք,
հաց!

. . . .

Այգաբացից—այգաբաց,
հողը վարող գյուղացի,
ձմեռվա սառնամանիքին
քունքից սառույցը կախ
ու հենված մի կտոր հացին,—
սիրում եմ քեզ,
արշալույսից-արշալույս
հողը վարող գյուղացի:
Բայց Թշնամի յեմ, հավատա՛,
քո յերեկվա որին.
քո բորբոսնած գաթան,
քո զուռնան,
քո հարսանիքները ատում եմ,
Թող կորեն...

Այո՛, Թշնամի յեմ
անիվներով ղանդաղ աղոթող
կառքին,
Թշնամի յեմ մրոտ ու սև լուսամուտով
ավերակին փառքին:
Ինչպես կուզեք.
ատում եմ փափախդ կեղտոտ,
վոր ծանր նստել է կզակիդ վրա,
Թոնիրներիդ ծուխը խեղդող
և մազոտ ձեռքերդ
կոպիտ մահակին դրած:—
Յես սիրում եմ քո այսօրը,
տենչում եմ վաղվա քո

յերկաթե քամին...
քո յերեկվանը յես
թշնամի յեմ,
թշնամի!

. . . .
. . . .

Յերբ ներս եյի մտնում
քաղաքի դարպասից,
թվաց թե նա սառն է
ու յերկաթի պես կարծր:
Յերբ մարդիկ ինձ ասին,
յես յերկար ծամում եյի այդ հարցը
և մտածում քաղաքի մասին:
Ծծում եր յերկաթե շրթերով,
ծծում եր այս քաղաքը
իմ մատները,
և յես ինչքան այս քաղաքի համար
իմ ուժը վատնել եմ,—
ինչպես աղջկա նայվածքն է
սիրտդ թակում
և դու վատնում ես
ամեն ինչ թաքուն...

***

Յերգս սկսի նրանով,
վոր քաղաքի սիրահար եմ:
Դժվար չե այդպիսի
մի սիրուհի ճարել,
բանը նրանումն է սակայն,
վոր այս իմ սիրուհին
գեղեցիկ է սակավ:

Յես ուզում եմ լայնացնել
իմ յերգի հունը.—
այսօրվա քաղաքը—այս է.—

գեղեցիկ քաղաքը դեռ մեր
ցանկությունն է...

Ապագա քաղաքը
թող փաթաթվի գյուղին,
խեղդի նրան
և հանգցնի ճրագները
խարխուլ հյուղի:
Յես բղավում եմ այժմ
գետնի վրա նստած,—
սպասեցե՛ք, սպասեցե՛ք
հաշմանդամ այդ հորթին,
վոր լույսը արևի պես հորդի
նոր գյուղի փողոցներով հատակ...

ԳԻՇԵՐ ՅԵՎ ՓՈՂՈՑ

I

Սովորություն ունեմ հիմարի պես շրջել:
Փողոցից կարկաչող առվի հատակը
Ինձ հաճախ տիղմի պես քաշում է իր տակը...
Սակայն յես սիրում եմ հիմարի պես շրջել:
Այսօր իմ ճամպան ել այս փողոցով անցավ
Սրտիս մեջ հուզում կա, պանդուխտի մի հուզում
Հույզերն այդ հրդեհող գինու հետ անձայն
Վորպես թարմ խորոված ուտել եմ ուզում:
Սև աչքերս մոլոր փողոցներն են մանրում
Գառան պես պաղ նայում ավտոներին գազան
Ելեքտրոլարեր են իմ մատները սանրում
Ու լարերն են խոսում իրենց յերկար մաղով:

Իրիկուն է իջնում...
Մի յերկյուղ է հիմար թակարդ լարում, իմ սիրտ,
Տրամվայի թելերն ի վեր յելնող մի մութ
Սյունից կախված ահա դեղնալույս մի լուսին
Ներքեվ լույս է թափում...
Փոքրիկ յերեխաներ—հասակին իմ յեղբոր
Աղաչում են նման փեշից բռնած մարդու

3188—8

— Մի սև փո՛ղ...
— Մի կտոր հաց տո՛ւր...

... Փող չունեմ, լինի էլ չեմ տա...
Այս մերժումի դեպքը ցավով սիրտս է խոցում
Դրդում ինձ բղկտել մետաքսն ատամներով,
Վոսկին ծովը նետել՝ հալելով հար բոցում.
Չե՞ որ յես հիշում եմ որերն իմ մուրալու:
Ահա աչքիս առաջ որերն իմ դառնահամ
Դրա համար հոգիս այդքան պաղ է նայում,
Դրա համար սրանք աչքիցս արցունք չառան
Չե՞ որ յես էլ մարդ եմ, վշտով սիրտս է վայում:

II

Հոսում են այս փողոցով գլուխներ ու վոտքեր
Ու քառանիվ վազքով որորոցներ անթիվ
Տրամվայն է սահում յերկար կոշիկ հագել
Ու վազում է իր կույր աչքում շողը շանթի

III

Ճերմակ գիշերն այսոր իր թեվերը փռեց
Յերազային պառավ մի կախարդի նման
Այսոր կրկին փարթամ ձյունը թափ է առել
Ու բարդվում է մարդկանց բյուր ուսերի վրա:

Ձյուն է գալիս կրկին
Տրոփում են դանդաղ
Մարդկանց ճնշված սրտեր
Տրոփում են սրտեր
Բարձրանում են ճերմակ ուսնոցները մորթե
Մարդկանց սրտին ծանր իջնում է մի վանդակ:

IV

Խաչվող փողոցների մի անկյունից մի կին
Կրակի մեջ յեփվող խնձորի պես դեղին
Ցրտից կծկված ձեռքով ծախում է լրագիր
Ինչքան կուզի ճերմակ ձյունը թող հեղեղի.

Ու յերբեմն նրան մեկնվում է մի թև
Հագած մուշտակ տաքուկ, շրթունքները դունած
Լրագրի համար փող է գցում մի սև
Հեռանում է անթարթ իր աչքերով քնատ...

V

Այս փողոցում այնքան կանայք են թափառում
Զույգեր, ամուսիններ,
Բյուր տների հյուսեր
Սրտաճմլիկ դեպքեր անկուշտ փողոցներում
Անքուն գիշերների փողոցային հույզեր...
Ցեվ սիրազեղ ժպիտ արտահայտող աչեր,
Պուդրի դրած այտերն ի վար հոսող արցունք,
Անթիվ նշաններով անցորդներին կանչել,
Ծիծաղներով քահ-քահ փարթամ կիրք են հայցում —
Ցեվ փչում է քամին, դողդողում են ասես
Կարմիր ներկած կառքեր, թավշանման զարդով
Թավալտում են իրար քամու նման զարդոտ
Վորպես գետեզերքի յեղեգների մազեր:
Փողոցով անցնում են ցիլինդրավոր ծերեր...
Բարձերի մեջ փափուկ յերեխաներ յերկու
Թիկն են ավել.. և տան սեղանին պաղ ճաշ է
Կատվի պես նիրհում են. բերկրանք կա մոր հոգում—
Ա՛խ, մայրը, այդ մայրը ինչե՛ր է քաշել...
Ցեվ կրկին շրջում են փողոցում այս անկուշտ՝
Մոր քսան տարվա լիզած զավակներ,
Չվերադարձած զույգ ամուսիններ,
Թոքախտ վորբերի խնամատարներ...
Մերկ պարուհիներ թավշյա կրծքերով,
Ծախու համբույրներ կշեռքով-քաշով
Մերկ մեռելների տեսիլքներ մաշող
Շրջում են, թարթում փողոցում այս անկուշտ:
Ցեվ հին այն Հռոմի ստրուկների նման
Հետևում է նրանց յերկձի կառքը թեթև
Հանկարծ զույգ է նստում փափուկ բարձի վրա
Ցեվ կորչում են խավար պարիսպների յետև
Ու մութ անկյուններում. համբուրվում են, ծ———

Քրծրծում են բաղում կերպարանքները սև
Ինչպես փթած ծառի բունը վորդն է կրծում,
Իրար հպվում, լիզում, սակարկում են մսեր...:

VI

Սորովություն ունեմ հիմարի պես շրջել.
Փողոցից կարկաչող առվի հատակը
Ինձ հաճախ տիղմի պես քաշում է իր տակը
Սակայն յես սիրում եմ հիմարի պես շրջել.
Մի գիշեր էլ դեռ կա ու մի փողոց էլ կա
Վոր թափանցող մի հուշ հաղորդել է սրտիս
Յերբ կրակով շինված մի մատանի յեկավ
Յեվ մարդ բառը փորեց մռայլ իմ ճակատին.
Բոցավառ մի առու վողողեց իմ հոգին
Մտրակեց իմ մազերն իր մտրակով դաղող
Գիտե՞ք ինչ է անունն այն փողոցի անգին
Հոգուն խնդում տվող...

VII

Գիշեր է մութ,
Ձյուն սպիտակ
Անվերջ քամի—
Յեվ գիշերի կրծքի վրա այն սպիտակ
Ծածանվում է մի սև դրոշ փողոցային
Իր լուռ քնով—
Այն փողոցը— պատերի տակ:

Դատարկ փողոց...
Տներր լուռ քուն են մտել
Ելեկտրական լույսերն հոգնած մարդու նման
Ու փողոցներ—
Զինված մարդով արդեն վողող
Վերջին կռվին պիտի գնան:

Համբերությունն հատավ վառվող խարույկի պես.
Լուսինն իր թույլ, արնամշուշ լույսը վառեց
Յեվ գնդակը՝ կյանքի համար, կյանքին խփեց
Մահն սկսեց իր խելագար պարը պարել...
Հողը պայթեց, յերբ պողպատե փողը հազաց

Փառավորվեց գիշերվա սև վայրենի ձին.
Մարդիկ յեկան, դուրս նետվեցին բազմահազար
Վոր դրոշակը քամու դեմ խանդով մրցի:
Բարիկադից դուրս սողացին բյուր գնդակներ
Յեվ քաղաքում մահն իր հնձող պարը պարեց
Նրանց թևերը ամուր եյին պողպատից էլ
Ու գետինը նրանց վոտքի տակ որորվեց:
Փողոցներում պատասխան եր
Վերջին կռիվ...
Պատմությունն եր անցնում մազե այդ կամուրջից
Ու շոյում եր իր արգանդի յերեխային:
Այս գիշերն իմ գիշերն է
Իմ գիշերն է, քո...
Մերն է այս գիշերը
Մեզնով է յերգում...:

Այս գիշեր պատմության վերջակետը դրի՛ք,
Սկսեցինք այս գիշեր մի նոր պատմություն
Նրա գլխատառը սվիններով գրինք
Տասնյոթ հարկանի շենքի ճակատին:
Ու մենք այս գիշեր կողք-կողքի յեկանք
Անհողդողդ ու խիզախ իրավունքով մեր վեհ
Հինգ թևանի պայծառ աստղը կարմիր ներկած
Ստեղծեցինք հզոր խորհրդային արև:

Սովորություն ունեմ հիմարի պես շրջել.
Փողոցից կարկաչող առվի հատակը
Ինձ հաճախ տիղմի պես քաշում է իր տակը...
Սակայն յես սիրում եմ հիմարի պես շրջել:

Ճանապարհս այսոր այս փողոցով անցավ
Կուզեյի սրտիս խինդը քանդակել այս պատին
Գրկախառնվել նրանց հողմերի պես հորձան
Ու արշավել հեռու փողոցներից անդին:

Ահա բարձրանում է հրաբուխի նման
Ծուխը Ֆաբրիկների աշխատանքի որի
Յեվ յոթ ժամը բոլոր յերկրների համար
Յերկնքին է գրում, վոր ինձ վոգեվորի:

Տաս տարի կրկին...
Եվ ծխաններին կայծ տվող ձեռքը
Ինդում կուղարկի, ռումբ կձգի...
Կհիշի իրեն արյունոտ վերքը:

Եվրոպայի այն մերկ
Փողոցներին անարգ
Ռումբ, ռումբ է պետք՝
Քանդել հիմքերն արագ:

ՆԱՋԱՐԼԻ

ԿԱՀՐԱՄԱՆԻ ԹՈՄԱՆԸ

Մեջտեղից բարակ տախտակով կտրված լայն սենյակում, քաղաքացիական կռիվներից մնացած ավերածության սրտաճմլիկ հետքերը դեռ աչքի եյին զարնում: Եթե չլինեյին պատերին կպցրած քարտեզները, գանագան բովանդակության պլակատները, իրենց այժմեյականությունը կորցրած լոզունգները, անպայման պիտի յերևային ծեփերի թափվածությունը, թրծած աղյուսների մերկությունն ու մի շարք տեղերում գնդակներից գոյացած հետքերը:

Սենյակի վերևի կողմը բուխարին եր վառվում: Մեջտեղը, լրագրերով ծածկված սեղանի վրա յեռում եր հին, սակայն մաքուր սամովարը: Բուխարում վառվող բոցերի լույսը խառնվելով սամովարից դեպի առաստաղը բարձրացող շոգու ալիքների հետ՝ մի կարմիր սյուն եր կազմում:

Սեղանի չուրջը նստած եյին չորս հոգի: Սրանցից— սև գանգրահեր, խոշոր և փայլուն աչքերով, լայն դիմագծեր ունեցող Կահրամանը սեղանի վրա դրեց շրթունքներից դեռ նոր հեռացրած թեյի բաժակն ու խոր հառաչելով ասաց·

— Ա՛խ, Սալման, ամեն անգամ քո այս տունը տեսնելիս՝ չեմ կարող չհիշել այն ծանր տարիների ա՛յնքան տոկալի և մահասարսուռ արհավիրքները...

Սալմանը նման խոսքեր մի անգամ լսել եր Կահրամանից: Առանց դրանց էլ, նախկին քաղաքացիական կռիվներից առաջացած մի շարք փուլ յեկած, ավերակ դարձած տեղերը կենդանի վկաներ եյին այդ ասածների: Բայց Կահրամանի խոսքը վո՞ր արհավիրքների մասին եր:

Սալմանը մի քիչ մտածելուց հետո, հարցրեց·

— Ի՞նչ արհավիրքների մասին է ձեր խոսքը: Ապստամբության որե՞րն եք ակնարկում:

— Ապստամբության որե՛րը, այո՛, ապստամբության որե՛րը...

— Այս տան մեջ ի՞նչ է պատահել:

Կահրամանն իր փայլուն աչքերն ուղղեց բոցավառվող բուխարուն, մի քանի վարկյան լռեց և, հանկարծակի, յերեսը դարձնելով դեպի ընկերները՝ յերկար պատմություն անելու ձևով սկսեց.

—20 թվին, այս քաղաքում ծագած ապստամբությանը ծանոթ եք, կարծեմ: Յեվ, յեթե չեմ սխալվում, Սալմանն էլ այդ ժամանակ քաղաքումն եր: Այդպես չե՞, Սալման:

— Վո՛չ, վո՛չ,—ընդմիջեց Սալմանը, յես, դիշեր ժամանակ, հեղկոմի հետ միասին, դուրս յեկա քաղաքից և ուղղակի գնացի կայարանն ու այնտեղից էլ՝ 32-րդ դիվիզիայի բանակատեղին:

— Այո՛, այո՛... Լա՛վ հիշեցի... ճիշտ է,— ասաց Կահրամանն ու շարունակեց.

— Դուք ինձ, չորս հոգու հետ միասին, թողեցիք քաղաքում: Յեվ հետո, յերբ բանակն ապստամբելով, մտավ քաղաքը, ինձ ու այդ չորս ընկերներին հանձնեցիք այդ տան պաշտպանությունը: Հիշում եմ, վոնց վոր հիմա, դիվիզիայի հրամանատարն ինձ այստեղ նշանակելիս ասաց. «վոչ վոքի չթողնեք այս տունը մտնի և այստեղից էլ վո՛չվոքի չթողնեք, վոր դուրս գնա: Մինչև վերջին շունչը պիտի պաշտպանեք այս տունը»: Գիտե՞ք ինչո՛ւ համար: Վորովհետև այս տունը բարձր է քաղաքի մյուս տներից, ուստի և հեշտությամբ կարելի յեր այստեղից դիտել քաղաքը և պաշտպանել կամուրջը պայթեցման վտանգից: Բացի դրանից, հրամանատարը խոստացավ մեզ մեկ-յերկու ժամից հետո ոգնություն ուղարկել:

Մեզ հանձնված մի գնդացիրով յես ու չորս ընկերներս կարող եյինք լավ կրակել թե՛ կամուրջը և թե՛ հրապարակը:

Ընկերներիցս մեկը—բարակ, նիհար, գեղաչյա, փայլուն ու սև մազերով, առողջամիտ մի կոմյերիտուհի յեր: Անունը՝ Սիրանուշ:

Ա՛խ, Սիրանո՛ւշ, Սիրանո՛ւշ: Յես նրա պես աղջիկ չեյի տեսել: Նա մինչև վերջին շունչը սպասեց գնդացրի մոտ: Բայց յես բուն նյութից շեղվեցի, չե՞:

Այո՛: Ասացի, վոր այս տան պաշտպանությունը հանձնեցին ինձ: Սա ուղղակի մահ եր: Վորովհետև քաղաքը մտնող մեր զորամասերը մի ժամից հետո յետ քաշվեցին: Մեկ էլ, ո՞վ գիտե, յե՞րբ պիտի մտնեյին քաղաքը: Բայց, համենայն դեպս, յես այդ հրամանը պիտի կատարեյի: Պիտի մնայի այս տանը:

Իմացել եյի, վոր տան տերը, լինելով քաղաքի ամենամեծ ու ազդեցիկ բեյերից մեկը, հեղափոխությունն սկսվելուն պես, իր մեծ տղայի հետ փախել եր. տանը թողել եր միայն կնոջը, տասը տարեկան տղային ու սպասուհուն:

Մենք յերկու որ մնացինք այստեղ: Այդ յերկու որվա ընթացքում հարկ չեղավ մեզ խոսելու վո՛չ խանըմի և վոչ էլ ծառայողների հետ: Նրանք վորքան էլ յերկուղի մեջ եյին, բայց և այնպես իրենց պահում եյին շատ լուրջ և զգույշ, հույս ունենալով, վոր, իբր թե, այս կռիվները պիտի վերջանային հակահեղափոխականների հաղթությամբ, վորից հետո պիտի պատրաստվեյին իրենց վրեժը լուծել մեզանից:

Յերկրորդ որը քաղաքում բավական լուրջ ընդհարումներ եյին տեղի ունենում: Յերբեմն մեր զորամասերն եյին հաղթում, յերբեմն էլ՝ ապստամբներինը: Յեվ այդ բանը լավ եյին զգում: Յերբ ապստամբները հաղթում եյին, մեր ապրած տան վրա տեղացող գնդակներին հաշիվ ու վերջ չկար: Իսկ յերբ մերոնք եյին առաջանում, յես ու ընկերներս մի քիչ ազատ շունչ եյինք քաշում, վորովհետև մեզ հասնում եյին պատահական գնդակներ:

Կահրամանը մի քիչ կանգ առավ: Դուրսը փչում եր ձմռան ցրտաշունչ քամին, վոր ձյունի փոքրիկ, սառած մասնիկներով ռմբակոծում եր տան պատուհանները:

Կեսօրվա մոտիկ էր։ Քաղաքում կես ժամվա չափ լռություն տիրեց։ Լռություն եմ ասում՝ չսխալվեք։ Այդպես կարելի յեր անվանել միայն այն ժամանակ, յերբ ամեն կողմից լսվող հազարավոր համազարկերը մի քիչ նոսրացան, թնդանոթների ձայները բոլորովին կտրվեցին։

Յես անմիջապես հասկացա, վոր յերկու կողմերն էլ հարձակման են պատրաստվում։ Յեվ ասածս ճիշտ դուրս յեկավ։ Կես ժամից հետո, չորս կողմը վողողվեց կրակով և գնդակների տարափով, ձայներից ամբողջ շենքը դղրդում էր։ Հարյուրավոր գնդակներ գալիս, շեշտակի ընկնում եյին այս տան կտրին, կպչում եյին պատերին։ Իսկ յես, տան յերրորդ հարկից դեպի հյուսիս նայող պատուհանից—յերկու հոգու հետ միասին—դիտում եյի հրապարակը, ու այնտեղից վոչ վոքի չեյինք թողնում, վոր կամրջի կողմն անցնի։

Այդ միջոցին բացվեց դուռն ու ներս մտավ տանտիրուհու ծառան։ Նա առաջվա պես լուռ չէր։ Յես այդ բանն անմիջապես նկատեցի։

— Ի՞նչ կա։ Ի՞նչու յեկար այստեղ,—ասացի նրան ու ստիպեցի, վոր ցած գնա, վորպեսզի գնդակ չդիպչի իրեն։

— Խանումն ուզում է ձեզ հետ խոսել,—ասաց նա, ուշք չդարձնելով իմ ասածին։

— Ի՞նչ խոսելու ժամանակ է հիմա... Աշխարհը փուլ է գալիս։ Յես այստեղից չեմ կարող հեռանալ...

— Շատ հեռու չի։ Հարևան սենյակումն է։ Մի շատ կարևոր գործի մասին ուզում է ձեզ հետ խոսել։

— Կարևոր գո՞րծ։ Զարմանալի՛ բան... Շա՛տ լավ, գնանք տեսնենք ի՞նչ կարևոր գործ է։

— Իսկ դուք զգո՛ւյշ յեղեք,—ասացի ընկերներիս ու գնացի հարևան սենյակը։

Յես այդ խանումին մոտիկից յերբեք չեյի տեսել։ Մոտավորապես 30 տարեկան, գեղեցիկ հասակով, առողջ կազմվածքով, խոշոր ու սև աչքերով մի կին էր նա։ Յերկար ու սև ծամերը յերկու հուսկեն առած՝ ձգել էր աջ ու ձախ ուսերին, վորտեղից՝ յերկարել հա-

սել եյին դուրս ցցված կրծքի վրա։ Գլխին կապել էր սպիտակ մետաքսյա շարֆ։ Նա զարդարված էր։

Ինձ տեսնելիս մոտեցավ անկյունում դրված գահավորակին և բավական լուրջ կերպով նստելով՝

— Ձերդ բարձրություն,—ասաց նա,— կարելի՞ յե ձեզ հետ մի քիչ խոսել։

— Յես հիմա զբաղված եմ։ Իսկ յեթե կարճ պիտի խոսեք, պատրաստ եմ լսել։

Խանումի փոքրիկ շրթունքների վրա յերևաց թեթև ու կարճ մի ժպիտ։ Նա մատներով խաղում էր փափուկ ծամերի ծայրերի հետ։ Վոտքի կանգնելով՝ մոտեցավ ինձ, շեշտակի նայեց աչքերիս մեջ և նախկինից ավելի թեթև, բայց նենգ ժպիտով՝

— Ի՞նչ կոպիտն եք,—ասաց,—չեք մտածում, վոր ձեր առաջը կին է կանգնած։

Յես յերբեք դիրքս չփոխեցի։

Մինչ Կահրամանն իրա սառելու մոտ թեյի մեջ մուրաբա յեր գցում, ընկերները լարված ուշադրությամբ հետևում եյին նրա բոլոր շարժումներին, շտապում եյին շուտով լսել ընդհատված պատմությունը։ Շուրջը տիրել էր խոր, հետաքրքրական լռություն։ Բուխարու ճարճատյունի ձայնը խառնվելով սամովարի քլթքլթոցի հետ՝ ծածկում էր հետաքրքրությունից չկշտացող սրտերի ձայները։

— Յես իմ դիրքս բոլորովին չփոխեցի։—Շո՛ւտ արեք, խնդրեմ,—ասացի նրան,—ի՞նչ եք ուզում, ասացեք կարճ ու կտրուկ։

— Ո՜հ, վորքա՜ն վախկոտ եք, աստվա՛ծ իմ,—ասաց նա մի քիչ երերուն, բայց արհամարհական ժպիտով։

— Յեթե այդպես է, յես այլևս չեմ կարող սպասել։ Գնում եմ։

Յեվ յերբ քայլերս ուղղեցի դեպի դուռը, հանկարծ ձախ ձեռքս գտա նրա փափուկ մատների արանքում։ Յետ դարձա։

Թնդանոթների և հրացանների ձայներից, կարծես,

թնդում էր յերկինքը: Կրակը գնալով՝ հետզհետե սաստկանում և դրության լրջությունն էր վորոշում:

Ձեռքս մի կերպ ազատեցի նրանից:

— Գնում եմ, ի՞նչ ունեք ասելու:

Կրկին անգամ պինդ բռնեց նա ձեռքս ու ասաց.

— Ինձ թույլ կտա՞ք:

— Ի՞նչ:

— Ուզում եմ գնալ դուրս, ազգականներիս մոտ:

— Չի՛ կարելի: Ինձ պատվիրված է վոչ վոքի բաց չթողնել այստեղից:

Յեվ յերբ ուզում եյի դուռը բաց անել, նա իր յերկու մերկ, մսոտ, փափուկ ու բուրավետ թևերով գըրկեց վիզս: Նախապես՝ կասկածեցի, վոր նա ուզում է ինձ զինաթափ անել: Ուզեցի խփել: Բայց փոխեցի մտադրությունս: Յերեսս դարձրի նրան: Հակառակ իմ բոլոր ջանքերի, չկարողացա վիզս ազատել նրա ձեռքերի միջից:

— Սիրելի՛ս: Լա՛վ տղա: Թո՛ղ ինձ գնամ ու վերադառնամ: Յես քոնը կլինեմ:

Նրա այդ կեղծավոր ու «քաղցր» լեզուն զզվանք էր պատճառում ինձ: Մյուս կողմից՝ աշխատում եյի ոձիքս ազատել նրանից:

Այդ միջոցին չիմացա թե դուռն ինչպես բացվեց, ու Սիրանուշը յերկնքից իջածի պես կանգնեց առաջս: Նա իր սպառնալից աչքերով դիտեց նախ խանումին և ապա ինձ: Աշխատելով ծածկել իր բարկությունը՝ ասաց.

— Կահրամա՛ն, կարծում եմ, հետո էլ կարող եք իրար սիրել: Այժմ դրությունը լուրջ է: Լավ չի՞ լինի, վոր վերադառնաք ձեր տեղը:

Կարծես մի պղինձ լիքը յեռացած ջուր լցրին գլխիս: Չնայած վոր յես մեղավոր չեյի, դիրքս չեյի լքել, դրանում չեյի կասկածում: Բայց այդ կոմսոմոլկայի ներկայությամբ ինձ այնքան ստորացած զգացի, վոր հիմա էլ այդ բանը հիշելիս ամաչում եմ:

Խանումը, խոր զզվանքով Սիրանուշին դիտելուց հետո՝ ձեռք քաշեց ինձնից ու մտավ յերրորդ սենյակը:

Իսկ յես Սիրանուշի կասկածը փարատելու համար, ասացի.

— Հավատա՛, Սիմա, նա տզրուկի նման կպել եր ոձիքիս: Ուզում եր ինձ խաբել, վորպեսզի թույլ տայի իրեն դուրս գնալ... Յես նրան առաջին անգամն եմ տեսնում... Բայց չա՛տ անամոթն եր:

— Այժմ ներողություն խնդրելու ժամանակ չէ: Գնանք մեր պահակատեղին... Ամենից առաջ՝ հարկավոր է պարտաճանաչ լինել,— ասաց Սիրանուշն անտարբեր կերպով, ու յերկուսով միասին գնացինք գնդացրի գտնված տեղը:

Թշնամու մի կարևոր զորմասը գնդակներով կոծում եր այս տունը: Տեղացող գնդակներից անկարելի յեր ման գալ, Սիրանուշին քաշելով ինձ մոտ—հողով լցված պարկերի յետևը— սկսեցի կրակել: Հրապարակում գտնված թշնամու 200 հոգուն փախցրի: Հետո, նախկին տեղս քաշվելու հետևանքով, հարկ յեղավ բաժանվել Սիրուշից:

Մի ուրիշ ընկերոջ հետ գնդակներ արձակելով՝ պաշտպանում եյինք կամուրջը: Յերկու րոպե չեր անցել, յերբ Սիրանուշի սենյակից լսեցի նախ՝ սոսկալի և ապա՝ աղաղակող մի ձայն: Սրտաճաք յեղա:—Հավատա, նրան խփեցին,— ասացի ու իսկույն անցա նրա սենյակը:

Դուրսը ցրտաշունչ քամին հեռախոսի թելերին դիպչելով՝ վոռնում եր վիրավոր և բողոքող անասունի նման:

Կահրամանը զայրույթից փոխեց իր ձայնը. կես րոպեյի չափ սպասելուց հետո շարունակեց.

— Կողքի սենյակը մտնելիս, հանդիպեցի Սիրուշին, վոր ուզում եր դուռը բաց անել: Նրա յերեսի գույնը ձյունի նման սպիտակել եր, լուրջ ու գեղեցիկ դեմքի վրա նկատվում եյին մահվան նշանները: Տեսա, վոր ձախ կողքից կպցրած մատների արանքից հոսում եր կարմիր արյունը, վոր սպիտակ չթից կարած շորերի ծայրերից կաթում եր գետնի վրա: Դա նրա արյունն եր:

Անմիջապես սեղմեցի կրծքիս վրա: Սաստիկ ցավից չէր կարող խոսել, նվվում էր:

— Զե՛մ ուզում…,—ասաց Սիրանուշը կցկտուր խոսքերով…Մեռնո՛ւմ եմ:

Նա մեռնում էր, բայց էլի շարունակեց.

— Անցիր գնդացրի գլուխը: Հարկավոր է պաշտպանել հրապարակը… Ուշադրությունդ մի տեղ կենտրոնացրու…Կարծես, մերոնք հարձակման են պատրաստվում… Հավատա՛, որ մենք պիտի հաղթենք… ի՛նձ… ի՛նձ…

Այլես չկարողացավ խոսել: Բայց դեմքի վրա նկատվում էր հույսի ժպիտ:

Ուզեցի նրան համոզել, որ յես հավատարիմ եմ իր գործին:

— Մենք,—ասացի,—պիտի հաղթենք: Մինչև վերջին շունչս չպիտի հեռանամ գնդացրից: Հավատա:

Նա մի անգամ ևս ժպտաց և ապա խորունկ ձայնով ասաց.

— Յես հավատում եմ:

Մի րոպեյից հետո արդեն նա ծանրացել էր գրկումս:

Սիրանուշը մեռել էր: Յերկա՛ր, յերկա՛ր նայում էյի նրա գունատված յերեսին: Աչքերի մեջ, շրթունքների վրա կար անջնջելի, հուսատու, լուռ ու անկեղծ մի ժպիտ, որ վոչ այլ ինչ էր, յեթե վոչ հեղափոխության հաղթանակին հավատացած և իր հավատարիմ ընկերոջ գրկում մեռած մի կոմյերիտուհու ժպիտ:

Այո՛, նա մեռած էր:

Կահրամանի աչքերը թրջվել էյին: Նրա ձայնի մեջ կար վիշտ և թախիծ: Զորս ընկերներն իրար էյին նայում ապշահար: Բոլորն էլ զգում էյին նույն վիշտն ու թախիծը:

— Ռոմանը դեռ չի վերջացել… Վերջը մտիկ արեք, հանկարծ սկսեց Կահրամանն ընդհատված պատմությունը:— Կռիվները նախկին ուժգնությամբ շարունակվում էյին: Յերրորդ սենյակից լսվեց մի հանկարծակի շրխկոց, վորը կրկնվեց մի քանի անգամ: Կասկածեցի:

Այդ սենյակից կտուրը բարձրանալու համար դրըված էր մի աստիճան, վորով հեշտությամբ կարելի յեր բարձրանալ հարևանի տան կտուրն ու այնտեղից անցնել փողոց: Յես, նախապես զգալով այդ բանը, կտուրի այդ դուռը փակել էյի մի մեծ կողպեքով:

Անմիջապես անցա յերրորդ սենյակը: Ուշադրությունս դարձրի մի բանի վրա: Սև հագուստով մի մարդ աշխատում էր կոտրել դռան կողպեքը: Նա չիմացավ իմ ներս մտնելը, ավելի ճիշտն ասած, սաստիկ աղմուկից չլսեց վոտքերիս ձայնը: Ձեռքին գտնված յերկար յերկաթի ծայրով կոտրեց կողպեքն ու դուռը բաց արեց:

Մի քիչ մտածելուց հետո, հրացանն ուղղեցի նրան:

— Կանգնի՛ր, ո՞վ ես—կանչեցի:

Առանց ուշադրություն դարձնելու, նա շտապեց դուրս գալ դռնից:

— Ո՞վ ես դո՛ւ, սպասի՛ր,—կրկին կանչեցի.

Նա արդեն դրսումն էր: Մի գնդակ արձակեցի. յերկրորդն էլ…, վորից հետո այդ մարդը աստիճաններից գլորվելով-գլորվելով ընկավ սենյակը: Վազեցի, ուզեցի տեսնել թե ո՛վ է: Յերբ նրան շուռ տվի կռնակի վրա, զարմացած մնացի: Ո՞վ լինի լավ է:

Ունկնդիրների աչքերը հետաքրքրությունից ե՛լ ավելի լայն-լայն բացվել էյին: Սամովարն այլես չէր յեռում: Նախկին աղմուկը հանդարտել էր: Բուխարու բոցը մարել, միայն կրակն էր պեծկլտում:

— Իմ առջև, գետնի վրա, փռվել էր տղամարդու չորեք հագած տանտիրուհին—Խանումը: Նա ամուր ու համառ սեղմել էր ատամները, ստացած վերքի ցավից չէր գանգատվում: Գնդակը մտել էր նրա կռնակը և թիկնոսկրից անցել գնացել էր:

— Դուք ո՞ւր էյիք գնում: Ուզում էյիք փախչե՞լ,— հարցրի յես:

Նա լուռ էր: Նրա աչքերի մեջ զզվանք էր փայլում:

Ուզեցի վերքը փաթաթել: Զթողեց և բացի դրանից, դառն ժպտաց: Քիչ հետո նրա խոշոր ու սև աչքե-

րը փակվեցին։ Այլևս նրա գեր ու փափուկ կուրծքը չեր բաբախում։

Նա մեռել եր։

Կահրամանը վերջացրեց իր ռոմանը։

Ժամին հանդարտել եր։ Աքլորները կանչում եյին։ Ընկերների ուշադրությունը կենտրոնացած եր մի կետի վրա։ Նրանք խորասուզվել եյին խոր մտածմունքների մեջ։

—Ժամանակն ե, գնանք,—ասաց Կահրամանը վոտքի կանգնելով, և ապա Սալմանին դառնալով՝

— Շնորհակալ ենք, վոր մեզ թեյով հյուրասիրեցիք,—ասաց ու սեղմեց նրա ձեռքը։

Դ Ա Վ Ա Ճ Ա Ն Ը

1.

1905 թիվը մոտենում եր իր վախճանին։

Գործադուլների լարված լռությանը փոխարինեց համազարկերի աղմուկը բարիկադների վրա։ Ազատության, մարդկային իրավունքների համար ինքնազոհաբար պայքարում եր Ռուսաստանի յերիտասարդ պրոլետարիատը։

Բայց այդ պայքարը տեղի չեր ունենում այնտեղ, բարձր լեռնաշղթայից այն կողմը, ձյունով ծածկված անսահման տափաստաններում։

Իսկ այստեղ, Հարավային Կովկասում, տիրում եր անվրդով լռություն։

Ինչպես միշտ, ինչպես հազար տարի առաջ, այնպես ել այժմ արևելքում յերևում եր արևը և մայր եր մտնում արևմուտքում։ Բարձրանում եր արևը, բարձրանում եյին և մարդիկ։ Իսկ յերբ արևը կորչում եր հորիզոնից անդին, դա նշանակում եր, վոր վերջ յեկավ մարդկային հոգսերին և բոլորը պետք ե պառկեն քնե-

լու։ Արագ ծածկվում եյին պատուհանները, փակվում եյին դռները, և գավառական փոքրիկ քաղաքում, վոր շրջապատված եր պտղատու ծառերով, տիրում եր լռությունը։

Գիշերային լռությունը վրդովում եր միմիայն բամբակազտիչ գործարանը։ Նա աշխատում եր յերկու հերթով—թե՛ գիշերը, թե՛ ցերեկը։ Գիշերը գործարանային մեքենայի աղմուկն ավելի վորոշ եր լսվում։ Մթության մեջ կորած գործարանի խողովակից կարճ ընդհատումներից հետո դղրդոցով դուրս եր թռչում շոգին։ Շոգու հանած աղմուկը նման եր հոգնած մարդու շնչառության։

Յեթե գործարանը չլիներ—գիշերը կարելի յեր անցնել քաղաքի մոտով և չնկատել նրան։ Այդպիսի լռություն և անշարժություն եր տիրում այդ քաղաքում։

Վո՛չ-վոք վոչինչ չգիտեր այն մասին, թե ինչ ե կատարվում լեռների պատից անդին, իսկ յեթե մեկն իմանար ել՝ բան չեր հասկանա։ Այստեղ այլ կյանք եր, իսկ քաղաքում—այլ։

Գործարանը պատկանում եր Սելիմ-բեկին։

Կարճահասակ, հաստլիկ Սելիմ-բեկը նման եր յերկու հենակների վրա դրված մգլած տանձի։ Սելիմ-բեկի ամենալայն տեղը փորն եր։ Փորից վեր Սելիմ-բեկի մարմինը նեղանում եր և վերջանում թռչնի գլխով։ Սելիմ-բեկի դեմքին նկատվում եյին միմիայն աչքերը—մանրիկ, ոձի աչքերի նման անթարթ նայող։ Անդրավարտիքը և ժիլետը չեյին կարողանում ծածկել Սելիմ-բեկի դուրս ընկած փորը և նրանց արանքից յերևում եր կեղտից դեղնած վերնաշապիկը։ Գնալիս Սելիմ-բեկը այնպես եր թափահարում ձեռքերը, կարծես փորի վրայից քերում եր ճանճերին և հրում եր նրանց յետ։ Գործարանատիրոջ հաստլիկ, յուղոտ մատներին շարված եյին թանկագին քարերով զարդարված մատանիներ։

Բանվորները վախենում եյին Սելիմ-բեկի չար ու անթարթ աչքերից։ Նրանք դողում եյին տիրոջ սուր ու

խոցող ձայնից: Նրանք հարգանքով բարևում էին նրան ու մի կողմ քաշվում, կարծես Սելիմ-բեկը վո՛չ թե մարդ էր, այլ վառոդով լիքը մի տակառ, վոր յուրաքանչյուր վայրկյան կարող էր պայթել:

Հոգնատանջ դեմքերով և վախեցած հայացքներով լսում էին բանվորները տիրոջ չար ձայնը, և հավատում էին, վոր Սելիմ-բեկը հանդուրժում է իրենց միմիայն ողորմածությունից դրդված և վայր յեկել է իրենց տարել, յեթե տիրոջ համբերությունը հատնի:

Հայհոյելով բանվորներին, Սելիմ-բեկը կարգադրություններ էր անում հարգանքով իր առաջ խոնարհված վերակացուին ու մեխանիկին, և արագ հեռանում էր՝ գլուխը գոռոզաբար ցցած:

Մի մարդ միայն չեր վախենում Սելիմ բեկից: Յեվ այդ մարդը յերիտասարդ մեխանիկ Մոհարրամն էր: Կենդանի, շարժուն էր Մոհարրամի դեմքը և նրա կայտառ աչքերը վառվում էին զվարթ կրակով: Յերիտասարդ մեխանիկի նիհար մարմինը և սև աչքերն անընդհատ շարժման մեջ էին: Կարծես թե ինչ-վոր բան պակասում էր Մոհարրամին, կարծես թե նա ամեն ժամանակ փնտրում էր մի բան, փնտրում էր ամենուր, բայց չեր կարողանում գտնել: Նա զվարթ ծիծաղում էր ու յերգում և շարունակում էր վորոնել:

Մոհարրամը չեր վախենում տիրոջից և դեպի նա ցույց չեր տալիս վոչ մի հարգանք:

Յերբ Սելիմ-բեկի ճչացող ձայնը լսեց բաժանմունքում, Մոհարրամը հաճույքից շվվացրեց և դեպի առաստաղը նետեց իր մորթե փափախը:

Տարիքոտ ու մռայլ մեխանիկ Սալմանին դուր չեր գալիս իր օգնականի վարքը: Նա ավելի ևս մռայլվեց և դժգոհ արտասանեց.

— Դու չպետք է այդպես վերաբերվես դեպի մեր տերը:

— Ինչո՞ւ, անկեղծ զարմանքով հարցրեց Մոհարրամը:

— Տիրոջը պետք է հարգել,—խրատաբար պատասխանեց մեխանիկը:

— Ինչո՞ւ համար,—դժգոհ բացականչեց Մոհարրամը:

— Նրա համար, վոր նա գործարանատեր է և հարուստ մարդ... նա—ամեն ինչ է, իսկ ի՞նչ ենք յես ու դու... Ճամբի փոշի... Եսոր մեզ քամին մի կողմ է փչում, եգուց ուրիշ կողմ կտցի: Ու վոչ վոք էլ չի նկատի այդ ու չի խղճա մեզ: Իսկ գործարանատերը մեծ մարդ է: Մենք բոլորս էլ կախում ունենք նրանից, նա բոլորիս էլ կերակրում է: Ես բանի համար պետք է նրան հարգանք տալ:

— Իսկ յեթե նա չա՞ր մարդ է:

— Հարուստ մարդը չի կարող չար լինել. նա ավելի շատ է բարիք անում, քան մենք բոլորս միասին:

Մոհարրամն ուշադրությամբ լսում էր Սալմանի խոսքերը: Նրա դեմքը լրջացավ: Միմիայն համառաբար սեղմած շրթունքներն ասում էին, վոր նա համաձայն չէ մեխանիկի հետ և մնում է իր կարծիքին:

Մեքենաների բաժանմունքի դռների մոտով բամբակի ութը փթանոց բեռան տակ կռացած, դանդաղ շարժվում էր բեռնակիր Ղուրբանը: Քրտինքն առվակներով հոսում էր Ղուրբանի արևառ, կնճռոտ դեմքից և կաթիլ-կաթիլ ընկնելով գետին, կետերով նշում էր բեռնակրի անցած ճանապարհը:

— Ահա՛ մեր տիրոջ բարիքը,— բացականչեց Մոհարրամը և դուրս թռավ շեմքից: Նա ներքևից բռնեց ծանր հակը և օգնեց Ղուրբանին տեղ հասցնելու այն:

— Ղուրբանը գործարանում վնասել էր վոտը և խնդրում էր տիրոջից թեթևացնել իր աշխատանքը: Իսկ ի՞նչ պատասխանեց աղեն...Նա նրան ծույլ անվանեց և սպառնաց վռնդել աշխատանքից: Սրա համա՞ր էլ հարկավոր է հարգել տիրոջը,—հարցրեց Մոհարրամը, վերադառնալով մեքենաների բաժանմունքը:

Սալմանը յերեսը շուռ տվեց իր օգնականից և մռայլ մռմռաց.

— Անմահ մարդու հետ խոսելը զուր ժամանակ վատնել է: Ցես քեզ խորհուրդ եմ տալիս լեզուդ կարճացնես ու կողպեքի տակ դնես:

Մոհարրամը ճաշում էր բազարի չայխանայում: Նա այնտեղ էր ճաշում ո՛չ թե ոգուտի համար, այլ միմիայն այն պատճառով, որ այստեղ շատ մարդ էր հավաքվում: Այստեղ կարելի յեր նոր մարդու հանդիպել, խոսել նրա հետ և շատ հետաքրքիր բաներ իմանալ:

Ցերեկ Մոհարրամը նկատեց մի այդպիսի մարդու: Նա ուրիշ տեղացի յեր, յեկվոր: Այդպիսի մարդիկ հաճախ եյին հանդիպում չայխանայում: Մեծ մասամբ դրանք վաճառականներ եյին: Բայց այն մարդը, վորի վրա Մոհարրամն ուշադրություն դարձրեց, վաճառական չեր: Նա վոչինչ չեր գնում, բազարում չեր հրմշտկըվում կշեռքի մոտերքը, չնայած այս հանգամանքին, նա ուշադրությամբ քննում եր ամեն ինչ և շատ բաների մասին հարցուփորձ անում:

Մոհարրամը կողքից դիտում եր յեկվորին, և ուսումնասիրում նրան: Նա բարի, բաց դեմք ունի և սև, դանդուր մորուք: Աչքերն ուշադիր են ու շոյող: Այդպիսի աչքեր ունեցող մարդը չի կարող վոչ հպարտ լինել, վոչ չար: Նա անկասկած բավականին թափառել և աշխարհիս յերեսին և շատ բան տեսել:

Մոհարրամն ուշադրություն դարձրեց և' փոքրիկ կաշվե պայուսակի վրա, վորից յեկվորը չեր բաժանվում: Անծանոթն այնքան խնամքով եր վարվում այդ պայուսակի հետ, կարծես նրա մեջ փող լիներ:

Ցերբ Մոհարրամը մտավ չայխանան, նա մտածում եր իրեն հետաքրքրող մարդու մասին:

— Հարկավոր է խոսք բանալ նրա հետ: Հարկավոր է իմանալ թե ո՞վ է նա և ինչո՞ւ յե յեկել մեր քաղաքը···—մտածում եր Մոհարրամը:

Բազարի օր եր և չայխանան լիքն եր այլեցուներով: Միակ ազատ տեղը յեկվորի սեղանի մոտ եր: Մոհարրամը յերկչոտ նայեց այդ տեղին, չհամարձակվելով մոտենալ: Անծանոթը կարծես հասկացավ Մոհարրամի հայացքը: Նա տեղից շարժվեց և ցույց տվեց ազատ աթոռը:

Ուրախացած Մոհարրամն արագ նստեց և շտապեց խոսք բաց անել:

— Դուք դեռ եստե՞ղ եք···—շտապ հարցրեց նա, չմտածելով այդպիսի մի հարց տալու անպատեհության մասին:

Անծանոթը հարցին պատասխանեց զարմացած հայացքով: Շեշտակի նայվածքը Մոհարրամին հարկադրեց կարմրել: Խոսակցի ամոթխածությունը յեկվորի դեմքի վրա առաջացրեց մի բարեսիրտ ժպիտ:

— Մնում եմ եստեղ միմիայն այսոր···

Այդ լուրը ախրեցրեց Մոհարրամին և անհանգիստ հարցասիրությունը կրկին շարժեց նրա լեզուն.

— Նշանակում է՝ յերեկոյան կամ առավոտյան դուք գնո՞ւմ եք քաղաքից···

— Ուզում եմ գնալ այսոր յերեկոյան:

— Ձեր գործերը վերջացրի՞ք:

— Ի՞նչ գործեր:

Ամոթխած կարմրությունը կրկին այրեց Մոհարրամի դեմքը: Կրկին նա իր անհամբերության շնորհիվ անհաջող հարց տվեց: Ի՞նչ իր բանն է ուրիշի գործերին խառնվելը: Բայց միևնույն ժամանակ տարորինակ է, թե ինչո՞ւ իր խոսակիցը, հենց վոր գործերի մասին հարց բարձրացավ՝ զգուշացավ ու լռեց:

— Միթե՞ դուք եստեղ վոչ մի գործ չունեյիք,— ղարմանքով հարցրեց:

Նա անորոշ պատասխան ստացավ՝ և իր հանդեպ ցույց տված անվստահությունից նեղացավ ու լռեց:

Մի քանի րոպե անց յեկվորը վերսկսեց խոսակցությունը և ինքն սկսեց հարցեր տալ:

— Ի՞նչով եք դուք զբաղվում:

— Ցես բանվոր եմ:

— Վո՞րտեղ:

— Բամբակազտիչ գործարանում:

Յեկվորն ուշադրությամբ զննեց Մոհարրամին և մտածկոտ կերպով մատներով թխկացրեց կեղտոտ սեղանին:

— Ձեր քաղաքը հաճելի չեր— փոխեց նա խոսակցությունը:

Չայխանայում աղմուկ եր ու շփոթ: Կերակուրների հոտով ու ծխախոտի ծխով լեցուն օդը հեղձուցիչ եր ու ծանր:

— Ձեր քաղաքն ինձ դուր չեկավ...—առանց շտապելու շարունակեց յեկվորը.—բայց յես չկարողացա լավ տեսնել ամբողջը: Յերեկ այստեղ շատ կան լավ այգիներ:

Յես այսոր ազատ եմ,—արագ պատասխանեց Մոհարրամը.— ուզո՞ւմ եք՝ յես ձեզ ցույց կտամ շատ հետաքրքիր տեղեր:

— Շատ ուրախ կլինեմ, պատասխանեց յեկվորը և, նայելով ժամացույցին, ավելացրեց. Հիմա ժամը տասներկուսն ե: Լավ ժամանակն ե զբոսանքի համար:

Մոհարրամ շտապ վերջացրեց թեյը և վեր կացավ:

Մոհարրամը ման եր ածում անծանոթին քաղաքով, ցույց եր տալիս ամենը, ինչ-որ հետաքրքրական եր, և ձգտում եր լավ հիշողություն թողնել յեկվորի մեջ միասին անցկացրած ժամանակի մասին: Մոհարրամը խոսում եր անվերջ և միևնույն ժամանակ զգում եր, վոր իր ցանկությունը չի իրականանում: Անծանոթը լսում եր իր ուղեկցի ասածները, անտարբեր նայում եր ցույց տված առարկաներին և տարված եր սեփական մտքերով:

Մոհարրամը զարմանք եր զգում, նրա զրույցը հետզհետե կորցրեց իր աշխուժությունը և քիչ ժամանակ անց՝ բոլորովին ընդհատվեց: Այդ ժամանակ խոսեց յեկվորը: Յեվ Մոհարրամը նորից զարմացավ: Նրա ուղեկիցը խոսում եր վո՛չ թե այգիների, կամ քաղաքի հաղվագյուտ բաների մասին, այլ գործարանի և բանվորների: Յեվ վորքան շատ եր հարցնում նա գործարանի մասին, այնքան աշխուժանում եր: Աննկատելի կերպով աշխուժացավ և Մոհարրամը, յերբ խոսք բացվեց գործարանատիրոջ և բանվորների մասին:

—Մեխանիկ Սալմանը պահանջում ե, վոր յես հարգեմ տիրոջը.—Մոհարրամն շտապում եր արտահայտել իր սրտում կուտակված դժգոհությունները.—իսկ ի՞նչու համար յես պետք ե հարգեմ նրան: Նա մեզ հայհոյում ե, ծույլեր ե անվանում և սպառնում ե վռնդել գործարանից և կվռնդի, յեթե մենք չափից շատ չաշխատենք: Կաշխատենք՝ կհիվանդանանք,—ելի կվռնդի: Եվ ի՞նչու համար հարգենք նրան:

Յեկվորը մոռացավ քաղաքի հնությունները: Նա շուռ յեկավ դեպի Մոհարրամը և ուշադիր լսում եր նրա վրդովված ճառը: Այդ ուշադրությունն ավելի ևս մեծացրեց յերիտասարդ մեխանիկի հարգանքը դեպի անծանոթ յեկվորը:

Մոհարրամը և յեկվորը մտան այգու խորքը և նըստեցին խոտի վրա հին խնձորենու տակ:

Այժմ արդեն խոսում եր յեկվորը և Մոհարրամը մոռացած ամեն ինչ՝ ագահաբար կլանում եր նրա խոսքերը և աշխատում եր ամեն ինչ հասկանալ ու միտքը պահել:

Մոհարրամը չխաբվեց իր սպասելիքներում: Յեկվորը շատ բան եր տեսել և շատ բան գիտեր: Նա բաց արեց յերիտասարդ մեխանիկի առաջ մի նոր աշխարհ: Կարծես ցույց տվեց նրան մի այլ կյանք: Մոհարրամը չգիտեր, վոր վաղուց արդեն նա անգիտակցաբար զգում եր, վոր հասարակության մեջ գոյություն ունեն դասակարգային հակասություններ: Նա ատում եր շահագործողներին, բայց չեր կարող բացատրել, թե ինչո՞ւ համար: Նրա գիտակցությունը մթագնած եր մշուշով: Յեվ ահա միայն այժմ գտնվեց մի մարդ, վորը լցրեց Մոհարրամի ուղեղում առաջացած դատարկությունը:

Մոհարրամի սիրտը խփում էր արագորեն, գլուխը պտույտ էր գալիս: Թեքվելով դեպի խոսակիցը, վառվող աչքերը չհեռացնելով նրա դեմքից, Մոհարրամը լսում էր ու լսում, խուսափելով ծպտուն անգամ հանել, վորպեսզի չընդհատի անսովոր զրույցը: Ցեկվորի արտասանած յուրաքանչյուր խոսքը կարծես թե պառկում էր առաջվանից իր համար պատրաստված կաղապարում, պառկում էր ընդմիշտ և դա հանել այնտեղից այլևս անհնարին էր:

Արևը մայր մտավ: Ցերկնքում յերևացին աստղեր: Ցեվ այդ ժամանակ միայն Մոհարրամն ու իր ուղեկիցը թողեցին այգին:

Այն ամենը, ինչ վոր կար յեկվորի փոքրիկ կաշվե պայուսակում, տեղափոխվեց Մոհարրամի թևի տակ: Նա ամուր սեղմում էր կրծքին վողորկ թռուցիկներն ու բարակ գրքույկները, և զգույշ շուրջն էր նայում, վոր դրանք չկորցնի:

Մոհարրամի համար նոր կյանք սկսվեց: Նա չէր բաժանվում թռուցիկներից և գրքույկներից, կարդում ու վերակարդում էր դրանք: Դրանց մեջ Մոհարրամի համար անվիճելի ճշմարտություն կար, քանի վոր այդ ճշմարտությունը նա մշուշոտ կերպով զգում էր առաջ, իսկ այժմ թռուցիկները և գրքույկները միմիայն հաստատեցին այն, ինչ վոր զգում էր նա:

Առաջ Մոհարրամն ապրում էր, բայց հող չէր զգում իր վոտքերի տակ, այլև ուժ, վորը և հնարավորություն էր տալիս նրան պայքարելու իր հայացքների և համոզմունքների համար:

Կարճլիկ ու հաստլիկ Սելիմ-բեկը, փորն առաջ ցցած, շրջում էր գործարանում: Նրա այցելությունները հաճախակի դարձան: Տիրոջ սուր ձայնը խլացնում էր մեքենաների աղմուկը և ահ էր ազդում բանվորներին:

— Պորտաբույծնե՛ր, ծույլե՛ր... Ցես վնաս եմ

կրում, իսկ դուք չեք աշխատում: Դուք ձրի իմ հացն եք ուտում: Ցես ձեզ դո՛ւրս կանեմ:

Մոհարրամն ականջ էր դնում Սելիմ-բեկի ճչացող ձայնին և մտայլում էր: Նա հիշում էր այն գրքույկը, վորի մեջ տերերը նմանեցված էին սարդերի: Նրանք ծծում են բանվորների ուժերը: Ցերբ թուլացած բանվորն այլևս ուժ չունի տիրոջը յեկամուտ տալու—նրան անողոք կերպով դուրս են շպրտում:

Սելիմ-բեկն էլ սարդ է: Նա գոռում ու հայհոյում է բանվորներին, այն ինչ նրանք առաջվանից քիչ չեն աշխատում: Ցեկամուտներն ավելանում են, բայց ագահ Սելիմ-բեկին դա քիչ է: Նա արդեն իջեցրել է աշխատավարձը: Արդյոք նա չի՞ մտածում ավելի ևս իջեցնել այն...

Ցերբ Սելիմ-բեկը մոտեցավ մեքենաների բաժանմունքին և իր մոտ կանչեց մեխանիկին ու վերակացուին, Մոհարրամը շունչը պահեց ու մեքենաների մոտ կծկված՝ սկսեց լսել.

— Հայտնեցե՛ք բանվորներին, վոր յես չեմ կարող նրանց վճարել նախկին գինը: Ցես նրանց կվճարեմ իրենց ստանալիքի միայն կեսը:

Մոհարրամի ձեռի յուղամանը վայր ընկավ և յուղն սկսեց տարածվել կեղտոտ հատակին:

Շշմած Մոհարրամը չբարձրացրեց յուղամանը:

— Տիրոջ արածը թալանից վատ է—մտածում էր Մոհարրամը չարացած.—Սելիմ-բեկը վո՛չ միայն կրկին իջեցնում է աշխատավարձը, այլև չի ուզում վճարել արդեն աշխատածի համար:

Սելիմ-բեկը, մեխանիկի և վերակացուի խոնարհ վողջույնների ուղեկցությամբ, հեռացավ: Ցերբ գործարանատիրոջ հաստլիկ կերպարանքն անհետացավ փողոցում, վերակացուն հայտարարեց բանվորներին աշխատավարձի իջեցման մասին: Անակնկալ լուրը կարծես միանգամից ուժաթափ արավ բանվորներին: Նրանց հուզված դեմքերին յերևաց զարմանքոտ շփոթություն:

— Բայց մենք վո՞նց պետք է ապրենք հիմի...

Վերակացուն արհամարհանքով թոթվեց ուսերը, կարծես ասելով.—դա իմ գործը չէ. ինչպես ուզում եք, այնպես էլ ապրեցեք, սակայն ավելին, քան տիրոջ ասածը, չեք ստանա:

Բանվորների շփոթմունքը փոխվեց գազազմունքի: Նրանք ընդհատեցին աշխատանքը և անհանգիստ ամբոխով հավաքվեցին բակում:

Բանվորների գոռգոռոցն ավելի բարձր էր հնչում: Նրանք խլացնում էին մեքենաների ձայնը:

— Իմ կինը հիվանդ է: Ես նրան պետք է լավացնեմ:

— Իմ ստացածն ընտանիքիս ապրուստն էլ չի հանում:

— Հիմի վո՞նց ապրենք:

Բայց այն, ինչի մասին գոռում էին բանվորները, վոչ-վոք չէր լսում: Վոչ-վոքի չէր կարելի համոզել զայրացած խոսքերով: Մեքենաների բաժանմունքի դռների մոտ կանգնած էին մեխանիկն ու վերակացուն և անտարբեր դիտում էին հուզված ամբոխին: Վեր տնկած բռունցքները նրանց չէին վախեցնում: Սելիմ-բեկը հեռու յեր: Բանվորների բռունցքները նրան չէին հասնի:

Բանվորների ամբոխի մեջ անսպասելի կերպով խըրվեց Մոհարրամը:

Ընկերնե՛ր:

Մոհարրամի ձայնը զնգում էր հուզմունքից, ինչպես պինդ ձգված լարը, Մոհարրամը դեպի ինքը գրավեց բանվորների ուշադրությունը: Նրանք լռեցին և խռնվեցին յերիտասարդ մեխանիկի շուրջը:

Մոհարրամը զսպեց իր հուզմունքը և խոսեց ավելի ցած ձայնով և ավելի հանդարտ:

— Սելիմ-բեկը մեզ թալանում է: Նա թալանչի յէ:

— Ճի՛շտ է, ճի՛շտ է,— հուզվեցին բանվորները և սկսեցին լսել:

— Բայց մեր տերն ավելի վատ է այն բանդիտներից, վորոնք ճանապարհների վրա յեն մարդ թալանում:

Բանդիտները կարող են բռնվել և կորցնել իրենց կյանքն ու ազատությունը: Սելիմ-բեկը վոչինչ չունի կորցնելու: Նրա կողմն են որենքն ու իշխանությունը: Նա կարող է մեզ բոլորիս սովամահ անել և պատասխանատու չլինել դրա համար: Մեզ վո՛չ-վոք չի ոգնի: Մենք պետք է մեր հույսը միայն մեր վրա դնենք: Մենք պետք է պայքարենք ճիշտ այնպես, ինչպես մեր յեղբայրներն են պայքարում Ռուսաստանում, Բաքվում և ամբողջ աշխարհում: Հարկավոր է գործադուլ հայտարարել: Հարկավոր է դադարեցնել աշխատանքը և պահանջել աշխատավարձի հավելում:

Առաջին անգամ լսված խոսքը հասկացվեց անմիջապես և անսխալ կերպով: Այդ խոսքը փոխեց բանվորների տրամադրությունը: Նրանց գազազմունքը հետևանք էր անհուսության, անելանելի դրության: Բայց դուրս յեկավ, վոր դրությունն այնքան էլ անհուսալի չէ: Մոհարրամը յելք ցույց տվեց: Սելիմ-բեկին դեռ վաղ է հաղթանակ տանել: Նրանք կհարկադրեն գործարանատիրոջը հաշվի առնել իրենց կամքը:

— Գործադո՛ւլ:

— Կանգնեցրո՛ւ աշխատանքը:

— Կանգնեցրո՛ւ մեքենաները:

— Թող հաստլիկ Սելիմ-բեկն իր նշանակած աշխատավարձով ինքն աշխատի: Այդ աշխատանքը նրա համար ոգտակար կլինի և կթեթևացնի նրա փորը:

Սովերի միջից դուրս թռչող Սալմանի ճիչը վրդովեց բանվորների ցնծությունը:

— Գնա՛, շա՛ն վորդի, քո տեղը, թե չէ ջարդուփշուր կանեմ դատարկ գլուխդ:

Գազազած մեխանիկի ձեռքին կար մի ծանր մուրճ: Բայց նա չկարողացավ նրա հետ միասին Մոհարրամին հասնել: Բեռնակիր Ղուրբանը բռնեց մեխանիկին, խլեց նրա մուրճը և դեն շպրտեց այն:

— Գո՛ր-ծա՛-դո՛ւլ,—դժվարությամբ արտասանեց նա նոր բառը և բարեսիրտ ժպտաց:

Սալմանը չմիացավ բանվորներին: Նա դուրս պըրծավ Ղուրբանի ձեռքից և փախավ գործարանից:

Մոհարրամը կանգնեցրեց աղմկող մեքենան։ Գործարանը լռեց։ Ավելի բարձր, տիրաբար հնչեցին բանվորների ձայները։ Քննում էին իրենց պահանջները և պատգամավորներ էին ընտրում գործարանատիրոջ հետ բանակցություններ վարելու համար։

2

Բանվորների պատգամավորները, Մոհարրամի գլխավորությամբ, մտան Սելիմ-բեկի բնարանում գտնվող փոքրիկ սենյակը, որ ընդունարանի տեղ էր ծառայում։ Հատակին փռած էր մի հիանալի գորգ։ Այդ գորգը հըշմացրեց բանվորներին։ Գորգը մի ամբողջ կարողություն է։ Ուրեմն որքա՜ն է հարուստ ու հզոր Սելիմ-բեկը, յեթե նա այդպիսի կարողություն փռել է հատակին։ Բանվորները վախեցան գորգի վրա կոխել փոշոտ ու կեղտոտ ոտներով, կանգնեցին նրա առաջ և լուռ նայում էին։ Յուրաքանչյուրի գլխում ծագեց միևնույն միտքը՝ մի տարի էլ որ աշխատես, միևնույն է՝ մի այդպիսի գորգ չես կարող գնել։

Պատգամավորներին կանչեցին առանձնասենյակ։ Այնտեղ նրանք դեմ առան նոր անակնկալի։ Սելիմ-բեկի սեղանի մոտ նստած էր պրիստավը։ Հաստ Սելիմ-բեկը թաղված էր բազկաթոռում։ Նա ժպտում էր։ Կարծես թե գործադուլն ու գործարանի անգործությունը չէին անհանգստացնում նրան։ Գործարանատիրոջ տրամադրությունը բանվորներին հարկադրեց զգուշանալ։

— Գիտեմ, թե ինչու յեք յեկել,—ուրախ բացականչեց Սելիմ-բեկը՝ նայելով բանվորներին խոնավ, պսպղուն աչքերով։—Ձեր բախտից բեկն էլ այստեղ է։

Սելիմ-բեկը հայացքը չուռ տվեց պրիստավի կողմը և նրա դեմքին փայլեց ժպիտը։

— Բեկը մեզ կօգնի համաձայնության գալու։

Սելիմ-բեկը կրկին ժպտաց և սկսեց զիջողաբար, կարծես պատմում էր մանկական չարաճճիության մասին։

—Ցերեակայեցե՛ք թե իմ տղերքն ի՛նչ են սարքել։

Նրանք գործադուլ են հայտարարել և պահանջում են աշխատավարձի հավելում։ Իսկ Մոհարրամը, որին յես խելոք տղա էլի համարում և ապագայում միտք ունեյի նրան մեխանիկ դարձնելու, դարձել է նրանց գլխավորն ու ղեկավարը։

Պրիստավի նիհար ու արևառ դեմքին չինծու մի զարմանք յերևաց, իսկ նրա գորշ, պաղ, անարտահայտիչ աչքերն արհամարհանքով նայեցին պատգամավորներին։ Այդպես չի նայում մարդը։ Այդպես կարող է նայել միմիայն ուժեղ գիշատիչն իր անօգնական զոհին։

Բանվորները պրիստավի հայացքից վարանոտ շարժվեցին, իսկ մի քանիսը թաղ կացան Մոհարրամի յետևը։

— Իսկ մի՞թե նրանք չգիտեն, որ այժմ չի կարելի գործադուլ անել։ Այժմ գործերը չի կարելի հետաձգել․․

Պրիստավի կարճ ճառը նման էր հրամանի։ Լսիր այն ու կատարի՛ր։ Վո՛չ մի զրույց, վո՛չ մի հակաճառություն։

Մոհարրամը ջղաձգորեն ցնցեց ուսը, զգալով, որ արյունն սկսում է յեռալ իր մեջ։ Նա ուզում էր պատասխանել պրիստավին և յեթե նա խոսեր—շատ անհաճո բաներ պիտի ասեր թե՛ գործարանատիրոջը, թե՛ պրիստավին։ Բայց տաքանալ չի կարելի․ նա գտնվում է այնտեղ վո՛չ իր անձնական գործով։

— Ի՞նչ անես սրանց, յերբ սրանք իսկի հաշվի չեն առնում գործարանի շահերը և հոգ չեն տանում այն ձեռնարկության համար, որ կերակրում է իրենց,— իր նախկին զիջող չեշտով արձագանքեց Սելիմ-բեկը։

— Գործադո՞ւլ անել․․․

Պրիստավը վեր կացավ աթոռից և կարծես դարձավ ավելի ևս բարձրահասակ ու ազդեցիկ։

— Ուրեմն դուք գործադո՞ւլ եք անում․․․

Վոստիկանի նիհար, արևառ դեմքը հողի գույն ընդունեց։

—Գործադո՞ւլ եք անում, մի անգամ ևս բացականչեց պրիստավը․—իսկ դուք գիտե՞ք, թե ի՞նչ պատիժ է ձեզ սպասում գործադուլի համար․․․

Պրիստավի վոստիկանական զգեստի թևի միջից յերևաց մազոտ, ջլուտ ձեռքը՝ հսկայական բռունցքով: Բռունցքը մուրճի նման օրորվում եր օդում և փնտրում եր այն գլուխը, վորի վրա պիտի իջներ ու ջարդուփշուր աներ այն: Պրիստավի նեղ, չար աչքերն անթարթ մեխվեցին բանվորների դեմքերին:

Բարկությունից գունատ դեմքով կանգնած եր Մոհարրամը վոստիկանի առջև և նրանից չեր հեռացնում իր հայացքը:

— Նրանք գործադուլավորներ չեն,—նույն շինծու, քաղցրամեղծիկ ձայնով խոսեց Սելիմ-բեկը.—յես ներում եմ նրանց:

— Մեզ կարիք չկա ներելու, մենք վոճրագործներ չենք,—հատու բացականչեց Մոհարրամը:

Շփոթված պրիստավն անակնկալի յեկած, իջեցրեց ձեռքը: Նրա վայրկենական շփոթմունքը փոխվեց կատաղության:

— Սիբի՛ր քշել սրիկաներին... բա՛նտ...

Պրիստավի գոռոցից դողացին պատուհանի ապակիները:

— Սիբիր էլ մեզ քշելու առիթ չկա... Մենք պահանջում ենք այն, ինչ վոր հասնում ե մեզ, և աշխատանքը չենք սկսի, մինչև վոր չստանանք մեր հասանելիքը...

Մոհարրամը չեր բղավում ինչպես պրիստավը: Նա խոսում եր հանգիստ ու հանդարտ, բայց նրա խոսքերը թողնում եյին վոչ պակաս տպավորություն, քան պրիստավի բղավոցը:

Մոհարրամի յետևը կանգնած բանվորները սիրտ առան ու յեկան առաջ: Նրանք էլ ուզում եյին խոսել, բայց հուզմունքը թույլ չեր տալիս նրանց գտնելու անհրաժեշտ խոսքերը: Նրանց անկապ բացականչությունները նման եյին սպառնալիքների:

Վոստիկանի վոսկրոտ մարմինը ջղաձգվեց: Դուրս ցցված գորշ աչքերում վառվեցին չարության կրակներ:

— Դուք բո՞ւնտ եք անում... Յես ձեզ ցո՛ւյց կտամ բունտ անել...

— Մենք յեկել ենք վոչ թե բունտ անելու, այլ բանակցելու աշխատավարձի մասին:

—Կձերբակալեմ...

Պրիստավի աջ վոտը շարժվեց առաջ, մարմինը կորացավ, իսկ հսկայական բռունցքը, վոր պատրաստված եր գետնահարող հարվածի համար, հսկա մուրճի նման շարժվեց յետ:

Մոհարրամը մի քայլ արավ առաջ, կարծես ձգտելով ընդունել պրիստավի հարվածը և ազատել բանվորներին նրա դատաստանից:

Բայց պրիստավը չհամարձակվեց խփել: Նրան կանգնեցրեց յերիտասարդ բանվորի անթարթ, ատելությամբ լեցուն հայացքը: Վոստիկանին թվաց, թե բռունցքի հարվածին Մոհարրամը կպատասխանի դանակի հարվածով:

— Դո՛ւրս այստեղից—գոռաց պրիստավն իր ամբողջ ձայնով:

Կրկին դողացին պատուհանների ապակիները, բայց բանվորների առջև կանգնած Մոհարրամը չշարժվեց իր տեղից: Նա շուռ յեկավ և չնայելով պրիստավին ու Սելիմ-բեկին, արհամարհանքով արտասանեց.

— Յեթե դուք չեք ուզում մեզ հետ բանակցություններ վարել, մենք կգնանք, բայց գործարանը կանգնած կմնա այնքան ժամանակ, մինչև վոր դուք չեք կատարի բանվորների պահանջները:

— Դո՛ւրս:

Անզոր զազրմունքից պրիստավը դոփում եր վոտքերը:

Մոհարրամն առաջ թողեց իր ընկերներին և դուրս յեկավ վերջինը:

Բանվորների դուրս գալուց հետո Սելիմ-բեկի առանձնասենյակում լռություն տիրեց: Պրիստավն անկյունից անկյուն եր ընկնում, տրորում եր խոտի մի փոքրիկ խուրձի նմանող իր մորուքը և հայհոյում: Սելիմ-բեկի դեմքը մթնեց բարկությունից: Նա կանչեց պրիստավին, վորպեսզի վախեցնի բանվորներին: Սե-

լիմ-բեկը յենթադրում եր, վոր պրիստավից վախեցած բանվորներն իսկույն գործի կանգնեն։ Կրկին կշարժվի գործարանը և տիրոջ գրպանը կհոսեն վոսկե դրամներ։ Բայց ամբողջը թարս դուրս յեկավ։ Բանվորները չվախեցան։ Գործարանը կանգնած է։ Հիվանդոտ ջղաձգությամբ Սելիմ-բեկը ձեռքը գրպանը տարավ և շոշափեց փողամանը։ Նրան թվաց, թե փողամանը թեթևացել է։

— Յեվ ամեն բանի համար մեղավոր է Մոհարրամը։ Առանց նրան տգետ բանվորները գլխի չեյին ընկնի գործադուլ անելու։

Սելիմ-բեկը խնդրեց պրիստավին նստել։

— Հարկավոր է մեջտեղից վերացնել Մոհարրամին։ Նա յե առաջնորդն ու ղեկավարը։ Այդ նա յե, վոր դրդել է բանվորներին գործադուլ անել։

Սելիմ-բեկը ծանր շնչում եր, կնճռոտվում, և դժվարությամբ հանում եր իր ճարպակալած մատի վրայից վոսկե մատանին, վորի վրա շողշողում եր խոշոր ադամանդը։

— Կվերացնեմ,—պատրաստակամությամբ արձագանգեց պրիստավը, վոր ուշադրությամբ հետևում եր Սելիմ-բեկի աշխատանքին։

— Հարկավոր է նրան այնպես վերացնել, վոր նա այլևս չերևա այստեղ։

— Այնպիսի տեղ կքշեմ, վոր յետ գալու ճանապարհնել կորցնի։

Պրիստավը շտապ վերցրեց իրեն պարգևած մատանին, ուզեց հագցնել մատին, բայց տեսնելով, վոր մեծ է, գրպանը դրեց։

Սելիմ-բեկը մոտեցավ դռանը և հրամայեց խոհանոցից կանչել մեխանիկ Սալմանին։

3

Գործարանը կանգնած եր։ Լռեց մեքենաների դղրդոցը, շոգու աղմուկը։ Անվրդով լռությունը, վորի մեջ ընկղմվեց քաղաքը, անհանգստացրեց բնակիչներին։ Ամբողջ քաղաքում խոսում եյին Սելիմ-բեկի գործարա-

նում տիրող գործադուլի մասին։ Այդ բառը բնակիչները արտասանում եյին հարգանքով։ Թվում եր, թե այդ բառի մեջ թաքնված կան զարմանալի հնարավորություններ։ Նա գործարանում կանգնեցրեց մեքենաները, մարեց կրակները։ Գործադուլը փոխեց բանվորներին։ Նրանք շրջում են քաղաքում աշխույժ ու ինքնավստահ, իսկ գործարանատերը մռայլ նստած է տանը և չի յերևում։ Յեվ քաղաքի բնակիչները համոզված եյին, վոր այս ամենը կատարվում է այն պատճառով, վոր կյանք մտավ «գործադուլ» բառը։

Փոքրիկ քաղաքի բնակիչները վոչինչ չգիտեյին դասակարգային պայքարի մասին և չեյին յենթադրում, վոր վո՛չ թե բառը վախեցրեց Սելիմ-բեկին, այլ բանվորների միությունը՝ իրենց շահերի համար մղվող պայքարում։

Գործարանը դատարկվել եր, սակայն Մոհարրամի փոքրիկ սենյակում չեյին դադարում աշխույժ հավաքույթները։ Թե՛ առավոտը, թե՛ ցերեկը, թե՛ գիշերը խռնվում եյին այստեղ բանվորները և ուշադիր լսում այն ամենը, վոր ասում եր նրանց Մոհարրամը, յերկար մտածում եյին նրա ասածների մասին և գտնում եյին, վոր նա իրավացի յե։

Մոհարրամը յերբեք չեր յեղել վո՛չ առաջնորդ, լոչ կազմակերպիչ։ Բայց յեկավ սուր վայրկյանը, նա դարձավ թե՛ մեկը, թե՛ մյուսը։ Անընդհատ խորհրդակցությունների մեջ անցնում եր որը և միայն գիշերը նա հնարավորություն ուներ մտածելու կատարվող դեպքերի մասին։ Յեվ այդ վայրկյաններին նա կարիք եր զգում մի մարդու, վորի հետ կարելի լիներ խորհրդակցել և քննել առաջացած հարցերը։ Նա հիշեց այն յեկվոր ընկերոջը, վոր հարստացրեց իրեն գիտելիքներով։ Վորքա՜ն հարկավոր եր այդ մարդը հիմա։ Մոհարրամը վորոշեց գրել նրան և հայտնել իրենց գործադուլի մասին։ Նա

3188 10

չտապ թուղթ հանեց, նստեց սեղանի մոտ, տարտամ վառվող ճրագի առջև, և սկսեց գրել: Մի թերթը չհերիքեց: Նա հանեց յերկրորդ թերթը և շարունակեց գրել:

Ուշ գիշեր եր, յերբ նամակը վերջացրեց, ծրարեց և պատրաստեց ուղարկելու:

Քաղաքում տիրում եր անվրդով լռություն: Մոհարրամը հաճույքով ականջ եր դնում մեռյալ լռությանը: Զե՞ վոր այդ լռությունը վկայում եր բանվորների հզոր ուժի մասին: Դադարեցրին նրանք աշխատանքը և քաղաքը լռեց, կյանքը հքացավ:

Պատուհանի մոտ լսվող շրշյունը Մոհարրամին հարկադրեց զգուշանալ: Փակված փեղկերից այն կողմը մեկը կամացուկ շարժվում եր, աշխատելով աղմուկ չհանել: Մոհարրամն անձայն բարձրացավ և մոտեցավ դռանը: Զե՞ վոր այդ լռությունը վկայում եր բանվորների Պատուհանի մոտից վախեցած յետ ցատկեց մի մարդկային կերպարանք: Նա ծանոթ թվաց Մոհարրամին:

— Սալմա՛ն, դո՞ւ յես,—զարմացած բացականչեց Մոհարրամը:

Բայց փախչողը ձայն չտվեց: Նա ցատկեց ցանկապատի վրայով և կորավ մթության մեջ:

— Նրան ի՞նչ է եստեղ հարկավոր, զարմացած մտածում եր Մոհարրամը.—գուցե նա ուզում է միանալ մեզ, բայց վախենում է գալ ցերեկով: Բայց այդ դեպքում նա ինչո՞ւ փախավ:

Հոգնածությունը հարկադրեց նրան սենյակ վերադառնալ: Նա փակեց դուռը, մարեց ճրագը և հենց վոր ընկավ չոր թախտի վրա՝ իսկույն քնեց:

———

Առավոտվա գորշ մշուշում վոստիկանությունը շրջապատեց Մոհարրամի տունը: Յերբ վոստիկանների մեջ յերևաց պրիստավը, դուռը պոկեցին և սենյակ լցվեցին զինված վոստիկանները:

Մոհարրամն արթնացավ կոպիտ հրոցից, ուզեց վեր

կենալ, բայց չկարողացավ: Նրա ձեռները շատ ամուր կապված եյին պարաններով: Սենյակում վառեցին ճրագը և Մոհարրամը զարմանքով դիտեց հավաքված մարդկանց: Այստեղ եր քաղաքի ամբողջ վոստիկանությունը և նրանց մեջ եր Սալմանը:

Պրիստավն արհամարհանքով գլխով նշան արավ Մոհարրամի կողմը: Մի աժդահա և կոպիտ վոստիկան յուռ բռնեց Մոհարրամին և սկսեց խուզարկել:

— Ցույց տո՛ւր, թե նա վորտեղ ի՞նչ է թաքցրել,—հրամայեց պրիստավը Սալմանին:

Սալմանը վրա ընկավ և վորսկան շան նման սկսեց քրքրել Մոհարրամի իրերը: Նա շուռ տվեց անկողինը և հանեց նրա տակից պատրաստի նամակը: Անկողնի մոտից Սալմանը ցատկեց դեպի մութ անկյունը և սկսեց փորել կոխոտած հողը:

Մոհարրամը կրճտեց ատամները և ուզեց ձգվել դեպի անկյունը, բայց վոստիկանի ուժեղ ձեռքը պահեց նրան տեղում: Սալմանը բարձրացրեց մի քանի աղյուսներ և նրանց տակից հանեց նվիրական թռուցիկները և գրքույկները: Դրանք հանձնվեցին պրիստավին:

Ապա կապոտած Մոհարրամին, վոստիկաններով շրջապատված, տարան քաղաքի ամայի փողոցներով:

Վոստիկանների թողած սենյակը թողնում եր մռայլ տպավորություն: Կարծես այստեղ տեղի յեր ունեցել մի դաժան ճակատամարտ: Հատակին, կահ-կարասիների կտորտանքների մեջ ընկած եյին Մոհարրամի պատառոտված ու կոխոտված զգեստները: Այդ ավերումը կատարված եր այն նպատակով, վորպեսզի նախազգուշացնեն նրանց, ովքեր կմտածեն գնալ Մոհարրամի ճանապարհով:

Քննությունը կատարում եր պրիստավը: Յերկու զինված վոստիկաններ նրա մոտ բերին Մոհարրամին:

— Ո՞վ է տվել քեզ այս գրքերը,—հարց տվեց պրիստավը:

Մոհարրամը կարոտով նայեց ճզմված թռուցիկներին և գրքույկներին ու անտարբեր պատասխանեց.

— Ինձ վոչ-վոք չի տվել:
— Բա դու վորտեղի՞ց ես վերցել:
— Փողոցում եմ գտել:
— Այդպե՛ս...

Պրիստավը քերեց խոզանականման մորուքը և սպառնալից նայեց կալանավորին:

— Իսկ այս նամա՞կն ով է գրել:

— Չգիտեմ,—նույն անտարբերությամբ պատասխանեց Մոհարրամը:

— Ծրարի վրա հասցե չկա գրված: Ո՞ւմ ես գրել:

— Չգիտեմ, յես չեմ գրել:

— Լավ նայի՛ր:

Պրիստավի ձայնը դարձավ չարագուշակ, խռպոտ: Նա վեր կացավ ու նամակը ձեռին մոտեցավ Մոհարրամին:

— Չգիտե՞ս,—նույն խռպոտ ձայնով հարցրեց պրիստավը:

— Չգիտեմ, հաստատուն ձայնով պատասխանեց Մոհարրամը:

Պրիստավի ձեռքը ճմլեց նամակը և հսկայական բռունցքը կայծակի արագությամբ խփեց կալանավորի դեմքին: Ցնցված Մոհարրամն ընկավ: Նրա բերանը լցվեց թանձր, կպչող հեղուկով: Նա դժվարությամբ թքեց: Հատակին, արյան լճակի մեջ սպիտակին տվեց դուրս թռած ատամը: Մոհարրամը վերցրեց այն և դժվարությամբ վոտքի կանգնեց:

Ջարդված քթից ու բերանից արյուն եր հոսում: Պրիստավը զզվանքով սրբեց արնոտած բռունցքը և ընդհատեց քննությունը:

Մոհարրամը տագնապով դես ու դեն եր ընկնում կամերում: Ամուր, յերկաթացանց պատուհանից նա նետվում եր, ընկնում եր դեպի դուռը, նայում եր արանքներից, վորոնց մեջ չեր կարելի ձեռք կոխել, շոշափում եր, զննում:

— Հարկավոր է փախչել... Փախչել, ինչ ել վոր լինի,—կամացուկ շշնջում եր Մոհարրամը:

— Հարկավոր է նախազգուշացնել բանվորներին, վոր Սալմանը դավաճան է: Թող նրանք զգուշանան նրանից և շարունակեն գործադուլը մինչև այն ժամանակ, քանի դեռ իրենց պահանջները չեն բավարարվել:

Փոքրիկ պատուհանից յերևում եյին աստղերը: Նրանք հեռու տխուր թարթում եյին: Մոհարրամի և աստղերի միջև ցցված է յերկաթե ամուր վանդակը: Այդ վանդակին դժվար է հասնել, բայց միևնույն ե՝ հասնես ել—դժվար է այն կոտրել: Յեվ Մոհարրամը նորից վազում եր դեպի դուռը, հրում եր այն ու լսում: Դուռը հաստ է, ամուր: Վոչ, դժվար է պոկել այն իր տեղից: Դռան յետևից լսվում է շրշյուն ու խռպոց: Դա պահակն է, քնած է: Նա համոզված է, վոր կալանավորը չի փախչի:

Մոհարրամը մոտենում է պատերին և անհամբեր շոշափում է քարերը: Յեթե դանակ ունենար, Մոհարրամը կքերեր քարերի արանքի կիրը, կքանդեր պատը և թեկուզ մի ժամով կփախչեր բանտից: Բայց դանակ չկա և նույնիսկ յերկաթի կտոր, կամ մի մեխ: Գրպանում միմիայն իր ատամն է, վոր դուրս թռցրեց պրիստավը: Մոհարրամը քերում է նրանով քարերը, քերում է, ու գիտե, վոր ատամը չի օգնի նրան:

Դանդաղ սահում է ժամանակը: Գունատվում է գիշերը, շուտով առավոտ կլինի: Յեթե նա կարողանար տեսնել բանվորներից մեկն ու մեկին և նախազգուշացներ նրանց Սալմանի դավաճանության մասին, այն ժամանակ նա այլևս չեր մտածի փախուստի մասին: Նա համոզված կլիներ, վոր բանվորները կշարունակեն պայքարը մինչև վերջ և կհաղթանակեն: Իսկ այժմ...Ինչո՞վ կվերջանա գործադուլը...

Հեռավոր, անորոշ մի ձայն գրավեց Մոհարրամի ուշադրությունը: Նա բարձրացավ սեղանի վրա, վեր թռավ և բռունցքով ջարդեց պատուհանի ապակին: Փշրանքները զնգոցով ընկան հատակին:

Մոհարրամը հենվեց պատին և տագնապալից սրտով սկսեց լսել: Ձայնը կրկնվեց և ավելացրեց Մոհարրամի սարսափը: Ձայնը գալիս էր գործարանի մեքենաներից: Մեքենան գործի էին դնում: Բայց Մոհարրամը չհավատաց իր լսողությանը: Նա բարձրացավ ոտների մատների վրա, շնչառությունը պահեց և սկսեց ականջ դնել:

Գործարանային շչակի ձայնը, արթնացած գազանի ոռնոցի նման, վրդովեց լուսադեմի լռությունը:

Մոհարրամը դողաց անզոր բարկությունից և զազրանքից: Ամեն ինչ կորավ: Գործադուլը վիժած է: Բանվորները պարտված են: Սելիմ-բեկն ու պրիստավը ցնծում են:

Ո, յեթե այդ շչակը լիներ այստեղ, իր կողքին: Այդ ժամանակ Մոհարրամը կհարձակվեր նրա վրա և իր ձեռքերով կսեղմեր նրա կոկորդը:

Շչակը չէր լռում: Նա ոռնում էր ու ոռնում, կարծես ուրախանալով և հաղթանակ տանելով:

Մոհարրամին թվաց, թե հողը դողաց իր ոտքերի տակ: Որորվեցին բանտի պատերը, աչքերի առաջից մի կողմ լողաց պատուհանի գունատ բացվածքը: Մոհարրամը գիտակցությունը կորցրեց և ընկավ հատակին:

Գործարանից վռնդված Ղուրբանն աշխատում էր այգիներում: Նա տնկում էր պտղատու ծառեր և ջրում էր հողը: Յերբ թախիծը ճմլում էր նրա սիրտը, Ղուրբանը յերգեր էր հորինում և կամացուկ յերգում.

«Շա՜տ վատ մարդիկ կան աշխարհում, շա՜տ,
իսկ Սալմանը բոլորից էլ վատն է:
Նա Սելիմ-բեկի հավատարիմ շունն է,
նա խաբեց բանվորներին:
Նա մեզ ասաց,—Սկսեք աշխատանքը
և Մոհարրամը կվերադառնա գործարան:
Մենք սկսեցինք աշխատանքը... Յեվ ի՞նչ.—
Մոհարրամին քշեցին հեռո՜ւ, Սիբի՛ր...»:

Այսպես էր յերգում Ղուրբանը, ջրելով պտղատու ծառերը: Կամացուկ յերգում էր Ղուրբանը, այնքան կամացուկ, վոր նրա յերգը, մանկական լացի նմանող յերգը միայն ծառերն էին լսում...

ԿԱՐԱԹԵԼ

Սեղանի շուրջը նստած էին յերկու հոգի: Սրանցից-հիսուն տարեկանի մոտ, ալեխառն, գնդաձև մորուքավոր Նադիրը թանձր շրթունքների մեջ տեղավորած ծխախոտի յերկար ծխամորճը ծծելով-ծծելով՝ ասում էր.

— Յերևում է, Ասլանի գրույցը յերկար է տևելու: Մութը կոխեց, իսկ նա դեռ չկա:

Նադիրի դեմ ու դեմը նստած էր Զինմադը և գուլպա յեր հյուսում: Աչքերի վրա թափված ալեխառն ծամերն ականջի յետևը ձգելով՝ նա հարցրեց.

— Ելի . ի՞նչ գրույց է, տեսնես:

— Տոնի պատրաստություններ են տեսնում,—պատասխանեց Նադիրը ու ծխախոտի թանձր ու դառը ծուխը ոդի մեջ փչելով, շարունակեց.

— Մոտ որերս մեծ տոն է լինելու: Կարմիր զինվորների տոնը: Յերեկ խոսում էին ակումբում:

— Կարմիր զինվորների տո՞ն:

— Այո՛, Կարմիր բանակի...

***

Դուռը բացվեց ու ձեռքին պայուսակ բռնած, կարճ, սևագույն վերարկու հագած, գլխին կարմիր թաշկինակ կապած՝ 14—15 տարեկան մի աղջիկ ներս մտավ:

— Սաստիկ ցուրտ է, ձեռքերս սառեցին,—ասաց նա:

Զինմազը աչքերը ձեռքի գուլպաների վրայից չհեռացնելով, ասաց.

— Քեզ չասացի՞, որ ձեռնոցներդ վերցրու... Դեռ վերարկուդ էլ չէիր ուզում հագնել:

Աղջիկն առանց պատասխանելու պայուսակ կախեց պատից և կծկվեց անկյունում գազով վառվող վառարանի մոտ:

— Յեղբորդ չտեսա՞ր: Չգիտե՞ս նա որտեղ մնաց,—հարցրեց Նադիրը:

Դպրոցից դուրս գալու ժամանակ նրանք դեռ ժողովում էյին: Հիմա կվերջացնեն:

— Որ այդպես է, սամովարը տաքացրու, աղջի՛կըս: Յես էլ մի բոպե կոոպերատիվից ծխախոտ առնեմ ու վերադառնամ,—ասաց Նադիրն ու վերարկուն հագնելով դուրս գնաց:

Աղջիկը մտավ խոհանոցն ու սկսեց սամովարը տաքացնել:

Զինմազն արդեն ձեռքի գուլպան վերջացրել էր: Յեվ յերբ ձեռքի բողչան կապելով էր զբաղվում, հանկարծ այնտեղից հանեց մի քանի հնացած, դեղնած թղթի կտորներ և սկսեց իրար տալ:

Այս թղթերը տեսնելիս, Զինմազը, կարծես, վերհիշեց անցյալի հին հիշողությունները: Ուշադրությամբ նայելով թղթերին՝ պոռաց.

— Կարաթե՛լ:

— Ինձ կանչեցի՞ր, մայրիկ,—ձայն տվեց յերիտասարդ աղջիկը խոհանոցից:

Մայրը ձեռքին բռնած թղթերը փռեց աղջկա առջեն ու ասաց.

— Իսկի չգիտեմ, թե այս թղթերը որ որվանից են մնացել: Կարծես, Ասլանի զինվոր գնալու ժամանակ գրած նամակները լինեն: Ա՛ռ, տեսնեմ կարո՞ղ ես կարդալ:

Կարաթելը վերցրեց թղթերից մեկը, ուշադրությամբ այս ու այն կողմը շուռ տվեց և մորը վերադարձնելով՝ ասաց.

— Ե՛հ, հին, արաբերեն տառերով է գրված, չեմ կարող կարդալ:

Զինմազը, նամակները ծրծրելիս՝ հառաչելով ասաց.

— Այս թղթերը հիշեցնում են ինձ անցյալի սև որերը: Ասլանս կռվում յեղած ժամանակն է գրել: Չեկավ, որ նրան կարդալ տայի այս թղթերը: Այս կարճ նամակը, այնպես գիտեմ, որ վիրավորված ժամանակն է գրել: Տեսնում ե՞ս, գրել է, բայց չի վերջացրել:

Կարաթելն առավ նամակը, նայեց, բայց ոչինչ չհասկանալով՝ վերադարձրեց մորը: Ապա՛ վազեց խոհանոցն ու սամովարը բերելով՝ սեղանը պատրաստեց:

Տան մեջ տիրեց մի թեթև լռություն: Սամովարն սկսեց իրեն հատուկ «մուզիկան»:

***

Հայր ու տղա միասին մտան տուն: Ասլանը վերարկուն հանելուց հետո ասաց.

— Տոնի որը պիտի գնամ զորանոցները:

— Ինչո՞ւ,—հարցրեց հայրը:

— Կարմիր բանակայինների տոնը շնորհավորելու, գյուղից ներկայացուցիչ եմ ընտրվել: Դեռ մի շարք նվերներ պիտի տանեմ նրանց:

— Տոնը յե՞րբ է:

— Յերեք որից հետո, փետրվարի 23-ին, Կարմիր բանակի տարեդարձին:

Ասլանը հանվեց ու մոտեցավ սեղանին: Մայրը նորից ծրծրեց նամակները և հետո կապոցը դնելով Ասլանի առաջ՝ ասաց.

— Այ Ասլան, սրանք, կարծեմ, քո գրած նամակներն են, վաղուց է, ինչ պահում եմ: Կարդա տեսնեմ, ի՞նչ ես գրել:

Ասլանը մեկ առ մեկ բաց անելով թղթերը, նայեց և անցած որերն հիշելով, ուրախությամբ լցվեցին նրա աչքերը:

— Սրանք հետաքրքրական թղթեր են,—ասաց Նակովի դաշտից եմ գրել...ի՞նչ լավ ես պահել: Բոլորն էլ այստեղ են: Տե՛ս, վիրավոր յեղած ժամանակ գրած նամակն էլ այստեղ է:

Ծերունի Նադիրն էլ խառնվեց դրանց խոսակցությանը:

— Կարդա՛ տեսնենք, ի՞նչ ես գրել,—հարցրեց հայրը: Վաղուցվա բան է, մոռացել եմ:

— Սպասեցեք, ուրեմն, հերթով կարդամ,—ասաց Ասլանն ու թղթերից մեկը վերցնելով՝ սկսեց բացատրել.

— Ռազմական ճակատ հասնելու օրն եմ գրել սա,—10 հուլիսի, 1921 թվին:

Կարաթելը կատվի ձագի նման կծկվել էր մոր կողքին ու մտիկ էր անում: Նադիրը պապիրոսի վերջին ծուխն օդի մեջ փչելով՝ լուրջ կերպարանք ստացավ: Իսկ Զինմադը ձեռքի կապոցը մի կողմ դնելով՝ ապշահար նայում էր տղայի յերեսին:

— Մտիկ արե՛ք,—ասաց Ասլանն ու սկսեց կարդալ առաջին նամակը:

— «Սիրելի՛ հայրիկ, վաղոնում և այնտեղից էլ՝ հիսուն վերստ դեպի ճակատը գնալու ժամանակ տեսածներիս ու անցկացրածներիս մասին չպիտի գրեմ: Այսօր, առաջին անգամ, քնում եմ դիրքերում: Խաղաղ գիշեր է: Արևը ծագելու հետ թշնամու թնդանոթներն սկսեցին: Նամակս գրում եմ այն վայրից, վորտեղ մի ժամ առաջ սփռվում եյին թնդանոթների գնդակները, դժոխքի նման բոցեր և կայծակներ»:

Զինմադը հառաչեց: Կարաթելը սմքած կծկվեց ու ավելի կից մոտեցավ մորը: Նադիրն անհամբերությամբ՝

— Շարունակությունը կարդա՛,—ասաց:

... «Մեր դիրքերը շղթայի նման շարված են լեռան գագաթին: Չգիտեմ մերոնք ինչո՞ւ չեն շարժվում: Մեր թնդանոթները ծանր-ծանր են պատասխանում: Թշնամու բանակը դաշտերում փռված՝ առաջանում է թռչունների յերամի նման: Գլխիս վերև հրացանի գնդակներ են սուլում և անցնում...Թշնամին միայն 500 քայլ հեռավորության վրա յե գտնվում: Նորից առաջանում է: Ոհ, չգիտեմ, մեր վաշտի հրամանատարը պողպատի՞ց է ստեղծված: Նա այնքան սառնասիրտ է, վոր չի թողնում շատ գնդակ փչացնենք...

«Ինձանից 10 քայլ հեռու, աջ կողմում, սոսկալի մի ճիչ լսվեց: Գորշ մի ստվեր, հողի վրայից բարձրանալով՝ նորից գետնին փռվեց: Ընկերոջս խփել եյին: Յերկու սանիտար նրան տանում եյին և նա ծա՛նր-ծա՛նր տնքում եր...

«Մեր և թշնամու միջև յերեք հարյուր քայլ հեռավորություն է մնացել: Նրանք լեռան ստորոտումն են: Ուզում են դեպի վեր մագլցել: Պառկում են, կանգնում, առաջանում: Սակայն մեր կարմիր գնդակներից զոհ գնացողներն էլ քիչ չեն:

«Արևը հետզհետե բարձրանում է: Մի կողմից՝ ձեռքիս տաքացած հրացանը, մյուս կողմից էլ՝ բոցավառվող արևի սաստիկ ջերմությունը այրում են ինձ, ուղեղս կարծես յեփ է գալիս:

«Շարքերը խտացրած թշնամին «ուռռա՛» կանչելով՝ առաջանում է, հորձանք է տալիս ծովի ալիքների նման...Աշխարհանցում է...Չորս կողմից լսվում են աղմուկ, աղաղակ և ընկնողների, սպանվողների սուր ու որհասական տնքոցները: Չորս կողմը պատել է թանձր ծուխ: Մեր ռմբաձիգները գործի յեն անցել: Ամեն կողմից լսվում են արագիլների նման կափկափող գնդացիրների ձայները: Թշնամին կորել է ծխի և փոշու մեջ: Յերբեմն յերևում են մեկ յերկուսը նրանցից և անհետանում պայթող ռումբերի ծխի հեղեղների մեջ...

«Հրացանս տաքացել է, է՛լ բլթակը չի աշխատում: Վերցնում եմ վիրավոր ընկած ընկերոջս հրացանը: Կրակում եմ... Մի քանի րոպեյից հետո, մեր գլխի վրայից սուրացող գնդակների ծուխը նոսրացել եր արդեն... Թշնամին, վիրավորներին ու մեռածներին թողնելով՝ անհետացել եր...

... «Լուրերի համաձայն, վաղը մերոնք հարձակում

պիտի սկսեն։ Վողջ մնամ՝ նորից կգրեմ։ Բարևնե՛ր մորս։ Իմ փոխարեն Կարաթելի աչքերը հազար անգամ համբուրիր...»։

Կարաթելի աչքերը թրջվել եյին։ Այդ արցունքների մեջ կար և՛ վիշտ, և՛ ուրախություն։

— Այս նամակը վերջացավ,—ասաց Ասլանը։ Հիմա կարդում եմ յերկրորդ նամակը։ Սա ել նույն ամսի 14-ին ե գրված։

— «Սիրելի հայրիկ, անշուշտ, վիրավորվելուս մասին մորս և Կարաթելին չես հայտնում։ Յերրորդ որն ե, ինչ պառկած եմ մի գյուղում պատրաստված շրջիկ հիվանդանոցում։ Սրանից յերեք որ առաջ գրել եյի, վոր հարձակման պիտի անցնենք։ Հարձակումն սկսվեց և վերջացավ մեծ հաջողությամբ...»։

Յերեք ունկնդիրները հանկարծ շարժվեցին և, կարդացածները լավ հասկանալու համար, գլուխները յերկարացրին։

...«Այդ գիշերը հոգնածությունից այնքան խորն եյի քնել, վոր առավոտյան մեր կողմից արձակվող թընդանոթների գոռգոռոցից հազիվ կարողացա աչքերս բաց անել... Մեր բանակում չտեսնված, չլսված շարժում կար։ Վաշտերը, ողակները աջ ու ձախ ուղարկվեցին ճակատի բոլոր ուղղությամբ։ Թշնամու կողմից ել մի առանձին շարժում ու աշխուժություն եր նկատվում։ Նա ել մեր դիրքերը վողողում եր թնդանոթների գնդակների տարափով։

«Այսոր հարձակվելու, արյան ծովերի մեջ լողալու, յերակներումս յեռացող արյունը թափելով ջղերս սաստիկ բարկությունից հանգստացնելու խիստ կարիք եյի զգում։ Վորովհետև յերեկվա տեսածներս յերբեք չեմ կարող մոռանալ։ Այժմ սրտումս դեպի սպիտակ թշնամին ունեցած ատելությունը պատժի բոցերի յեր փոխվել։ Յերեկվա հարձակումից հետո ականատես յեղա թշնամու կողմից կատարված մի գազանության։—Սրանից 10 որ առաջ գերի վերցրած մեր յերեք ընկերներին յերեկ վերադարձրին։ Յես չկարողացա նրանց տեսնել։ Զգիտեմ վոնց գրեմ։ Թշնամին այդ ընկերների վոտքերը

պայտել եր ձիու նման, գլուխները մեխել, իսկ ճակատների վրա շիկացած յերկաթով դրոշմել եր «Բոլշևիկ» բառը»։

Զիմնազն ու Կարաթելը վերջին խոսքերից սարսափահար յեղած՝ խոր հառաչեցին, իսկ Նադիրը սաստիկ զայրույթից կրճտացրեց ատամները։

Ասլանը շարունակեց·

...«Այս բոլորը տեսնելուց հետո ուզում եյի առանց հրամանատարի հրամանին սպասելու վեր կենալ, հարձակվել և մինչև մեռնելը կռվել, վրեժ լուծել...

«Շատ չսպասեցի։ Հանկարծ լսվեց հրամանատարի «վոտքի՛ յելեք...» ձայնը։ Բոլորս մի մարդու նման վոտքի յելանք։ Կրակի ու գնդակների տարափի տակ առաջանում եյինք... Մի քանի ընկերներս ընկան մնացին։ Նրանք սպանված եյին»։

Փոքրիկ սենյակում տիրել եր խոր լռություն։ Ասլանը անցած որերի արյունոտ հիշողությունների այս պատմական քաջագործությունները կարդում եր առանձին վոգևորությամբ, իսկ սամովարը ներդաշնակ ձայնով յեռում, քլթքլթում եր։

...«Այստեղ միշտ մեզ հետ ե լինում շիկահեր, կապուտաչյա, կարմրադեմ և արևի տաքությունից սևացած մի ռուս կին։ Գթության քույր ե։ Յերբեք չեմ տեսել, վոր նա մեզանից յետ մնա։ Շարունակ դեղերով, վիրակապերով լեցուն մի մեծ ու սև պայուսակ վզից քաշ արած՝ հետևում ե մեզ։ 4—5 վիրավորների վերքերը կապելուց հետո, կրկին վազում ե մեր հետևից։ Տղամարդուց ավելի կորիճ ե։ Կհավատա՞ք, վոր յես նրան տեսել եմ ծանր վիրավորվածին շալակած փախչելիս։ Ամեն անգամ, յերբ նա հետևում ե ինձ, հավատում եմ, վոր չպիտի մեռնեմ... Վորքան կորիճ ու բարեսիրտ կին ե նա»։

Այդ միջոցին, Նադիրի շրթունքներից, ակամայից դուրս թռավ «Ա՛յ, ղոչաղ կնիկ» խոսքը, վոր ծիծաղացրեց բոլորին։ Ունկնդիրները լուրջ կերպարանք ստացան։ Ասլանը շարունակեց·

... «Թռչում էի թռչունի նման: Վոտքերիս տակ ընկած վիրավորներին ու մեռածներին կոխկրտում, վայր ընկնում և նորից կանգնում էի: Թշնամին մեխի նման ցցվել մնացել էր: Մեր և թշնամու միջև 200 քայլ էր մնացել: Չորս կողմը ծուխն ու փոշին կանգնած էին պատի նման: Հրամանատարը ձի նստած մոտեցավ ինձ: Ձեռքին սուր՝ նա թռչում էր բազեյի նման: Ծխի միջից նկատեցի ուսադիրներով մի սպայի, վոր մի փոքրիկ բլրակի յետևը թագնված՝ ուզում էր նշան բռնել մեր հրամանատարին: Գնդակը բացվեց ու հրամանատարը, այդ սիրելի ընկերը, բազեյի նման թափահարելով իր թևերը՝ ձիուց ցած գլորվեց...

«Գժվածի պես էի: Չգիտեյի թե ինչ անեմ:—Վերադառնամ ընկած հրամանատարին վերցնե՞մ, թե՞ առաջ վազեմ ու նրան սպանողից վրեժ լուծեմ: Հանկարծ այդ գթության քրոջը տեսա հրամանատարի գլխի վերևը կանգնած:—Հրամանատարս էլ չի մեռնի,—ասացի: Հիմա փնտռում եմ այդ ուսադիրներով սպային: Նրան գտա բլրակից հինգ քայլ հեռավորության վրա, սուրը քաշած՝ ուզում էր ընկերոջը սպանել: Առանց սպասելու չոքեցի և մի գնդակ արձակեցի: Սպան ձեռքը կրծքին դնելով՝ մի րոպե օրորվեց ու վայր ընկավ:

«Վրեժս առել էի: Ուզում էի առաջանալ, դեռ վոտքի չկանգնած՝ հանկարծ ուսիս վրա զգացի մի ծանր հարված և ուշաթափ դրության մեջ ընկա թթենու ծառի տակ»:

Լսողներից մեկը «ոֆ» արեց: Զավակի ցավից մորմոքող Չինմազի հառաչանքն էր:

...«Աչքերս բաց արի ու ինձ տեսա այս շրջիկ հիվանդանոցում: Առաջին անգամ աչքիս դիպան ակնոցավոր, ալիտակ գլխով ու նիհարադեմ բժիշկն ու փրոնտում աշխատող գթության քույրը: Սատիկ արյունհոսությունից ուշաթափված էի: Նրանք սպասում էին իմ սթափվելուն:

— «Էլ մի վախենա, չե՛ս մեռնի,—ասաց այդ զո-

հող գթության քույրը, իմ սթափվելուց ուրախացած՝ ժպտում էին նրա աչքերը:

— Չե՛մ վախենում,—ասացի յես,—յեթե վերքս մահացու էլ լինի, քո ձեռքերում կլավանա...»: Յերկուսս էլ ծիծաղեցինք: Ծիծաղում էր և բժիշկը...Բայց նա ինչո՞ւ յեր ծիծաղում, չէ՞ վոր նա իմ լեզուն չէր հասկանում:

...«Նամակս գրում եմ գթության քրոջ թույլտվությամբ: Բարևի՛ր մորս: Վիրավորվելուս մասին նրան վոչինչ չասես:

«Շատ եմ ցանկանում տեսնել Կարաթելին: Յեթե նա այստեղ լիներ, գթության քույրն այնքան նեղություն չպիտի քաշեր:

Քո՝ ԱՍԼԱՆ

Կարաթելի աչքերից արցունքի յերկու կաթիլներ գլորվեցին, մեկն իր մեջ պարունակում էր քրոջ՝ դեպի վիրավոր յեղբայրը տածած անհուն վիշտն ու ցավակցությունը, իսկ մյուսը յեղբոր կողմից իրեն տեսնելու ցանկությունից առաջացած սրտի թեթևությունը:

— Յես այս նամակը չպիտի կարդայի, վորովհետև, ինչպես տեսնում եմ, բավական լացացրեց ձեզ: Հիմա լսեցեք, կարդում եմ մի ուրիշը: Գրել եմ հուլիսի 27-ին, հիվանդանոցում յեղած ժամանակ, նշանակում է՝ դեռ չեմ մեռել,—ասաց Ասլանը ծիծաղելով և շարունակեց.

— «Սիրելի՛ հայրիկ, այսօր ինձ ավելի լավ եմ զգում: Առավոտյան շատ կանուխ բժիշկն ու գթության քույրը ներս մտան և հիվանդներին նայելուց հետո մոտեցան ինձ, վերքս բաց արին: Բացի յեղունգի չափ մի սև բծից, վոչինչ չէր մնացել:

— Լավ նշան է,—ասաց գթության քույրը սովորական ժպիտով.—քաղաքացիական կռիվներից հիշատակ թող մնա քեզ:

«Բժշկից հարցրի թե, յե՞րբ պետք է դուրս գամ հիվանդանոցից: Նա խոստացավ ինձ յերկու օրից հետո ազատել:

«Քույրն» էլ տեսնելով վոր նեղվում եմ, խոստացավ

ինձ այսոր տանել հիվանդանոցից հեռու, այգիների մեջ տեղավորել: Ո՛հ, որքա՜ն բարի ու սրտցավ է նա: Հենց այսոր իմացա, որ նրա անունն Աննա Իվանովնա յե:

«Քույր Աննան այսոր խոսեց իմ մասին: Մեր վերջին հարձակումից հետո, թշնամու ջարդված ու պարտված բանակը նահանջել էր դեպի քաղաքը, որը գրավելու համար, մերոնք այսոր վերջնական հարձակման են անցել: Հեռվից լսում եմ թնդանոթների ձայները: Զայրացած նայում եմ կապված ձեռքիս: Ինչո՞ւ հիմա յես էլ չպիտի մասնակցեյի այդ վերջին կռիվներին: Քույր Աննան նկատելով իմ ջղայնացած դրությունը՝ քաջալերում էր ինձ, ասելով. «լավանալուց հետո էլի կգնաս Ֆրոնտ: Հեղափոխությունն իր անելիքները չի վերջացրել. դեռ մեր առաջ շատ հաղթություններ ու հաջողություններ կան»: Նա ինձ հետ խոսում էր հեղափոխությունից և կարմիր գվարդիականների կատարած քաջագործություններից:

Մասնակցել էր նա մի շարք կռիվների:

— Քույր ունե՞ս,—հարցրեց նա.

— Այո՛, ունեմ... խոսք եմ տալիս նրան գթության քույր դրել տալ,—ասացի:

— хорошо ,—ասաց Աննա Իվանովնան ծիծաղելով»:

Ասլանը վերջացնելով նամակի ընթերցումը՝ կանգ առավ ու խոր հառաչելով նայեց նամակին և ապա Կարաթելին:

— Հիմի, քույրս, իմացա՞ր քո պարտականությունը:

Կարաթելը ծիծաղեց: Իրեն տրված հարցը նա այնքան էլ լավ չհասկացավ:

— Հասկացա՞ր,—ասաց Ասլանը,—ուզո՞ւմ ես գթության քույր դառնալ:

— Չե՞ որ հիմա պատերազմ չկա,—ասաց Կարաթելը ծիծաղելով:

— Հիմա չկա, բայց պետք է պատրաստվես գալիք պատերազմի համար:

Զինմագը, մի նոր լուր իմանալու պես, ասաց կընճռոտած դեմքով.

— Ելի՛ պատերազմ կա՞:

— Մի վախենա, դեռ չկա, բայց ո՞վ գիտե, մեր թշնամիները շատ հանգիստ պիտի թողնե՞ն մեզ:

— Յես գնում եմ,—ասաց Կարաթելը,—գթության քույր լինելուց չեմ խուսափում:

Նադիրը պապիրոսը քաշելով, ուրախ-ուրախ լսում էր յերկուսի խոսակցությունը: Իսկ Ասլանը, տեղից վեր կենալով հարցրեց քրոջը.

— Վաղը կգա՞ս ինձ հետ «Կարմիր Մահիկ»-ի խմբակում գրվելու:

— Կգամ, կգամ,—պատասխանեց Կարաթելը:

Քույր ու յեղբայր նայեցին իրենց ծնողներին:

Ծերունիներն առանձին հիացմունքով իրենց զավակներին յերկա՛ր-յերկա՛ր դիտելուց հետո՝ նայեցին իրար:

Տան մեջ տիրեց կարճ լռություն: Այդ լռությունը խանգարեց Նադիրի ավելի ազդեցիկ ու կտրուկ ձայնը:

Նա ասում էր՝

— Թո՛ղ Կարաթելը գնա... Կարմիր բանակի տոնին, որպես նվեր, յես էլ մի գթության քույր եմ ուղարկում:

ՍԱՐԻԱՅԻ ՄԱՀԸ

1

Մի ուշ գիշեր էր, յես չեմ տեսել—ասում են,
Քեզ չխնայող անողոք ձեռքը կատաղեց.
Ափերից դուրս յեկավ անողոք ցասումը
Ցեվ աչքերին քո շուտ յեկավ առավոտը:

Այս լուրից ալեկոծվեցին սրտիս ափերը,
Հեռո՛ւ, հեռու անցյալները վերհիշեցի նորից.
Ցես իմ յերգի չրթունքներով աննահանջ, աներեր
Համբուրեցի քո վերքը, վորպես կարմիր մորի

Ցես չեմ տեսել, ասում են, վոր դեռատի կյանքում
Բաժանեցին մորդ գրկից, վոսկով՝ քեզ ծախեցին.
Ցեվ իրար հաջորդող գիշերները անքուն
Չսիրած ամուսնուդ գիրկը նետեցին:

Այն որից, յերբ կարմիր արևի ալիքը
Ամպերի միջից լուսե իր դեմքը ցույց տվեց,
Այն որից, յերբ յերկիրը խնդությունով լիքը
Ուրիշ մի նայվածքով գյուղին, քաղաքին բարևեց,

Քեզ ներշնչեց կյանքը իր նոր գիրկը բացած,
Դու ժպտացիր կյանքին արևի պես պայծառ.

Մզկիթները վերամբարձ, Մուհամմեդի բույնը
Կոխկրտեցիր Արևելքը—հատուկ ցնորքների.
Դեն նետեցիր սրտիդ կրոնական թույնը
Ցեվ որեր թաղեցիր արնոտ, դաժան ու սև:

Դու հատեցիր մազերդ մի որ—սև ու յերկար
Փակված քո շուրթերից գվարթ յերգեր լսվեց,
Զտրվեցիր նրանց, վորպես միս, առարկա
Ցեվ որեր թաղեցիր արնոտ, դաժան ու սև:

Դու յելար ամեն տեղ, ուժերդ տվեցիր,
Ստրկական քնից բացիր բազուկներդ...
Մի որ, սակայն, մի որ բացվող լուսաբացին
Մի զառամյալ, չար ձեռք քեզ չներեց:

2

Ինձ հետ կռվի յելած քո լավ ընկերները
Կրոնի, ադաթի ու հին կենցաղի դեմ,
Ցերդում տվին այստեղ թշնամուն չներել,
Վերջին կռվի յելնել, յելնել կուռ, յերկաթե:

Մենք դեպի գերեզման քեզ ճանապարհ դրինք
Ցեվ ամպերը կուտակվեցին, և անձրևը մաղեց...
Ցեվ քո վերքի համար յես շատ յերգեր գրի,
Քո վրեժի համար յեղա չար ու ահեղ...

Ցեվ ալեկոծվեցին իմ սրտի ափերը
Հեռու, արնոտ անցյալները վերհիշեցի նորից...
Ցես իմ յերգի շուրթերով—աննահանջ, աներեր
Համբուրեցի քո վերքը,—վորպես կարմիր մորի...:

ԱՐԵՎԵԼՔԻ ԴՈՒՌԸ

Մութն իջավ ծունկի արևի դեմ,
ու փայլփլաց արևը կամարում,
պոետի սիրտը տրոփաց թեթև
ու սուզվեց նա մտքի խորքերում:

Ծովափում անաղմուկ մակույկներն են.
վոր նման են հոգնաբեկ մարդկանց,
իսկ ծովը հանդարտ, սուսիկ քնել է—
վորպես խորախորհուրդ մի հարց:

Հորիզոնից փախող գույնը վառ արևի,
հիասքանչ տեսարան էր գծագրել—
իսկ հեռվից խեղդուկ ձայն մինարեթի.—
կամենում էր հնով վարձատրել...

Արևը յերբ խնդությամբ վողջունեց այգաբացը,
մարեցին կամարում աստղերն ու լուսինը,
արթնեց քաղաքը, ելեկտրոքարշը սրընթաց
անցավ վոր փողոցները հուզի...

Գիշերն էլ չկար...
Նրա մահվան հետ աղմուկը լցրեց՝
գործարանները, յելավ քաղաք դեպի,
այն առավոտն էր խնդությամբ բացվեց՝
և գիշե՛րն էր այն· զարնվեց գետին:

Ծխացին հսկա ամպերի նման
ու տարածվեցին քաղաքովը մեկ,
դեպի թաղերը վողջ բանվորական
սուլեցին շչակները պայծառ կյանքի յերգ.

ՊԱՏՐԱՍՏ ԿԱՑԵՔ

Գալիք վտանգի դեմ մնացեք միշտ արթո՛ւն,
մեր նժույգնե՛ր առույգ, մեր կովկասյան ձիեր,
ձեր վոտքե՛րը, գիտեմ՝ պողպատից ե՛լ ամուր,
մեջքով պիտի տանեք գնդացիրները մեր:

***

Մեր սահմանն է իջել Յեվրոպայի վրա,
վոր պիտ պատճառ դառնա ահեղ պատերազմի,
և մեր վերջին զարկին ո՛, նա չի՛ դիմանա,—
Նրա գոռ թևերը կպոկվեն արմատից:

Մեր ամրակուռ բազկի անհաղթ ուժի դիմաց
քո հպարտ գլուխը պիտի լուռ խոնարհվի,
վորպես բռնակալը մահվան դատապարտված,
թեև տեխնիկայի ամուր ամրոց ունիս...

Տեխնիկայի ամրոց, իսկ մե՛զ մոտ առողջ մի՛տք,
և պայքարի համար հիասքանչ վոգի,
վոր ջրի պես պարզ է և սառույցի պես պիրկ,
և վերջին գրոհում պիտի հաղթանակի:

ՇԻՐԻՆ ԴԻԼԼԻ

«ՏՂԱՄԱՐԴ ԹՅՈՒՔԵԶԲԱՆԸ»

Եթե գյուտարարներից մեկն ու մեկը չնորհք բերեր մի փոքրիկ ակնարկ գցելու Թուրք կանանց վրա և, ուսումնասիրության ընթացքում, յուրաքանչյուրի հետ կամենար առանձնապես ծանոթանալ, այն ժամանակ՝ այս անհայտ աշխարհի մութ անկյուններից մեկում՝ անպայման կհանդիպեր «Տղամարդ Թյուքեզբան» անունով մի կնոջ:

Այս կինն ամբողջ Թաղամասում իր առանձին տեղն ու հարգանքն ուներ, անունն ամեն տեղ հիշվում էր: Եվ, իրոք, վորպես տղամարդ, Թյուքեզբանը գավառային գործադիր կոմիտեյից ստացած կարմիր փաստաթուղթը շարունակ պահում էր գրպանում և հարկ յեղած դեպքում՝ հանում, ցույց էր տալիս:

Թյուքեզբանի «տղամարդ» կոչվելու հանգամանքը և գրպանում միշտ այդ կարմիր փաստաթուղթը պահելը պատահականություն չէր: Դա հետևանք էր նրա անձնական կյանքի և շրջապատի այն հասարակական կենցաղին, վորոնց միացումից, միմյանց հետ խառնվելուց ստացվել էր բնական մի յերևույթ, տրամաբանորեն հաստատված մի իրողություն:

Տղամարդ Թյուքեզբանը, իրականության մեջ, տղամարդ չէր և՝ բեխ ու մորուս չունենալուց բացի՝ զուրկ էր տղամարդուն հատուկ արական բոլոր նշաններից: Լինելով անգրագետ՝ լրագիր, ժուռնալ չէր կարդում, անտեղյակ էր գիտության և տեխնիկայի բնագավառում հայտաբերված նորություններին: Չգիտեր նաև, թե ի՞նչպես վիրաբույժները տղամարդուն կին և կինարմատին տղամարդ են դարձնում:

Թյուքեզբանը արտաքուստ 35 տարեկան, միջահասակ, Թխադեմ, վո՛չ նիհար և վո՛չ էլ գեր, ընդհանուր առմամբ՝ հասարակ գյուղացի մի կին լինելով, ներքուստ

ա՛յնքան խելոք ու կատարյալ էր, վորի նման Ադրբեջանի գյուղերում հարյուրներով, հազարներով կարելի յե գտնել: Նիստ ու կացը՝ կոպիտ է, խոսակցությունը՝ բարձրր, գլխի մազերը՝ սև, ատամները՝ աքցանի նման, ձեռքերին ու յերեսին մոտիկ անողն անպայման կեզրակացնի, վոր խարիֆը *բաղնիքի և օճառի հետ խռով է: Իսկ յեթե դեմքին մի քիչ մոտիկից նայենք, նիստ ու կացըն ուշադրությամբ դիտենք, մի կերպ կարելի յե դուրեկան համարել: Արևից սևացած այտի վրա, աջ աչքի ներքևը հանգիստ կերպով տեղավորված փոքրիկ սև խալը Թյուքեզբանի դեմքին առանձին մի գույն է տվել: Սև այտին,* քիշմիշի *նման կպած սև խալը տեսնելիս՝ չգիտես ի՞նչ անուն տաս նրան: Գեղեցի՞կ է,—գեղեցիկ չէ: Ջահե՞լ է,—ջահել չէ: քաղցրարյո՞ւն է— քաղցրարյուն չէ: Բայց ինչ էլ վոր լինի, նրանում մի բան կա ուշագրավ: Մեզնում այդպիսիներին «աղած կին» են ասում:*

Բայց՝ ինչո՞ւ նրան «տղամարդ» անունն են տվել: Եթե քաղաքացի կին լիներ, վոչինչ չէյի ասում և ընթերցողներին էլ գլխացավանք չէյի պատճառի: Վորովհետև մեր քաղաքներում մարդկանց ձեռք առնել ու նրանց ավելորդ անուններով կանչելը սովորություն է. օրինակ՝ Թոփի գցող *Խանբաջի,* Մաթուշկա *Սաքինե,* Փայտեվոտ *Ֆաթմա,* ծամոն *Խեյրանսա, և այլն...: Բայց, վորովհետև այս դեպքը պատահել է գյուղում, դրա համար էլ գրավեց իմ ուշադրությունս և ուզեցա դրա պատճառն իմանալ:*

Թե ինչո՛ւ համար այդ խեղճ Թյուքեզբանին «տղամարդ» են ասում, այդ մենք հետո կիմանանք: Եվ քանի դեռ պատճառը չենք իմացել, ուստի առայժմ՝ մեր «անծանոթ ցեղին» պատկանող հերոսի պատիվը պահելու համար՝ նրան կտանք «Թյուքեզբան խալա» անունը: Ի՞նչ կարիք կա հիմիկվանից կանանց տղամարդ և տղամարդկանց էլ կինարմատ դարձնել և ուրիշներին էլ մեզանից նեղացնել:

Այո՛, Թյուքեզբան խալան միջահասակ, միջին տարիք ունեցող, Թուխ, վո՛չ նիհար, վոչ էլ չաղ մի գեղջ-

կուհի չեր: Թյուքեզբան խալան իր աղջիկ ժամանակից մի ցավ ուներ, որ մինչև այժմ ել նրանից չեր հեռացել: Նրա այդ ցավը փոխանակ դեղերով բուժելու՝ «յեղալի ծեծով» եյին դարմանում: Քանի նա աչքը բացել եր՝ հորից ու յեղբայրներից ե՛լ ծեծ չեր մնացել, որ չուտեր: Բայց ծեծն ել օգուտ չեր անում. հենց որ մի տեղ մարդկանց հավաքույթ տեսներ՝ Թյուքեզբանն անպայման պիտի ներկա լիներ. որտեղ որ մի ձայն լսեր Թյուքեզբանը՝ իր չարսավի ծայրերը մեջքին պնդացնելով, գնալու յեր: Տղամարդ թե կին Թյուքեզբանի համար տարբերություն չուներ, ամաչել չեր իմանում, կարմրել չգիտեր: Սգի ժամանակ, հարսանիքի ժամանակ, բաղնիսում, մեջլիսում, վերջապես ամեն տեղ ել խերն ու շառն առանց Թյուքեզբանի չեր լինի. բարեկամ-ազգական իսկապես բեզարուռ եյին յեղել նրա յերեսից: Վերջապես նրա հայրը այս անամոթին սանձահարեց: Գյուղում Արգալ Ասադ անունով մի բանվոր կար. նրա հետ մի փոքր տեսակցություն ունենալուց հետո, հայրը Թյուքեզբանին նրան տվեց և գլխից հեռացրեց:

Շատ մարդիկ կարծում եյին, թե այժմ դուցե Թյուքեզբանը մի փոքր հանդարտի, բայց մարդու գնալուց հետո նրա ձեռը-ոտը ե՛լ ավելի բացվեց: Նա՝ ե՛լ ավելի յեր ման գալիս, որովհետև Արգալ Ասադը չքավոր մարդ լինելով՝ Թյուքեզբանի հախից չեր կարողանում գալ, և յեթե շատ խոսելու լիներ, Թյուքեզբանը նրան մի քանի բռունցք ել կհասցներ:

Թյուքեզբանի այսպիսի վերաբերմունքի համար գյուղի ծերունիները նրա ամուսնուն և հորը շատ եյին անիծում և ծեր կանայքն ել իրենց շրջանի մեջ չեյին ընդունում նրան: Գյուղում կանանցից ոմանք նրան սիրում եյին և ոմանք ել հարգում, ոմանք ել նրանից վախենալով՝ «անամոթ ե, բեզարուռ ե» ասելով զզվում եյին:

Թյուքեզբանը սրանց կարևորություն չտալով՝ իր յետևից ասված խոսակցություններին ականջ չեր դնում:

Մի օր Թյուքեզբան խալայի համար (դժբախտաբար՝ թե բարեբախտաբար) մի մեծ դեպք պատահեց: Իր ամուսին Ասադը հիվանդացավ, մեռավ, տնտեսության ամբողջ գործը Թյուքեզբանի ձեռքն անցավ: Յերբ գործը բազարն եր ընկնում, կամ նրան պաշտոնատուն եյին կանչում, Թյուքեզբան խալան անմիջապես ձին հեծնում, գնում եր: Գութանով հերկել, սերմ անել, հնձել,—Թյուքեզբան խալայի հին փեշակն եր. քյասիբությունը նրա համար դժվար գործ չեր, այնպես որ նրա ամուսնու մահը նրան մեծ վնաս չտվեց: Նրա այսպես ապրելը և ինքն իրան կառավարելը զարմացնում եր ամբողջ գյուղին, բայց դրա հետ միասին նրա յետևից անվայել խոսքեր եյին ասում:

Յերկրում Խորհրդային իշխանությունը հաստատվեց:

Թյուքեզբան խալան քաղաքականությունից չեր հասկանում, չեր իմանում, թե ինչո՞ւ փշրեցին մուսավաթական կառավարությունը և նրա տեղը հաստատեցին բանվորա-գյուղացիական պետություն: Միայն գյուղ յեկող-գնացող մեծ մանդատ ունեցողներից լսում եր, թե սրանից հետո իր ջիլավն (սանձը) իր ձեռքումն ե, թե սրանից հետո Թյուքեզբան խալան տղամարդկանց նման ազատ մի մարդ ե:

Մի անգամ Թյուքեզբան խալան գիշերը բոստանից վերադառնալիս՝ հրացանով մի գազան սպանեց: Այս դեպքը մի փոքր ավելացրեց դեպի Թյուքեզբանը յեղած հարգանքը: Բոլոր տներում խոսում եյին Թյուքեզբանի ղոչաղության, իգիթության, գործը գլուխ բերելու և այլ լավ ու վատ կողմերի մասին, և նրան անամոթության և աննամուսության մեջ մեղադրողների թիվը կամաց-կամաց նվազում եր:

Մի օր գյուղը լուր յեկավ, թե Բաքու գնալու համար մի կին են պահանջում. թե ո՞ւմ համար են ուզում, ինչի՞ համար են ուզում, այս մասին զանազան կարծիքներ կային, ամեն մեկը մի բան եր ասում:

— Ե՛ս եր մնացել՝ ե՛ս ել տեսանք. վերջապես մեր

կանանցն էլ մեր ձեռքից պիտի խլեն,—ասում էր գյուղի ուսուցիչ մոլլա Ռեջեբը:

Բայց գավառի կենտրոնից յեկած մի ներկայացուցչի խոսքից այնպես հասկացվեց, թե Բագվում կանանց համագումար է լինելու, և այս համագումարի համար գյուղից մի կին է ուղարկվելու:

Ղալմաղալն սկսվեց: Շատ խոսվեց—վոչ մի մարդ չճարվեց:

Ո՞վ իր մորից-քրոջից ձեռք է քաշում.—վոչ վոք...

Կամաց-կամաց այս խնդրի առթիվ ծածուկ և բաց խոսակցություններից հետո, վողջ գյուղը վորոշեց, վոր պեսղի այս համագումարին Թյուքեզբան խալային ուղարկեն:

Այս թեկնածությանը տղամարդիկ էլ, կանայք էլ համաձայնեցին:

Տղամարդիկ ասում էին, թե՝ ո՞վ է իմանում, Բագվում այս կնոջ գլխին ինչ են բերելու. յեթե վորևե բան պատահի՝ վոչի՛նչ, անտեր կին է, առանց նրան էլ յոլա կգնանք... Տղամարդկանց այսպիսի կարծիքից հետո կանայք էլ կարո՞ղ էին այլ թեկնածու առաջարկել:

Պաշտոնական մի հավաքույթում Թյուքեզբան խալայի բախտը բանեց և նա միաձայն ընտրվեց կանանց առաջին համագումարի պատգամավոր: Թյուքեզբան խալան իր վոտը դրեց սանդուխքի առաջին աստիճանին:

Ո՞վ էր իմանում, վոր նրա վոտը առաջին աստիճանի վրա չմնալով՝ դեպի վեր էր բարձրանալու: Ո՞վ էր իմանում, թե Թյուքեզբանը դրանով չբավականանալով՝ պիտի հանդգներ մագլցելու սանդուխքի մյուս աստիճաններին: Ո՞վ էր իմանում, թե հետագայում Թյուքեզբան խալան այս գյուղի գլխին մի «փորձանք» էր լինելու: Ո՞վ էր իմանում, թե Թյուքեզբան խալան հարստահարողներին հարստահարող և հարստահարվածներին պաշտպան էր դառնալու:

Ո՞վ էր իմանում, թե Թյուքեզբան խալան «տղամարդ» էր լինելու...

Յեթե Մուհամմեդ մարգարեյի բարեպաշտ վորդիներից մեկն ընտրության ժամանակ այս գյուղում լիներ և Թյուքեզբան խալայի գալուստն իր յերազում տեսնելով՝ հասարակությանն ավետեր,— անշուշտ այդ «գլուխը կորցրածի» անունը վոչ վոք չէր տա:

Բայց այժմ բանը բանից անց էր կացել և Թյուքեզբան խալան թե՛ գավառի կենտրոնում և թե՛ Բագվում կինբաժնում ճանաչված լինելով՝ հրավիրվում էր հասարակական աշխատանքների: Այս պատճառով, յերկու տարի անց, գյուղխորհրդի ընտրություններն սկսելիս, խորհրդի նախագահի համար առաջադրված թեկնածուների ցանկում դրված էր նաև Թյուքեզբան խալայի անունը:

Ընտրության որը հասարակությունը հավաքվեց: Կենտրոնից յեկած հրահանգիչը ճառ ասաց և իր ճառում գյուղի բոլոր կանանց ակտիվ մասնակցությունը պահանջեց:

— Ի՞նչպես եք ուզում. կանանց առանձին ժողով գումարե՞լ, թե՞ տղամարդկանց հետ միասին,—հարցրեց հրահանգիչը հասարակությունից:

Մեր գյուղերի հասարակական դրությունն իմացող և «խալա»-յի հիվանդության տեղյակ յեղողները գիտեն, վոր այս ժողովին մասնակցողները բոլորն էլ տղամարդիկ էին և մեկ էլ մեր Թյուքեզբան խալան էր:

Լսելով հրահանգչի հարցը, Թյուքեզբանը տեղից վեր ցատկեց և բացականչեց.

— Ընկե՛ր, տղամարդկանց հետ միասի՛ն, միասին...

Բայց դեռ Թյուքեզբան խալաների այս առաջարկն ընդունելու ժամանակը չէր յեկել, և ժողովը, բոլորի լուրջ ցանկության համաձայն, առանձին կայացավ:

Ընտրությունների վերջում պարզվեց, վոր Թյուքեզբան խալան գյուղխորհրդի նախագահ է ընտրվել:

Գյուղում մեծ ղալմաղալ ընկավ, ժողովուրդն իրար անցավ:

— Մեր գլխին փափախ չկա՞, մենք տղամարդ

չե՞նք, վոր անամոթի մեկին մեր գլխին մեծ նշանակեցին...

— Դեռ շա՛տ զարմանալի բաներ պիտի տեսնենք... կի՞նն ել կառավարության գլուխն անցնի...

— Ա՛յ մարդիկ, ես Թյուքեզբանը կնիկ չե՛, տղամարդ ե, ինքն ել քյոսա յե (անմազ, քարճ). քանի տարի ամուսին ուներ, յերեխա չունեցավ... Արդալ Ասադը միշտ ասում եր, թե նա իմ կինը չե, իմ մարդն ե:

«Ղայրաթն ու նամուսը ձեռքից գնացած» գյուղացիներն այսպես խոսելով՝ ընտրության տեղից ցրվեցին, գնացին իրենց տները:

— Թյուքեզբանը կնիկ չե, տղամարդ ե...

Կարծես այս խոսքերը բոլորին դուր յեկան, բոլորը յեռանդի յեկան, յերեկոյան բոլորն ել այս խոսքերն եյին ծամծմում: Այս լուրը տարածվեց և ամբողջ գյուղում:

— Ո՞վ ընտրվեց նախագահ:

— Տղամարդ Թյուքեզբանը:

Այս ձևով մեր պատմվածքի հերոսը—«միջահասակ, միջին տարիք ունեցող և թխադեմ» խալան մի որում դարձավ «տղամարդ»:

Թյուքեզբան խալան խորհրդի նախագահ ընտրվելը մի հասարակ բան հաշվելով՝ գնաց ստանձնեց գործերը և հրահանգչից ստացած կարմիր թղթի վրա գրված վկայականն ել, շատ զգուշությամբ ծալելով, գրպանը դրեց:

Իրիկնապահին գյուղացիք, իրենց գործերը վերջացրած, կանայք ու տղամարդիկ առանձին-առանձին, փողոցներում, մզկիթի տակին ծալապատիկ նստած, խոսում ու բամբասում եյին: Հանկարծ մի յերեխա պոռաց, թե՝

— Տղամարդ Թյուքեզբանը գալիս ե...

Այդ միջոցին Թյուքեզբան խալան պորտֆելը թևի տակ դրած, ձեռին մտրակ՝ անցավ գյուղացիների առջևից:

—Մի դրա զոռոզությա՛նը մտիկ...կարծես դրա պապն ել, հայրն ել կառավարություն են յեղել միշտ,

—ասաց տղամարդկանցից մեկը և զայրացած նայեց Խալայի յետևից:

Կանայք ել նրան տեսնելիս հանգիստ չեյին նստում, ամեն մեկը մի բան եր ասում, լավ թե վատ: Նրանց մեջ մի քաղաքացի տիկին ել կար, վոր բայլշևիկներից փախած՝ ապրում եր գյուղում:

— Գլխովդ պտույտ գամ. լսել եյի, բայց չեյի տեսել, սա լափ տղամարդ ե յեղել,—ասաց գեղջկուհիներից մեկը քաղաքացի տիկնոջը և ցույց տվեց Թյուքեզբանի մտրակն ու պորտֆելը: Քաղաքացի տիկինն այս տեսնելով, զարմանքով մի ա՜խ քաշեց և ասաց.

— Ել ի՞նչ ասենք, ի՞նչ խոսենք, աշխարհը փոխվել ե, ժամանակը փոխվել ե. կինը մարդ ե դառել, տղամարդն ել՝ կին...

***

Գիշեր յեղավ, բոլորը քնեցին: Գյուղում ըստ սովորականի լռություն տիրեց: Միայն յերբեմն գյուղի ծայրից լսվում եր շների հաչոցը: Թյուքեզբանի «դահ բարձրանալը» գյուղի սովորական գիշերների մեջ վոչ մի փոփոխություն չմտցրեց և բոլորն ել, անուշ քուն մտած, չեյին իմանում, թե առավոտը գյուղում ի՞նչ ե կատարվելու...

Առավոտյան, նորից ըստ սովորության, ամեն մեկն իր գործին գնաց: Գյուղխորհրդի քարտուղար Մեհեմմեդ Ալին ել հանգիստ, անխռով դիվանատուն գալով՝ սենյակի ձախ անկյունում իր տեղը գրավեց: Դեռ չեր հանգստացել, յերբ Թյուքեզբանը բարկացած ներս մտավ: Հենց վոր նստեց՝ մեծ ուշադրությամբ սկսեց նայել պատի թղթերին. կարծես նստած տեղում ուզում եր կուլ տալ թղթի տառերը:

Յերկար նայելուց հետո՝ քաղցրությամբ հարցրեց քարտուղարին:

— Քանի՞ որ կալանքի տակ պահելու իրավունք ունեմ:

— Հինգ որ.—պատասխանեց քարտուղարը:

— Հի՞նգ որ։

— Այո՛, հինգ որ։

— Ափսո՜ս... շա՜տ ափսոս... վո՞րտեղ է գրված, ցույց տուր տեսնեմ։

Քարտուղարը տեղից վեր կենալով, պատին փակցված թղթի վրա ցույց տվեց Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի վորոշման համապատասխան հոդվածը։ Թուքեզբանն էլ վեր կացավ տեղից.

— Ափսո՜ս, ափսո՜ս, պետք է ավելի լիներ,—ասաց նա և մոտենալով թղթին՝ ցուցամատը քարտուղարի մատի մոտ դրեց և ապա բթամատի յեղունգով այդ հոդվածի ներքևը մի գիծ քաշելով՝ նշան արեց։

— Եվ ի՞նչ պատիժներ տալու իրավունք ունեմ։

— Տասնհինգ ռուբլի տուգանք և հինգ որ պարտադիր աշխատանք։

— Ե՛ս էլ քիչ է։

Այս ասելով, Թյուքեզբանը բոլորովին սրտնեղեց և մի փոքր քրտնեց։

— Այս որենքը վո՞րտեղ է գրված։

— Ա՛յստեղ։

Կրկին քարտուղարը ցուցամատով ցույց տվեց պատշաճ հոդվածը և Թյուքեզբանն էլ բթամատի յեղունգով ընդգծեց այդ տեղը։

Թյուքեզբանն առաջվա պես հոնքերը կիտած՝ նստեց իր տեղը և մի փոքր մտածելուց հետո ասաց քարտուղարին.

— Հրամայում եմ մոլլա Ռեջեբին, վորդուն՝ մոլլա Ջաֆարին, յեղբորը՝ Սեֆերին և փեսային՝ Սեյիդ Հյուսեյնին հինգ որով բանտարկել։ Գրի՛ր։

— Աչքի՛ս վրա։

— Լրացուցիչ հրամայում եմ հինգ որով բանտարկել Ղուլամ-Հյուսեյին բեյին, Հյուսեյին Կուլի բեյին, Սեֆեր Աղա բեյին, Ջաֆար Աղա բեյին, Ցուղրաշի Խալիլին, Ուրյադնիկ Ահմեդին և Ղաչաղ Սուլեյմանին։ Գրի՛ր։

— Աչքիս վրա՝։

— Եվի՛։ Հրամայում եմ, վոր Քերբելայ Մյուսեյիբը, Մեշեդի Սեմիդը, Հաջի Մեհթին և Միր Սուլեյմանը—ամեն մեկը տասնհինգ ռուբլի տուգանք վճարեն և հինգ որ աշխատեն հասարակական առվի վրա։ Գրի՛ր։

— Աչքի՛ս վրա։

Թյուքեզբանի բարկությունը մի փոքր իջավ և սրտնեղությունն անցավ։Պորտֆելը բացեց, հրահանգչից ստացած կարմիր վկայականը հանելով՝ ուշադրությամբ նայեց, ժպտաց, կրկին կուշտ նայեց և ապա զգուշությամբ ծալելով՝ տեղը դրեց և նստեց։

— Գրեցի՞ր։

— Գրեցի։

— Ես սահաթին իմ հրամանը պետք է կատարվի. յես դրանց որը պետք է սև դարձնեմ։

— Աչքի՛ս վրա։

— Թյուրքեզբանը վեր կացավ, գնաց։

Մի ժամ չքաշեց՝ ախոռը բանտի վերածած փոքր շենքը լցվեց բանտարկյալներով։ Նստելու իսկ տեղ չկար։

Ձերբակալվածների յերեխաները, կանայք և բարեկամները—ազգականները, գյուղխորհրդի շենքի դռանը հավաքած՝ Թյուքեզբանին եյին սպասում։

Ցերեկ հանդիստ քնացող, այսոր հանդիստ զարթնող գյուղացիներն իրենց տեսածին չեյին հավատում։ Մոլլա Ռեջեբի՞ն էլ կարելի յե բանտարկել. կարելի՞ յե ձեռք տալ Ղուլամ Հյուսեյին բեյին...Հյուսեյին Կուլի բեյի՞ն էլ կարելի յե բանտարկել... բոլորը զարմանում եյին։

Թյուքեզբանը, ձիու վրա նստած, ձեռքին մտրակ, յերևաց խորհրդի առաջ։ Նրան տեսնելով՝ հավաքվածները վախեցան, ամենքին էլ պատեց ահը, խոսել ցանկացողների խոսքը չորացավ կոկորդներում։

Մարդիկ ճանապարհ տվին Թյուքեզբանին, վորը ձիուց իջնելով՝ մտավ խորհուրդը։ Նրա յետևից ներս մտան խնդրատուները։

— Ցա՛վդ տանենք, գլխո՛վդ պտույտ գանք, մեզ վերադարձրու մեր յերեխաների գլխին»,—աղաղակում եյին նրանք, բայց Թյուքեզրանը կտրուկ պատասխանում եր.

— Չի՛ կարելի:

— Անօգուտ ե:

— Թույլ չե՛մ տալիս:

Թյուքեզրանի այս խոսքերը լսելով՝ խնդրատուները հասկացան, վոր պաղատելուց օգուտ չկա և տրտում վերադարձան տները:

Հինգ որ հետո բանտարկյալներն արձակվեցին և առվի վրա պարտադիր աշխատանք կատարողներն ել իրենց գործին գնացին: Սրանց ազատ արձակելուց յերկու որ հետո ելի մոլլա Ռեջեբը մի շարք բեյերի հետ միասին բանտարկվեց: Առվի վրա ել մի խումբ հաստավզեր աշխատելով՝ մաքրեցին ջրի ճանապարհը:

Որը շաբաթ դառավ, շաբաթը՝ ամիս, ամիսը՝ տարի: Թյուքեզրանն ելի իր պաշտոնում՝ շարունակում եր գործը: Գյուղի առուները մաքրվում և մոլլա Ռեջեբն ել շաբաթվա յերկու որն ազատ՝ հինգ որը բանտում նստած եր:

Շատ հաճախ մոլլա Ռեջեբը շաբաթվա մեջ յերկու որ անցնելուց հետո յերրորդ որը տխուր ու մտածկոտ անցնում եր փողոցով: Նրան տեսնելով՝ գյուղացիները հարցնում եյին.

— Ախո՛ւնդ, խեր լինի, ո՞ւր ես գնում:

— Այնտե՛ղ.—պատասխանում եր Ախունդը, գլխով ցույց տալով բանտի շենքը:

— Ա՛յ Ախունդ, նորի՞ց հրաման ե արձակված:

— Վո՛չ, չի արձակված, բայց ի՞նչ կարիք կա հրամանի սպասելու, յես գիտեմ, վոր պիտի առաջարկեն:

***

Յեթե գյուտարարներից մեկը բարեհաճեր մի փոքրիկ ակնարկ գցելու Թուրք կանանց վրա և ապա իր ուսումնասիրության արդյունքը գրավոր մեզ ցույց

տար, մենք ել այսոր՝ ընտրությունների ժամանակ՝ Թյուքեզրան խալային մենակ չպետք ե թողնեյինք, և նրա բոլոր ընկերներին կանչելով՝ կհավաքեյինք նրա գլխին: Բայց՝ Թուրք կանանց մանրամասն կերպով պատկերացնող գրականություն չունենք և այդ պատճառով ել՝ քանի՛-քանի՛ գյուղխորհրդի նախագահության արժանի յեղող կանայք կան, վորոնք կաշկանդված են սև չադրայի տակ և վորոնց՝ ազատագրելով՝ կարելի յե հանձնել վոչ թե խորհրդի նախագահի, այլ՝ ավելի բարձր ու պատասխանատու պաշտոններ: Մենք չգիտենք, բայց այդ բանը «տղամարդ» Թյուքեզրանը գիտեր: Վորքան վոր նա անգրագետ եր, քաղգրագիտության կուրսերում չեր յեղել, հասարակագիտությունից անտեղյակ եր, բայց՝ նման խնդիրները հասկանում եր:

Մի անգամ գյուղի հասարակությանը հայտարարվեց, թե կոոպերատիվի վարչության վերընտրություն ե լինելու: Որը ուրբաթ լինելու պատճառով կոոպերատիվի անդամները մի քիչ կանուխ հավաքվեցին: Նիստի ընթացքում Թյուքեզրանը նախագահի մոտ նստած՝ հետևում եր նիստին: Նոր վարչության ցանկում կար և մի կնոջ անուն: Թեկնածուներին մի առ մի քվեյարկեցին, Թյուքեզրան խալան ել ուրիշների նման ձեռք եր բարձրացնում, բայց յերբ Հասան Գոհար խալայի անվանը՝ Թյուքեզրանը յերկու ձեռքով քվեյարկեց: Շուրջը նայեց, տեսավ, վոր ուրիշ վոչ-վոք ձայն չի տալիս:

— Ինչո՞ւ ձեռք չեք բարձրացնում, մի կնոջ անուն վոր լինի՝ գլուխներիդ քա՞ր կընկնի...Ինչո՞ւ չեք թողնում, վոր ընտրվի...

Թյուքեզրան խալան այս խոսքերը ինքն ասաց, ինքն ել լսեց: Վոչ-վոք չպատասխանեց նրան. ո՞վ եր անցել իր հորից ու մորից կամ քրոջից:

Նիստը վերջացավ. ամեն մեկն իր ծանոթ—բարեկամի հետ խոսակցելով, տուն գնաց: Իհարկե, խոսակցությունը կոոպերատիվի մասին եր: Կենտրոնից յեկած հրահանգիչն ել Թյուքեզրանի հետ խոսակցելով

դուրս յեկավ: Նոր ընտրված կոոպերատիվի վարչության մասին մի փոքր խոսելուց հետո հրահանգիչը հարցրեց.

— Հիմի քեֆդ վո՞նց ե...

— Վո՛նց լինի, ասավ, տղաս ժողով, յերեկոյան ժողով, գիշերներն ել՝ դաշտերի յետևից. ես անպիտանները մի ամիս ե՝ իմ քունը հարամ են արել, ձիու վրա հրացանով ման գալով՝ մեջքիս ոսկորները ցավում են...Կարգին մի ռոճիկ ել չեք տալիս, վոր գոնե ձիու համար գնվող գարու, դարմանի փողը դուրս գա...

— Եսպես թե գնա՝ քո վար ու ցանքը բոլորովին կփչանա...

— Իհարկե կփչանա, եսպես չեր կարելի, տեսա ել ճար չկա՝ Յերևանի փախստականներից կային մեր գյուղում, մեկին տարա պահեցի, ջիվան տղա յե, ինքն ել չքավոր...

Այստեղ Թյուքեզրանը մի փոքր մտածեց, հետո շարունակեց.

— Շատ տանջվեց, գիշեր-ցերեկ աշխատում եր... հետո ել ինձ ամուսին դարձրի...

— Կուլակների հետ վո՞նց ես յոլա գնում:

— Վո՞նց պիտի յոլա գնամ... եդ շան տղերքը մի որ ինձ սպանելու յեն: Բայց յես մահից չեմ վախենում... Միայն մտածում եմ փախստականի մասին...

Թյուքեզրանը մի փոքր կանգ առավ, հետո աչքերը գետնին հառելով ավելացրեց.

— Բայց ինկե՛ր, գիտենայիր թե՝ վո՛նց ե աշխատում...

Մ. ՄՅՈՒՇՖԻԿ

26 ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԸ

1.

Սև անցյալը նորից բարձրացավ իմ առաջ,
մտքիս հորիզոն, վառվեց, վորպես քուրա.
ահա անջնջելի՝ նորից կենդանություն առավ
և սկսեց մտքիս ռելսերով սուրալ:

Ահա բացվեց կրկին քամիների յերգով
արյուն, վոգի առած մի գորշագույն քաղաք.
վիշկաները հպարտ, կապույտ յերկնի ներքո
և ծովը թավալվող նրա վոտքերի տակ:

Դու կանգնեցիր նորից հերոսական Բաքու
նավթի հայրենիք դու, անթիվ ուժեր տեսած,
վոր անունդ բազում ուղեղներ ե ծագում
լույս պետքին դու քո արդյունքից յեկած...

Քո անցած պայքարից, մարտնչումից բազում
թույլ տուր մի եջ կարդամ սերունդների համար,
Յերբ քաղաքի վրա ճոճվում եր մի բազուկ,
ծովից նորդն եր փչում ապի ու ամպամած :—

2

18 Թվականը—արյունի ու մահի
ամեն լեզվի վրա իր թույնն եր կրակում,
քուրջի մեջ կծկված մի վերահաս ահից
նոր գարկի եր կենում նավթավողող Բաքուն:

Յեվ մահը խարխլված վիշկաների վրա
նախճիրներ եր անում ու քրքջում խելառ.

փողոցներում անթիվ—խաչաձևող իրար
մահն էր վոզի առել ահեղ հնձի ցելած...

Ահա Ջափարիձեն, ահա Շահումյանը,
Ազիզբեկովն ահա և մարտիկներ քանի
քեզ համար զոհվեցին հերոսաբար—Բաքու
և այդ մահն է նորից սրտումս աղաղակում:

3

Այդ յերեկո նրանք Բաքվից յերբ հեռացան
խելագար կնոջ պես ջրերն որորվեցին...—
ու «Թուրքմենը» ծանր առագաստը բացած
տանում էր ջրերով—Բսանվեցին:

Ցերեկոն լողում էր կապույտ ծովի լանջով,
վիշկաների վրա մառախուղը իջած.
զավողներում վո՛չ մի, վո՛չ մի շչակ
բանվորներին անթիվ նորից գործի կանչող...

Ցերկնքի փեշերից դեշերն է ծանրանում,
ծովի ջրերն ինչպես փշրվող հայելի.—
նավը որորվում է, իջնում ու բարձրանում
և հուզվում են սրտերը ջրերին նայելիս:

Նավի չուրջն են լլզում ալիքները աղի,
վոր թռչում է կարծես վերահաս վտանգից:
Քամին ծովը առած ձեռքերում կատաղի
հոհռում է, վորպես մի կատաղած բանկիր...

Իսկ Բաքուն թարթում է մաղութոտ աչքերը
և դնդակն է յերգում հողմերի քաղաքում
և արնոտած ամեն, ամեն քունք ու յերես
նայում է աչքերը լցված Բաքուն:

4

Հետո մի գնացք է անջուր անապատով
ահեղ սուրում չաչող ավաղի դեմ

գիշերվա թևերն է դաշտ ու ձորը պատում,
քամին թակում է գնացքի դռները յերկաթե:

Անապատը դեղին ու տարածված անծայր,
անապատը ընկած քամիների բերան.
ավազն արշավում է չոր դռների վրա,
հեռվում վորոտում մի ամպագոռ կայծակ:

Հետո հրաման ու անթիվ համազարկեր
և արնոտված հողը անջուր անապատի.
սակայն մեկի ձայնը անապատով զարկեց
արյունն առու-առու նրա լայն ճակատին:

— «Հե՛յ դուք, մահը կանչող, դուք ստորներ ագահ
ո՛ւր էլ լինեք, ո՛ւր էլ, դուք չեք փրկի կաշի.
կգա հատուցումը յերկաթե չոր հագած,—
սերունդները ձեզնից կպահանջեն հաշիվ:

Ամեն կապված բազուկ կրացվի ակամա,
մենք կտանենք նորից փառավոր հաղթանակ...
ահա մեր կրծքերը, մենք ընկնում ենք անահ
գալիք արշալույսի, սերունդների համար...»:

5

Հեյ, աղի ափերում ընկած մեր ընկերներ,
ձեր վերքերը թարմ են մեր սրտերի վրա,—
ընկնել մարտում ձեզ պես, հերոսաբար մեռնել
դասակարգի պարտքը ճակատներին կրած...

Ձեր արյունը թեև ավազները յեփեց,
գայլերը ձեր չուրջը կազմեցին հարսանիք,
մի օգնություն ձեզնից հրաժարվեց թեպետ,—
բայց մենք հաղթող յեղանք հետագա վարկյանին:

***

Կապույտ մի ժպիտով պայծառության ծոցում,
դեղին արծաթ մի գիշեր, մի գիշեր,
յերբ հովն եր կրծքաբաց ծաղիկները ոծում,—
սիրտս ձեր վոճրալի պատմությունը հիշեց:

Գիշերը—ամեն կողմ լուռ փչում ե հովը
վիշկաների յերգը փառավոր ու անմահ.
կապույտ սավանի պես ալիքվում ե ծովը
և լուսնակի լույսը տանիքներին մանված...

Տիգ–Ջոնսն հրամայեց, հոսեց ձեր արյունը,
անապատը կարմիր շողքերի տակ փայլեց...—
մենք քանդեցինք, սակայն, վոհմակների բույնը
և քշեցինք յերկրից անթիվ սոված գայլեր...

Քսանվեց ընկերներ, Քսանվեց ընկերներ
դուք յելնում եք նորից վերջնական պայքարի.
ո՞վ չի ուզի ձեզ պես անմահորեն մեռնել
և վեհությամբ նայել յերկրի կատարից:

Մի ձեռքով բռնած շռնդացող քնար,
մյուս ձեռքս պատրաստ ընկեր հրացանին...
Փառք ձեր շիրիմներին հաղթությունով քնած՝
մեր պայքարում զոհեր տվինք քանի՛, քանի՛...

Ձեր արյունը թեև ավազները յեփեց,
գայլերը ձեր շուրջը կազմեցին հարսանիք,
մի ոգնություն ձեզնից հրաժարվեց թեպետ,—
բայց մենք հաղթող յեղանք հետագա վարկյաններին...

Կ Ո Վ Կ Ա Ս

Արևելքում փոթորկվեցին մրրիկները խստիվ,
Անթափանց փոշին ճամբաներին ծառացավ,
Յեվ ամեն մրրիկ—ցանկություն խելառ մի սրտի.
Ուստի և Կովկասը թատերաբեմ դարձավ:

Նրանք, վոր մրրիկներն այդ վեր բարձրացրին,—
Ծեծում եյին յերկրի կուրծքը մարմարինի,
Անոթի ու ծարավ, հիվանդ, հյուծվածներին
Կլանում եր յերախը՝ այդ ժանտ տարիների:

Գեղեցիկ Կովկասը մոռացել ե որերն այդ սև,
Նրա սրտում նոր մեղեդի յե սրնգում.
Նա հառել ե դեմքն իր հորիզոններ լուսե—
Ուրիշ շեփորներ են հոգում որնգում:

Ազատ ենք այժմ կովկասցիներս — մե՛նք,
Մեր խոսքը հիմա հոգեզվարճ լիրիկա,—
Ծանր հնության մուժը արդեն ճեղքել ենք—
Արարատից մինչև Զագեսը՝ Վրաստանը ներկա:

Աղմկող վիշկաները՝ Ադրբեջանի ընդերքում
Փնչում ե նավթը ահեղ դևի պես,
Այնտե՛ղ, կերտում են մկանները կուռ՝
Նոր կյանք են բացում, և՛ պայծառ, և՛ վեհ:

Ո՛, Թիֆլիս, հիշում եմ անցյալը քո,
Զայրույթի ժանիքն ե հոշոտում ինձ,
Դու ծաղկած Թիֆլիս, հիմա քո դիրքով
Առաջավոր ես, պայքարո՛ղ, անբիծ...

Թող արևգակը ճառագայթի՛, բարձրանա՛,
Ուրախ ցոլքերով հալչի, ջրերում,
Մենք ամուր սիրով կելնե՛նք, կամրանանք,
Մեր Խորհրդային Կովկաս աշխարհում:

Կովկասի մթին, հավերժ միգապատ—
Սարերը ծունկի թո՛ղ գան մեր առաջ
Մենք կբարձրանանք անվարան, հպարտ
Դեպի բարձունքը՝ հաղթող, աննահանջ:

ԿՈՒԼՏԱՐՇԱՎ

Աշուն է, վոսկեվարս աշուն,
վրնջում է բնության անսանձ ձին.
Նա կատաղած աշնան մրգի սայլն է քաշում
յերկրի դաշտերով, ճամբաներով—անծիր...

Բնությունը ահով մեզ կռվի յե քաշում,
այս կռիվը գործեղ ըմբիշ է պահանջում.
աշունն է ծանրանում, արդեն, արդեն աշուն,
ճամբաները յերկար, սառույց, անձրևաջուր:

Ձմեռն է մոտենում. արդեն ամպ ու կայծակ
այդ ամպն, այդ կայծակը մեզ կանչում են մարտի.
այս հեղեղն ասում է, մտիր կյանքը պայծառ
վորպես կառուցող ու դասակարգի մարտիկ:

Կուլտարշավի յելնենք, յելնենք ահեղ կռվի,
ահեղ պատնեշ կապենք մեր և անցյալի մեջ,
վոր խնդությունն յելնե, այս ափերով փռվի
և վրեժը վառվի ջահել աչքերում մեր:

Ի՞նչու վախենալ այս հորդառատ ջրերից,
յերբ կողքից բոցավառ աչքեր են բարձրանում,
թող քո ձեռքը յերբեք թշնամուն չների
և վաստակի կռվում մեծ հերոսի անուն:

Թևերդ մկանուտ և մազերդ փրփուր
մարզիր բազուկներդ և նետվիր ասպարեզ,
վառիր աշխարհներում անթիվ չեղած արև...

Ծնվեցինք, իմացանք մենք վարդերի լեզուն,
քամիների լեզուն մենք իմացանք,
հոծ բանակով նորից մենք ապրել ենք ուզում
աշխատանքի, յերգի մեր յերկրում անծայր...

Մարդկության թռիչքը նոր թռիչք է ուզում
գուցե վաղը գրավի նա յերկինքը ամբողջ,
արշավի հաղթական արեգակի ճամբով:

Դրա համար ընկեր դու հարձակվիր գրքին
և ուղեղդ մաշիր վառ տողերի վրա
այս փառավոր կյանքը անհատորեն գրկիր
և թող դրոշ լինեն քո յերգերը գրած...

Վոր չմնա այստեղ վոչ մի դալուկ ստվեր,
գիշերվա փոխարեն վառ արշալույս ծագի
և յերկրով գնա մեր յերթը աներեր
և արևը յելնե սև ամպերի տակից...

Վոր նայվածքներ անթիվ չմնան ամպամած,
պայծառանա դեմքդ նման արեգակի,
դասակարգիդ կռվի և վրեժի համար
հանիր յերգդ ձմրան սառույցների տակից:

ԱԲՈՒԼ ՀԱՍԱՆ

ՅԵՐԳԻԶԸ

Յոթն աստիճան ունեցող սանդուղքը նրան հոգնեցրել էր․ սկսել էր հազալ։ Սանդուղքի վերջին աստիճանի վրա շունչ առավ։

— Ջահրումար,— ասելով, մռլտաց։

Հազիվ է վոտքը բարձրացրել, հնչեց զանգը՝ գրը՜նգ, գրը՜նգ, գրը՜նգ։

Քսան տարի յե ինչ ապրում է քաղաքի մի անկյունում՝ այս բակում, այս նեղ հորում առանձին և նրա լսած ձայնը յերբեմն-յերբեմն ջղային, իսկ յերբեմն էլ յերկար-յերկար հնչող զանգի ձայնն էր։ Բացի դրանից վոչ յերեխայի քրքիջ, վոչ կյանքի յեռ ու զեռ։

Այստեղ կենդանի եյակների գոյությունը վկայող միակ բանը առավոտները և յերեկոները անժամանակ սկսվող և ժամերով շարունակվող արյունախառն հազն էր։

Վերջին ժամանակները, մոտավորապես վեց տարի յե, ինչ իր պահած ծառայող Սոնիայի հետ անգամ այնպես կամացուկ էր խոսում, վոր հազիվ թե պատերին էլ լսելի լինեյին։

— Զրը՜նգ, զրը՜նգ։

Զանգակն էլ յերբեմն օրերով, շաբաթներով լռում էր, հետո հանկարծ ձայն տալիս։

— Սո՛նիա, Սո՛նիա,— խեղդուկ ձայնով խլրտաց։

— Մի տես ո՞վ է։

Կամ հարսանիք է և կամ յերեկույթ։

Նրան էլ ուրիշ ո՞ւր պետք է հրավիրեյին։ Նա այդ լավ գիտեր, վորովհետև միշտ փնթփնթալով, դանդաղ քայլերով դեպի բակի դուռը գնալու հարկադրվող Սոնիան առանց հատուկ հրավիրատոմսերի յետ չէր դառնում։

Բոլոր այս հրավերների նյութը, իմաստը կարծես թե մեկը մյուսից էր ընդօրինակվել․ դրանք բոլորը մշտապես շատ «հարգելի»ով եյին սկսվում և «խնդրվում է անպայման գալ»—ով վերջանում։

Վերջին ժամանակները վարձատրության խնդրում մի տեսակ սառնություն էր նկատվում․ գրպանից դուրս յեկածն աստված անպակաս անի ասելով, իր գրպանն էր դցում։

Սոնիայի հասա, կարճ մատներով գիրուկ ձեռքում յեղած թղթին նույնիսկ կարևորություն չտվեց։

— Այդտեղ դցիր,— ասելով, սեղանը ցույց տվեց։

***

Ժամը մոտավորապես ութն էր, առաջին հարկի մուտքի սանդուղքները զարդարված եյին գույնզգույն լույսերով, ամեն տեղ խումբ-խումբ բազմություն էր նկատվում։

Միանման տարազ հագած աշակերտներ, գլուխները սանրած, զուգված հագուստներով, զբոսնում եյին այս ու այն կողմը․ միօրինակ կյանքից ձանձրացած այս յերիտասարդները դադար չունեյին, վորևէ պատրվակով, շատ անգամ առանց պատրվակի, դուրս ու ներս եյին անում, անհամբերությամբ հյուրերին սպասելով։

Մի խոսքով․ այս գիշերօթիկ դպրոցի շենքը մեծ հուզմունքի մեջ էր։

Մի փոքր անց՝

— Ընկե՛ր։

— Մի՛ նեղվեք։

— Շնորհակալությո՛ւն։

— Նեղություն չլինի,— նման խոսքերն սկսվեցին։

Հյուրերը գալիս եյին և ամեն վոք իր գլխարկն ու վերարկուն տալով, վերև էր բարձրանում։

Հանկարծ բոլորն իրարանցման մեջ ընկան,

— Յեկան,— ասելով։

Տարբեր՝ սպիտակ գոգնոցներ հագած աղջիկներ յեկան։

Նրանց ճանապարհ տվին:

— Բարի՛ յեկաք:

— Հրամեցե՛ք:

— Յերկրո՛րդ հարկը:

Ահավասիկ մի խումբ ևս՝ գույներից բաղկացած, գեղեցկությունից հյուսված ալվան մի փունջ՝ վառվռուն, անկեղծ և սուր բույր արձակող այս մեծ ու փոքր խանումները վեհորեն առաջ անցան:

Իր ընկեր Թառչին ներս յեկած ժամանակ, նա ներքևում խոսքի յեր բռնված հերթապահ ուսուցչի հետ:

— Դեռ չի՞ սկսվել:

— Վոչ:

— Վաղո՞ւց ես յեկել:

— Այո, այստեղ նստած, յեկողներին եյի դիտում:

Յերգիչն իր խոսքը յերկար մի «ահ»—ով վերջացրեց:

— Զրը՛նգ, զրը՛նգ:

Հնչեց յերկրորդ զանգը:

— Բարձրանանք:

Թառչինը յերգչի թևը մտավ: Հազիվ եյին մի քանի աստիճան բարձրացել, նվագախումբը թնդաց:

Բեգերը անհամբերությունից խոժոռած դեմքերով, մտան դահլիճ, ուր լիքը բազմություն կար:

Գույներն աչք եյին շլացնում, անուշահոտությունը գրգիռ եր առաջ բերում:

Նրանք նստեցին բոլորից առաջ:

Յերկու արարվածով հեղափոխական ներկայացումը և կոնցերտը վերջացավ, ուր, վարագույրն իջնելուն պես, մի ձայն լսվեց.

— Արևելյա՛ն սենյակը:

Հետո այդ ձայնին միացան ուրիշները և բացականչեցին.

— Արևելյա՛ն սեյակ, արևելյա՛ն սենյակ:

Հանկարծ մեջտեղը ծաղկեփնջեր գոյացան և շարժվեցին դեպի արևելյան սենյակը: Վոչ վոք չեր ուզում իր նստած տեղից շարժվել:

Թեկուզ շոգ եր, բայց դրանից գանգատվող չկար,

վորովհետև անուշահոտ շնչերով խառն այդ օդը բացի շոշափելիքից, կարծես բոլոր զգացմունքները թմրեցրել եր:

Ո՛վ ո՛ւմ դիմացն եր, ով ո՛ւմ յետևում կամ կողքին: հայտնի չեր:

Յետևի շարքում նստածները չգիտեյին առջևում ինչ են յերգում, ինչ են նվագում:

— Լռությո՛ւն: Սկսվեց:

Հիվանդագին, մտահոգ տրամադրություն ստեղծելու համար շուր յերգեցին:

Յերիտասարդ յերակների մեջ հոսող տաք ցանկության հակասող այս տխուր յերաժշտությունը չլսելու համար, յետևի շարքից դուրս յեկողներ յեղան: Մի քիչ հետո առաջվա մեռյալ ձայնը սկսեց կենդանանալ:

— Հիմա շահնազ են յերգելու,—ասաց մեկը: Բոլորը տրամադրվեցին այս ըմբոստ և զվարթ յերգը լսելու: Ահա շուրի վերջին ձայնը...

— Շահնա՛զ:

Բայց այս ի՞նչ է, արծվի թևերի ուժգին թափահարման փոխարեն ճնճղուկի սրտի բաբախումի պես մի բան: Միթե՞ այս եր սպասածը. իհարկե վոչ: Յետևի շարքում նստողները պատրաստվում եյին լսելու, մեկ էլ հանկարծ՝

— Կեցցե, կեցցե,—ձայները պոռթկացին:

Ծափեր, ծափեր:

Բերաններից հետո ձեռքերն էլ եյին գործի անցել:

— Դեպի դահլի՛ճ, պարը սկսվում է, դեպի դահլի՛ճ:

Մնացողն ո՞վ եր: Պարել, ծիծաղել, սիրել և սիրվել կամեցող այս յերիտասարդների համար շուրը ի՞նչ եր, շահնազը ի՞նչ:

Գույների ծովն ընթացքը փոխեց և ալեկոծվող դահլիճի չորս կողմը շրջապատեց:

Հիմա՝

— Խնդրում ենք, խնդրում ենք, պար ենք խնդրում:

Ձայները չէյին դադարում, հետզհետե ուժեղանում էյին։

Վոմանք էլ պահանջում էյին, վոր յերգեն։

— Պար, պար ենք պահանջում։

— Ուստա, ուստա, ուստա ենք պահանջում։

Միաժամանակ յերկու կողմերն էլ լռեցին։ Ինչ վոր մի խուլ աղմուկ լսվեց։

Լռողներն ավելի քիչ էյին քան աղմուկ բարձրացնողները։

Ծափահարություններ։

Դեսից-դենից բարձրացող ծափահարությունները մերթ ուժեղանում, մերթ նվազում էյին և բոլորն էլ կարծես հիպնոզված, մասնակցում էյին այդ ծափահարությանը։

Ծափահարության փոթորիկն սկսվեց։ Ինչ կատարվեց, վորոշ չէ։ Մեջտեղը մեկը պարում էր։ Սկսած տասը դեռևս չլրացրած, կրկին պարի յեղանակի պահանջ դրվեց։

Այս գիշեր յերկրորդ անգամն է, վոր նրա յերգը ընդհատում էյին։

— Սրանց համար բայաթի, ուստա յերգելն իզուր է,—ասելով, ինքն իրեն ցավագին տրտնջում էր։

Հապա էլ ինչո՞ւ նրան հրավիրել էյին, միայն դափ զարնելո՞ւ։ Հապա ծափահարությունը ի՞նչ էր,—հարց էր տալիս նա իրան։

Ո՞վ է իմանում, գուցե այս նրա համար էր, վոր նա իր լալկան ձայնով յերգելուն վերջ տար։

— Ի՞նչ ես անում, հոգնեցի՞ր, դայթարմա յեն պահանջում։ Հրմշտում էր նրան ընկերը։

Մեջտեղը մի տղա և մի աղջիկ էյին պարում։

Նրանք ջրային կռունկների պես լողում էյին և նրան իր յերիտասարդությունը հիշեցնում։ Նա իր դիմաց պարողների մեջ իր յերիտասարդությունն էր վերապրում։

Յուրաքանչյուր զույգի համար ծայր առնող ծափահարությունը նրան դեպի անցյալի հիշողությունն էր

տանում։ Նա էլ այնքան ծափահարությունների, հարգանքի ու մեծարանքի յեր արժանացել, վոր...

Սակայն հիմա նրա նկատմամբ ցույց տրվող հարգանքները, կեղծ գգվանքներն իր կարծիքով անցյալի հաշվին էյին։

Նա այլևս ումի՞ց կարող էր հուսալ։

Հասակը հիսունը անց, թշերը ներս ընկած, այտոսկրները կարծես դեմքի չոր մորթը պատռելով, դուրս պիտի թռչեյին։ Իսկ խոռոչացած աչքերն այս աշխարհից ավելի մյուս աշխարհին էյին նայում։ Շրթունքները կախ, մազերը, մորուքը սպիտակած, իր կյանքի վերջին ձմեռը սկսվում էր։ Ամենից վատ ազդողը ձայնի բռնվելն էր։ Ներսից դուրս գալ կամեցող յերգերը հառնում էյին մինչև կոկորդը և այնտեղ մեռնում։ Տառերին լացացնող իր ձայնը հանգչում էր, ինքն էլ իր յերգերի նման հանգչելու յեր հավիտյան։

— Լեզգինկա, լեզգինկա։

Թառչին նորից հրմշտեց նրան։

— Լեզգինկա յեն ուզում, մի քնի։

Նա սկսեց դափը զարնել։ Իր հոգնած, կաշի և վոսկոր դարձած ձեռքերի ցավը նա այլևս չէր զգում։ Յեթե մեկը ուշադրությամբ դիտելու լիներ, կկարծեր, վոր նա դափի թշնամին էր։

Հանկարծ կանգ առավ։ Ձեռքը դափի շրջանակի մեջ էր անցել։ Թառն էլ լռեց։ Մի առժամանակ լռությունից հետո, մի ձայն լսվեց.

— Դափը պատռվեց,—ասին։

***

Պատռած դափը սեղանի վրա դրեց։ Քսան տարի, ուղիղ քսան տարի յե, վոր այդ դափը նրա ձեռքումն էր։ Չորրորդ անգամն էր, վոր նա պատռվում էր։ Յերեք անգամ ներքին յեռանդից, հուզմունքից, իսկ հիմա... Այլևս նա դափի այդ շրջանակը ձեռք չպիտի առներ և իր հանդեպ փոխված մարդկանց առաջ ծիծաղի առարկա չպիտի լիներ։

Բավակա՛ն էր: Մատը քսան տարի իրեն ծառայած պատռված ընկերոջը խփեց: Նրանից խռպոտ մի ձայն հնչեց: Այդ ձայնին համր պատերն էլ արձագանքեցին: Ապա վերջին անգամ տնքաց:

— Լռիր,—ասելով, ձեռն առավ: Փոքր պատռվածք ունեցող այծի մորթին դողդողջուն ձեռքով ճղեց և կտոր-կտոր արեց:

Հետո դափը ուղղահայաց ձևով դողդողջուն ձեռքերի տակը դրեց: Իր մարմնի և բազուկների բոլոր ուժովը վրան ընկավ: Շրջանակը կոտրվեց: Կտորները ձեռքն առավ: Այդ խեղճ կտորները բեկված սրտի հեծեծանքների պես իր տիրոջ ջղային, թույլ մատների տակ կարծես խրտչում էին վերջին ձայնը հանելու և թշվառորեն հեծում էին:

Վերջապես վերջին տառապանքով տուն հասնելով, տան հեռավոր անկյունն ընկան և այնտեղ լռեցին: Նա կարծում էր, որ դափի նման ինքն էլ էր մահացել: Ձայնը կտրվեց: Աշխարհում չմնաց այլևս ձայն տվող մի բան:

Պատերից մի ձայն սպասելով, նրանց նայեց ակնապիշ:

Լռություն:

Բաց պատուհանի առաջ գալով, յերկինք նայեց. այնտեղ խումբ–խումբ, քով–քովի այնքան աստղ կար, սակայն բոլորն էլ հեռու, բոլորն էլ խո՛ւլ ու հա՛մր:

Հանկարծ նրանցից մեկը սահեց, գնաց, մեկն էլ... մի ուրիշն էլ...այլևս դրանցից հետք չմնաց:

— Վա՛յ ինձ, խղճալիիս:

Յերբ յերերալով սեղանին էր մոտենում, մտքերը խառն էին, իր աչքերի առաջ յեղած առարկաները կարծես թռչում, թագնվում էին:

Պատռած դափն էլ, բոժոժիկներն էլ թռչում էին և իրենց հետ նրան էլ էին քշում, տանում:

Կյանքը շարունակում էր իր ընթացքը:

Նա կյանքի անցուդարձից հեռու, մի անծանոթ անկյունում, մեն–մենակ էր: Ամեն բան, նույնիսկ տան

անկյունն ընկած դափն էլ նրա զուր անցած կյանքի վրա յեր ծիծաղում... Այդ ծիծաղն ամբողջ քսան տարի նրա յերգած յեղանակները, մեղեդիները պղնձե բոժոժիկների մեջ լցրած ուռչում, մեծանում ու նրա գլխին էին խփվում:

Նրան զարկում էին...ծեծում էին...յերեխաները, մեծերը, բոլորը, ամեն վոք:

— Առ, գլխիդ կպչի ոստը, աչքդ մտնի շուրը:

Նրան խփում էին, հրմշտում էին:

Նա, գլխին կպչող քարերի այս տարափի տակ ուղեղից մարմինն հոսող մի բան զգաց:

Ի՞նչ էր կատարվում, գժվո՞ւմ է, ինչ է:

Ո՞ւմ կանչի, ո՞ւմ ինչ ասի:

— Ո՛վ, մի կին, մի յերեխա, մի մարդ:

Իր խռչափողից վերջին մի ճիչ հնչեց.

— Սո՛նիա, Սո՛նիա:

ՍՊԱՆԵՑ

1.

Ցարգին, առանց վորևէ բանից տեղեկություն ունենալու, կանգ առավ: Պորտֆելը, վոր իր ձեռքի մեջ շարժելով տանում էր, թևի տակ առավ: Ուշադրությամբ նրան դիտեց, բայց նա վաղուց իր հայացքը դարձրել էր նրանից և դիտում էր փողոցով անցնող մարդկանց, ավտոմոբիլներն ու կառքերը:

— Չի կարող պատահել, չի կարող պատահել,— անցնում էր մքից և կեղտոտ, կնճռոտ դեմքով ծերունուն դիտելուց չէր կարողանում հրաժարվել...Նա յեր, նույն կիտած հոնքերի տակ՝ խորն ընկած աչքերը, վորոնց թարթիչները միանում էին հոնքերին:

— Նա յե, անկասկած նա,— բավական նայելուց հետո կասկածը փարատել եր:

Շատ ժամանակ չեր անցել: Ութը տարի յե: Այդ ժամանակամիջոցում այդ դիմագիծը նրա հիշողությունից չեր անհայտացել: Ֆարզին իր կյանքի ամենաուրախ րոպեներին յերբեմն նրան եր հիշում. արդյոք նա ի՞նչ յեղավ, մահացա՞վ, ո՞ղջ ե,— միշտ այդ հարցն եր տալիս իրեն: Այնուամենայնիվ այդ հարցը այնքան էլ ուժեղ չեր, վոր կարողանար խանգարել իր ընտանիքի անդորրությունը: Այնպես եր կարծում նա, վոր իր փախցրած հարստությունով վոչ միայն կարող եր լավ ապրել, այլև նույնիսկ ավելացնել այն:

Բայց ի՞նչպես եր յեղել, վոր նա այդ վիճակին եր մատնվել և յեկել հասել եր այս կողմերը:

Նա, իր ամբողջ կյանքում առաջին անգամ պատահած նման կնճռոտ հարցի պատճառած զգացման ծանրության տակ, դամված եր մնացել: Կարծես մի աներևույթ ուժից կաշկանդված, կանգնած եր մեծ, խորունկ մի անդունդի յեզերքին, քայլելու անկարող:

Իմանալով հանդերձ, վոր այդ նայվածքներից սարսափելու չեր, բայց և այնպես Ֆարզին նորից ձգտում եր այդ նայվածքին պատահել: Մյուսը կարծես նրան հասկանալով, գլուխն էլ չեր դարձնում նրա կողմը և մերթ ընդ մերթ գլխարկն անցորդներին ուղղելով՝ «աստծո սիրուն» խոսքերով նրանցից վողորմություն եր հայցում:

Շատ քչերն եյին վողորմություն տալիս նրան: Առհասարակ անցորդները նրա ընկերոջը՝ խեղճ ծերունուն եյին վողորմություն տալիս, իսկ նրա վրա ուշադրություն չեյին դարձնում: Այդ աչքը, այդ հոնքը և առհասարակ այդ դիմագիծը—ամեն մարդու մեջ գութից ավելի մի տեսակ անորոշ զզվանքով խառն դառն զգացում եր զարթեցնում:

Քիչ հետո Ֆարզին հասկացավ, վոր այդ նայվածքներից վոչ մի բան դուրս չեր գալու: Անցավ գնաց: Բայց չեր կարողանում բաժանվել իր մտածումներից, քանի

գնում ե՛լ ավելի միտքը խառնվում եր: Հակառակ յոթը ժամվա հոգնածությունից կազդուրվելու իր սաստիկ կարիքին, նա մտածում եր, վոր այս րոպեյից սկսած, իր համար հանգիստ չկար: Յերեք սենյակից և մի խոհանոցից բաղկացած բնակարանի փոքրիկ նախասենյակում վերարկուն, գլխարկը և վոտնամանները հանելով, ներս անցավ: Ցերկու պատուհանով լուսավոր աշխատանքի սենյակ եր այստեղ: Այնտեղ մի անկյունում, սեղանի յետևն իր վեց տարեկան յերեխան՝ Նարիմանը նկարազարդ գրքերով եր զբաղվում:

Պորտֆելը մեջտեղի սեղանի վրա նետեց: Հակառակ սովորության, յերեխայի հետ չզբաղվեց: Թուլացած մարմինը լայն թիկնաթոռներից մեկի վրա գցեց: Խորը շունչ քաշելով, Նարիմանին նայեց: Ինքը նրա յերեխան եր ու սրա հայրը,—մտածեց: Աչքերն անողոք, աններող նայվածքով իր սրտին ուղղված դիմագծի, իսկ ականջները՝ «աստծո սիրուն» խոսքերով վողորմություն հայցող խոսքերի վրա եյին:

Մի առժամանակ աչքերը փակ, գլուխը ձեռքերի մեջ առած, մտքերի մեջ խորասուզվեց: Կոպերը կարծես ծանրացած, չեյին շարժ՛ ւմ և ճնշում եյին լույս աշխարհ նայելուց խուսափող աչքերի վրա:

— Ա՜հ, յերնեկ մի յերազ լիներ:— Այդ ցանկությամբ նա իր աչքերը բաց արեց: Դիմացը Նարիմանը խաղում եր սև փողկապի յեռանկյունաձև ծայրովը: Նարիմանն իր մեծ, սև աչքերի ծայրով մերթ ընդ մերթ հորն եր նայում: Կարծես իր հորից հաճախակի լսած «պատրա՛ստ» հրամանին եր սպասում, վոր «մի՛շտ պատրաստ» պատասխաներ:

Վերջապես, յերբ յերեխան տեսավ, վոր հայրը վոչինչ չի ասում, բարձրացավ նրա գիրկը: Փոքրիկ ձեռքերով հոր նոր ածիլած դեմքը շոյեց: Հետո իր դեմքը հոր յերեսին սկսեց քսել:

— Ինչո՞ւ չես խոսում... Ինչո՞ւ յես յերեխայի սիրտը կոտրում,—կնոջ ձայնը Ֆարզուն սթափեցրեց:

— Նարիմ, ցավդ առնեմ, հորդ գլուխը ցավում ե:

Անհանգիստ է: Գնա ճաշելու,—ասելով, մայրը նրան իր ամուսնու գրկից վերցրեց: Գլուխը շոյելով, կից սենյակը տարավ և վերադառնալով, կանգնեց ամուսնու կողքին:

— Խեր լինի, Ցարգի, ի՞նչ է պատահել:

— Չե՞ս պատասխանում:

Ցարգին նայեց Զարրիին: Տասներկու տարի միասին ապրած այս կնոջ աչքերի մեջ նրա յերկու ժամից ի վեր անցկացրած ամբողջ տառապանքի ստվերն եր յերևում: Այդ զգայուն աչքերն այնպես եյին փայլում, վոր կարծես ազդում եյին նրա հոգու վրա, նույնիսկ իրենց անծանոթ զգացումների, մտածումների մեջ թափանցում:

— Վոչինչ, հոգնել եմ:— Ցարգին այդ ասելով, տեղից վեր կացավ:

— Յես ել եմ իմանում, վոր հոգնել եք: Բայց այս անհանգստությո՞ւնը:

— Ասի վոչինչ,—և ուզեց անցնել ճաշասենյակը: Կինը նրա առաջը կտրեց և թույլ չտվեց: Ձեռքերը դրեց նրա ուսերի վրա: Հիմա յերկուսն ել լուռ եյին:

— Զարրի:

Ցարգին կարծում եր, վոր խեղդվում է: Ինչո՞ւ յեր թագցնում: Նա լավ եր իմանում, վոր կինն ել չեր մոռացել այդ դեպքը: Այդ ժամանակից Զարրին տարին մի քանի անգամ նրա մասին հարց եր տվել, բայց համոզվելով, վոր դրանով փչացնում է ամուսնու տրամադրությունը, այնուհետև լռել եր: Իսկ Ցարգին այդ լռության իմաստը շատ լավ եր հասկանում:

Խոհերով լի աչքերով նայեց կնոջը: Նրա աչքերի մեջն ել «գիտեմ, յես ել գիտեմ» ասող մի կայծ նշմարեց: Վերջապես թուքը կուլ տալով, ասաց.

— Զարրի, հիմի նրան տեսա:

— Ի՞նչը:

Զարրիի աչքերը մեծացան: Շրթունքներն ինչ վոր բան փսփսացին, վոր անլսելի մնաց ամուսնուն, հետո նորից լռություն տիրեց:

— Վորտե՞ղ, ինչպե՞ս,—վերջապես ամփոփվելով, հարցրեց նա:

Ցարգին դողդողջուն ձայնով պատմեց իր կնոջը, ինչ վոր տեսել եր: Մի փոքր վարանումից հետո ավելացրեց.—Նա չեր ուզում ինձ նայել: Ինձ տեսնել չեր ցանկանում... Չեմ իմանում:

— Խոսեցի՞ր նրա հետ:

— Վոչ, չխոսեցի: Նա այնքան խոժոռ, այնքան քինոտ և մռայլ կերպարանք ուներ, ինչպես մեզնից բաժանվելիս, վերջին անգամ տնից դուրս գնալիս: Հիշո՞ւմ ես, այն աչքերը, գլխին յեկածները, մտքից անցածներն արտահայտող այն հոնքերը... Զմռեցա... վախեցա...գուցե, ախ...

Զարրիի քրքիջն ամուսնու խոսքը կիսատ թողեց: Ուրեմն դրա՞ համար է: Յես ել մտածում եյի, թե արդյոք ի՛նչ է պատահել:

Զարրիի դեմքը միանգամայն պայծառացել եր: Աչքերն անկեղծ սիրով ծիծաղում եյին:

— Կգնաս կկանչես, տուն կբերես: Միասին կապրենք, հա՞: Կարծում ես չի՞ գա, վոչ, կգա: Այդ ժամանակվանից ութը տարի յե անցել:

Զարրին խոսում եր և նրան մոտիկ անելով հանդերձ, խորասուզվող ամուսնու ուսերին եր դիպչում հաճախակի:

— Կգա, կգա,—կրկնում եր նա շարունակ: Իր խոսքերի ճշտության և հնարավորության այնպես եր համոզված, վոր ավելացրեց.—

— Կգա և այնպես կսպասարկեմ նրան... վոր բոլոր անցած գնացածները կմոռացվեն:

Ցարգին գլուխն եր շարժում և ուզում եր հասկացնել կնոջը, վոր հարցն այնքան ել հեշտ լուծելի չէ:

— Դիցուք թե յեկավ: Կարո՞ղ ենք նրա հետ ապրել: Ասենք՝ մենք վոչինչ: Սակայն այդ յերեխանե՞րը... Յերեխաները: Նարիմանի, մանավանդ Բիլլուրի հետ... Չեմ հավատում, չեմ հավատում, վոր մենք կարող լինենք նրա հետ ապրել:

Խոսքերը խորունկ մի հառաչանքով վերջացրեց։ Սպիտակ վարագույրով կիսով չափ ծածկված պատուհանից դուրս նայեց։ Նայվածքները մի վորոշ բանի վրա չէյին մնում, կարծես վերջնական մի միտք, մի լուծում էյին փնտռում։

— Բիլլուրը դեռ չի՞ յեկել։

— Նա ճաշեց ու գնաց։ Ժողով ունեն։ Մի վախենա, վիզը, կոկորդն ամուր փաթաթեց... Լավ, հարցը չլուծեցի՞ր,—հարցրեց ծիծաղելով։ Ամուսնուն վճռականություն ներշնչել ուզող ձայնով իր միտքն ասաց.

— Նրան պետք է փողոցից վերցնես։ Յեթե միասին էլ չապրենք, տանը նրան առանձին մի սենյակ կհատկացնենք, հանգիստ կապրի... Լա՞վ։

Ֆարգիի աչքերը պայծառացան այնպես, վոր կարծես լուծման ավելի մանրամասն բացատրություններ էյին պահանջում կնոջից։ Դրանից քաջալերված, Զարրին իր ամուսնուն համոզելու համար հազիվ էր սկսել խոսել, վոր Ֆարգին դեմքը թթվեցրեց։ Դառնորեն շարժելով ձեռքը, ասաց.

— Մի՛, լռիր,— Զարրի, լռի՛ր, գուցե նա յերբեք գալ չուզեց։ Ապա այդ դեպքում ինչ կլինի. թո՛ղ...

Վո՛չ, Զարրի վոչ...

Նա պատուհանի մոտից հեռացավ։—Գնա՛, գնա՛, տրամադրություն չունեմ, գնա՛,—ասաց և սկսեց վարանոտ քայլերով ման գալ սենյակում։

2.

Այս դեպքից յերկու— յերեք որ առաջ, ճիշտ այս ժամին, ժամը 4-ին, ճաշասենյակ մտնող ամենից անուշադիր մարդն անգամ կնկատեր քանի որ առաջվա զվարթությունը և ներկայիս լռությունը։

Այս յերկու որվա ընթացքում բարեկեցիկ կյանքով ապրող մի խորհրդային ծառայողի ընտանիքի գլխի վրայով մի խորշակ էր անցել, վոր մեծերին խեղդել ու

փոքրերին լռեցրել էր։ Կարծես ընտանիքի անդամները մեկը մյուսից խռովել էյին։ Ել այս տանը Բիլլուրի և Նարիմանի գոռ ձայնով յերգած պիոներական յերգերը, հեղափոխական յեղանակները չէյին լսվում։ Նույնպես և Ֆարգիի մինչև հարևան տները հասնող քրքջից վոչ մի հետք չէր մնացել։

Թե՛ Ֆարգին և թե՛ Զարրին անշուշտ շատ էյին ցանկանում այս լռությունը մի բանով վերացնել, վորը սատանայական մտքերի և դառն մտածումների պատճառ էր լինում։ Սակայն վոչ վոք չէր կարող վորոշել, թե դրա համար ի՛նչ պետք էր անել։ Զարրին, վորն այս դրությունից նույնքան ազդվում էր, ինչքան Ֆարգին,— վստահ լինելով, վոր նորից կարելի յե առաջվա շեն կյանքին վերադառնալ,—տարվում էր յերևակայությունով։ Յերանի հիմա դուռը բացվեր և վաղուց չտեսած, սակայն հիշողության մեջ յեղող ծերունի աներ—հայրը ծիծաղելով ներս մտներ։ Հապա ինչե՞ր չէր անի, թոռնիկներին տեսնելով, Նարիմանին, մանավանդ իր սիրելի թոռ Բիլլուրին։

Այս յերևակայությունների մեջ խորասուզված, յերբ նա ուզում էր բերանը բաց անել, աչքը հանդիպում էր Ֆարգիին, և նրա բերած «վոչ» լուրը միտքն ընկնելով, վշտանում էր։

Հետևյալ որը համաձայն իրենց վորոշման, Ֆարգին գնացել, այդ ծերունուն տեսել ու հրավիրել էր տուն։ Մուրացկանը նրան «Թող ինձ, ձեռք քաշիր ինձանից» պատասխանն էր տվել։

Հետո Ֆարգին հայտնել էր նրան, վոր ուզում էր իր ընկերոջն էլ միասին տանել և սակայն նորից ժխտական պատասխան էր ստացել։

— Գնա, գնա, դու հանգիստ ապրիր։

Ֆարգին չէր կարողացել ապուրն ամբողջությամբ ուտել։ Հայացքը լուռ իրենց ճաշն ուտող յերեխաներին դարձրած, մուրացկանի մասին էր մտածում։ Քանի յերեխաներին էր նայում, վորդիական զգացումն իր սրտի

մեջ դառն կսկիծներ էր ծնեցնում, ու բաղխվում էր անցյալի հետ։

— Ոչ, ոչ,— ասաց բարձր ձայնով,—այս դրությունն այլևս չպետք է շարունակվի։ Մտքում վորոշեց վերջնական հրավերի մի փորձ ևս անել։ Կոտլետը պատառաքաղով դես ու դեն շուռ ու մուռ տալուց հետո, տեղից վեր ցատկեց։

— Նորից ո՞ւր։

— Ուզում եմ նրա ընկերոջ հետ տեսնվել,— պատասխանե- առանց Զարրիին նայելու։ Հետո նկատեց Բիլլուրին, վոր իր վերարկուն էր հագնում։

— Ժողո՞վ ունեք, թե թատրոն... Լավ, աղջիկս։ Վիզդ, կոկորդդ լավ փաթաթիր, քեզ տաք պահիր, քաղաքում հիվանդություն կա։

Այս խոսքերն ասելիս, նրա հայացքն աղջկա խելոք, վեհանձն հայացքին էր հանդիպել։ Այդ հայացքը դեռևս վոչ մի բանից տեղեկություն չունեցող այս աղջկա մի բան նկատած լինելն էր հայտնի անում։

Առանց մտածելու իր ընթացքի տարօրինակության մասին, մոտեցավ աղջկանը։ Նրա խուզած մազերով փայլուն գլուխը շոյեց։ Այդ րոպեյին նրա մեջ ցանկություն էր արթնանում աղջկա կարմիր փողկապ կապած վիզը համբուրելու։ Սակայն նա այդ ցանկությունը կուլ տվեց, ինչպես մի դառն բան։ Վերարկույի ոձիքը վեր բարձրացնելով ,դուրս յեկավ։ Դուրսը կատաղած մրրիկ էր խաղում։ Չոր ցուրտը սեպ քարերին զարնվելով, ել ավելի սաստկելուց հետո, ասես տաքուկ մի տեղ փնտրելով, անցորդների վիզը, կոկորդն էր մտնում։ Ֆարգին վողնու նման հավաքված, առաջ էր շարժվում։

Յերեք օր առաջ, ճիշտ այս ժամանակ, հաճելի մի հոգնածությունից հետո տաք սենյակում քնում էր նա։

—Այդ խաղաղ, զվարթ ու կայտառ կյանքը մեկ էլ յե՞րբ է վերադառնալու։

Առանց դրան էլ, մինչև ապրիլյան հեղափոխությունից յերկու–յերեք տարի հետո, իրեն ուղղելու համար Ֆարգին ամբողջ ուժով աշխատել էր հանդեպ իշ-

խանության բարյացակամ լինելն ապացուցել իր միջավայրին։ Չնայած անկուսակցական էր, բայց հիմա ամեն վոք հավատում էր նրան։ Նա իր պատասխանատու աշխատանքում որ ըստ որե հմտություն և հարգանք էր ձեռք բերում։ Այսօր նա այլևս վոչ թե ձայնազուրկ, փողը, ունեցվածքը բռնագրավված հաջի... ի տղան էր, ինչպես յոթը տարի առաջ, այլ իշխանության, հասարակության աշխատասեր, պատվավոր և ակտիվ մի անդամը։ Ինչո՞ւ համար այս վայելքները դառնացան։

Այդպիսի ցուրտ որերում մուրացկանների ապաստանած միջանցքի առջևից անցնելիս աչքի տակով այդ կողմը նայեց։ Նրա ընկերը մենակ էր։ Առանց մի րոպե կորցնելու ներս մտավ ու հարցրեց.

— Իսլամ ընկերդ վո՞րտեղ է։

Դեղնագույն ծերունին մի առժամանակ զարմանքով վերից վար զննեց իր առաջ կանգնածին։

Ֆարգին կրկնեց իր հարցումը։

— Հա, հա,—ասաց մուրացկանը,—նա այս քաղաք գալուց ի վեր սկսել է ման գալ գիշեր–ցերեկ. ման է գալիս, հոգնել չի իմանում։

Ֆարգին նստեց նրանից քիչ հեռու մի քարի վրա։

— Քեռի, ձեր ընկերոջ հետ յե՞րբ և վո՞րտեղ եք ծանոթացել։

Մուրացկանը մի առժամանակ իր պայծառ, հստակ աչքերը հառեց Ֆարգիին. Նա կարծես իր նայվածքով զարմանք էր հայտնում ընկերոջ դրությունով հետաքրքրվող այս մարդու հարցին։

— Յես ուզում եմ ծանոթանալ այդ ծերունու դրութան հետ։

— Ուղիղ ութ տարի յե նրա հետ ծանոթ եմ։ Մենք ծանոթացել ենք վոչ թե Ռուսաստանում, այլ Լեհաստանում։

Մուրացկանն ընդհատ ընդհատ, յերբեմն անկապ խոսքերով, շարունակեց.

— Նա Լեհաստան էր յեկել Տաճկաստանից։ Շատ փող է ունեցել։ Հետագայում պատմել էր, վոր երբ թե

Տաճկաստանի անկարգությունը տեսնելով, ուզեցել է փախուստ տալ Արաբիա։ Չի հաջողվել։ Վերջապես յեկել հասել եր Լեհաստան։

Մուրացկանը դեռ մի շարք բաների մասին էլ խոսեց։ Սակայն Ֆարգլին յհետաքրքրողը փողի խնդիրն եր։

Մինչդեռ նա այդ մտածումների մեջ եր խորասուզված, ծերունին շարունակում եր.

—Հաջին մեծ հարստություն ե ունեցել։ Նա էլ ե իշխանությունից փախել և Տաճկաստանից Լեհաստան գալիս թալանվել ե։ Մի ժամանակ իր մատանիները ծախելով գլուխ պահեց, հետո մուրացկան դարձավ։ Մենք այդ ժամանակ ծանոթացանք, մի տարի յե, ինչ թափառում ենք Խորհուրդների յերկրում։ Ցես նպատակ չունեյի այստեղ գալու, նա պատճառ դարձավ։

Ցերբ խոսքն այստեղ հասավ, մի առժամանակ լռեց և իր ձայնին առանձին տոն տալով ավելացրեց.

— Այստեղ տղա յե ունեցել, նույնիսկ ասում եր, վոր յերեկ տղան յեկել և տուն ե հրավիրել։

Ֆարգլին ընդոստ վեր կացավ և մուրացկանի առաջ պպզելով, հարցրեց.

— Նա ուզո՞ւմ ե գնալ տղայի մոտ։

— Վոչ, վոչ, նա նպատակ չունի իր տղայի մոտ գնալու։ Չի ուզում նույնիսկ նրանից վողորմություն ստանալ, իր տղի մասին խոսելիս նրա աչքերը կարմրում են, մազերը փշաքաղվում։ Նա շատ բարկացկոտ, տարօրինակ տիպ ե, թեև իմ ընկերն ե, բայց պիտի ասել՝ մի քիչ տխմար ե։

Ֆարգլին ուզում եր այս խոսակցությանը վերջ տալ, բայց մուրացկանը առանց հոգնելու շարունակում եր։

— Նա ամեն ինչ հայտնեց ինձ, ասում ե, վոր նա իմ տղան չե, թուամորթ ե. յերբ Խորհրդային իշխանությունը հաստատվեց, յես նրան ասի, վոր հանքերը կրակ տանք, և ինչ վոր հնարավոր ե, վերցնենք փախչենք, նա հավանություն չտվեց, տունը, հանքը, փողը իշխանությանը հանձնեց, հիմա ծառայում ե. ասում ե, «նա քծնող ե»։

— Լավ, լավ, բավական ե,—ընդհատեց նրան Ֆարգլին, մի յերեք ռուբլիանոց դրեց նրա ափում։ Հիմա նա ուզում եր այդ միջանցքից դուրս գալ փախչել և գնալ ինչ վոր մի տեղ, մի ճար վորոնելու բուռն ցանկությամբ։

— Նա իմ որը սևացնելու համար ե յեկել այստեղ, այլապես մուրացկանի համար ի՛նչ։

Ցերբ այդ մտածումների մեջ ուզում եր միջանցքներից դուրս գալ, ընդհարվեց ներս յեկող մեկի հետ։

— Ա՛հ,—ակամայից մի ճիչ արձակեց։

Այդ աչքերը, այդ յերկյուղալի նայվածքներն ինչքան աններող ատելությամբ եյին նայում դեպի իրեն։ Ցետ քաշվեց։

Մյուսը ձեռքի փայտին կրթնելով, թիկունքը պատին տվեց։ Իբրիկնամուտ եր։ Ֆարգլին նրա սառեցնող նայվածքի տակ հիպնոզացած մարդու պես կանգնել եր։

— Հաջի, հաջի, այս մարդը շատ ե հետաքրքրվում քեզնով, մի ժամ ե ինչ խոսակցում ենք,—ասաց դեռևս անշարժ մնացած դեղնադույն մուրացկանը ծիծաղելով։ Ցերեք ռուբլի էլ վաստակեցինք։

Այս խոսքերից Ֆարգլին կարծես փոքր ինչ փրկված կարծեց իրեն և աչքերը դարձրեց շուրջը։ Մեկ էլ տեսավ, վոր հայացքն իրեն հառած մուրացկանը գրպանից ձեռքը հանելով, առաջ եր շարժվում։ Մուրացկանը մոտեցավ նրա վերարկույին դիպչելու աստիճան։ Թեև Ֆարգլին ուզում եր մի բան ասել, սակայն ծանոթ աչքերի խոժոռությունը նրան լռեցրեց։ Մուրացկանն այնքան եր մոտեցել նրան, վոր կարծես իր կարծր, կեղտոտ մորուքն ուզում եր նրա աչքը խոթել։

Ֆարգլին վատաբարո կյանքի կեղտոտ հոտն եր զգում նրա շնչից։

— Առ չերվոնեցդ, գնա։ Գլխիդ դիպչի։—Թե մուրացկանը յե՛րբ եր այդ խոսքերն ասել, Ֆարգլին չիմացավ։

— Սրանից հետո ինձ փող մի ուղարկիր:

Ցարգին դուրս գալիս այս խոսքերն եր լսել: Դողդողալով մտավ տուն: Մի առժամանակ Զարրին նրան վոչինչ չհարցրեց: Հետո թեյ բերեց: Ցարգին միայն մի քանի ումպ կարողացավ խմել: Բաժակը հեռացրեց: Կանգնեց ու սկսեց ման գալ սենյակում:

— Ինչո՞ւ յես տանջում քեզ, միթե՞ այդ բանն օգնելու յե քեզ:—Յեվ հետո, ամուսնուն խոսեցնելու նպատակով Զարրին հարցրեց.

— Հա, ի՞նչ յեղավ:

— Ի՞նչ պիտի լինի... վոչի՛նչ: Անհնար է նրա հետ հաշտվել:— Մի քանի րոպե սենյակի մեջտեղում կանգնած մնաց: Նրա ճակատն ուղղահայաց կերպով յերկուսի բաժանող գիծը սեղմվեց: Ամփոփվելուց հետո նա իր կնոջը դառնալով, խոհուն ձայնով շարունակեց.

— Չպիտի հաշտվի: Յես այդ գիտեյի: Յե՞րբ է յեղել, վոր հինն ու նորը իրարու հետ հաշտվեն: Յերբ նա ինձ եր նայում, այն ժամանակ պետք է տեսնեյիր նրան: Միայն ինձնից չե վոր զզվում է նա: Մենակ յես չեմ նրա թշնամին: Այդ յես այսոր իմացա. նա բոլորին ել թշնամի յե և բոլորին ել թշնամի յե համարում: Զարրի, յես նրա մեջ տեսնում եմ բոլոր նորությունների, այս իշխանության, այս կառուցվածքի հանդեպ զզվանքի և անեծքի մարմնացած արձանը: Նա անցյալի ամբողջ բարկությունն ու զայրույթն իր անձին վրա մարմնացրած մի սև եյակ է: Յեթե նրա ձեռքից գա, ինչե՛ր է անելու, ինչե՛ր:

Գուցե նա այնպես է կարծում, վոր դու կոմունիստ ես: Չե՞ս իմանում:

— Իմանալ ել չեմ ուզում,—վճռական կերպով պատասխանեց Ցարգին: Սակայն, մտաբերելով իր ընտանիքի կորցրած յերջանկությունը, դեմքը կարմրեց և խորունկ ցասումով ասաց.

— Նա բու յե, մեր բոլորի, ամբողջ յերկրի բուն է:

3.

Դուրս յեկան: Ճանապարհին խռովածի նման մի բառ ել չխոսեցին: Մուրացկանների բնակած գետնահարկի առաջ կանգ առան:

— Յես քեզ սպասում եմ այստեղ: Ամենից ներքևը գտնվող սանդուղքից դեպի աջ, ցածր, ջարդված դուռն է: Գոնե մի բա՛ն լիներ:

— Ի՞նչ պիտի լինի,— Զարրին չկարողացավ թաքցնել իր խոր հուզմունքը և նայեց ամուսնուն: Հետո իջավ ցած:

Հենց վոր դուռը բացվեց, յերկարած մազերով մորուսավոր մի գլուխ յերևաց: Զարրին կանգնեց դռան մոտ: Առաջին անգամն եր, վոր նա իր սկեսրայրի աչքերը տեսնում եր: Այդ աչքերը վոչ մի զարմանք չեյին արտահայտում, այլ միայն հառել եյին նրա վրա: Սակայն մուրացկանն առաջին նայվածքից չեր ճանաչել նրան: Հանկարծ այդ փոքր, կարմիր բիբերը մեծանալով, մի անճոռնի ձև ստացան: Այդ մազոտ, մորուսավոր գլուխը դեպի յետ շարժվեց, կարծես զզվել եր:

— Զարրի, աղջիկս...

Զարրին իր ձեռքը բաբախող սրտի վրա դրեց, վորը կարծես կուրծքը պատռելով, ուզում եր դուրս փախչել:

Ծերունի մուրացկանի ամբողջ անցյալը հալչում եր իր թարթիչների արանքում: Այդ խոժոռ նայվածքը րոպեյական մեղմության փոխվեց:

— Հայրիկ, գթա ինձ... Խղճա մեզ. ներիր վորդուդ, խնդրում եմ, հայրիկ, ծառա յեմ լինելու քեզ: Յես քեզ սպասարկելու յեմ, հայրիկ: Արի՛, արի գնանք մեզ մոտ:

Զարրին առաջ անցավ:

Այդ կեղտոտ, խորշոմած ձեռքը համբուրելով սկսեց աղաչել.

— Հայրիկ, հայրիկ,—ծնկի վրա յեկած, մուրացկանի ձեռքերին փաթաթվեց:

Նա աղաչում էր, և սև մորթից ու չոր վոսկորից բաղկացած ձեռքը քսում իր յերեսին։
աղաչել․

Մի քիչ հետո, կարծես մինչ այդ լուռ մնացող ըսկեսրայրից պատասխանի սպասելով, նայեց նրա յերեսին։ Դե ուհայացքը հայացքին չեր հանդիպել, ձեռքը յետ քաշեց։ Ո՞վ եր սա։ Սա այն ծերունին եր, վոր յերկու րոպե առաջ աչքերը լցվել եյին։ Մտածումները կայծակի արագությամբ հեռանում եյին Զարրիի ուղեղից։ Սա այդ ծերունի՞ն եր։ Վոչ, վոչ։ Սա մի սատանա յեր։ Սա բու յեր։ Սա ինչպես անցյալ որը Ֆարզին եր ասում, մի դև եր։

— Ինչո՞ւ յես յեկել։

Զարրին այս խուլ ձայնից սթափվեց և հանդգնեց նայելու մուրացկանի աչքերին․

— Վորպեսզի քեզ մեր տունը տանեմ։

— Ջեմ գա։

— Ինչո՞ւ։ Կգաք,— ավելացրեց Զարրին ծիծաղելով,—կգաք և ձեր կյանքի վերջին որերը հանգիստ կանցկացնեք։

— Դուք հանգի՞ստ եք ապրում։

Զարրին գետին նայեց։ Զգաց, վոր աչքերը լցվում եյին, կոկորդը բռնվում եր։

— Հայրիկ, աղաչում եմ քեզ, հայրիկ… Ախր յես․․—խոսքերը խեղդվեցին հեկեկանքների մեջ։—Հայրիկ…գութ ունեցիր յերեխաներիս վրա։

— Հա, հա, հա, հա…— գետնահարկն այս վրեժխնդիր քրքիջներով եր լցված, յերբ դուռն աղմկով բացվեց։

—Լռի՛ր, ասաց Ֆարզին և կնոջ ձեռքից բռնելով, կանգնեց մուրացկանի առաջ։

— Մի՛ ծիծաղիր։

Մուրացկանը յետ քաշվեց։

— Պիտի ծիծաղեմ,—ասաց և դռնից դուրս յելնող իր տղի և հարսի յետևից մի վերջին սոսկում ազդող քրքիջ ել արձակեց։

Զորս-հինգ որ եր անցել վերջին տեսակցությունից։ Ժամը 12-ի մոտերը, յերբ հազիվ կես ժամ եր յեղել ժողովից վերադառնալը, Ֆարզին նորից մտածմունքների մեջ ընկավ։

— Ուրեմն ինչո՞ւ յե յեկել նա այս քաղաքը։

Այդ որը Ֆարզին կնոջ հետ միասին տուն վերադառնալիս, Բիլլուրն այս հարցն եր տվել։ Աղջկա հարցին պատասխան չտվող հայրը հիմա յեր միայն հասկանում, վոր այդ հարցն ունենալու յեր իր պատասխանը։

Այդ որից հետո Ֆարզին մուրացկանին յերկու անգամ կասկածելի մարդկանց հետ եր տեսել։ Իր համար մութ մնացած մտածումներն ավելացել եյին։

Նա զգում եր հիմա, վոր աղջկա կողմից տրված հարցի արթնացած կասկածը հետզհետե ուժեղանում եր, և չեր զարմանում, վոր մուրացկանի հանդեպ կասկածը քանի գնում, ավելանում եր։

— Նա մի նպատակ ունի՛․․ Այստեղ գալու մեջ մի միտք կա՛,—վերջապես այս վորոշմանն եր հանգել, նույնիսկ իր կասկածը հայտնել եր կնոջը։

— Ի՞նչ միտք կարող եր ունենալ,— հարցրել եր Զարրին։

— Ի՞նչ միտք, ինչո՞ւ չհասկանալ։ Վառել, վոչնչացնել, սպանել, մի բան կոտրել, վերջապես մի բան անել։

Ո՞վ կարող եր մտածել, վոր այս մեծ հիմնարկության դեմ ու դեմը նստած վողորմություն հայցող անխոս մուրացկանը փուչ և անզգա սրտի մեջ սև, թշնամական մի մտածում ուներ։ Ո՞վ կարող եր գուշակել։

Նարիմանն ու Բիլլուրը քնում եյին։ Զարրին իր թերթած «Շարք գառըն»-ը փակելու վրա յեր, յերբ տեսավ վոր իր ամուսինը վեր եր կենում։

— Նորից ո՞ւր։

— Գալիս եմ, դու պառկիր… Այս րոպեյին գալիս եմ։

Ջարրին ամուսնու աչքերին էր նայում:

— Ոչինչ չի կարող լինել, Ջարրի:—Ֆարզին ձեռքը Ջարրիի ուսին դրեց:— Ես որ իմ կասկածը հայտնել եմ քեզ...Այս րոպեյին, այս պահուս: Մի՛ սպասիր, պառկիր, յես կգամ: Եվ ոչինչ չասեց և դուրս յեկավ: Նա, արդեն ուշացած կարծելով, վախենում էր և ինքն իրեն խոսում.

— Հիմա, հենց այս րոպեյիս, ո՞վ է իմանում, գուցե...

Չգիտես ինչու տրամվայ չնստեց: Հետզհետե քայլերն արագացրեց: Շտապում էր: Այնպես էր թվում նրան, որ յուրաքանչյուր քայլը հասանելիք տեղից իրեն հեռացնում էր: Գործի վատ բնույթից յերբեմն ծանոթ փողոցներով անցնելիս էլ նայում էր պատերին, անցած ճանապարհը ստուգելու: Նա զգում էր, որ իր զգացումներն ու մտածումները քամուն բռնված ձյան պես թռչում էին, և արդեն ուշացած կարծելով, ինքն իրեն հանդիմանում էր: Յեթե նա մի բան նկատում էր, ապա ինչո՞ւ յեր այդքան սառնասիրտ վերաբերվում, քանի որ ճիշտ լինելուն հավատացած էր:

Առաջին նայվածքը նրան գետնահարկի առաջ կանգնեցրեց: Փոքրիկ պատուհանն այսօր սովորականին հակառակ, հին շորով էր ծածկված: Շուրջը նայեց: Բակից ներս մտավ: Քարե սանդուղքի յերրորդ աստիճանի վրա դռան առաջ կանգնեց: Դռան արանքից մի աղոտ լույս յերևաց:

Ֆարզին ականջը մոտեցրեց այդ բարյացակամ անցքին, որը կարծես կարևոր բաներ պիտի հայտներ իրեն: Ամբողջ մարմնով ականջ կտրած՝ ներսի խոսակցությունները լսեց: Յեթե նրա փոխարեն մի ուրիշը լիներ, գուցե ոչինչ չլսեր: Սակայն նա կարողացավ որոշել ու լսել ներսի խոսքերը:

— Ա... Հա... հայրն էր խոսում:

— Ես... յես... յես պիտի տամ կրակը... Նորից հայրն էր, նա յեր խոսում. ներսից՝ հոգուց, յերակներից դուրս յեկող ձայնով կրկնում էր.

— Ոչ թե դուք, այլ յես... Ես եմ վառելու իմ մեքենաները, իմ վիշկաները, իմ հարստությունը...

Չճչալու համար Ֆարզին ձեռքով իր կոկորդը բռնեց: Ի՞նչ պետք է աներ հիմա: Առաջին անգամ չուզեց հավատալ իր լսածներին:

— Գուցե այնպես ասաց...— կասկածեց: Սակայն կարճատև յեղավ այս կասկածը. շուտով իմացավ, թե ներսում ինչ էր կատարվում: Մի քանի ստվեր դեպի դուռը շարժվեցին:

— Դուք պիտի կանգնեք իմ ցույց տված տեղերը: Ես, յես պետք է կրակ տամ, յես պիտի վառեմ, յես...

Մուրացկանը շատ էր տանջվում, որ այս փառահեղ ցանկությունները չի կարող ճչալ, չի կարող հայտնել բոլորին, իրեն նմաններին:

Յերկար հոգնեցուցիչ մտորումներից հետո վորոշման հանգող տատանվող մարդկանց պես, Ֆարզին փողոց դուրս յեկավ: Մի պատճառ նրան մտածել տվեց. կառքով սրընթաց անցնող մի ընտանիք նրա ուշադրությունն էր գրավել:

— Հայր, մայր և մի յերեխա:

Ձեռքով ճակատը բռնեց:

— Ինչո՞ւ, ինչո՞ւ համար այս բոլորը միայն իրեն էին հանդիպում:

Ուրեմն նա տասն և հինգ րոպեյից հետո իր ձեռքով հանձնելու յեր իր հորը:

Մի պահ մտածեց նրա հետ խոսել, գուցե հարկավոր լինի նրան ուղղել: Բայց յերկմտեց:

Չորս-հինգ րոպե տևող այս վարանումը թուլացել էր Ֆարզիի սրտից բարձրացող ջղագրգիռ «վո՛չ, վո՛չ» աղաղակներով:

— Ոչ, էլ բավական է: Նրան կարգի բերել հնարավոր չէ: Առաջին հանդիպած միլիցիոներին ինչ որ մի բան փսփսաց:

— Շո՛ւտ, շո՛ւտ, քի՛չ ժամանակ է մնացել, շո՛ւտ:

Առաջվա տեղը վերադառնալիս, դռան արանքն արդեն բռնված էր: Այժմ ոչ մի ձայն: Իրեն հատուկ ու-

չադրությամբ նկատեց, վոր մի ձեռք դիպավ դռանը: Հիշեց, վոր իր մոտ մի փոքր դանակ ել չկար: Սակայն ճար չկար: Արագ շարժումով կիսով բացված դռնից ներս նետվեց: Կրթնեց դռանը: Առաջին գործը հետ քաշվող մարդկանց աչքի անցնելը յեղավ: Դեղին մուրացկանը չկար. այդտեղ հոր յետևը բավականին հեռու կանգնած խոշոր աչքերով, հորը նմանող մի քանի հաստամարմին մարդիկ տեսավ: Հետո չուրջը նայեց: Նրա նպատակն եր մի կերպ դանդաղեցնել այդ սրիկաների դուրս գալը:

— Հեռացիր դռնից, մենք ուզում ենք դուրս գնալ:

Խոսողը մուրացկանն եր:

Ցարգին չխոսեց: Մուրացկանը մի քանի քայլ առաջացավ:

— Քեզ ասում եմ յետ քաշվիր:

Այս անգամ մուրացկանն իր բոլոր զայրույթն աչքերի մեջ հավաքած, իր տղին նայեց:

— Յետ չեմ քաշվելու,— ասաց Ցարգին և իր ձայնը մեղմացրեց իմաստալից կերպով:

— Դուրս չեք գնա,—ավելացրեց նա, մոտը նկատած գավազանը վերցրեց և «չեմ թողնի» ասելով, բարձրացրեց իր ձայնը: Այնպիսի դիրքով կանգնեց, կարծես թե պատրաստ եր պաշտպանվել իրեն հասնող հարվածներից:

—Մի մոտենա, հայր, չեմ թողնելու...Դուրս չպիտի գաք:— Հազիվ թե այդ խոսքն ասել եր, կրծքի վրա մի ծանր հարված իջավ:,

— Յետ չե՞ս քաշվելու:

Ցարգին «վոչ» ասաց և իր թևի տակ մտնել ուզող հորը բղավեց.

— Հեռացիր, հայրասպան մի անիր ինձ:

— Յեթե չես ուզում հայրասպան լինել, ուրեմն յես պիտի վորդեսպան լինեմ:

Ցարգին այդ լսելուն պես, տեսավ մուրացկանի դանակ քաշելը: Հանկարծ գավազանը նետեց և փաթթվեց հոր բազուկներին: Ուժը հավաքած այնքան

սեղմեց նրա թևերը, վոր դանակը վայր ընկավ: Հետո սկսեց մենամարտել:

Ցարգին աշխատում եր դռնից չհեռանալ, և ձեռքով, բազուկներով, վոտքերով դիմադրում եր փայտի և բռունցքի հարվածներին: Նա գավազանը կորցրել և միանգամայն անպաշտպան եր մնացել: Դրա համար ել չկարողացավ յերկար դիմադրել: Վերջապես կարողացան նրան հեռացնել դռնից:

— Գնացեք, գնացեք, մի ուշանաք... Ասածներս կատարեցեք:

Մուրացկանն աչքով նշան արաց իր ընկերներին: Ձեռքից փախչել ուզող իր տղի վրա հարձակվեց: Մուրացկանը Ցարգիի կարծածին չափ ել թույլ չեր: Նա իր եյությամբ, ատամներով ու յեղունգներով հարձակվում եր Ցարգիի վրա: Աշխատում եր վայր ընկած դանակը մի կերպ ձեռք գցել: Ցարգին զգաց այդ: Ել մոռացավ, թե ում հետ եր կռվում:

Հիմի նա կարծում եր, թե հին և ուժեղ մի թշնամու հետ եր պայքարում: Աշխատում եր հոր ձեռքից ազատվել և դուրս գնացողներին հետևել:

Վերջապես նա համոզվեց, վոր այդ հնարավոր չե և իր հորը կոկորդը յերկու ձեռքերի մեջ առավ:

. . . .

— Դե մեռի՛ր...

Հենց վոր այդ ասելով, ուզում եր դուրս գալ, դուռը բացվեց և մի քանի միլիցիոներ ներս մտան: Ցարգին խենթի պես մոտեցավ նրանց:

— Գնացեք ձերբակալեցեք, նրանց ել ձերբակալեցեք, նրանք գնում են վառելու:

— Նրանք ձերբակալվեցին:

— Դեհ, ինձ ել ձերբակալեցեք հիմա:— Ցարգին կարծես մի ծանր բեռ սրտի վրայից վերցրած,—գնանք, ասաց և ընկավ միլիցիոներների առաջ:

ԱԲՈՒԼ ՀԱՍԱՆ

Ս Ո Ֆ Ի *)

1.

Դիտմամբ մի կողմ քաշված, բակի մի անկյունում, ծառի տակ նստել, ամփոփվել եր ինքն իր մեջ: Վոչ լսում եր շրջապատի արձագանքող զուռնայի ձայնը, վոչ ել բակի չորս կողմը շարքով նստողների ծափահարություններն եր տեսնում:

Նրա ականջներում մի ձայն եր հնչում.

— Դու մեծ յեղբայր եյիր, ինչո՞ւ քեզ չամուսնացրին, դու ինչո՞ւ չամուսնացար,—ասելով, հարց եր տալիս ինքն իրեն, իսկ խորասուզված աչքերն ամեն տեղ իր հպարտ նայվածքով, զվարթ դիմագծով յեղբորն եր տեսնում:

Հանկարծ մի բառ հնչեց օդի մեջ, ալիքների նման առաջացավ մինչև ականջները և անցավ սրտին:

— Սոֆի:

Գլուխը վեր բարձրացրեց. մի քիչ հեռու հասարակության մեջ մեկը վոտքի կանգնած, նրան եր կանչում:

— Սոֆի՛, ա՛յ Սոֆի:

Նրան իրական կյանքից հեռու նետող և խաբող այս «սոֆի» բառը, այս հավատացյալի մակդիրը մի ժամանակ նրա տրամադրությունը բարձացնում և մեծ ուրախություն եր պատճառում, մինչդեռ այժմ այդ բառը չլսելու համար ամեն տեղ ականջներն եր փակում: Այդ բառը ամաչեցնում, ստորացնում եր նրան:

Այս դյութիչ մակդիրը նույնիսկ այնքան եր ազդել նրա վրա ու այնպիսի դրության մեջ եր դցել նրան, վոր նա մի ժամանակ նույնիսկ չեր ցանկանում հիշել իր անվան Ալրասեթ լինելը:

*) Իսլամներն այս մակդիրն են տալիս այն մարդուն, վորը միշտ աղոթելով և զբաղվում. Ծ. Թ.

— Սոֆի՛:

Այս ձայնը ավելի մոտիկից լսվեց: Նրան այստեղ ել հանգիստ չեն թողնում:

Ծալված թևերը բաց արեց: Վոտքի վրա կանգնած իրեն կանչող մարդուն ձեռքով մերժման նշան անելով, ակնարկը գետին խոնարհեց:

«Սոֆի» բառը նրա մտքում իր գլխին յեկած յերևակայության այնպիսի շղթաներ վերհիշեց, վոր դրանից վոչ մի կերպ չկարողացավ ազատվել:

2.

Տասը տարեկանից նա սկսել եր աղոթել: Ամեն առավոտ լուսածագից առաջ քնից վեր եր կենում և իրենց բակում անմիտ մրմունջներով լվացվում եր: Իր հորեղբոր նման սանդուղքներից վեր բարձրանալով, անկողնի մոտ իր առաջին ծոմապահության ժամանակ մորից նվեր ստացած գորգը գետին փռելով, առավոտյան նամազն եր անում:

Սոֆին անհամբերությամբ ծոմապահության ամսին եր սպասում: Սոված ու ծարավ անցկացրած այդ շոգ, յերկար օրերն այնքան դուր եյին գալիս նրան, վոր յերեկոյան մոլլայի աղոթքին եր սպասում և նոր միայն նստում բազմատեսակ կերակուրներով լիքը սեղանին: Ծոմ չպահող յեղբայրների հենց աչքի առաջ, իսկ հորեղբայրը ուրիշ մեծահասակ մարդկանց հետ եր սեղան նստում:

Նամազից հետո՝ կուշտ փորով՝ մինչև քնելը բարձր ձայնով Ղուրան եր կարդում, և դրանով հարկադրում եր դրացի կանանց «մաշալլահ» (աստված պահի) ասել, իսկ տղա չունեցող և կամ անշնորհք տղա ունեցող ծնողների նախանձն եր շարժում:

Նրա համար ցերեկներն ել վատ չեյին անցնում. կեսօրվա ժամանակները հորեղբայրը տախտակի վրա դասավորված կտորեղենների վրա քնելիս, Սոֆին խանութի առաջ լվացվում եր*) և հետո զարդարված կողերով

*) Իսլամի համար պարտադիր և օրական հինգ անգամ լվացվել ու աղոթել:

Ղուրանը բաց անելով, գրքի վերջին թերթերը կարդում և անգիր էր անում։ Հորեղբայրը զարթնելիս Ղուրանը թևի տակ առած՝ հպարտ իր հոգնածությամբ և սովածությամբ, մզկիթ էր գնում։

Խանութների առջևից անցնելիս, ականջները լարում էր «Սոֆի» բառը լսելու։ Նա այնքան էր սիրում այս բառը, վոր իր անունը հարցնողներին ուզում էր «Սոֆի» պատասխանել։

20 տարեկան հասակում իր հասակակից ընկերներից հեռու յեր փախչում և մոլլաներին, կրոնական ուսանողներին, դերվիշներին էր մոտենում և նրանց հետ տեսնըվում։

Միևնույն ժամանակ նա սկսել էր կանանցից էլ հեռու փախչել։ Յերբ տեսնում էր, վոր փողոցի մյուս ծայրից մի կին էր գալիս, իսկույն ճանապարհը շեղում էր և կամ մինչև կնոջ անցնելը մի անկյունում կծկված մնում։ Տանն իր մոր կամ քրոջ մոտ յերկար չէր նստում, իսկ կանանց մասին վոր խոսք էր լինում, գլուխն առնում փախչում էր։

Նա 25 տարեկան էր, յերբ Մաշադից վերադարձավ։ Հենց վոր հայրենիք վոտք կոխեց, լսեց, վոր ուզում են իրեն ամուսնացնել։

Այս լուրը տարածվեց ամբողջ քաղաքում։

— «Սոֆին» ամուսնանում է. «Սոֆին» զարթնել է...—խոսքերը թեյարաններում որվա խոսակցության նյութ էին դարձել։ Սոֆիի համար այս դրությունը շատ ավելի վատ էր, քան մահը։ Ուզեց իսկույն իր ամենամոտիկ մարդկանցից մեկին ուղարկել մոր մոտ, և սակայն նա իրեն մոտիկ մարդ չուներ... Հանկարծ հիշեց մաշադի Ղարիբին, վորը յերկու անգամ Մեշեդ էր գնացել, և վորը մի աչքից կույր՝ տները ջուր կրելով և բաղնիքի բողչա տանելով գլուխ էր պահում։ Նրան իր մոր մոտ ուղարկելով, հանձնարարել էր հայտնելու, վոր ինքը յերբեք չպետք է ամուսնանա։

Այս բանից հետո Սոֆիին մատով ցույց տվողներն սկսեցին ավելի շատանալ։

— Սոֆին իսկական սոֆի յե։

Այսքանն էլ բավական էր նրան։ Նստած՝ խալիչայի նկարներին հառած աչքերը շարժեց և սկսեց փոքրիկ յեղբորը փնտրել։

Ջուռնան ղաղարել էր, շուրջը հոգնած մարդկանց խոսակցություն էր։ Հիմա ամեն վոք պիտի վեր կենար ու հարսանիքի տիրոջն «աստված շնորհավոր անի»— ասելով, դուրս գնար։

Մի քիչ հեռու յերեք հոգի կանգնած փսփսում էին և նրան նայելով ծիծաղում։

— Նորից իմ մասին։

Վեր կեցավ, ուզում էր մի լուռ անկյուն քաշվել։ Նա շարունակ իր արժանապատվությունը հեգնող մարդկանցից «աստված շնորհավոր անի, Սոֆի» խոսքը լսել անկարող էր զգում իրեն։

— Սոֆի, աստված շնորհավոր անի։

Խալիչան հավաքում էր, յերբ այս խոսքերը լսեց։ Նայեց։ Նրանք էին։

Յերեք հոգի, յերեքն էլ ծիծաղում էին, յերեքն էլ թունավորում էին նրան։

— Մի որ ձեր յեղբոր համար հարսանիք անենք։

Նրանք ուզում էին նստել, Սոֆին առիթ չտվեց։

— Նամազի ժամանակն անցնում է,—ասաց և գնաց։

3.

Բակում վոչ վոք չտեսավ, միայն մի սենյակից հինա ներկող փոքրիկ յերեխաների, աղջիկների ձայնն էր լսվում։

Հակառակ իր սովորության, առանց ձայնի բակի հյուսիսային կողմի տան յերկրորդ հարկը բարձրացավ։ Հյուրերի հատուկ փակ սենյակի դուռը բաց արեց։ Ներսը մութն էր։ Մի քանի րոպե խարխափելուց հետո, լուցկին գտավ, լամպը վառեց։ Անկողնակալի վրայի

բարձերից մեկը վերցնելով, նետեց սենյակի մեջտեղն ու գետնին փռվեց:

Այսօր նա առանց աշխատելու հոգնել եր: Ամառվա շոգ օրերին յոթը կիլոմետր հեռավորության վրա գտնվող գյուղը ձիով գնալ և դարման լցրած՝ փոտով վերադառնալիս այսքան չեր հոգնում: Այս հոգնածությունը վոչ թե Ալոսեթի մեծ, առողջ ոսկորների և իր մարմնի համեմատական մեծությամբ ուժեղ բազուկների մեջ եր, այլ իր լայն կրծքի մեջ, մանավանդ իր անխորշոմ ճակատի յետևը:

Տկար, վարանոտ սրտից մի ախ քաշեց: Այդ ախով նա ուզում եր իր սրտում յեղած ամեն ինչ դուրս թափել:

Ինչքան բախտավոր կլիներ, յեթե այս րոպեյիս նրան լաց լիներ: Գոնե հանդարտ-հանդարտ իր ցավերը կոլատեր և դրանով մի քիչ կթեթևանար. Սակայն նա սրտակից չուներ: Հիշեց միմյանց հետ բարեկամ, մտերիմ մարդկանց, և սակայն նա վոչ բարեկամ ուներ, վոչ ել թշնամի: Նա յերեսունհինգ տարվա ցուր անցած կյանքի վրա ծույլ-ծույլ պառկող մի ծերունի յեր:

Ինքն ել չիմացավ թե ինչու դեպի լուսամուտը նայեց: Այնտեղ կարծես Ղարիբի ստվերը նկատեց: Ղարիբը ներս նայելով, Ալոսեթին տեսավ և դերվիշի նման առանց բարևի, դռնից ներս մտավ:

— Աստծո բարի յերեկո լինի:

— Բարի լինի:

— Հարգելի Սոֆի, ինչո՞ւ յեք այդքան շուտ վերադարձել հարսանիքից:

— Այ Մաշադի, գլուխս սաստիկ ցավեց, չկարողացա դիմանալ:

— Չե, աղա, ինչ վոր ել լիներ, պետք ե դիմանայիր: Ձեր յեղբայրն ե, ձեր թանկագին յեղբայրը: Վոտկի աղա յե, սաղ քաղաքում պատիվ ունի:

Նրանք ծանոթ եյին, բայց հինգ-տասը տարի յե, վոր Ալոսեթն այսօր միայն սկսեց ուշադրությամբ դիտել Ղարիբին: Նա իր հնամաշ հագուստով, պատառոտված փափախով, ճպռոտ աչքերով և ծուռ բերանով

ինչքա՜ն զզվելի յեր: Մանավանդ ծուռ բերնից դուրս յեկող խոսքերն իրեն այնքան եյին ցավ պատճառում, վոր Ղարիբից յերեսը շուռ տվեց: Նրա ստվերն ընկել եր պատի վրա: Այդ տձև ստվերը շուռ-շուռ շարժվում եր, իրեն հատուկ ձայնով իր նպատակների մասին եր խոսում: Վոտքով Քերբալա այցելել, հետո Հաջ գնալ... Վերջապես մաշադի Ղարիբն առանց քնելու զառանցում եր:

Ալոսեթը ներքնապես դառնորեն ծիծաղեց և հաստ շրթունքներով՝

— Ապուշներ,—ասելով, մոլտաց:

— Սոֆի աղա, իրոք վոր անհանգիստ եք, յես ձեր կողմից ներկայացուցիչ կլինեմ: Խո՞սք ունեք ասելու:

Ալոսեթը ժխտական պատասխան տվեց: Ղարիբը դուրս յելավ: Իսկ նա վոտքի յելնելով, լամպի լույսը բարձրացրեց և սև վարագույրով ծածկված դարակին մոտեցավ... Ցերեք քառորդ արշին յերկարությամբ և կես արշին լայնությամբ այդ դարակը գրքերով լիքն եր: Վերցրեց առաջին պատահած գիրքը, վոր Ղուրանն եր, թերթելով, գրքի սպիտակ եջերի վրա գրված թվականներն աչքի անցկացրեց:

1860 թվականը—Շամախիի յերկրաշարժը... Սրանք հոր արձանագրած թվականներն եյին: Հետո 1917 թվականը: Նիկոլայի գահընկեց լինելը, 1918 թ. հայ-թրքական ընդհարումները, Շամախիի հրդեհը, դրանից հետո տաճիկների գալը և մուսավաթական իշխանությունը, և վերջապես «բոլշևիկների հաղթական մուտքը» նախադասություններն աչքովը դիպան: Սրտում առաջացած զզվանքի զգացումն արտահայտող մի բառ չկարողացավ գտնել: Միայն թաքուն մի զայրույթով անցավ այդ եջերի վրայից: Սկսեց շտապ-շտապ թերթատել: Ել այդ եջերից վոչ թե մի ժամանակ իր հավատացած արքայության հոտը,—այլ ժանգոտած մի կյանքի բարկ հոտն եր գալիս: Գրքի եջերում զանազան տեսակի ծաղիկներ, յերբեմն ել ո՛վ գիտի քանի տարիների չորացած կարմիր վարդի տերևներ եյին աչքի ընկնում:

Առանց համբուրելու, Ղուրանը ցած դրեց։ Այս անգամ զարակի ճիշտ մեջտեղից մի գիրք վերցրեց։ Պատահական կերպով բաց արած էջում աչքին ընկավ «Աբել և Կայեն» վերնագիրը։

Բոլորովին տակից մի գիրք էլ վերցրեց՝ Մուսիս բեթի Քերրայա, հետո՝ Գումրո, Շարիյեթյուլ իսլամ։ Վերջապես Գյուլիստանի առաջին հատորը ձեռքն անցավ։ Բաղդ փորձողի նման մի առժամանակ մտածելուց հետո, թերթեց և հանդիպած հետևյալ տողերը կարդաց։

«Աբր ակար աբ զինաեկի բարաա
Հարկիզ ազ չախի–բիտ բար նա խուրի»։

— Աստված հոգիդ լուսավորի, այ Սաադի,—ասաց ու գիրքը տեղը դրեց։ Լամպի լույսը իջեցնելուց հետո նորից առաջվա տեղը պառկեց և սակայն հանգստանալ չէր կարողանում ու չարունակ շուռ ու մուռ էր գալիս։ Աչքերը նորից սկսում էին աներևույթ բաներ տեսնել, իսկ ականջներն առաջվա լսած խոսքերն էին լսում։

— Վոսկու նման յեղբայր է, վոսկու նման մարդ է. ամբողջ շրջանում նա հայտնի մարդ է։

Մի անգամ լսած այս խոսքերը հիմա կարծես բոլոր իրերի բերնով կրկնվում էին։ Տակը փռված գորգը, պատից կախված հայելիները, սրբիչները, վարագույրները, զարակին շարված կանաչ, կապույտ, կարմիր ջրի բաժակները, թեյնիկները, ասես բոլորն էլ այս նախադասությունն էին կրկնում.

— Վոսկու պես մարդ, վոսկու պես յեղբայր, ամբողջ շրջանում հայտնի մարդ է։

— Ինչո՞ւ նա էլ չէր կարող իր յեղբոր նման լինել։ Մի՞թե ժամանակն անցել է։

— Չե, չես կարող լինել։

— Ինչո՞ւ համար։

Այս հարցը տալիս էր ինքն իրեն, և ակամայից հինգ–տասը րոպե առաջ կարդացած տողերը վերհիշում.

«Աբր ակար աբ զինաեկի բարաա

Հարկիզ ազ չախի–բիտ բար նա խուրի»։

Հետո իր աշխատասեր փոքրիկ յեղբայրն էր գալիս աչքի առաջ։

Իրոք նա մի ջեյրանի նման չէ՞ր։

Յեղբայրը մի մաշկակար էր։ Մի՞թե ինքը չէր կարող մի արհեստ սովորել և իր յեղբոր նման լինել։

— Չե, չես կարող լինել։—Վորտեղի՞ց էր այս ձայնը կրկնվում։

Այս «չե» ու «չե» գետնի տակի չար վոգիներից, յերկնքի հրեշտակների՞ց, թե՞ ուղեղի մեջ իրեն թշնամի մի բանից էր լսվում, վոր չե, չե ասելով, նրան արգելում, ձեռքը–վոտքը կաշկանդում էր։ Քանի քանի անգամներ նա հիմարի նման լսում էր վորպես թե աստվածային հայտնությունից յեկած այս խոսքերը։ Առաջին անգամ այդ ձայնը «այո», «այո» յեր հնչում։ Հետո գործը փոխվեց. հիմա այդ ձայնը «վոչ» է ասում։ Առաջինն ամուսնության հարցի ժամանակ էր, յերկրորդն էլ այսօր։

Վոչ, այդ ձայնն այլևս չպետք է լսեր։ Բավական էր, ինչքան խաբվեց, ինքն էլ գլուխը քարին պիտի տար, աշխատեր ու մարդ դառնար։ Նա ումի՞ց էր պակաս։

— Չե՛, չե՛ս կարող լինել։

— Ինչո՞ւ չեմ կարող լինել, կաշխատեմ ու կճգնեմ,—այս մտածման մեջ դեմ առավ իրականության։

Ինչպե՞ս պիտի աշխատեր, վո՞նց պիտի սկսեր։

Նա քսան տարի յե, ինչ իր կյանքն իր նման մոլեռանդ հորեղբոր խանութում զառանցքների մեջ, մզկիթների անկյուններում, Մեշեդում, Քարբալայում անցկացրած մի դժբաղդ էր, իր գիտցածները սահմանափակվում էին Ղուրան կարդալու, աղոթք գրելու, նամազ անելու մեջ։ Իսկ յերկրում նման ձրիակերներ հետզհետե իրենց գիրքերից ցած էին գլորվում։ Այսօր ամեն վոք՝ մեծ ու փոքր, գիտուն թե տգետ, այդպիսիներին վատ աչքով էր նայում։

Գոնե առևտուր սովորած լիներ—թեև այսօր անպտուղ:

Հիմա նրան մի միջոց էր մնում—դուրս գալ այս աշխատավորական յերկրից, այս ժողովրդից, զարգացող այս հասարակությունից հեռանալ և ուրիշ յերկիր փախչել:

Դուռը բացվեց, հերարձակ մազերով յերկու փոքրիկ աղջիկներ ինչ վոր մի բան բերինու աղմուկով դուրս յելան:

Սոֆին պառկած տեղից ձայն տվեց և սակայն լսող չեղավ:

— Շան վորդի փոքրիկներ. դուռն էլ բաց թողեցին ու գնացին,— փնթփնթալով վոտքի կանգնեց: Դուռը հասնելով, ներքնահարկի բաց լուսամուտից հինայի հավաքույթը տեսավ: Բոլոր բարեկամ կանայք, աղջիկներն այդտեղ եյին: Մի քանի կանայք շրջում եյին: Նրանց մեջ ճանաչեց իր քույր Զեյնաբին: Նա, իր գեղեցիկ մարմնի վրա ձգված հյուսվածքներով, սոթթված բազուկներով դես ու դեն էր վազում: Յերբ դեմքը դեպի լույսն էր դարձնում, սև մազերի միջից, սպիտակ դեմքի վրա աչքերն եյին յերևում: Ալոսեթը ձախ թևի վրա կրթնած կանգնել էր դռան առաջ: Հիմա իր քույրն էր միտքն ընկել: Այս շրջանում վոչ վոք նրան այնքան չեր հարգում ու սիրում, ինչքան Զեյնաբը: Զեյնաբը պատշգամբ բարձրացավ, ինքն էլ ակամայից դուրս ցատկեց: Հեռավորությունը շատ քիչ էր, այնպես վոր յեթե ձայն տար, կլսեր:

— Զեյյ... վերջը չեկավ:

Ինչո՞ւ յեր ձայն տալիս: Իր տարիքի մարդն այնտեղ գրավված քրոջը կանչելով ի՞նչ պետք է ասեր նրան:

Յետ վերադարձավ: Ներս մտնելիս Զեյնաբն էլ դուռը փակել անհայտացել էր: Սոֆիի համար է՛լ հանգստություն չկար:

— Քավ լիցի: Անիծյալ լինես դու, կույր սատանա: Քրոջ հանդեպ տածած սերն այնքան սաստկացավ,

վոր նրա սիրելու գորովագութ ձայնը, նրա փափուկ սրտի բաբախյունն անգամ կարծես սկսեց լսել:

Վաղուց էր, ինչ Ալոսեթը Զեյնաբի վրա նայում էր վորպես աստծո կողմից իրեն նվիրված շնորհքի: Բակում նրան հասկացողը, նրան մխիթարողը, նրան հոգատանողը, նրա համար կերակուր պատրաստողը և հագուստները լվացողը միայն Զեյնաբն էր: Նույնիսկ հակառակ իր Քերբալա մնալու սաստիկ ցանկության, հայրենիք էր վերադարձել միմիայն Զեյնաբի սիրույն: Այդպես էր յերդվում ինքը և Ղարիբին էլ վկա բերում:

Վերջին տարիները Զեյնաբը թեթև տիֆով հիվանդացել էր և Ալոսեթն էր, վոր նրա առողջացման համար այնքան զոհողություններ էր արել...

Հանկարծ քրոջ սնդուսե շրջազգեստի շրշյունը լսեց և սակայն մի անբացատրելի զգացում արգելք հանդիսացավ նրան նույնիսկ տեղից շարժվելու: Աչքերը փակեց, սկսեց անհամբերությամբ սպասել:

— Սոֆի յեղբայր:

— Ո՛ֆ... նորից Սոֆի: Գոնե այդ խոսքը Զեյնաբից չլսեր: Քրոջ ձեռքը զգաց իր ճակատին: Աչքերը բաց արեց, Զեյնաբը մարմնացած վողորմության արձանի նման կանգնել էր իր գլխավերև:

— Նստիր,—ասաց:

Թույլ տնքոցով դուրս յեկող այդ ձայնը Զեյնաբի համար բավական էր:

— Ի՞նչ կա, չլինի՞ հիվանդ ես, գլուխդ վեր բարձրացրու:

Նա, աչքերը փակ, լսում էր:

— Վոչ, Զեյնաբ, այսպես հանգիստ է: Հա, անհանգիստ եմ:

Զեյնաբն աջ բազուկով կրթնեց բարձի վրա: Գլուխը ձեռքի մեջ առնելով, սկսեց ձախ ձեռքով իր յեղբոր գիրուկ ճակատը շոյել:

— Չլինի՞ գլուխդ է ցավում:

— Այո:

Ալոսեթն աչքերը բաց արաց: Վրան ծռած այդ բաց գլխից բուրող անուշ հոտը մինչև թոքերը ներս քաշեց: Մի անծանոթ անձի բաղդին ժպտող գեղեցիկ քրոջ աչքերի մեջ մի տեսակ կարեկցություն նշմարեց, վորը մինչև այդ ժամանակ չէր նկատել: Այս գորովալից աչքերը սպիտակ և գեղեցիկ դիմագծի վրա այնքան կենդանի նայվածքով էին փայլում վոր...Նրա բերնին մոտիկ յեղող այդ աչքերը, յեթե մեղք չլիներ, նա այնպես կհամբուրեր...

Ուշադրությամբ քրոջը նայեց և նրա բաց օձիքից վզի սաթի թելի թողած բարակ գիծն անգամ նկատեց: Պառկած տեղից շարժվեց: Զեյնաբի խիտ մազերը մերթ ընդ մերթ ծածկում էին նրա բաց վիզը: Նրա կրծքի բոլոր ծանրությունն ու փափկությունը զգաց իր կրծքի վրա:

Զեյնաբն էլ շարժվեց և այդպիսով ավելի մոտեցան իրարու:

Յերիտասարդ քույրն առաջին անգամ չէր տեսնում այս տարօրինակությունները, յերկարատև տխուր նայվածքը, և հիվանդության էր վերագրում:

Ալոսեթը մի առժամանակ փակեց իր աչքերը: Սիրտ ճաքեցնող բաներ էր զգում, ինչ անելը չէր իմանում: Իր ճակատը շոյող քրոջ ձեռները բռնեց ու.

— Զեյնա՛բ բաջի:

— Ի՞նչ կա. յեղբորդ հարսանիքն է, ամեն մարդ խնջույքի մեջ է, դու յեկել պառկել ես: Ճիշտն ասա, ի՞նչ ունես, վո՞րտեղդ է ցավում:

Մինչ Զեյնաբը պատասխան էր սպասում, ընդհատ մի ախ լսեց: Ուշադրությամբ նայեց յեղբոր յերեսին, նրա փակ աչքերի թարթիչները թրջվել էին:

—Ի՞նչ է, լաց ե՞ս լինում:

Ալոսեթը աչքերը բաց արեց: Փոթորկված բիբերի միջից Զեյնաբին այնքան տխուր, այնքան գեղեցիկ տեսավ, վոր...

— «Աման, աստված»,— ասելով, աջ ձեռքը յերկարացրեց և դրեց քրոջ գլխի վրա:

— Յեղբայր, ի՞նչ է յեղել, ինչո՞ւ յես լաց լինում:

Այդքանն էլ բավական էր. այդ չորացած, զսպված աչքերը լացացնելու և կրակոտ սիրտը փափկացնելու համար այս էլ էր բավական: Հիմա նա մի յերեխայի, թույլ մի արարածի նման լաց էր լինում:

— Սոֆի, Սոֆի յեղբայր:

Եվ այս խոսքերը Ալոսեթին չվշտացրին, վորովհետև դրանք նրա սրտի միակ մխիթարանքը յեղող քրոջ լացող, դողդոջուն ձայնից էին լսվում:

— Յեղբայր, լաց մի լինիր, ասելով, Զեյնաբն իր շրթունքները նրա ճակատին մոտեցրեց և յերեխայի հեկեկանքով շարժվող գլուխը սեղմեց իր այրված սրտի վրա: Շունչը խուչափողում խեղդվելով, աչքի բիբերի մեջ ամառնային անձրևի վերածվեց: Հանդարտ— հանդարտ հոսող այս արտասուքները կրծքի վրա լացող, սրտի վրա վառվող մի ցավ սփոփելու համար էր:

Նա հիմա լաց էր լինում վոչ թե 35 տարեկան մի տղամարդու, այլ փոքր, անկարող, թույլ և դժբաղդ դացած յեղբոր վրա:

— Փառք քեզ, ով աստված, ինչո՞ւ չես դթա քեզ նվիրված ծառայիդ վրա: Ա՞յս է քո ճանապարհին ամեն բանից զրկվող մարդու վախճանը:

***

Յերկու որ էր, ինչ Սոֆիից վոչ մի տեղեկություն չկար: Մարդիկ ուղարկվեցին շրջակա գյուղերը, տեղեկություն տվող չեղավ: Միլիցիայի վարչությանը հայտնեցին, նորից վոչ մի արդյունք:

Վերջապես յերրորդ որը, Սոֆիի գրքերի միջից մի թուղթ գտան: Թղթի վրա մատիտով գրված էր.

«Քնիս մեջ մեծ հորս տեսա, ինձ էր կանչում: գնացի. անշուշտ ինձ չեք սպասի:

Մնամ ձեր աղոթարար՝ ՍՈՖԻ»

Ռ. ՌԻՋԱ

ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ

Վազում է կյանքը, արշավում է, հրում,
լուսատու արևի յեռանից ընկած է,
ով արյուն ունի, ուսերին գլուխ՝
թող տեսնի, բաժանում է աշխարհը՝ կապիտալը:

Են կողմ—արնախում ու դահիճ գահակալներ,
էս կողմ—միասնություն, ազատություն ու սեր,
են կողմ—զրահանավեր, ռումբեր, ականներ,
էս կողմ—ապահովություն, յեղբայրություն—տեսե՛ք

Են կողմ—ավերներ, մզկիթներ վորպես բու,
խրճիթներ խարխուլ, շղթաներ ժանգոտ,
ու ժամեր, տաճարներ, գմբեթներ փոշոտ,
մտած անզարթնելի քուն:

Են կողմ—տներ այրված, հիշատակ անցյալի,
էս կողմ—Նոր Բաքվի կառուցում, զավոդնե՛ր,
ավերներ մնացած ժանտ մուսաֆաթից,—
էս կողմ—ֆաբրիկներ ձգվում են դեպի վեր...

Ու տեսնում եմ ահա յերկու ծեր, մի տերտեր
գնում են դեպի ժամ, իսկ այնտեղ կռացած,
դևամորուս մուսուլմանն է գլուխը թեքել,
անծանոթ ալլահին ծնրադիր, յերկյուղած:

Գերաններ են նրանք և՛ փտած, և՛ խարխուլ,
ու նրանց դեմքերին մահացող կյանքն է,
բայց ահա նրանց դեմ ցնծում են ու յերգում
խանդավառ պիոներներ, պիոներկաներ:

Կասպից ծովն է խնդում ու փշշում,
ալիքներն են յերգում անդադրում ու խոսում,
լուռ է հին օջախը, անջրդի դաշտերում,
հողվորն է հողը ակոսում:

Աշխատանքն է այդ նորօրյա, ամրահիմ,
այդ բազուկն է շրջում պատմությունը,
արևոտ է մեր օջախը ու տանջված գյուղացին
այժմ անհող—իր հունձը հավաքում է:

Սուլում են սուլիչները, սուլում,
թնդում է նրանց ձայնը յերկրում,
և յես՝ մի վկա այս անհագ օրերում
նոր կյանքի նոր յերգն եմ յերգում...

3188—15

ՁՈՀՐԱԲ ԱԼԻԵՎ

ՄՈԼԼԱ ՀԱՅԴԱՐԻ ԹԱԼԻՍՄԱՆԸ

Մոլլա Հայդարը ձեռքի դեղին, ծոպավոր ու խոշոր հատիկներ ունեցող համրիչը քաշելով պտտում էր մութ բակի այս ու այն կողմն ու, յերբեմն մոտենալով կանանցով լիք մի տան դռանը, հարցնում եր.

— Ինչպե՞ս ե հիվանդի դրությունը:

Իսկ հիվանդի աչքերը հետզհետե մթագնում եյին: Անդղա դրության մեջ, բերանը փրփրակալած, ձեռքերն ու վոտքերը չորացած վիճակում, նա գլուխն ու մարմինը գետնին եր խփում: Հիվանդը տառապում եր ուշագնացությամբ:

Սոնայի հայրը՝ Ներին, յեղբայրը՝ Մեշեդի Ղուլամը, մորաքույր Մելեքը և հորաքույր Մեշեդի Մահին կարծում եյին, վոր նա դիվահարում ե: Բոլոր հարեւան կանայք հավաքվել եյին այնտեղ: Մոտավորապես մի ժամ եր, ինչ հրավիրել եյին Մոլլա Հայդարին, բայց նրա կարդացած աղոթքները վո՛չ մի արդյունք չեյին տվել:

Սոնայի փոքր յեղբայր Ազիզը, վոր նոր եր վերադարձել դպրոցից, տեսնելով քրոջ այդ դրությունը, առաջարկեց, վոր անմիջապես բժիշկ հրավիրեն և հիվանդին փոխադրեն հիվանդանոց: Սակայն նրա խոսքին վոչ վոք կարեւորություն չտվեց: Ընդհակառակը, բոլորն ել նեղանալով նրա վրա, ասացին.

— Ձայնդ կտրիր, հիմար-հիմար մի խոսիր... Սա գլխի կամ աչքի հիվանդություն չե, վոր բժիշկը կարողանա բուժել: Աղոթքի, թալիսմանի բան ե: Բժիշկները վոչինչ չեն հասկանում:

Մեշեդի Մահին ուզեց համոզել Ազիզին: Մոտենալով վերջինիս, ցած ձայնով ասաց.

— Մի՛ վախենա, վորդի, քրոջդ վոչինչ ել չի՛ լինի... Մինչև առավոտ կսթափվի: Նարգիզն ել այդպես յեղավ: Նրան ել Մոլլա Հեյդարը բժշկեց: Սա հիվանդություն չե: Չե՞ս տեսնում, խեղճ աղջիկն ինչպես ե բղավում: Նա դիվահարել ե:

Մեշեդի Մահին վերջացնելով իր խոսքը, առաջարկեց Ազիզին, վոր գնա քնի:

Ազիզը վոչինչ չասաց: Աճապարեց գնալ Սոնայի ամուսին Նուրու մոտ՝ դրությունը նրան հասկացնելու համար:

Նուրին սովորում եր քաղաքային կուսդպրոցում:

Ազիզը տուն վերադառնալիս տեսավ, վոր Մոլլա Հայդարն ու հիվանդի գլխին հավաքված ազգականներն ու յեղբայրները ինչ վոր «լուրջ» աշխատանքի մեջ են: Մոլլա Հայդարը ասում եր Մեշեդի Մահուն.

— Ա՛ռ այս թալիսմանները, մեկը թաղիր դռան յետևը, մեկը դիր հիվանդի բարձի տակ, իսկ այս մեկն ել կապվի մազերով վառիր հիվանդի տակ:

Մահի Խալան անմիջապես բռնեց կապվին և նրա մազերը պոկելով, սպիտակացրեց խեղճ անասունի ձախ կողքը:

Այս բոլորից հետո ել Սոնայի դրությունը վոչնչով չփոխվեց: Նա մի քիչ հետո նորից սկսեց տանջվել, կատաղածի նման գոռալ և չորերը պատառոտել:

Ներկա յեղողները սալավաթ*) եյին կանչում, իմամից ու մարգարեներից օգնություն եյին խնդրում, հույսը դնելով Մոլլա Հայդարի թալիսմանների վրա:

Իսկ Մոլլա Հայդարը հիվանդի շուրջը պտտելով՝ յերկունքով բռնված կնկա նման՝ սեղմել եր բռունցքներն ու ասում եր.

— Ո՛վ անհավատնե՛ր, անիծվածնե՛ր, կորե՛ք այստեղից, թե չե այս րոպեյին ձեզ ել, տունն ել, հիվանդին ել կվառեմ:

Լուրջ րոպեներ եյին: Խավարամիտ կանայքն ու տղամարդիկ քաշվել եյին անկյունում ու կուչ յեկել:

*) Սալավաթ կանչել—բարձրաձայն աղաղակելով աստծուց օգնություն խնդրել: Ծ. Թ.

Արշալույսը դեռ չէր բացվել: Արևելքում նշմարվում էին լուսաբացի առաջին նշանները:

Փողոցում լսվեց ավտոյի ձայնը:

Աղիզը շուտով դուրս վազեց: Նա անհամբեր սպասում էր Նուրու գալուն:

Բակը մտավ «շտապ օգնության» ավտոն և կանգնեց տան դռան առաջ: Նուրին շտապով իջավ ավտոյից և մի սանիտարի հետ մտավ տուն:

Սոնային տարան հիվանդանոց:

Մեշեդի Մահին և Ներին մի քիչ հետևեցին ավտոյին, բայց չկարողանալով հասնել՝ «վա՜յ, բալամ» ասելով, լաց յեղան:

— Ափսո՜ս, խեղճ աղջկան կսպանեն,—ասում էին բոլորն ու ափսոսում:

Յերեք որից հետո Սոնան վողջ-առողջ վերադարձավ տուն:

Նա ազատվել էր այդ հիվանդությունից:

Իսկ Մեշեդի Մահին նորից կրկնում էր՝

— Ի՞նչ, դուք կարծում եք, թե Սոնան բժշկի տված դեղերո՞վն առողջացավ... Նրան առողջացրին Մոլլա Հայդարի արած թալիսմանները...:

ԱՐՏԵԼԻՑ ԴՈՒՐՍ ԵՐ ՅԵԿԵԼ

Արտելի քարտուղար Բալա Ռիզան, ինչպես միշտ, այս անգամ էլ հանդիպելով արտելի անդամ Միրզա Աղային, բարեկամաբար հարցրեց.

— Հը՞, վո՞նց ես, Միրզա Աղա ամի: Քեֆդ լա՞վ է:

Ե՛հ, քեֆ է, է՛լի... լավ չլինի՝ բա ի՞նչ կլինի.—պատասխանեց Միրզա Աղան կոտրած ձայնով:

— Վո՞նց են արտելի գործերը: Այս տարվա բերքից գոհ մնացի՞ր:

— Ամենևին վոչ:

— Վո՞նց թե ամենևին:

— Ճիշտն ասած, այս տարի բան դուրս չեկավ:

— Այսինքն վո՞նց թե բան դուրս չեկավ: Հապա այդքան կարտոֆիլը, պամիդորը, ճակնդեղն ու կաղամբը բան չե՞ն:

— Բոլորն էլ անպետք բաներ էին: Ճիշտն ասած ուզում եմ դուրս գալ արտելից, նրա համար, վոր այդքան բերքից յես կարողացա գնել մի ձի, յերկու վոչխար և մի հատ էլ փոքրիկ գութան: Մնացածն էլ ձմեռվա ուտելիքին և մի ձեռք հագուստի հազիվ թե բավարարեց: Դատարկ բաներ էին, դատարկ...

— Դե՛ լա՛վ, գիժ-գիժ մի խոսիր: Դեռ այս տարի մեր հողերը պիտի ավելացնենք, ձիու փոխարեն մոտոռի միջոցով պիտի ջրենք: Այն ժամանակ կտեսնես, թե ինչքա՛ն բերք կունենանք:

— Չէ՛, սիրելիս, գնա էդ խոսքերը կոմունիստներին ասա: Յես հավատում եմ Մոլլա Մեհեմմեդ Քերիմ աղայի խոսքերին: Նա, հաճախ կանչելով ինձ, ասել է, վոր արտելի հողերը զոռով գրավված հողեր են, ուստի և նրանց բերքն էլ անպետք, բարաքյաթ չունեցող բաներ են: Մոլլա Մեհեմմեդ Քերիմ աղան հրավիրել է ինձ այս տարի ընկերանալ Հաջի Նեյբաթ Կուլու նման հավատացյալ, աստվածավախ մի մարդու հետ:

Քարտուղար Բալա Նիզան վորքան էլ խոսեց, համոզել ուզեց Միրզա Աղային, բայց վոչինչ դուրս չեկավ:

Միրզա Աղան հաշիվները մաքրելով, արտելից դուրս յեկավ:

Այդ հանդիպումից յերեք որ առաջ, Հաջի Նեյբաթ-Կուլին Մոլլա Մեհեմմետ Քերիմի տանը հյուր էր գնացել: Գյուղի կուլակներից Նազարը, Բալա Ահմեդը և ուրիշներ էլ գնացել էին նրան տեսության:

Վերջիններիս միջոցով Հաջի Նեյբաթ Կուլու և Միրզա Աղայի միջև այսպիսի մի վորոշում էր կայացել. Միրզա Աղային ինչքան փող հարկավոր լիներ, Հաջի Նեյբաթ Կուլին պետք է տար, սակայն այն պայմանով, վոր Հաջին տված փողերի դիմաց, ռուբլուն մի ռուբլի տոկոսով, յեկած բերքից պետք է վերցներ, իսկ մնացած բերքն էլ յեղբոր պես կես պետք է անեյին:

Միրզա Աղան համաձայնվելով յեղած առաջարկության հետ, վերցրել եր 600 ռուբլի և փոխարեն Հաջի Նեյրեթ Կուլուն տվել եր 1200 ռ. մուրհակ: Ներկա յեղողներից Մոլլա Քերիմն ել, վորպես վկա, ստորագրել եր մուրհակի տակ, իսկ մյուսները միաբերան՝ «Աստված խեր տա: Աստված տա՝ 1200 ռ. մի բան չե» ասելով, քաջալերել եյին Միրզա Աղային:

Միրզա Աղան վերև՝ աստծու գթությունը, իսկ ներքև՝ Հաջի Նեյրեթ Կուլու ձեռքի բարաքյաթին ապավինելով՝ սկսեց սրտանց աշխատել:

Զավից դուրս ուրախ եր և Մոլլա Մեհեմմեդ Քերիմը: Սա ամեն որ գնում եր Միրզա Աղայի տուն, աղոթում նրա յերեխաների համար և հետո, ի միջի այլոց, հասկացնում եր Միրզա Աղային, վոր գալիք բերքից ինքն ել բաժին ունի:

Մի որ ել անակնկալ մի դեպք պատահեց,—ջուր քաշելու ժամանակ, Միրզա Աղայի ձին հանկարծ սկսեց դողալ ու փռվեց գետին:

Միրզա Աղան այլայլված, դրկեց ձիու պարանոցն ու սկսեց նրա աչքերը ճմռել, ականջները քաշել... Բայց ձին արդեն սատկել եր:

Միրզա Աղայի կին Թելլին ու աղջիկը՝ Սառան, մեռել ունեցող մարդկանց նման, գլխներին խփելով՝ լաց եյին լինում:

Այդտեղ եյին հավաքվել նաև մի խումբ փափախավորներ, վորոնք առաջարկում եյին Միրզա Աղային դիմել Սոցապին դրամական ոգնություն խնդրելու: Բայց վորովհետև ձին ապահովագրված չեր, ուստի Միրզա Աղան Սոցապից ոգնություն խնդրելու հույս չուներ:

Խոսողների մեջ եր նաև կուլակ Նազարը, վորն աչքերը չռելով և կոկորդի յերակներն ուռեցնելով, ասում եր.

— Նախ՝ Միրզա Աղային ոգնելը Հաջի Նեյրեթ Կուլու պարտականությունն ե: Յեթե նա չոգնի, վորոշ տոկոսով յես կոգնեմ Միրզա Աղային:

Յերկու որից հետո Միրզա Աղան ձեռքը ծոցում՝

կանգնած եր Հաջի Նեյրեթ Կուլու դռան առաջ: Նա վախվխելով թակում եր դուռը և յերբեմն դես ու դեն եր նայում զարմացած, շվարած:

Բակում խաղում եյին Հաջի Նեյրեթ Կուլու յերկու յերեխաները, վորոնցից մեկը, դռան թակոցի ձայնը լսելուն պես, վազեց հորը լուր տալու:

Հաջին, կարծելով, վոր Միրզա Աղան մի բան բերած կլինի, շտապ դուրս յեկավ բակը և, իրողությունն իմանալով, բարկացած ձայնով ասաց.

— Դուք, գյուղացիներդ, միշտ ել ստախոս, սևերես ու սևսիրտ մարդիկ եք: Ձեզնից քոռ շունը խեր չի տեսնի: Դուք միշտ ձեր ստացածը չտալու համար զանազան պատրվակներ եք փնտռում: Դուք ձրիակերներ եք...

Միրզա Աղան անշարժ կանգնած, թարթում եր աչքերը: Ուզում եր սրտումը կուտակված վրեժն ու ատելությունը թափել Հաջու գլխին, բայց մի կերպ զսպեց իրեն:

Իսկ Հաջին դեռ շարունակում եր հարայ-հրոցը, գազաղել եր:

Միրզա Աղան քոռ-փոշման բակից դուրս յեկավ ու գնաց գյուղ:

Նազարը աղբրի գլխին կանգնած, սպասում եր Միրզա Աղայի ճանապարհին: Սա Միրզա Աղային տեսնելուն պես, ծիծաղեց և, մի քիչ ել առաջ գնալով, ձեռքը նրա ուսին խփեց.

– Յես միշտ գյուղացիների ցավը քաշել եմ, ե՛լի պիտի քաշեմ,—ասաց նա և գրպանից 250 ռ. հանելով, դրեց Միրզա Աղայի բուռը, ասելով.

— Ա՛ռ այս փողն ու քեզ համար ձի գնիր, թող բերքը չփչանա: Ապա ավելացրեց.

— Գիտե՞ս, Միրզա Աղա, յես վատ մարդ չեմ, թող քե՛զ ել խեր լինի, ինձ ել: Միայն թե, բերքի ժամանակ, մի խալվար կարտոֆիլի հետ միասին փողերս ինձ կվերադարձնես:

Միրզա Աղան, հետագայում գալիք դառն փորձանք-

ները կուլ տալով, նայեց Նազարի անամոթ յերեսին: Ճարահատ մնալով, փողերն առավ նրանից և ծանր մըտքերի մեջ խորասուզված, գնաց տուն:

Մյուս որը Միրզա Աղան վերադարձավ քաղաք: Փողոցովն անցնելիս՝ պատահեց Իմամ Կուլուն:

Մեշեդի Իմամ Կուլին, կանաչի բազարում ունեցած խանութը գրավվելու պատճառով, մի ժամանակ դալալություն եր անում: Հիմա ել ձիեր ու կառքեր եր առնում-ծախում: Նա վաղուց եր ճանաչում Միրզա Աղային: Իմանալով, վոր վերջինիս ձի յե հարկավոր, տարավ իր տուն:

— Միրզա Աղա ամի,—ասաց նա կեղծ հարգանք ցույց տալով.—յես քեզ իմ յեղբայր Աղա Բալայից ավելի շատ եմ սիրում: Չեմ ուզում, վոր դալալները (միջնորդները) քեզ խաբեն...

Այսպիսով խաբեց խեղճ գյուղացուն և 250 ռ. ձեռքիցն առնելով, ամենավատ, ծույլ մի ձի տվեց նրան:

Առած նոր ձին ջրի անիվը չեր կարողանում պտտեցնել, միշտ քացի տալով կանգնում եր:

Յերրորդ որը Միրզա Աղան ձին յետ վերադարձրեց: Մեշեդի Իմամ Կուլին, ձեռքերն իրար խփելով, կեղծ ցավակցական ձայնով ասաց.

— Ա՛խ, ափսո՛ս, ափսո՛ս, պետք ե մի որ շուտ յեկած լինեյիր: Փողերը ձեռքիցս հանել եմ, մի նոր ձի յեմ առել:

Հետո մի քիչ մտածելով, ավելացրեց.

— Վնաս չունի: Յեթե 100 ռուբլի յել դրստես տաս, նոր գնածս ձին կտանես:

Միրզա Աղան մնաց ճարահատ: Ծախեց յերկու վոչխարն ու յերեխաների տակի փալասը, փողերը տվեց Իմամ Կուլուն և յերկրորդ նոր ձին առավ, տարավ տուն:

Բայց արդեն բանը բանից անցել եր: Կենսատու արևը, չգիտեմ ինչո՞ւ, Միրզա Աղային թշնամական աչքով եր նայել: Չորացրել եր նրա արտը, վառել եր վարունգի տերևները, կարտոֆիլի և պամիդորի բերքը թողել եր կիսակենդան դրության մեջ:

Այս տարի Միրզա Աղան, քաշած դառն տանջանքներից հետո, հազիվ կարողացել եր ձեռք բերել յերկու խալվար կարտոֆիլ և յերեք խալվար պամիդոր: Սրանք ել Հաջի Նեյբաթն ու Նազարն իրենց մեջ բաժանելուց հետո, 350 ռուբլով գնած ձին ել 80 ռուբլու հաշվով առել, տարել եյին:

Այդքան յերկար տանջանքներից ու զրկանքներից հետո, Միրզա Աղան նոր հասկացավ մոլլաների, առևտրականների, կուլակների ու միջնորդների դեպի գյուղացիները ցույց տված վնասներն ու թշնամությունները, և վերադառնալով արտելը, սկսեց սրտանց աշխատել:

Ի· ՄԻՐԶԱ

ՅԵՐԿՈՒ ԳԻՇԵՐ

Կյանքս անցավ վորպես ջուրը,
վորպես արծիվ հպարտ ու սեգ,
Նա յել ճախրեց մաքուր ոդում
ու սլացավ լեռներն ի վեր...

Յեվ հեռացող իմ այդ կյանքից,
մտքիս հեռվում մի բան մնաց—
աղամանդյա շողերով ջինջ,—
մի պայծառ հուշ, միշտ անմոռաց...

Յեվ կայծկլտող աստղերի պես,
յես տեսնում եմ հիմա արթուն,
յերկու պայծա՛ռ, պայծա՛ռ գիշեր,
իմ հուշերի կանաչ արտում։

I ԳԻՇԵՐ

Դրսում գիշեր ե խավար ու խորունկ,
քամին կատաղած վորպես ձի
սմբակներով իր հողն ե փորում,
իսկ շուրջս, լռություն անծիր...

Վոտքերս դանդաղ առաջանում են,
ուղեղիս մեջ հեքյաթներ դարական,
և մի ձայն ասես կանչում ե,—
առջևս մի չանցած ճանապարհ....

Առջևս՝ վիշկաների բեբերը
հայացքները մեխած գիշերվա լանջին,
նայում են խավարին անտարբեր
և հուսով, ուժով լցնում ինձ...

Վազում եմ, վազում հեվիհեվ,
յերևում ե Սուրախանը դեմից,
կոմսոմոլի վիշկան վորպես արև
բարձրանում ե հեռո՛ւ ծովափից...

Առջևս՝ նրանք են, լարված հարվածային,
առջևս՝ ծրագիրն ե ամսական
և մեքենան հնչում ե ձայնն իր,
և անթիվ մկաններ առնական...

Յեվ մեքենան ասես կարդում ե
պատերին դամած լոզունգները,—
«պլանում ճեղքվածք ունենք,
պլանով կաղում ենք դեռ»...

II ԳԻՇԵՐ

Յեվ քայլում ե կարավանը վոսկեհնչուն,
ու ձգվում են լուսավառվող ճամբաները,
ո՛վ ե արդյոք հեռուներից բարձր կանչում
ու լցնում ե իր գիլ կանչով այս գիշերը...

Ձայնն ասում ե.—«Լսիր դու ինձ, բանվո՛ր ընկեր,
մեր կոլխոզը կարիք ունի մեքենայի,
մեր կոլխոզը այս գյուղերում շատ նոր ե դեռ,
նրան քո հաղթ, ղեկավարող ձեռքը մեկնիր»...

Յեվ այդ ձայնը հեռվից յեկող, մենք լսում ենք,
ու քայլում ենք — դրոշները մեր առաջից,
վոր մեր յերգը կոլխոզային յերթին նետենք,
վոր մեր յերգը կարավանի պես ղողանջի...

. . . .
. . . .

Շեփորի պես բարձրաշառաչ մեր յերգերը,
կնվիրենք կոլխոզական բանակներին
ու նրանց հաղթ արշավը կծափահարենք
ու կկռենք տրակտորներ այդ յերգերից...

Յեվ գարնան պես ուրախացող մեր սրտեր
նրանց վաղվա հաղթանակի համար բացված
կծածանվեն վորպես կարմիր դրոշը մեր:
. . . .
իսկ ձայնը միշտ շփորում է «առի՛ առաջ»...

Մ. ՍՈՒԼԹԱՆ

Ա Ջ Ի Զ

Ազիզն ամեն որ որական ամենապակասը քսան անգամ բերնում ծամծմած խոսքը նորից կրկնեց.

— Դրությունը շատ ծանր է:

Նա հին բանվոր եր: Կյանքի 46 տարիներից 28-ն անց եր կացրել արտադրության մեջ, աշխատել եր նավթահանքերում՝ զանազան պաշտոններ վարելով:

Առանց խորն ուսումնասիրելու վերջերս ծայր տված տնտեսական դժվարությունների հիմնական պատճառները, Ազիզը միշտ գանգատվում եր.

— Չգիտեմ, թե սրանց միտքն ի՞նչ է: Ամեն ինչ առել են իրենց ձեռքերի մեջ: Տված վաթսուն ռուբլի ռոճկի դիմաց մեզնից 90 ռ. գործ են պահանջում:

«Կոմպրեսոր» մեքենան, նեղ տեղից ազատված մարդու նման լիաթոք շնչում եր հանքի օդը, ատմոսֆերներով բեռնավորված՝ ճզմում եր գետնի խորքում գտնվող նավթի գագաթը: Մեքենայի խլացնող ձայնից սարսափում եյին հեռվից նայող մարդիկ:

Սակայն այդ ձայնին սովոր Ազիզն ու նրա ձեռքի տակ լուռ ու մունջ աշխատող ընկերները դեռ շարունակում եյին իրենց խոսակցությունը:

— Դե հիմի արի ու այդ ռոճիկովդ ընտանիք պահի, — ավելացրեց Ազիզը: — Սպասիր, վոր քեզ տալոն տան, դու էլ գնաս կնոջդ ու յերեխաներիդ համար չոր առնես...

Սադըղն Ազիզին լավ եր ճանաչում:

— Ազիզ ամի, — ասաց նա, — պետք է դիմանալ... Թող մի 5-ամյա պլանը կատարենք չորս տարում, հետո կտեսնես, վոր բոլոր դժվարությունները կվերանան, ամեն ինչ էլ կշատանա:

Սատըղի այս խոսքերը Ազիզն ուրիշներից էլ եր լսել:

— «Նոլմա եշշեկիմ, յաղ դելիր, յոնջա բիթեր»*)— ասաց Աղիզը հեգնական ձայնով։—Նիսյա բաղար է, բալա՛մ, դրանով փոր չի կշտանում...

Աղիզի նման հասարակական կյանքից կտրված բանվորների կրած այդ «փորձանքները» Սադըղին շատ լավ հայտնի էյին։ Նա, փոխանակ ջղայնանալու նրա խոսքերից, ընդհակառակը, ծիծաղում էր։ Սադըղի այդ ծիծաղը զայրացրեց Աղիզին, վորոշ կասկած զարթեցնելով նրա սրտում։

— Ինչո՞ւ յես ծիծաղում,—հարցրեց Աղիզը։

— Ինչու յեմ ծիծաղո՞ւմ... Քո տգիտության վրա։ Յեթե դու գրագետ լինեյիր նոր ալֆա-բեյով, կարողանայիր կարդալ որաթերթերը, տեղեկանայիր ամբողջ աշխարհի ներկա քաղաքական դրությանը, անշուշտ քո ուղեղդ կնոջդ ու յերեխաներիդ հագուստի մասին մտածելու փոխարեն, կզբաղվեր ուրիշ խնդիրներով։ Դու այսօրվա մեր մղած պայքարից բէխաբար ես։

Սադըղի այս վերջին խոսքերն Աղիզին շատ վիրավորական թվացին։

— Բալա՛մ,—ասաց նա,—դու դեռ յերեխա յես... Այդ խոսքերից բան դուրս չի գալիս։ Թերթերի դրածներին մտիկ մի՛ արա։

— Իրավունք ունես,—ասաց Սադըղը,—չեմ մեղադրում, վորովհետև անգրագետ ես...

— Յես անգրագետ չե՛մ։

— Քո գիտացածդ այսօրվա գրագիտությունը չէ, հնուց հիշատակ մնացած արաբական ալֆա-բեն է, վորինով դու միայն կարող ես կարդալ Նյֆի-Լեյլայի հեքիաթները**) կամ Մուխթարնաման***) ու Իսկյանդարնաման****)։

*) Մի մեռնիր եզս, գարուն կգա, առվույտ կբուսնի։ (Առած)։

**) Նյֆի-Լեյլայի—«Հազար ու մեկ գիշերների» հեքիաթները։

***) Մուխթարնամա.—Արաբ հերոսներից Մուխթարի մասին գրված պատմությունը։ Ավանդության համաձայն հիշյալ Մուխթարն էր վոր սպանեց Քերբելայում Իմամ Հյուսեյնին սպանող յեզիդուն և այդպիսով վրեժ լուծեց նրանից։

****) Իսկյանդարնամա.—Աղեքսանդր Մակեդոնացու մասին գրված պատմությունը։ Ծանոթ. թարգմանչի

Աղիզն այնքան էլ համառ բնավորության տեր մարդ չէր, բայց, այդուամենայնիվ, չէր էլ ուզում, վոր Սադըղի հետ ունեցած զրույցի ժամանակ հաղթվող դուրս գար։ Իր ձեռքի տակ աշխատող մի յերիտասարդից հաղթվելը նա անպատվություն էր համարում։ Լռեց։ Այժմ, հանքատեղում լսվում էր միայն «Կոմպրեսսոր» մեքենայի ձայնը։ Իսկ Սադըղը մեքենայի մասերն յուղելով էր զբաղված։ Գործը վերջացնելուց հետո, նա նայեց Աղիզին և, վերջինիս թյուր հասկացողությունները չոկելու նպատակով, շարունակեց.

— Այո՛, քո ուղեղը մեր այսօրվա տնտեսական զարգացումը, մեր սոցիալիստական յերկրի վերակառուցումը չի կարող ըմբռնել։ Այսօրվա մեր հարվածայնության հիմնական նպատակները չես հասկանում։ Հազարներով կառուցվող բանվորական տները, վորոնց մեջ դու էլ ես ապրում, ամեն տարի գնացածդ հանգստյան տները չես տեսնում։ Դու չես հասկանում, Աղիզ, վոր մեր յերկրի միլիոնավոր բանվորությունն ու աշխատավոր մասսան գնում են դեպի լույսը (վորոնցից մեկն էլ դու յես), իսկ դու ամփոփված, մեկուսացած կյանք վարելով, միմիայն աշխատում ու մտածում ես քո ընտանիքի համար։ Հենց դրա համար էլ շատ պարզ է, վոր չես կարող ըմբռնել ու հասկանալ մեր այսօրվա դժվարությունների հիմնական պատճառները։

Սադըղի այս վերջին խոսքերն Աղիզին բավական փափկեցրին։

— Ի՞նչ գիտեմ,—ասաց նա ցած ձայնով,—թերևս դու իրավացի յես։

Յեվ, հանկարծ մի բան վերհիշելու պես, ավելացրեց.

— Յես ընդունում եմ, վոր նոր ալֆաբե-ով անգրագետ եմ, բայց տգետ չեմ։ Ամեն որ մի նո՛ր բան են մեջտեղ գցում,—հարվածայնություն... հնգամյակը 4 տարում... Մենք էլ ընդունում ենք։ Բայց դու դեռ յերեխա յես։ Նման բաներից խելքդ չի կտրում...

Բայց Սադըղը յերեխա չէր։ Նա արդեն բոլորել էր

21 գարուն: Յերեք տարի անընդհատ աշխատելով արտադրության մեջ, այժմ անգրագիտության կուրսերն ավարտելու վրա յեր և պատրաստվում եր կուսդպրոց ընդունվելու:

— Չնայած վոր ինձնից տարիքով մեծ ես, —ասաց Սադըղը.—բայց անգրագետ ես: Յեվ հենց դժբախտությունը նրանումն ե կայանում, վոր տգետ ես և հասարակական կյանքից յետ ես մնացել:

Սադըղն իր այս ագիտացիոն խոսքերով աշխատում եր համոզել, խելքի բերել Ազիզին, այդ հին, տգետ բանվորին:

— Մեր կառավարության տնտեսական ուժեղացումը,—շարունակեց Սադըղը—մեր ուժեղացումն ե նշանակում: Մենք—բանվորներս ենք կառավարությունը:

«Սաթուն» կոչված մեքենայի վրայից անվերջ կաթող յուղը կիսաբաց ծորակի միջով լցվել եր դիմացի դույլի մեջ: Սադըղը վերցրեց դույլն ու տարավ դատարկելու: Նա հավաքեց № 8 «կոմպրեսոր» մեքենայի յուղն ու լցրեց ֆիլտր-ի մեջ: Յուղամանները նորից լցրեց յուղով և կես ժամվա մեջ յուղը հասցրեց մեծ բակ-ին:

Այս բոլորը կատարվում եր Ազիզի աչքի առաջ: Բայց նա մտածում եր ուրիշների մասին: Վեց ամսից իվեր եր ձեռքի տակ աշխատող այս «աշկերտը» յուրացրել եր արդեն նրա 28 տարվա մեջ ձեռք բերած մասնագիտությունը: Նշանակում ե, վոր մի տարուց հետո այս յերիտասարդ աշկերտը նրանից առաջ պիտի անցնի, ե՛լ ավելի պիտի առաջադիմի, պիտի բարձրացնի իր վորակը և հետո ել իրեն գործ, կարգ ու կանոն պիտի սովորեցնի: Իր և Սադըղի մեջ մինչև այժմ տեղի ունեցած խոսակցությունները, Սադըղի տված բոլոր ցուցմունքներն ու խրատները մի՞թե չեյին հաստատում իր այդ կասկածները: Ճի՞շտ ե, արդյոք, վոր ինքը տգետ ե և սովորած հին ուսումը բանի պետք չպիտի գա:

—Լատիներեն տառերով կարդալ-գրել սովորելուց

հետո, «արդյո՞ք պիտի լավանա իր ապրուստը»,—հարցրեց իրեն Ազիզը:

Ազիզն ակամայից հիշեց Ղուլամ-Հյուսեյնին: Վերջինս ել Ազիզի նման մի հին բանվոր եր: Յերեք տարի առաջ սկսել եր սովորել նոր այբուբենով կարդալ-գրելը, վորի շնորհիվ առաջադիմելով՝ հիմա հանքկոմի նախագահ եր ընտրվել: Յեթե ինքն ել Ղուլամ-Հյուսեյնի հետ միասին հաճախեր լիկկայանը, անպայման կվերացներ իր անգրագիտությունը (նոր լատինական տառերով), կազատվեր յուղի ու մազութի մեջ աշխատելուց, ցուրտ գիշերներն աշխատանքի գնալուց և, համապատասխան աշխատանքի անցնելով, լավ ռոճիկ կստանար...Ինչի չե՝ ձեռքը բոլ տալոններ կանցնե՞ր...

Ազիզն իր գրագետ դառնալու հանգամանքն իրեն ոգուտ բերող արշինով եր չափում: Յեվ, խոսքն ուղղելով Սադըղին, ասաց ժպտալով.

— Լա՛վ, յենթադրենք թե յես տգետ և անգրագետ եմ, այդ դեպքում ի՞նչ պետք ե անել:

— Պետք ե վերացնես անգրագիտությունդ,—պատասխանեց Սադըղը:

— Դու ինձ կոգնե՞ս:

— Կոգնեմ... դա հասարակական գործ ե:

— Շա՛տ լավ: Հենց վաղվանից կսկսեմ սովորել: Դու ել ինձ կսովորեցնես, չե՞:

Սադըղը ժպտաց և, ձեռքը նրան յերկարացնելով, ասաց.

— Տո՛ւր ձեռքդ:

Ապա բռնելով Ազիզի ձեռքը, ավելացրեց.

— Ով վոր իր խոսքից փախչի՞...

— Նամերտ*) թող լինի...

***

Ազիզի և Սադըղի ուսման պարապմունքները կանոնավոր կերպով շարունակվում եյին: Ամեն որ, աշխատանքից յերկու ժամ առաջ, յերկուսն ել գալիս եյին

*) Նամերդ կամ Նամարդ.—Խոստումը չկատարող: Ծ. Թ.

խառեր իր քրոջ վորդի Հայդարը: Մի քիչ անց տեսավ Հայդարի ընկերոջը՝ Իբրահիմին, վորը վերադառնում եր մեքենաներին յուղ հասցնելու աշխատանքից:

— Հայդարն ո՞ւր ե,—հարցրեց Ագիգը զայրացած:

Ագիգն ու Իբրահիմը յերկար փնտռելուց հետո, Հայդարին գտան մեքենայի յետևը քնած վիճակում:

Հայդարն աչքերը շփելով բարևեց Ագիգին, բայց պատասխան չստացավ: Նա զգաց դրության լրջությունը, գունատվեց:

Հայդարը վարչական պատասխանատվության առաջ եր կանգնած: Բայց հույս ուներ նա, վոր պիտի ազատվեր այդ պատասխանատվությունից. իր քեռի Ագիգը նրան ուրիշի ձեռքը չեր հանձնի: Ուստի կատարած հանցագործության համար սկսեց ներողություն խնդրել նրանից:

***

Հայդարը շատ խնդրեց Ագիգին, նույնիսկ իր մորը գիշերով ուղարկեց նրա մոտ, վորպեսզի կատարված դեպքի համար նա՛ ել իր կողմից ներողություն խնդրի Ագիգից, սակայն վո՛չ մի հետևանք չունեցավ: Ագիգն այդ առթիվ նախորոք հայտնել եր համապատասխան որգաններին, կազմված եր արձանագրություն և Հայդարը—այսինքն Ագիգի քրոջ վորդին՝ խիստ հանդիմանություն եր ստացել:

Այժմ Ագիգը մտածում եր այն մասին, վոր յեթե ինքը նման մի դեպքի հանդիպած լիներ մի տարի առաջ, ի՞նչ խոսք, վոր թասիբից դրդված, իր քրոջ վորդուն պիտի պաշտպաներ և նրան ուրիշի ձեռքը չպիտի տար:

Ագիգը միայն նո՛ր եր հասկանում, վոր իր արածը իրավացի գործ եր:

«ՅԵՐԿՆՔԻ ՄԱՐԴԸ»

Յես նրա հետ ծանոթացա Բագվի բանվորական հանգստյան տանը: Հազարավոր բանվորներ ընդգրկող այդ հանգստավայրն առաջին անգամն եյի գնացել: Ամեն մեկն իր առանձին զբաղմունքն ուներ, մեկը նվագում եր, մյուսները շախմատ կամ նարդի եյին խաղում, վոմանք ել գիրք կամ ժուրնալ եյին կարդում:

Յես ել եյի ուզում մի բանով զբաղվել: Ուզում եյի գրել այդ ընդհանուր շրջապատից ստացած տպավորություններս և ուրիշների հետ բաժանել իմ զգացմունքներս:

Քաշվելով մի լուռ անկյուն, կարևոր մի աշխատություն գրող բանաստեղծի նման, սպիտակ թղթի մի մեծ կտոր առջևս դրած, մտածում եյի գրելիք թեմայի մասին:

Դեռ չեյի կարողացել վորոշել թե ինչի՞ մասին եմ գրելու, դեռ չեյի ձևակերպել գրելիք նյութի բովանդակությունը, յերբ մեկը հանկարծ կանգնեց դիմացս:

Անծանոթը, ծխամորճը բերնում թեք բռնած, կարծես վաղուցվա բարեկամներ լինեյինք, լուրջ կերպով ասաց ժպտալով և դեմքը ծռելով.

— Հ՛ը, ի՞նչ կա: Ինչո՞ւ յես այդքան մտածում: Թե՞ ուզում ես մի նոր այերոպլան հնարել:

Ուշադրությամբ նայեցի խոսակցիս: Վաթսուն տարին անցկացրած, գլխի ու յերեսի մազերն ամբողջությամբ սպիտակ մի բանվոր եր նա:

— Չե՛, ամի ջան,—պատասխանեցի յես.—այերոպլան չեմ հնարում: Մտածում եմ մի նոր նյութի—թեմայի մասին:

— Փա՛—հո՜... Ուրեմն դու «թեմա» յես փնտռում: Յես քեզնից նոր բաներ պիտի սովորեմ:— Ասաց նա և, առանց թույլտվություն խնդրելու, բերեց մի աթոռ ու նստեց ինձ մոտ:

— Ամենից առաջ դու ինձ ե՛ն ասա, թե այդ «թե-

ման» ի՞նչ բան է, ինչի՞ է պետք նա,—ավելացրեց ծիծաղելով:

Ես, ուզում եմ մի հոդված կամ մի պատմվածք գրել...Բայց չգիտեմ վո՞րտեղից սկսեմ և ի՞նչ գրեմ:

Ես, ճիշտն ասած, իմ անկարողությունս խոստովանելով մեկից, մի քիչ էլ ամաչեցի:

— Ես էլ ասում եմ սա ինչո՞ւ է սեղանից խռոված յերեխաների նման հոնքն ու դեմքը կախ արած, քաշվել է մի անկյուն...Ա՛յ, որհնած, այդտեղ ի՞նչ կա, վոր...գրիչը բեր, յես ասեմ, դու էլ գրի... Մեկը կար, մեկը չկար, աստծուց բացի վո՛չ վոք չկար...Թերևս ինքն, ապավեն ասածն էլ չկար...

— Ամի՛ ջան,—ընդհատեցի նրա խոսակցությունը,—դրանք հին նաղլեր են, մեր ներկա կենցաղի համար վո՛չ մի օգուտ չեն տալիս... Յոթգլխանի դևերի, յերկնքում թռչող սատանաների, փերիների ժամանակը վաղուց է անցել: Պատմիր ինձ այսորվա անց ու դարձի, գործերի մասին...

Երևում էր, վոր իմ այս խոսքերից նեղացավ նա: Նկատեց, վոր իր սկսած նման խոսակցությունը մինչև վերջ չեմ ուզում լսել:

Խոսակցիս մատներով սեղմեց ծխամորճի փողին և սկսեց մտածել: Նա ինչ վոր մի բան էր փնտրում: Հետո, ցուցամատը դեպի ինձ յերկարելով՝

— Լսի՛ր, վորդի,—ասաց հրամայողական տոնով,—տեսնո՞ւմ ես ինձ, գլխիս մազերի համրանքի չափ բաներ եմ տեսել: Աշխարհում չկա մի բան, վոր չգիտենամ: Ես այնպես էյի կարծում առաջ, բայց այժմ այդպես չէ: Խելքը տարիքի մեջ չէ, գլխի մեջ է...

Այս կարճ նախաբանից հետո, նա սկսեց ընդհատված խոսակցությունը, վորը վո՛չ մի կապ չուներ ինձ հետաքրքրող նյութի հետ:

— Անցած ժամանակներում յես ծանր մրճահար էյի «Ռեգիկ» կոչված գործարանում: Այն ժամանակ յես հազիվ 30—32 տարեկան լինեյի—ամրակազմ ու ջլապինդ: Վորպես մասնագետ և լավ տեղյակ իմ արհեստիս, ինձ ամեն

մարդ սիրում, ամեն վոք պատիվս պահում էր: Արհեստանոցի տերն անգամ ինձ հետ կատակներ էր անում: Մուրճ խփելու ժամանակ, նրա (մուրճի) տակը դրված ժամացույցն այնպես էյի պահում, վոր վո՛չ վոք չէր կարող տակիցը հանել և վոչ էլ ժամացույցին մի վնաս էր հասնում, նույնիսկ ապակին անգամ չէր կոտրվում:

Մի որ էլ ընկերս, Վասիլին, աշխատելուց չափազանց հոգնած, պառկած էր կողքի վրա ու պապիրոս էր ծխում: Մեխանիկն այդ բանը տեսնելով, ձեռքին բռնած յերկաթե ձողիկով ամուր խփեց Վասիլին: Վերջինս ստացած հարվածից կծկվեց նետահար յեղած ոձի նման: Սաստիկ բարկացած առաջ վազեցի և, մեխանիկի ոձիքից բռնելով, մի այնպիսի ապտակ հասցրի, վոր նա գետին փռվեց: Ուղիղ մի ժամ մեխանիկը հազիվ ուշքի յեկավ:

Այդ դեպքից հետո, գիտե՞ս, ինձ վորչա՛փ նեղություն տվին: Ամիսներով անգործ մնացի...Ե՛հ, թող գնան այդ որերն ու է՛լ յետ չգան: Եթե բոլորը պատմեմ, մի ահագին գիրք կարելի է կազմել:

Այն ժամանակը մեզ, բանվորներիս համար զնդան էր (բանտ): Որական աշխատում էյինք 10—12 ժամ: Մեր աշխատանքի վաստակով ուրիշներն էյին քեֆ անում, հանգստանում, իսկ մենք՝ մի կտոր ցամաք հացի կարոտ էյինք: Հանգստությունն ի՞նչ բան է,—չգիտեյինք: Աշխարհի բոլոր բարիքները «նրանցն» էյին...: Բայց հիմա..Տե՛ս, վորդի... հիմա ամեն ինչ մերն է... Տեսնո՞ւմ ես այս հանգստի տունը. Նիկոլայի հայրն անգամ յերազում չէր տեսնում: Մենք ունենք ակումբներ, թատրոններ ու դպրոցներ: Դու են ժամանակ չէյիր կարող կարդալ, հիմա կարդում ես...Տղաս էլ է կարդում, աղջիկս էլ: Ես էլ եմ կարդում:

—Կինդ վո՞նց է...Նա չի՞ կարդում,—ընդհատեցի յես խոսակցիս, վորի դեմքը է՛լ ավելի բացվեց և, անուշ-անուշ ծիծաղելով, պատասխանեց.

— Ա՛յդ էլ կասեմ: Այս քանի որ է կինս սկսել է,

թե՝ «Ցես էլ եմ գնում սովորելու»: Ի՞նչ ամոթ բան է վոր, թող գնա կարդա, աչքը բացվի...

Բայց յերևում էր, վոր զրուցակիցս չեղվեց բուն նյութից: Նա այդ բանն զգալով, իսկույն անցավ նախկին խոսակցությանը:

— Ուզում եմ ասել, վոր,—շարունակեց նա,—մենք հիմա ամեն բան ունենք: Մենք ունենք նաև մեր «յերկնքի մարդիկ»: Վո՞ր խոզեյինի, կամ միլլիոնատերի տանը կամ այդտեղ այդպիսիները չկան:

Ցես նրա «յերկնքի մարդն» ասած խոսքի նշանակությունը չիմացա: Հարցրի՝

— Ամի՛ ջան, «յերկնքի մարդ» ինչի՞ն են ասում:

Նա զարմացավ, վոր յես այդքան «տգետ» եմ: Նույնիսկ չուզեց հավատալ:

— Մի՞թե դու «յերկնքի մարդուն» չես ճանաչում: Կարծեմ, դուք նրան «Ռադիո» յեք ասում:

— Ռադիո՞:

— Այո՛, այո՛...ռադիո...Ցես նրան «յերկնքի մարդ» եմ ասում, վորովհետև նա յերկնքից է խոսում, նվագում, կարդում: Ցեվ հետո, խոսակցության տոնը փոխելով, ասաց լուրջ կերպով.

— Գիտե՞ս, վորդի, մեզ միշտ պահել են տգիտության ու խավարի մեջ: Իսկ հիմա մեր կառավարությունն աշխատում է բաց անել մեր աչքերը: Մենք շա՛տ բան պիտի տեսնենք: Միայն թե կյանքիս որերը պակասել են, գալիք գործերը չպիտի կարողանամ տեսնել:

Խոսակցիս դեմքը մռայլվեց: Նա դեռ ուզում էր ապրել յերկա՛ր, յերկա՛ր տարիներ, տեսնել կառուցվող սոցիալիստական անդասակարգ հասարակությունը: Բայց նրա տարիքը վաթսունն անցել էր արդեն:

Կարճատև լռությունից հետո, նա ավելացրեց.

— Մահից է՛լ չեմ վախենում, վորովհետև տղաս ու աղջիկս կարդում են: Իմ չտեսած բաները նրանք կտեսնեն, կյանքի ամենաբաղդավոր մարդիկ կլինեն:

Այդ միջոցին մեր գլխի վերևից լսվեցին տարորինակ ձայներ: Ոդում սլանում էր օդանավը:

— Մտի՛կ արա: Տեսնո՞ւմ ես,—ասաց խոսակիցս ուրախ ձայնով,—սա մեր սեփական այերոպլանն է: Ցես էլ տղայիս կուղարկեմ, վոր այս դասը սովորի: Թող մեր տղաներն էլ սովորեն թռչել յերկնքում:

Հանգստյան տան ճաշի զանգը խփեց:

Զրուցակիցս վոտքի յելավ:

— Այն ժամանակ,—ասացի յես.—քո տղան իսկական «յերկնքի մարդ» կդառնա:

— Շատ հավանեցի քո այդ խոսքին: Բոլորովին սրտիս խորքից խոսեցիր: Տղաս «յերկնքի մարդ» կլինի: Ասաց նա ու, յերեխայի նման ուրախանալով, սեղմեց ձեռքս ու հեռացավ:

Մ. ՌԱՀԻՄ

ՅԵՐԲ ԹՆԴԱՆՈԹՆԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՅԻՆ

Յերբ յերկաթե լեզուներով
Թնդանոթներն եյին խոսում,
ինչո՞ւ չգնացի գրոհ,—
յես ել վորպես մի Պաղաչով...

Յեվ ցարական պալատի տակ,
ինչո՞ւ, իմ կուռ բազուկներով
չփորեցի մահու ական
ու չմեռա կախաղանով...

Ինչո՞ւ տասչորս տարի առաջ,
կռվում ընկնող հերոսների
յերկաթակուռ շարքում չեղա—
յես—զինվորը այս յերգերի...

Ինչո՞ւ յես ել խոսքիս զենքը
ռումբի պես չնետեցի,
վորպես հերոս Ֆաղենը,
վոր բարձրացավ կռվի բեմին...

Յեվ այն կռվի պատմության մեջ
ինչո՞ւ, ինչո՞ւ իմ պայքարն ել
չդարձավ մի արնագիր եջ,
վոր հազարի կամք հրդեհեր...

Այն օրերի կռվում չեղա,
բայց պատմությունը ուսեցի—
այն հանճարի մասին գրված,
վոր պայքարի դրոշն ուսեց։

Յես գրքերից իմացա, վոր ձմռան մի յերեկո,
յերբ գիշերն եր տարածել յերկրի վրա թեվերն իր,
բարձրացել ե իր տեղից անօրինակ գրոհով,
ընդվզումով իր հրե—միլիոնանոց բանակ մի.

վորպես Թելը մետաքսի—խորտակելով իր շղթան
այն հանճարն ե բարձրացել այդ ապստամբ տարերքից
ու նետել ե ռումբն իր պալատների դեմ քարե
և միլիոնի սրտի մեջ կռվի կրակ ե վառել։

Յեվ ասել ե հանճարն այդ վորոտալի իր ձայնով—
«հաշիվները մաքրելու հերթը մերն ե հիմա—
վերջ տերերի բռնության վոր կռել են մեր արնով—
լռեցրո՛ւ ռումբը, լռեցրո՛ւ, Յեվրոպա՛...»:

***

Յեվ սպիտակ ձեռնոցով, հենված վոսկու իր ուժին
դիմադրեց կատաղի—մեր գրոհին այդ անահ,
վոր պալատներն հնամյա փրկի մահվան մշուշից—
արյունահորդ իր խանդով կրակում եր Յեվրոպան։

Այդ սպիտակ ձեռնոցի ստրուկները գրկված
կուրծքը տված չեկ վոսկու գնդակներին արճիճե
անօրինակ մի թափով տերերի դեմ ծառացան
և դաշտերի սավանին փռվեց արնի մուգ լիճը...

Թնդանոթի մշուշը չոգեց կապույտ ծովերին
և ցրտաշունչ, անարև հեռաստանում հյուսիսի
մեր բանակը աներեր իր արշավը գովերգեց
ու շողացին մշուշում անհամար սուր ու սվին...

Կանաչաթույր անտառի խեթ ծառերը ծանրացան
զինակների բեռի տակ—վոր կռվի եյին յելել
ու ծառերի կանաչում մահվան թուխպը գանգրացավ
սակայն գնաց բանակը իր գրոհով աներեր։

Ու կրակեց բանակը այն հանճարի մի կոչով—
վորին աշխարհի կողմերում ռումբի պես վորոտաց—
«— Լռեցրու ռումբը, պահիր զենք ու թնդանոթ,
հերթը մերն է իշխելու, լռեցրո՛ւ Յեվրոպա...

ՎԵՐԱԴԱՐՁԸ

Յես այդ կռիվներին չեմ մասնակցել թեև
բայց իզուր եմ խորհուր հոռետեսի նման,
չե՞ վոր կռվի մասին յես յերգեր եմ գրել,
գրչով կռվել նրա հաղթանակի համար...

Իսկ աշխարհում, յերկու թշնամի բանակներ
դեռ ամուր կանգնած են չզիջող դիրքերում
և դեռ պիտի կանգնեն անթիվ բարիկադներ
ու դեռ պիտի շրջի կռվի, մահվան ուրուն:

Տիրողների յերկրում, դեռևս կռվում են
միլիոնավոր մարդիկ, ընչազուրկ ու համառ
և օրեցոր նրանց բանակը դառնում է
բազմամիլիոն, ամուր ու պողպատից անպարտ...

Կապիտալի յերկրում անընդհատ աճում է
բանվորական զունդը — իր շահերին գիտակ,
վորի քայլերի տակ հին կյանքն է ճռնչում,
ճգնաժամն է չոքում զավոդների վրա...

Յես գիտեմ, վոր վերջին կռվի ժամը կգա,
և անցյալի կռվին չեմ մասնակցել թեև,
հրացանը ուսած կռիվ պիտի գնամ,
գնդակ պիտի նետեմ իմ ընկերների հետ...

Ամեն աշխատանք էլ մի կռվի ճակատ է,
զավոդի սուլիչն էլ կռվի յերգ է յերգում,
յուրաքանչյուր բանվոր հիմա փորձով գիտե,
վոր զավոդի մեջ էլ է ինքը կռվի դիրքում...

Իսկ յես, դիրքի վրա, վորպես արթուն պահակ,
գնդակներ եմ նետել յերգիս գնդացիրից,
վոր իմ դասակարգը դիրքում իր ամրանա,
և իր յերկրի վրա չոքող ամպը ցրի:

Վաղվա ահեղ մարտի յերկունքով բռնված,
մեր այսօրն է վառվում, վորպես կարմիր քուրա,
վոր պայքարի յելնի բանակը ապստամբ,
ու մեծ Հոկտեմբերի Պեգասն արագ սուրա...

Ո՛, թող հնչի ուժգին փողը վերջին կռվի,
յես կլինեմ զինվոր, յես կլինեմ դիրքում,
վերջին Հոկտեմբերը թող իմ կամքը կռի,
պարտիզան լինելու յես տալիս եմ յերդում:

Յես յերդվում եմ հիմա, վոր չեմ փախչի հրից,
գործարանից կելնեմ, մարտի դաշտ կգնամ,
և իմ հրացանը գնդակներ կցրի—
թշնամիս կմեռնի վերջին, վերջին անգամ...

ԱՊՐԻԼԻ ՀԱՐՎԱԾԸ

Իմ նոր ծանոթ Մուրսալը պարզամիտ, սրտաբաց ու սրախոս մի մարդ էր։

Հեռվից տեսնողը կարծում է, որ այս մարդն հենց յերիտասարդ հասակից մինչև վերջը միշտ ուրախ ու զվարթ կյանք է անցկացրել, ամբողջ կյանքում վո՛չ մի դառնություն չի զգացել։ Բայց, նրան մոտիկից ծանոթանալուց հետո, նման կարծիքներն անհետանում, կորչում են։

Մուրսալը չարունակ աշխատել է սև նավթով վողողված հարուստ հանքերում։

Հողը սև, տները սև, թուչուններն ու սողուններն անգամ սև…

Այնտեղ ամեն ինչ, ամեն ինչ սև էր։

Ամեն կողմ սփռված եյին մինչև յերկինք բարձրացող վիշկաներ, ամեն կողմ նավթ էր բուրում, ամեն կողմից լսվում եյին խմբերի բաժանված բարձր ու անհամար խողովակների յեռուն ու կրակոտ ձայները։

Ահա չարունակ այսպիսի յեռուն կյանքի մեջ որ անցկացրած Մուրսալի հետ միասին, նավթահանքերի խիտ և բարձր վիշկաների մեջ պտտում, դեսից-դենից զրույց եյինք անում։

Այդ միջոցին, ինչ վոր մի տեսարան գրավեց Մուրսալի ուշադրությունը և նա լռեց։

Մուրսալը չափազանց մտածկոտ էր յերևում։ Նրա սրտում թաքնված մի գաղտնիք կար։

Կամաց-կամաց քայլում եյինք։

Մի քանի րոպեյից հետո Մուրսալը մոտակա հին հանքատեղը ցույց տալով, ասաց.

— Այս հանքը անցյալում պատկանում էր Սելիմ աղային։ Այժմ հիշեցի այս հանքում կատարված մի դեպք, ավելի ճիշտն ասած, մի դառն դեպք, վոր, յեթե ձեզ ձանձրալի չի թվա, պատմեմ, լսեցե՛ք։

— Վո՛չ, չեմ ձանձրանա։ Պատրաստ եմ շնորհակալությամբ լսելու։ Պատմեցեք։

Մուրսալը մի քանի րոպե կանգ առավ, հանքի մագութոտ, բարձր վիշկային, ուժեղ թափով աշխատող անիվին և նավթահան խողովակին մի անգամ էլ վերից վար դիտելուց հետո, սկսեց.

—«Են ժամանակ մենք հինգ հոգի եյինք։ Ապրում եյինք Սելիմ աղայի այս հսկա հանքում։

Իմ ընկերներից 4-ը չատ վաղուցվանից եյին աշխատում այստեղ. վորի շնորհիվ կարողացել եյին իրենց համար մի փոքրիկ խրճիթ ճարել։ Իսկ յես բոլորովին տեղ չունեյի։

Ջնայած, վոր ընկերներիս բնակարանը չատ նեղ էր, բայց նրանք ինձ էլ իրենց մոտ տեղավորեցին և մենք ապրում եյինք միասին։

Հանքում օրական 12 ժամ անընդհատ աշխատելուց հետո, իրիկնամթին վերադառնում եյինք տուն հողնած, բեզարած, և տեղավորվելով այդ ծխոտ-մրոտ խրճիթում, սրտամաշ կյանք եյինք անցկացնում, յերջանկությամբ ապրեցնելով Սելիմ աղային ու նմաններին։

Ասում եյին գարուն է, բայց մաքուր օդ մենք չեյինք շնչում։ Լսում եյինք, վոր ծառերը ծաղկել, պարտեզները դույնզգույն ծաղիկներով են զարդարվել, բայց մենք չեյինք հոտոտում այդ ծաղիկները, չեյինք հանգստանում նրանց զովարար ստվերների տակ։ Մեզ թվում էր, թե կյանքը միայն մինչև իրկուն խոնավ ու վտանգավոր հորերում աշխատելուց, փսկ գիշերները միմյանց սեղմվելով քնելուց էր բաղկացած։ Բացի այդ չարչարանքներից, աշխատանքի ընթացքում հանդիպած քարերն ու հսկա ապառաժները մեզ չատ նեղություն եյին պատճառում, վորովհետև են ժամանակ մեր այժմյան տեսած հանքափոր մեքենաները չկային։

Ջեմ հիշում, թե քանի՞ հարյուր սաժեն փորելուց հետո, նոր մի հոր պատրաստ կլիներ։

Պատերից հոսող ջրերը, վերևից փուլ յեկող քարերը քի՞չ մարդկանց հաշմանդամ դարձրին:

Հորից դուրս գալուց կես ժամ հետո հազիվ կարողանում եյինք մեր աչքերը բաց անել: Կարծես բնությունն ել փակել եր մեր աչքերը:

Վերջապես, մի որ ել փորձանքի առաջին հարվածն իջավ մեր գլխին: Ո՛ֆ... իսկի չեմ մոռանում: Կատարված այդ աղետալի տեսարանը, կարծես, հենց այս րոպեյին ել պատկերանում ե իմ առաջ:

Տարիների ընթացքում փորված այդ հորը բավական խորացել եր: Տաքությունն ու գլուխ պայթեցնող խոնավությունն այնքան ճնշում եյին մեզ, վոր շունչ քաշելը, աշխատելը դժվար եր:

Նավթի նշաններն իրենց ցույց եյին տալիս: Շուտով նավթ դուրս գալու հավանականությունն ուրախացնում եր բոլորին:

Հանկարծ հորի միջից լսվեց՝

«Քաշեցեք, քաշեցեք»,—խորունկ, աղեկտուր ձայնը:

Սկսեցին արագությամբ քաշել:

Շատ չանցած, ահագնադղորդ մի պայթյուն ցնցեց գետինը: Խփեց նավթի շատրվանը: Մի րոպեյում գազը, ծուխը ամպի նման ծածկեց չորս կողմը:

Ֆանտանի տակ մնացին յերեք հոգի...

Մի կողմից ուրախություն, իսկ մյուս կողմից սուգ...

Սելիմ աղան նոր խփող ֆանտանի պատվին, որերով ՔԵՖ եր անում, ուտում, խմում, զվարճանում, իսկ մի կտոր սև հացի համար կյանք տվող, հոգիները փչող բանվորների ընտանիքները «արյունոտ ֆանտան» աղաղակելով, հեղեղի նման արցունք եյին թափում...

Որերն անցնում եյին գլխապտույտ արագությամբ:

Ապրիլյան հեղափոխությունից հետո, Սելիմ աղայի բոլոր նավթահանքերը, քաղաքում գտնվող յերեքհարկանի տները գրավված եյին:

Բանվորները խոսում եյին, վոր Սելիմ աղան տառապում ե ջղային հիվանդությամբ, վորը՝ հետզհետե սաստկանալով՝ նրան գցել եր փողոցները:

Մութ ու մռայլ մի գիշեր եր: Յերկնակամարի վրա չեր յերևում վոչ լուսինը և վո՛չ ել մի աստղ:

Բարձրաբերձ վիշկաների ու նրանց մեջ արագությամբ պտտվող անիվների աղմկալից ձայները սոսկում եյին առաջացնում:

Այդ միջոցին լսվեց մի տարորինակ ձայն և մի ակնթարթից հետո, մեկը կանգնեց առաջս:

Բայց նա յերկար չսպասեց, խելագարի նման անհետացավ իմ տեսողությունից:

Այդ գիշերը նույն մարդն յերեք անգամ յերևաց ինձ: Ձեռքում գտնված ժանգոտ դաշույնով կարծես ուզում եր հարձակվել ինձ վրա և մոտենալ հանքերին, բայց հետո շուտով հեռանում եր:

Տված հարցերին չեր ուզում պատասխանել: Ինքնիրեն այնպես եր խոսում, կարծես ատամներովն ուզում եր կրծել իր մարմինը:

Մի քանի ամսից իվեր հանքերում, մազ-մորուքով, վոտաբոբիկ ու գլխաբաց, մազութով ներկված ցնցոտիներով թափառող այս մարդը հայտնի հանքատեր Սելիմ աղան եր:

Չորս կողմից հույսը կտրած այս թափառաշրջիկը, իր ամբողջ հույսն ու ցանկությունը ձեռքի ժանգոտ դաշույնի վրա դրած, ուզում եր վրեժխնդիր լինել, սպանել բոլոր բանվորներին, վառել բոլոր հանքերը:

Յեվ հենց այդ եր պատճառը, վոր նրան ամեն անգամ կարելի յեր պատահել հանքերում: Բայց վո՛չ վոք նրան կարևորություն չեր տալիս, վո՛չ վոք նրան չեր ուզում բռնել:

Նրան հենց այդ ընկած դրության մեջ պետք ե տեսնեյին շահագործված բանվորները, ամեն վոք նրան պետք ե ճանաչեր:

Հանքերում ապրող փոքրիկ յերեխաներն անգամ լավ եյին ճանաչում Սելիմ աղային, նրան ձեռք եյին առնում, ծափահարում, այս ու այն կողմը փախցնում:

3188—17

Մի անգամ էլ գիշերվանից բավական ժամանակ անցել էր: Սելիմ աղան, վրեժ առնելու խելագար ցանկությամբ, շրջում էր վիշկաներում՝ ժանգոտ դաշույնը ձեռքին: Նա ամբողջ ուժով բաղխվեց հորին ու վայր ընկավ:

Հորի վերջին մագուլթոտ ապտակը մի անգամից հանգցրեց նրա կյանքը...

Դա այն հորն էր, վորի պատվին Սելիմ աղան մի ժամանակ խնջույքներ կազմակերպեց, ֆանտանի կենաց բաժակներ պարպեց»:

Ամեն անգամ յերբ հանդիպում եմ Մուրսալին, հիշում եմ հանքատեր Սելիմ աղայի մասին նրա արած պատմությունը:

№ 101 ՀԱՆՔԱՏԵՂԻՆ

№ 101 *հանքատեղի պեղման աշխատանքներն ընթանում եյին աննորմալ պայմաններում: Գործն առաջ չեր գնում: Բանվորները շուտ—շուտ փոխվում եյին:*

Այդ հանքերում, ընդհանրապես աշխատում եյին բանվորական ստաժ չունեցող յերիտասարդ պրակտիկանտներ, սրանց թվում նաև՝ հին մասնագետներ, վորոնցից գլխավոր վարպետ Հեյրաթը, տեխնիկ Պետկան և ինժեներ Սեֆեր Ալի բեյովն իրենց արհեստին տեղյակ մարդիկ եյին: Մասնավորապես արգելակավար (тормозист) *Ալի Մուրադը—* 23 *տարվա արտադրական ստաժ ունեցող այդ հին բանվորը—թեև կիսագրագետ, բայց՝ հիանալի կերպով ղեկավարում եր ամերիկյան սիստեմի* ստանոկը:

Բայց, վերջին ժամանակներս, չգիտեմ ինչո՞ւ, շարունակ խոսվում եր հանքատեղը փակելու մասին, վոր այդ հորը հուսալի չե, այդտեղից նավթ դուրս չի գալիս:

Այդ որն, առավոտվանից, հանքի բանվորները խոսում եյին, վոր Ազնեֆտի ինժեներներից բաղկացած մի հանձնաժողով ե գալու: Այդ լուրը շատ հետաքրքրեց արգելակավոր Ալի-Մուրադին:

— Պետկա՛,—հարցեց Ալի Մուրադը,—ի՞նչ ե քո կարծիքն այդ հանձաժողովի գալու մասին:

— Իմ կարծիքն այն ե,—պատասխանեց Պետկան,— վոր իզուր աշխատանք ենք թափում: Այստեղից նավթ սպասելն հիմարություն ե:

— Իսկ իմ կարծիքը բոլորովին տարբեր ե,—ասաց Ալի Մուրադը: Ցես ասում եմ, վոր այստեղ նավթի շատրվան պիտի խփի:

— Ա՛յ Ալի Մուրադ ամի, նման գործերը դու մեզնից լավ չգիտես, վոր...

— Ճի՛շտ ե,—հարեց Ալի Մուրադը, հաստատելով Պետկայի ասածները,—դուք ուսում առած մարդիկ եք, ինձնից ավելի լավ գիտեք: Սակայն ձեր կարծիքն այս հանքի մասին շատ սխալ ե:

Գլխավոր վարպետ Հեյրաթը, վոր մինչ այդ լսում եր դրանց խոսակցությունը, Ալի Մուրադի վրա բարկանալով, ասաց.

— Դու գործիդ մտիկ արա...մենք դեռ խորհրդատուների կարիք չենք զգում:

— Ընկե՛ր Հեյրաթ,—ասաց Ալի Մուրադը ջղայնանալով,—յես իմ գործս շա՛տ լավ գիտեմ, անտեղի ցուցմունքներ տալն ավելորդ ե: Բացի այդ, պետք ե գիտենաս, վոր այժմ պրոլետարական իշխանություն ե: Ամեն մի բանվոր ազատ ե հայտնելու իր կարծիքն ու խորհուրդը:

Անցյալ որ Ալի Մուրադը բանավեճի յեր բռնվել Հեյրաթի հետ: Տեխնիկ Պետկան հայտնել եր, վոր փորված հորի խորությունը 458 մետր ե: Իսկ Ալի Մուրադը, չհամաձայնելով նրա ասածի հետ, պնդել եր վոր հորը նորից չափեն: Նա հայտնել եր, վոր իր ստանոկի գիլինդրի վրա փաթաթված պարանի յերկարությունը 350 մետր ե, ուստի փորված հորի խորությունը 300 մետրից պակաս կլինի: Դրանից նեղացած Հեյրաթը սպառնացել եր Ալի Մուրադի վրա, վոր նրան գործից կհանի:

— Քո ի՞նչ գործդ ե,—ասել եր Հեյրաթը,—գլուխդ քաշ արա ու ստանոկդ ղեկավարիր:

Իսկ տասնյակ տարիների արտադրական ստաժ ունեցող Ալի Մուրադ ամին, նավթի ու մազութի մեջ կյանքն անցկացրած այդ հին բանվորը շատ լավ գիտեր, վոր № 101 հանքատեղը հետազոտման յենթակա հորերից եր: Բոլորովին հասարակ մի տեղում, առաջին անգամ փորված այդ հորը մեր յերկրի ինդուստրացման գործի համար խոշոր նշանակություն պիտի ունենար,

վճռելու յեր այդտեղի բաղդն ու կարողությունը: Նավթ դուրս գալուց հետո, պիտի փորվեյին հարյուրավոր նորանոր նավթահորեր: Նման ամայի ու անմարդաբնակ վայրում պիտի անցկացվեյին նոր յերկաթուղիներ, պիտի կառուցվեյին բանվորական նորանոր շենքեր: Գետնի ընդերքում թաղնված սև վոսկին հայտաբերելով՝ պրոլետարական իշխանության արագ տեմպերով սլացող սոցիալիզմի մեքենային պիտի մատակարարվեր միլիոնավոր տոնն վառելանյութ:

Վորքան ել վոր Ալի Մուրադն անկարող եր լուծել այսպիսի բարդ խնդիրներ, բայց և այնպես անձնական փորձառությամբ համոզված եր, վոր գլխավոր վարպետ Հեյրաթն ու տեխնիկ Պետկան իրենց հաշիվներում մեծ սխալ են արել:

Մի ժամից հետո հանձնաժողովի անդամներն իջան ավտոյից: Նրանք յերեք հոգի եյին: Ալի Մուրադ ամին նրանցից միայն մեկին եր ճանաչում—ինժ. Սեֆեր Ալիբեկովին. իսկ մյուսներին առաջին անգամն եր տեսնում:

Նա հույս ուներ, վոր նորեկ մասնագետները՝ այդ գիտնականները՝ այսոր պիտի հաստատեյին իր կարծիքը, պիտի շարունակվեյին պեղման աշխատանքները:

Ալի Մուրադ ամին քաշեց արգելակը: Ելեկտրական հոսանքով աշխատող ստանոկի մեծ ու փոքր անիվներն սկսեցին շարժվել: Նավթախառն «կանաթ»-ը թելի նման կծկվում եր ստանոկի ցիլինդրի վրա:

Հանձնաժողովի անդամներն ու այդտեղ հավաքված բանվորներն անհամբեր սպասում եյին հորից դուրս յեկող «ժալոնկային»: Վերջինս ոլորվելով, յերկաթե պատի նման, հորից գլուխը բարձրացրեց:

Ալի Մուրադը ստանոկի ղեկն առաջ հրեց: Իսկ մի յերիտասարդ բանվոր, փայտից շինված «կանավը» քաշեց ժալոնկայի տակ: Ժալոնկայի տակ գտնված կափարիչը բացվեց և մեջի նավթախառն, թանձր ցեխը տարածվեց գետնի վրա:

Տեխնիկ Պետկայի կարգադրությամբ մի բանվոր «կանավ»-ից լցրեց մի աման այդ ցեխով և ներկայաց-

րեց յեկող մասնագետներին։ Վերջինները ուշադրությամբ նայում եյին լցված ամանին։ Ամեն մեկը մի բան եր ասում։

Սեֆեր Ալի բեյովը դառնալով դեպի յերկճղանի (չաթալ) մորուք ունեցող և աչքերին պենսնե դրած մեկին՝ ասաց․

— Անդրե՛յ Դիմիտրևիչ, իմ կարծիքով դուք ել իմ ասածս պետք ե հաստատեք, վոր այս հողամասից նավթ սպասելն անոգուտ բան ե։

— Յես վաղուց եմ ասել, վոր նման հասարակ տեղերի համար ծախսեր անելն անտեղի յե։

Այս անգամ Սեֆեր Ալի բեյովը դիմեց մի ուրիշին․

— Ընկ․ Արշակ Իսաևիչ, ձեր կարծիքն ի՞նչ ե։

— Պետք ե փակել հորը․․ Ուրիշ վո՛չինչ․․․

Ալի Մուրադն ե՛լ չկարողացավ համբերել։ Ստանոկի դեկը թողնելով, մոտեցավ․

— Ճիշտ ե, յես կիսագրագետ մի բանվոր եմ,— ասաց նա,—բայց վորպես հին բանվոր, այս գործում իմ փորձառությունս շատ ե։ Յեվ ապա, կանավից մի քիչ ցեխ առնելով, ավելացրեց․

— Տեսնո՞ւմ եք այս հողը, սա նավթ արտադրող հող ե։ Լա՛վ հոտոտեցեք։ Նավթի հոտից մարդու գագաթը տրաքվում ե։ Յես ձեզ հետ մարջ եմ գալիս ինչով ուզում եք, վոր այս հորից նավթ դուրս կգա, այստեղ չատրվան պիտի խփի։

Հանձնաժողովի անդամները սուս ու փուս իրար եյին նայում։

— Շա՛տ չեմ ասում,—ավելացրեց Ալի Մուրադը,— թողեք 5—6 մետրի չափ ել փորենք, հետո կտեսնեք։ Յես նավթի հողը վո՛չ թե հոտից, այլ հողիցն եմ ճանաչում։

— Հիմար-հիմար խոսելը քեզ ե մնացե՞լ,—ասաց գլխավոր վարպետ Հեյրաթը բարկանալով,—քո խելքը ի՞նչ ե կտրում, ի՞նչ ուսում ունես, վոր յեկել ես մեզ խորհուրդ տալու։

Արշակ Իսաևիչը միջամտեց․

— Իհարկե, ասաց նա,— ընկեր Ալի Մուրադը, վորպես հին բանվոր, իր կարծիքն հայտնելու իրավունք ունի։ Մենք, մասնագետներս, բանվորների կողմից արված բոլոր առաջադրությունները պետք ե վոր հաշվի առնենք, նրանցից ոգտվենք։

Ապա մոտեցավ Ալի Մուրադին և ձեռքը նրա ուսին դնելով, ասաց․

— Գիտե՞ս փորված ամեն մի մետրի համար ինչքա՞ն փող ու աշխատանք ե վատնվում։ Հենց այս բոպեյիս այստեղ 6—7 հոգի յեն աշխատում։ Ամեն մեկը ռոճիկ ե ստանում, բանվորական ժամեր ե վատնում։ Բացի այդ բոլորից, աշխատանքի ընթացքում ահագին քանակությամբ նյութեղեն ե փչանում։ Իսկ այդ բոլոր ծախսերը, աշխատանքի վատնումը այսպիսի անհուսալի, ապարդյուն տեղի համար բոլորովին զուր ե ու անտեղի։

— Յես բոլորից հետ մարջ կգամ, վոր այստեղից նավթ կստացվի,—պնդում եր Ալի Մուրադն իր ասածները։ Յերկու ամիս աշխատել ենք, թողեք մի որ ել ավելի աշխատենք․․․

— Քանի՞ մետր ե փորված․—հարցրեց Անդրեյ Դիմիտրիևիչը գլխավոր վարպետ Հեյրաթից։

— Հենց հիմա փորում ենք 459-րդ մետրը,—պատասխանեց գլխավոր վարպետը։

— 459 մե՞տր․․․ հարցրեց Արշակ Իսաևիչը զարմացած։ Գուցե սխալվո՞ւմ եք։ Անպայման պետք ե չափել։

— Այո՛, այո՛, պետք ե չափել,—պահանջեց նաև Անդրեյ Դիմիտրիևիչը։

Տեխնիկ Պետկան, հորի խորությունը չափելու համար, Ալի Մուրադի ստանոկի վրա փաթաթված «կանաթ»-ը աչքի անցկացրեց։ Նրանով հորի խորությունը չափելուց հետո հայտնեց, վոր, իբր թե, փորված ե «628» մետր։

Ալի Մուրադը միջամտեց․

— Յեթե դուք,—ասաց նա,— ամեն ինչ չափում եք

այս ձևով, ապա ուրեմն պարզ է, վոր ձեր կարծիքը սխալ է հորի մասին:

— Քո կարծիքով ինչքա՞ն պետք է լինի: Վո՞նց պետք է անել,—հարցրեց Սեֆեր Ալի բեյովը:

— Թե վո՞նց պետք է անել՝ ես այդ չգիտեմ: Միայն ես այն գիտեմ, վոր իմ ստանոկի «կանաթի» երկարությունը 350 մետր է: Նշանակում է, վոր հորի խորությունը 300 մետրից ավելի չի լինի:

Ինժեներները սսռել, մնացել էին: Նրանք սառույցի վրա կանգնած հորթերի նման, իրար էին մտիկ անում:

— Վնաս չունի: Նորից կչափենք,—ասաց Արշակ Իսաևիչը:

— Դե՛, դուք այլևս այստեղ գործ չունեք,—ասաց Սեֆեր Ալի բեյովը բանվորներին: Գնացեք հանքի շրջակայքում թափված երկաթի կտորները հավաքեցեք:

Ընդամենն անցել էր կես ժամ:

Ալի Մուրադն էլ, թեև մյուս բանվորների հետ միասին դուրս էր եկել վիշկայից ու գնացել երկաթի կտորներ հավաքելու, բայց հեռվից հետևում էր հանձնաժողովի անդամներին, շարունակ լսում էր նրանց խոսակցությունը: Նրանք ինչ վոր մի բանի մասին խոսում էին, բայց վոչ մի եզրակացության չէին հանգում:

Եվ այսպես, հանձնաժողովի անդամները, հորի մասին առանց մի միջոցի դիմելու, թողին գնացին:

Մնացին միայն Սեֆեր Ալի բեյովն ու տեխնիկ Պետկան:

Քիչ հետո Սեֆեր Ալի բեյովը կանչելով Ալի Մուրադին, հարցրեց.

— Ռոճիկդ քեզ ու երեխաներիդ լրիվ բավարարո՞ւմ է:

— Վո՞նց թե...—հարցրեց Ալի Մուրադը զարմացած:

— Ուզում եմ ասել, թե ստացած ռոճիկով լավ կարո՞ղ ես ապրել:

— Լավ, թե վատ, մի կերպ յոլա ենք գնում:

— Համենայն դեպս, լավ չեք ապրում:

— Այնքան էլ վատ չեմ ապրում:

— Ալի Մուրադ ամի,—ավելացրեց Սեֆեր Ալի բեյովը լուրջ կերպով,—իզուր ես այդպես խոսում: Այժմ դուք, բանվորներդ, այնքան էլ լավ չեք ապրում: Ռոճիկներդ ձեզ չի բավարարում: Դրա համար էլ ուզում եմ քեզ մի քիչ ոգնած լինեմ:

Ասաց Սեֆեր Ալի բեյովն ու, Ալի Մուրադի բռան մեջ մի քանի հատ երեքանոց չերվոնեցներ դնելով, ավելացրեց.

— Առ այս 150 ռ.... մի քանի որից հետո էլի ինձնից կստանաս 300 ռուբլի:

Ալի Մուրադ ամին մնաց շվարած: Նա հարցրեց.

— Այս փողը իմ վո՞ր աշխատանքի համար եք տալիս ինձ:

— Վո՛չ մի աշխատանքի: Միայն իմ դիտեցածս ուրիշներին չհայտնես...գաղտնապահ եղիր... Դու ամեն ժամանակ մեզ հետ պիտի աշխատես...բացի քո ռոճիկից, մեզնից յուրաքանչյուր փակված հորի համար կստանաս նաև այսպիսի վարձատրություն:

Սեֆեր Ալի բեյովն ավելացրեց նմանապես, վոր այս հորն այսօրվանից ե՛լ չպիտի աշխատի, պետք է փակել: Բոլորովին մի ուրիշ տեղ պետք է նոր հոր փորել, ուր պետք է աշխատի նաև Ալի Մուրադը:

Ալի Մուրադը Սեֆեր Ալի Բեյովի այդօրինակ վերաբերմունքից վոչինչ չկարողացավ հասկանալ: Սակայն զգաց, վոր մեջտեղն ինչ վոր մի «բան» կա, և այդ «բանով» շատ հետաքրքրվեց: Նա մտաբերեց, վոր 58-րդ հանքատեղի ստանոկները հենց այդ «բան»-ի պատճառով պահվեցին հորի մեջ: 93-րդ հորի հետազոտման աշխատանքները մինչև վերջ չշարունակվեցին: Մեջտեղ մի «բան» կար, վոր 300 մետրի չափ փորված հորի մասին գիտամար ցույց տվին, վոր իբր թե 459 մետր է փորված: Եվ, վորպեսզի գաղտնիքը չիմացվի, իրեն «աշխատավարձ» է տրվում, այն էլ վորքա՞ն—ուղիղ 450 ռուբլի...

Քիչ հետո, Պետկան հանդիպեց Ալի Մուրադին և նրան շնորհավորելուց հետո, ժպտալով հասկացրեց, որ՝ «Եթե նրանց հետ ձեռք—ձեռքի տված աշխատի, շարունակ նման «յուղոտ վարձատրություն կստանա»:

Պետկայի այդ խոսքերը և կաշառքի անվան տակ Սեֆեր Ալի բեյովի տված չերվոնեցները նիզակի նման խոցում եյին Ալի Մուրադ ամու սիրտը: Նա, ճիշտ է, փողի կարիք ուներ, սակայն կաշառքի ձևով բռան մեջ դրված չերվոնեցները զզվանք եյին պատճառում յերկար տարիներ հալալ քրտինքի աշխատանքով ապրած այդ բանվորին:

Ամբողջ յերկու օր մտածելուց հետո, Ալի Մուրադը չկարողացավ վորոշել իր անելիքը: Ո՞ւմ պետք է դիմեր: Մտածում եր դիմել Ազերնեֆթի վարչությանը և հայտնել գլխավոր ինժեներներին կատարված «ծանոթ խնդրի» մասին: Բայց բանը նրանումն եր, վոր «չաթալ» մորուքավոր ինժեներն էլ այնտեղից եր յեկել: Հավատալ նրան, հավատալ նաև Ազերնեֆթում աշխատողներին՝ դժվար եր Ալի Մուրադի համար:

Վերջ ի վերջո վորոշեց դիմել Հանքագործների Արհմիության աշխատակից, իր վաղեմի ծանոթ ընկեր Վասիլին և խոսել նրա հետ «ծանոթ» խնդրի մասին:

Տասն օրից հետո Լենռայոնի «Պրոլետարական հեղափոխության» անվան կուլտուրայի տան մեծ դահլիճում հրավիրված եր ընդհանուր ժողով: Այդտեղ եյին նաև Վասիլին ու Ալի Մուրադ ամին:

Ճանապարհին Վասիլին Ալի Մուրադին մի լավ լուր եր հայտնել:

— Մինչև վոր ինձ մի բան չխոստանաս, քեզ չեմ ասի, ասել եր նա:

— Լա՛վ: Ասա, կտամ:

— «Ծանոթները» հենց այս բոպեյին, բոլորն էլ նստած են բանտում:

— Բոլո՞րն էլ:

— Այո՛, բոլորն էլ:

— Վարպետ Հեյբա՞թն ու Պետկա՞ն էլ նրանց հետ են:

— Դեռ ուրիշներ էլ:

— Հարկավոր է այդ շան վորդիների քյոֆը կտրել:

— Բանվոր Ալի Մուրադը, վորն ընդունակ է ամեն բան անել, ե՛դ էլ կանի:

Ժողովը մեծ խանդավառությամբ ծափահա՛րեց Ալի Մուրադին:

Երկար խոսակցություններից հետո հանվեց հետևյալ վորոշումը.—

— «Ի պատասխան վնասարարների, նավթի հնգամյա պլանը կատարել 2 1/2 տարում...»

ԷՆՎԵՐ ՌՈՒԼՎԻ

ՄԻ ՆԱՎԱՍՏՈՒ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայրամուտ: Արևի վերջին ճառագայթները ծովը ներկել են յերփներանգ գույներով: Հողմակոծ ալիքներն իրար վրա կուտակվելով՝ փախչում են ափերից: Հեռվից ծովը—մինչև կապույտ յերկնքի վերջը—անտակ ու անսահման է: Հորիզոնը ներկված է ծովի ատլասի նման գորշագույն ներկերով:

Մեր նավը համարձակ կերպով պատռում է ծովի լայնարձակ կուրծքը: Նստած եմ ծածկված վերնահարկում—պարանների վրա:

Չորս կողմս թափված են տեսակ-տեսակ շղթաներ, անուններն ինձ անհայտ մեծ ու փոքր յերկաթե ու տախտակե գործիքներ:

Բաց վերնահարկում լսվում են նավաստիների (մատրոս) գիլ ու բարձր խոսակցություններն ու ինչ վոր մեկի կողմից ցած ձայնով տրվող հրամանները: Նավապետն, իր բնակարանի խայտաբղետ ապակուց կախված վանդակի առջևը կանգնած՝ դիտում է հեռուները: Յերևում են նրա սրատես աչքերը, յերկար քիթը, ուռած կարմիր շրթունքներն ու վոսկե ատամները:

Նավաստիները վերև, բաց վերնահարկում, շղթաները գնգրտացնելով՝ ինչ-վոր մի բան են քանդում: Ծովի մեջ, հեռվից, մի փոքրիկ կետի չափ յերևացող փարոսը հետզհետե մոտիկանալով մեծանում է: Իսկ նրա յետևից վերջալույսի թանձր ստվերները՝ ծովի ալիքներին քսվելով՝ դեպի մեզ էյին գալիս:

Ահա՛ մեկը՝ նստած փարոսի յերկաթե կրծքին: Մեր նավն հետզհետե մոտենում է փարոսին: Վերջինիս վրա նստած մարդը՝ քիթն հաղիվ նշմարվող մակույկի մեջ իրեն գցելով՝ դեպի մեզ է գալիս: Սա՝ լայն կրծքով, թևերը քշտած, լայն շալվարավոր ու լայն կապույտ օ-

ձիք ունեցող մի մարդ է: Կապիտանի հրամանով շարժվող ծանր շղթան (խարիսխը) գնգրտալով կախվում է բաց ծովի մեջ: Նավի արագությունն հետզհետե նվազում և մի րոպեյում մակույկն առնվում է նավի մեջ: Վերև, բաց վերնահարկում, լսվում է բարձրացնող մեքենայի բութ ու խուպոտ ձայնը:

***

Փարոսը մնացել է հեռո՜ւ հորիզոնի վրա: Ծովն յերկյուղալի յե: Վերևի վերնահարկում մեկն յերգում է ռուսական յեղանակով, վորի դողդողջուն ձայնը յերբեմն մարում, յերբեմն ծանր տնքոցներով ու մելամաղձոտ յելևեջներով, կարծես, աղերսում, մի բան է խնդրում:

Ինձ մոտ, միևնույն շարքի վրա գտնվող մեքենայական բաժնից, սև ածուխի նման մեկը դուրս յելնելով, դեպի ինձ է գալիս: Նրա յերեսն ու ձեռքերը թաթախված են սև մազութով: Առանց ոձիքի վերնաշապիկը դրած էր լայն շալվարի տակ, իսկ վրայից՝ գոտու փոխարեն՝ կապած էր մի կեղտոտ պարան:

Ծիծաղելու փոխարեն, նրա շրթունքները կծկըվում, աչքերը պսպղում էյին: Զարմանալի՜ բան... Այստեղ-նավում—վոչ վոք չի ծիծաղում, կարծես թե՝ ծիծաղելը սրանց համար արգելված է. բոլորն էլ ծովի նման մռայլ են ու յերկյուղալի: Նույնիսկ դիմացս կանգնած հնոցապանն էլ ծիծաղելը մոռացել է: Նա միայն կծկում է շրթունքներն ու փայլեցնում աչքերը:

Մոտենում է նա ինձ և, առանց բարևելու, պապիրոս է խնդրում, և յես հանում, տալիս եմ: Պապիրոսը ծխելուց հետո, նայում է ինձ և դեմքը ծամռում: Յես լսում եմ նրա հաստ ձայնը:

— Աղջկան տեսա՞ր: Նա՛ յե, նա՛... Սրա նմանները մեզ մոտ չկան,— ասում է նա հանկարծակի:

— Ի՞նչ աղջիկ,—հարցնում եմ:

— Չտեսա՞ր: Փարոսի վրա նստած կապույտ աչքերով աղջկան չտեսա՞ր:

Հիշում եմ: Յես միայն նրա կապույտ ոձիքով հագուստն եյի տեսել: Նրա աչքերը՝ ոձիքի կապույտ գույնի հետ միանալով՝ կորցրել եյին իրենց բնական գույնը: Յես նրա շարժվածքների մեջ տեսել եյի միայն չտեսնված համարձակություն, վորը ծածկում եր նրա կին լինելու հանգամանքը: Մարդու աչքերն ամեն բան մեկեն չեն կարող տեսնել: Ի՞նչ անել...

Խոսակցիս հանկարծ բռնկվող ձայնը կամաց-կամաց նվաղեց: Նա՝ պապիրոս ծխելով՝ աչքերը հառեց ծովի վրա: Իսկ յես, ավելի մտերմանալու համար, ուզում եմ խոսել նրա հետ:

— Ընկե՛ր,—ասում եմ,— այդպիսի կանայք նավում շատ կա՞ն:

Նա, կարծես, չլսեց իմ հարցը: Լռեց: Ապա դառնալով՝ ասաց.

— Չե՛, այդպիսիները չկան, բայց՝ կանայք շատ են:

Յես զգացի, թե՝ ի՛նչպես իմ առաջ կանգնած ածխի նման մարդը հանկարծ քամվեց, փոքրացավ: Նա անթարթ նայում եր ծովի կատաղի ալիքներին: Մատների արանքում բռնած պապիրոսը մարել եր: Անշարժ եր նա՝ արձանի նման: Դեմքի վրա, աչքի փոխարեն, յերկու խոռոչներն եյին յերևում: Նա ուներ ճակատի հետ մի ուղիղ գիծ կազմող քիթ, սև, բարակ բեղեր և փոքրիկ ու հաստ շրթունքներ:

Յես նախ՝ նայեցի նրան և հետո՝ ծովին: Ալեկոծ ծովը վոռնում եր խավարի գրկում: Արևն, իր վերջին ճառագայթները հավաքելով՝ հանձնած եր ծովն անսահման խավարի աղետաբեր ձեռքերին: Ծովի՝ նման յերկյուղալի տեսքն ե՛լ ավելի յե շատացնում մարդկանց սրտերի վիշտն ու սարսափը: Բայց, առջևս կանգնած այս յերիտասարդը ծովից ել բարձր ե: Նա ծովից ե ծնվել, ծովին ե պատկանում, ուստի և՝ ծովի նման մռայլ ե ու հպարտ:

Բաց պատշգամբից դարձյալ լսվեց մի խորունկ ձայն, վորը հետո մի աղաչանքի փոխվեց: Գթություն հայցող այս ձայնն յերբեք նման չեր ծովի անգութ ձայնին:

Հանկարծ լսվեց մի ուժեղ ապտակի ձայն: Մոտս կանգնած մարդը շուռ յեկավ և հենարանից ծռվելով՝ նայեց վերև—պատշգամբին: Քիչ առաջ, այնտեղից լսվող աղերսալի ձայնի փոխարեն, լսվում եյին ուժեղ խոսակցություն ու գոռգոռոցներ:

— Խփի՛ր, Դաշա, խփի՛ր այդ շանը: Ա՛յնպես խփիր, վոր այլևս նա քաշ չգա քո յետևից,—ասաց մեկը պոռալով:

Վերևից լսվեց մի խորունկ պատասխան, վորից վոչինչ չեր կարելի հասկանալ:

***

Խոսակցիս հետ, մինչև կես գիշեր, մնացի պատըշգամբում:

Յես իմացա նրա անունը—Ալմաս էր: Աշխատում էր այդ նավի մեքենայական բաժնում. իսկ այժմ՝ արձակուրդով վերադառնում եր իրենց տուն: Նա նստած եր իմ առաջ—պարանների կույտի վրա: Դեմքը սև եր ածխի նման ու անշարժ: Ի՞նչ եր մտածում նա,—դժվար եր հասկանալ: Մռայլ եր նա, ինչպես թանձր խավարով պատած ծովը: Սոսկալի՜ տեսարան...

— Ընկե՛ր Ալմաս, ծովի մասին գիտեցածդ պատմե՞ս ինձ:

Նա այլայլվեց ու շուռ գալով՝ նայեց ծովին: Կարծես այս ձայնը ծովից եր գալիս: Յեվ ապա, շրթունքները ծամծմելով՝ ինչ վոր մի տաք բան կուլ տվեց ու ֆսֆսալով ասաց՝

— Ծովի մասին չե՛, սիրո մասին ուզում եմ՝ կպատմեմ մի կարճ բան:

Չհակառակվեցի: Նա սկսեց.

— Ծովում մեծացողները, ծովի արհավիրքներն ու

դառնությունները ճաշակողները թռչունի նման ազատ ու համարձակ կլինեն, գառնո՛ւկս: Իսկական կյանքն էլ ազատության մեջ է: Ազատություն չեղած տեղում՝ թշվառությունը գործ չունի: Ե՛ն էլ ասեմ, վոր մարդս՝ ամենից առաջ՝ իր սրտին պետք է հավատա, վորովհետև սիրտը մարդուս ամեն բանից էլ մոտ է գտնվում: Յեթե հնարավոր լինի սրտի ուզածը կատարել, այն ժամանակ, գառնո՛ւկս, կյանքը՝ անկարողության ծովից հեռանալով՝ վոսկու կփոխվի: Այո՛, գառնուկս, այդպես է կյանքի իսկական նշանակությունը:

Յես մի կնոջ եմ ճանաչում: Նա իսկական մարմնացումն եր ծովային կրթության: Յերկար տարիներ ապրելով ծովի վրա՝ ծանոթացել եր ծովի վրա ճամբորդելու բոլոր գիտելիքներին, ուսումնասիրել եր բոլոր գաղտնիքները, ապրել եր ծովի արհավրալից կյանքն ու ճաշակել նրա բոլոր դառնությունները: Նա սպանեց մի կապիտանի ոգնականի և գցեց ծովը: Սարսափելի՛ կին եր:

Նրանք յերկու քույրեր եյին: Մեկը նրանցից՝ ամենատարիքոտը ծովում մեռավ: Կապիտանի ոգնականին ծով գցողն էլ հենց նա յեր: Իսկ մյուսը քիչ առաջ փարոս նորոգող Դաշյան է: Առաջինի անունը Մանիա յեր:

Մանիա՛, գեղեցի՛կ Մանիա... Ծովը նրանց շատ քիչ, հազվագյուտ դեպքերում կարող է հասցնել, նման այն մայրերի, վորոնք յերկա՛ր տարիներից հետո՝ հազիվ կարողանում են զավակ ունենալ...

Այո՛: Այդ ժամանակ մենք միևնույն նավի մեջ եյինք աշխատում: Դաշյան են ժամանակ փոքր եր, ապրում եր քրոջ մոտ: Մեծ քույրը գեղեցիկ եր կրակի նման: Բոլորն էլ սիրում եյին նրան— Մանիային, նրա ամեն մի խոսքը լսում, կատարում եյին:

Մի անգամ, կայմի փայտերի արանքում գտնված թելերը կտրվեցին: Վո՛չ-վոք չեր համարձակվում մագլցել դեպի սյունը և թելերը միացներ: Կապիտանն ում վոր հրամայում եր, նա վախվխելով բարձրանում

եր մի քանի աստիճան և հետո վախից դունատված՝ յետ եր դառնում: Հանկարծ Մանիան թռավ տեղից և բազեյի նման՝ մագլցելով բարձրացավ կայմի փայտի գագաթը:

Սարսափից մեր աչքերը մթնել եյին: Ավելի քան սարսափեցնում եր մեզ փայտի ճթճթոցը: Բայց արդեն Մանիան թելերը միացրել, սկսել եր վայր իջնել: Ճանապարհի կեսին կայմի փայտը կոտրվեց: Առանց իրեն կորցնելու, Մանիան ձեռքի գործիքներով իրեն գցեց ծովը:

Այդ րոպեները սարսափելի եյին, գառնո՛ւկս... Ալեկոծված ծովի մեջ, հագուստով, վոտնամաններով և յերկաթե գործիքներով լող տալ ու դուրս գալ անհնարին է:

Յես ինձ գցեցի ծովն ու Մանիային դուրս բերի:

Եդ որվանից Մանիան մտերմացավ ինձ հետ և այդ մտերմությունը վերջացավ մեր ամուսնությամբ: Մենք պարզ կերպով միացրինք մեր բնակարանները: Յես... փոխվեցի, իսկ նա մնաց առաջվա Մանիան: Յես միշտ ուզում եյի, վոր նա մենակ իմս լիներ: Իսկ Մանիան, ընդհակառակը, ուզած ժամանակ, բացի ինձանից՝ ուրիշների հետ էլ եր ման գալիս, նրանց հետ մի անկողնում քնում:

Սկզբներում, ճիշտն ասած, խանդում եյի, իսկ հետո՝ վարժվեցի... Յե՛ս էլ սովորեցի...

Մանիայի այդ ընթացքը տեսնելով՝ ինձ ամենից դժբաղդն եյի համարում: Յերբե՛ք չեյի կարող յերևակայել, վոր իմ սիրած և ամեն բանից ինձ մոտիկ հաշված մեկը՝ նման անառակ ընթացք պետք է ունենար:

Մի անգամ Մանիան ուշ յեկավ քնելու: Լուռ ու մունջ պառկեց ինձ մոտ: Տխուր եր նա և վշտոտ:

— Ո՞ւր եյիր, Մա՛նիա,—հարցրի յես վրդովված:

Կարմրեց նա ու փաթաթվելով ինձ՝ լաց յեղավ:

Յես, այդ գիշերը, մարդկանց, կյանքի և սիրո մասին այդ «ծովային թռչունից» շա՛տ բան սովորեցի:

Այո՛, նա յեկավ ու ինձ մոտ պառկեց, լաց յեղավ:

Հետո՝ աչքերը սրբելով՝ վշտաբեկ ձայնով սկսեց պատմել սրտում կուտակված գանգատը:

Նա ասում եր՝

«—Ալմա՛ս, դու անխելք ես, անխելքներից անխելքը: Դուք տղամարդիկդ կանանց համարում եք ձեր սեփական ապրանքը: Դուք նրանց հետ վարվում եք ըստ ձեր ցանկության: Տղամարդկանց մեջ դեպի կինն ունեցած ցանկությունը չուտով խանդի յե փոխվում: Հենց դա յե պատճառը, վոր բոլոր ընկերները ինձանից իրենց բաժինն են սպասում: Անելանելի դրություն ե ստեղծված ինձ համար: Վոչ-վոք կյանքի և մարդկային ըղացմունքի պահանջը չի կարող հասկանալ: Վոչ-վոք չի հասկանում և կամ չի ուզում հասկանալ թե՝ կնոջ սրտում ի՞նչ կա, ի՞նչ ե մտածում և ո՞ւմ ե սիրում նա...

«Դուք ինձ համարում եք պոռնիկ մի կին, բայց՝ յես ինձ նամուսով եմ համարում: Յես իմ պարտականությունները կատարում եմ ճիշտ ու անթերի կերպով: Վախն ի՞նչ բան ե—չգիտեմ: Մարդկանց հետ նամուսով վարվելն ել չեմ մոռանում... Բայց դուք կնոջ պատիվը փնտռում եք կնոջ դեպի տղամարդն ունեցած հավատարմության մեջ:

«Սա վաղուցվա բան ե, դառնո՛ւկս, վաղուցվա...

«Մի յերեխա ունեցանք: Ջնայած իմ՝ դեպի յերեխան ունեցած հայրական չատ իրավունքին՝ յես նրան չատ եյի սիրում: Յերեխան յերեք տարեկան եր, յերբ մայրը մեռավ: Նա՝ առանց մորը՝ խեղադարվում եր: Չկարողացա պահել: Թռավ գնաց: Կեսը ինձ չպատկանող այդ յերեխայի հետ միասին, սրտիս կեսն ել, եղովանից փչացավ, կորավ»:

Ալմասը լռեց: Նրա ժանդոտած յերկաթի նմանող դեմքը առաջվա պես մնաց լուռ ու անշարժ:

Յես նայեցի ծովին: Ծովն ահռելի յեր: Նրա դոռալիքները, կարծես, յերգում եյին ծովում մեծացած, ծովի արհավրալից կյանքն ապրած ու այնտեղ իրենց կյանքին հրաժեշտ տված Մանիաների տեսած ու անցկացրած պատահարների մասին: Մտքումս չեյի կարող

պատկերացնել այդ տարօրինակ կնոջ պատկերը: Նրա աննման, գեղեցիկ դեմքը, կարծես, ամեն րոպե, կենդանանում եր Ալմասի աչքերի առաջ և ապա՝ կորչում, անհետանում եր: Յեվ յես, բացի գեղեցիկ Մանիայի կարմիր գլխաշորից, Ալմասի ազդեցության տակ չորացած նրա (Մանիայի) գեղեցիկ պատկերը չեյի կարողանում վերհիշել:

— Մանիան ինչո՞ւ մեռավ,—հարցրի յես:

— Ինչո՞ւ մեռավ,— կրկնեց Ալմասը գլուխը թափահարելով:

Յերեկոյան մթության մեջ չեյի կարող տեսնել Ալմասի դեմքը: Բայց զգում եյի, վոր նրա՝ արձանի նման անշարժ մարմինը զողում եր գիշերային մթության մեջ դեղերող ճիվաղի նման:

Կապիտանի բնակարանի լույս յերևում եր: Պատըշգամբում լսվում եյին հերթապահ նավաստիների խոսակցության ձայները: Ծովայինների բնակարանում տիրում եր խոր լռություն: Միայն, մեզ մոտիկ պատուհանից լսվում եր մեկի ծանր խռխռոցը:

— Ինչո՞ւ համար մեռա՞վ,—դարձյալ կրկնեց Ալմասը: Յերկա՛ր պատմություն ե, դառնո՛ւկս, յերկա՛ր ժամանակ ե հարկավոր: Իսկ յեթե չես ուզում քնել, յես կպատմեմ, դու ել լսի՛ր:

Յես խնդրեցի: Նա սկսեց.

«—Մանկությունից մեծացել եմ ծովի վրա: Մեր տունը գտնվում եր հարավում, ամենախորն ընկած ծովափնյա մի քաղաքի անկյունում: Յես այստեղ՝ մինչև 15 տարեկան հասակս անգործ ման եմ յեկել: Վերջապես, մեկի օգնությամբ՝ կարողացա մտնել այս նավում աշխատելու: Մայրս էդ տարիներին մեռավ: Նա մեր յերկրի կարոտն եր քաշում, մենակ եր:

«Մերոնք բնիկ Ղարաբաղի գավառից են: Սրանից մոտավորապես 30 տարի առաջ՝ Հայրս աշխատելու և յեդել Ցեվլախի կայարանում:

«Մի օր, ճանապարհից անցնող ղարաբաղցի մի բեկ բռնությամբ հափշտակում ե սրա աղջիկն ու իրեն

կին դարձնում: Մի օրվա սիրուց հետո, բեկը թողնում է ինձ—քո առաջ կանգնած այս մարդուն—մորս արգանդում և գնում:

«Հետո հայրս, ինչ-ինչ պատճառների հետևանքով՝ գնում է Պարսկաստան ու սկսում է պարապել ձկնորսությամբ:

«Շատ չի անցնում, հայրս մեռնում է այնտեղ: Իմ՝ նավը մտնելուց հետո, մա՛յրս էլ է մեռնում և յես մնում եմ բոլորովին մենակ: Այն օրվանից ծովը դառնում է ինձ թե՛ հայր և թե՛ մայր:

«Ադրբեջանում ազգային իշխանություն հաստատվելու ժամանակ, յես աշխատում եյի «Մուսավաթ» կոչված կես ռազմական և կես առևտրական նավում: Այդ նավումն եյին նաև այս յերկու քույրերը և Ավազ անունով մի շատ խելոք ու հասկացող ծովային (моряк,

«Մենք ապրում եյինք իրարու հետ չափազանց մտերմորեն ու ընկերաբար: Կատարում եյինք մեզ հանձնարարված բոլոր գործերը և մի կերպ պահում եյինք մեր գոյությունը:

«Պետք է ասել, որ նավի մնացած աշխատողներն ապրում եյին սոսկալի թշվառության մեջ: Սրանք՝ հեղափոխությունից խրտնող, կյանքի արժեքը չհասկացող, իրենց մայրերի միակ մեծացրած զավակներն եյին, վորոնք առավոտվանից մինչև իրիկուն՝ դումար եյին խաղում, իրար հայհոյում, ծիծաղում, կանանց հետ հիմարություններ անում:

«Մեր նավում, բացի Դաշայից և Մաշայից, կային նաև մի քանի լվացք անող, կերակուր յեփող կանայք:

«Մենք՝ յերեք ընկերներս, մինչև իրիկուն աշխատում եյինք միասին, մի տեղ ապրում՝ համերաշխ ու ընկերաբար: Լինելով միևնույն կազմակերպության անդամներ՝ հարկավոր էր մեզ զբաղվել նաև կազմակերպչական ուրիշ աշխատանքներով:

«Մա՛նր, շատ ծա՛նր օրեր եյինք ապրում,—շարունակեց Ալմասն իր պատմությունը: Նման ծանր օրերին հարկավոր էր՝ թեկուզ ի՛նչ գնով լիներ՝ ընկերների մեջ

դաստիարակչական աշխատանք տանել, կենտրոնից ստացված պահանջները կյանքում կիրառել: Բայց մեր ուժերը քիչ եյին: Աշխատում եյինք մյուս ավելի խելոք ու բանիմաց ընկերներին քաշել մեր կողմը, հասկացնել նրանց օրվա խնդիրները, մեր հաճախակի յելույթներով համոզել և նրանց ուշադրությունը կենտրոնացնել օրվա հրատապ խնդիրների վրա...

«Մի արևոտ առավոտ էր: Մեր նավը Կասպից ծովի հարավային ափերից Բաքու յեր գալիս:

Մեզ կարգադրված էր մաքրել նավի պատշգամբը: Մեզ մոտ կանգնած էր նաև կապիտանի ոգնականը, հարբած դրության մեջ: Ներքևից լսվեցին լացի ձայներ: Ցերեխաներից մեկը հայհոյում էր... Բոլորս էլ բարկացած եյինք ու սոված: Ցերեկ առավոտյանից, մի կտոր սոխ ու հացից բացի, վոչինչ չեյինք կերած: Կապիտանի ոգնականը, պատշգամբի շրջանակին կռթնած միշտ հայհոյում, բղավում էր:

«Ներքև, մի կին լաց էր լինում խոր ու աղեկտուր ձայնով: Կապիտանի ոգնականը, լացի ձայնին հետևելով՝ իջավ նկուղն ու այնտեղի ծառայողներից մեկի—Զինա անունով մի աղջկա՝ մազերից քաշ տալով՝ բերեց պատշգամբը:

«—Ցերեկ նկուղից յերեք պարկ ճոթեղեն գողացողին, ծախողին գտա՛,— բղավեց ոգնականը կատաղած ձայնով և սկսեց ծեծել աղջկան:

«Զինայի և կապիտանի ոգնականի միջև վաղուց ավերված էր (նրանք իրարու հետ չունեյին): Մի ամիս առաջ Զինան անհայտ մի զավակ էր ծնել: Զինան հավատացնում էր, որ ծնած յերեխան պատկանում է կապիտանի ոգնականին: Իսկ վերջինս ուրանում էր: Ցեվ, վերջապես, ոգնականը նեղն ընկնելով՝ մեր աչքի առաջ յերեխայի խլեց մոր գրկից և գցեց ծովը:

«Ոգնականի կողմից՝ խեղճ աղջկա վրա գցած շառը պղտորել էր մեր արյունը:

Զինան յերեխայի նման լաց էր լինում: Ոգնականը՝

նրա թևերից բռնած՝ քաշ էր տալիս հատակի վրա և ուժեղ կերպով ծեծում:

«Այստեղ Մանխան հանկարծ ցատկեց իր տեղից և ձեռքում գտնված փայտով մի այնպիսի ուժեղ հարված հասցրեց օգնականի գլխին, որ՝ վերջինս՝ գլորվելով ընկավ գետին:

«Մենք բոլորս էլ սառել մնացել էինք: Ընկավ նաև կապիտանը: Մանխան անվերջ բղավում էր.

«—Էսքան էլ բռնություն կլինի՞, որ դուք անում եք այս ծծմայր կնոջ գլխին,—ասում էր Մանխան: Կարծում եք մենք չտեսա՞նք, թե՝ ինչպես յերեկ ինքը (օգնականը) գողացավ ճոթեղենով լիքը պարկերն ու մակույկով փախցրեց: Հիմա էլ՝ խեղճ կնոջ վրա չառ է գցում...

«Բոլորս էլ մնացել էինք զարմացած: Մեր միջից լսվում էին սպառնական ձայներ: Հայհոյանքի ու հարահրոցի ձայներն իրար էին խառնված:

«Մանխայի բերնից կարծես կրակ էր թափվում:

«—Դուք,— ասում էր նա ներկա յեղող բանվորներին.— ամիսներով, հաց ու սոխից բացի, ուրիշ ոչինչ չեք կարող ճարել, գիշեր-ցերեկ աշխատում եք, հիմա էլ կանգնած՝ անասունի պես մտիկ եք անում: Էլ ի՞նչին եք սպասում: Սպասում եք, որ այս անգութ գազանները գթան ձեզ վրա՞: Մինչև յե՞րբ պետք է վզներդ ծռեք նավում գտնվող սպաների, կապիտանի և նրանց օգնականների ցույց տված բռնությունների առաջ: Տեսնո՞ւմ եք, որ ձեր աչքի առաջ, իզուր տեղը, սպանում են ձեր քրոջը, իսկ դուք կանգնած, դիտում եք...

«—Մե՛նք խորտակեցինք ցարական իշխանությունը,—շարունակում էր Մանխան,—իսկ հիմա ուզում ենք մի նոր ցարական կառավարություն ստեղծե՞լ: Բա՛ ո՞ւր մնացին մեր կրած տանջանքները: Առանց դղալու, ձեզ տվել եք արբեցողության ու հիմարության: Այս բոլորն, ինչ որ կատարվում է, վախկոտության արդյունք է: Դուք չեք հավատում ձեր ուժին: Իսկ յեթե մի անգամ ցույց տաք ձեր բռունցքները, կտեսնեք՝ թե այս գա-

զանները ինչպե՛ս կփախչեն ձեր ձեռքից: Բայց դուք, գուցե, հեգնո՞ւմ եք: Բայց, տեսե՛ք, առաջին քայլն յե՛ս եմ գցում:

«Ասաց Մանխան ու ձեռքի փայտը յերկրորդ անգամ իջեցրեց գետնի վրա փռված օգնականի գագաթին: Ապա՝ նրան քաշ տալով՝ գցեց ծովը:

«Սոսկալի օրեր էին, գառնուկս,—ավելացրեց Ալմասը հառաչելով: Մեր մեջ կային նաև այնպիսիներ, որոնք չէին ախորժում նման դեպքերից:

«Կապիտանը հրամայեց բանտարկել Մանխային: Բայց՝ ո՞վ կհամարձակեր նրան մոտենալ: Բոլորն էլ վախենում էին Մանխայից: Նրա աչքերը վառվում էին կրակի նման:

«Իրիկնապահին յեկավ կապիտանի յերկրորդ օգնականն ու ինձ ու Ավագին կանչեց կապիտանի մոտ:

«Խնդիրը պարզ էր: Ուզում էին մեզ կաշառել:

«Գնացինք: Կապիտանի բնակարանում կային մի քանի ուրիշ սպաներ: Նախ՝ մեր փորերը կշտացրին և հետո՝ մեր գրպանները...

«Սկսվեց խոսակցությունը: Մի շարք մանր-մունր հարցերին պատասխանելուց հետո՝ անցանք իրենց հետաքրքրող հարցերին:

«Պարզվեց, որ նրանք ուզում են նահանջել: Վորովհետև Բաքուն անցել էր արդեն բոլշևիկների ձեռքը: Ազգային կառավարությունը դուրս էր յեկել այնտեղից:

«Մենք դիտմամբ հայտնեցինք, որ ամեն բանով համաձայնվում ենք իրենց հետ: Մեր նպատակն էր՝ զինաթափ անել նրանց և հետո՝ բանտարկել: Սպասում էինք հարմար րոպեի:

«Նրանք սկսեցին իրենց խոսակցությունը:

«—Կոնստանտին Իվանիչ, ասում եք, որ՝ «յես Ղարաբաղում մեծ կալվածքներ ունեմ», բա. չե՞ք մտածում ձեզ մի ժառանգորդ նշանակել,—հարցրեց մի կարճահասակ սպա՝ աչքերը ճպճպացնելով:

— Կոնստանդին Իվանիչ, մի՞թե դուք հարազատ

ժառանգ չունեք,—հարցրեց կապիտանի յերկրորդ օգնականը՝ հարգալից ձայնով:

«Մի րոպե սենյակում խոր լռություն տիրեց: Դուրսը լուռ եր ու մութ:

«— Ժառանգ ունենամ–չունենամ՝ միևնույն է,— պատասխանեց Կոնստանտին Իվանիչը,—այս սոված յերեխաները*) մասնավոր հող կամ կալվա՞ծք կթողնեն: Գլուխը՝ քար...Լավ, վոր մեր կյանքն անվնաս թողեց:

«Նորից լռություն:

«Այս անգամ՝ ղարձյալ կարճահասակ սպան հարցրեց.

«—Ներեցե՛ք, կապիտան, այդ հարստությունը ձեր ծնողներից է մնացե՞լ, թե դուք եք վաստկել:

«—Ձե՛, հոգիս,—պատասխանեց կապիտանը ծիծաղելով ու փորը շփելով,—ծնողներիցս վո՛չ մի ժառանգություն չի մնացել, բացի՝ չոր ու ցամաք բեկ տիտղոսից: Այդ բոլորն հե՛տո յեմ աշխատել: Մինչև 1910 թվականը՝ Ղարաբաղում վայելում եյի այդ բեկ կոչումը: Հետո՝ գնացի Օդեսսա նավավարություն սովորելու: Այնտեղից էլ անցա Մոսկվա: Մոսկվայում մի ծանոթ ռուս ունեյի: Հենց հիմիկվա անունը նա դրեց, և յես են օրվանից մնացի Կոնստանտին Իվանիչ: Իմ հին անունս ինձ դուր չեր գալիս:

«Բոլորն էլ հետաքրքրությամբ լսում եյին Կոնստանտին Իվանիչին: Հետաքրքրությամբ և նույնիսկ զարմանքով լսողներից մեկն էլ յես եյի:

«—Ձեր առաջվա անունն ի՞նչպես եր,—հարցրի յես:

«—Մարդան բեկ,—պատասխանեց Կոնստանտին Իվանիչը ցած ձայնով: Ինձ այն կողմերը բոլորն էլ ճանաչում են: Ցեվլախից մինչև Գորիս, փոքրիկ յերեխաներից էլ իմ անունս հարցնես, բոլորն էլ կճանաչեն:

«Զափազանց լուրջ եյի պահում ինձ: Լուրջ եր նաև իմ ընկեր Ավագը:

«—Ներեցե՛ք, Կոնստանտին Իվանիչ: Դուք սրանից,

*) Խոսքը բոլշևիկների մասին է: Մ. Թ.

մոտավորապես 20 տարի առաջ, Ցեվլախում մի աղջկա առե՞լ եյիք,—հարցրի յես յերկրորդ անգամ:

«— Չգիտեմ՝ ո՞ւմ մասին է խոսքը,—պատասխանեց նա ցած ձայնով:—Շա՛տ աղջիկներ եմ առել ու բաց թողել:

«Նրանք հարբած եյին: Տաք-տաք խոսում եյին:

«Յես ու ընկերս դուրս յելանք: Հայտնեցի ընկերներիս, վոր Բաքվում արդեն կործանվել է մուսավաթական իշխանությունը և հաստատվել է բոլշևիկների կառավարությունը:

«Մենք անհամբեր սպասում եյինք, վոր մոտ օրերում հեղափոխություն պիտի ծագեր:

«Մի քանի զինված ընկերների հետ՝ մտանք կապիտանի բնակարանը:

«—Ձեռքերը վե՛ր,—ձայն տվի յես:

«Բոլորն էլ վախից քարացել–մնացել եյին: Ամենքին էլ գտանք և տարանք վերնահարկի պատշգամբը:

«Նավում արտասովոր դրություն եր: Գերիները շրջապատված եյին նավի բանվորներով: Ավագը մի համառոտ ճառով հայտնեց մուսավաթական իշխանության կործանվելու և նրանց (նավում յեղած) ներկայացուցիչների բանտարկվելու մասին:

«Խոսելու հերթն իմս եր: Դառնալով դեպի Կոնստանտին Իվանիչ կոչված Մարդան բեկին՝ ասացի.

«—Ձեր առած ու բաց թողած կանանցից մեկն էլ իմ մայրս է յեղել: Յես էլ քո վորդին եմ: Մորս նման պատիվն ու իրավունքները վոտնահարված թշվառ կանանց ու աղջիկների, ինձ նման թշվառ վորբերի վրեժը քեզնից պիտի առնեմ: Պատրա՛ստ կաց, Մարդան բեկ: Քո ծնած վորդին քեզ պիտի սպանի:

«Այդ միջոցին, սպաների կանգնած տեղից բացված մի գնդակ դիպավ կողքիս կանգնած Մանիային և նրան վայր գլորեց:

«Սոսկալի յեր բանվորների զայրույթը: Ուզում եյին բոլոր բռնված գերիներին ինքնադատաստանի յեն–

թարկել։ Ավազը չթողեց։ Գերիները բանտարկվեցին։ Իսկ յես, բաց անելով Մանիայի կարմիր արյունով ներկված գլխաշորը՝ կախեցի կայմի փայտից ու կանչեցի.

«—Թո՛ղ մեր նավի մեջ առաջացած հեղափոխությունը հայտարարենք Մանիայի արյունով»։

***

Ալմասը վերջացրեց իր պատմությունը։ Յես չեյի կարողանում տեսնել նրա ուժեղ մարմինն ու անշարժ հայացքները, վորոնք ծածկված եյին գիշերային թանձր խավարով։ Գլուխս պարանների կույտին հենած՝ խորասուզվել եյի ծանր մտածմունքների մեջ։

Նավում, ամբողջ օրվա ընթացքում տեսածս դեմքերը, լսած դեպքերը գիշերվա խավարի ծոցում հալվել—չքացել եյին։

Միմիայն՝ Մանիայի կարմիր արյունով ներկված ալ-դրոշը ծփում եր ծովի հեռավոր հորիզոնների վրա...

Յես տեսնում եմ այդ դրոշակը։ Տե՛ս, տե՛ս։ Ծածանվում ե նա վո՛չ թե միայն ծովի, այլև ամբողջ աշխարհի կրծքի վրա։

ՑԱՆԿ

ԵՋ

Պետհրատի կողմից . . . 5

Ս. Հյուսեյին
Ներքին գործերի մինիստրը . . . 9
Մի փողոցի պատմություն . . . 33
Հաջի Սուլթանը . . . 45
«Ուզունդարա» . . . 54

Սուլեյման Ռուստամ
Կինը . . . 72

Հ. Մեհդի
Խավեր . . . 76
Հայ աղջիկը . . . 86
Հիսուներկու . . . 96

Ռաֆիլի
Գյուղ և քաղաք . . . 108
Գիշեր և փողոց . . . 113

Նազարլի
Կահրամանի ռոմանը . . . 119
Դավաճանը . . . 128
Կարաթել . . . 151

Սամադ Վուրղուն
Սարիայի մահը . . . 162
Արևելքի դուռը . . . 164
Պատրաստ կացեք . . . 165

Շիրին Դիլլի
«Տղամարդ Թյուքեղբանը» . . . 166

Մ. Մյուշֆիկ
26 կոմունարները . . . 179
Կովկաս . . . 183
Կուլտարշավ . . . 184

Աբուլ Հասան
Յերգիչը . . . 186
Սպանեց . . . 193
Սոֆի . . . 213

Ռ. Ռիզա
Երկու աշխարհ 224
Զոհրաբ Ալիեվ
Մոլլա Հայդարի Թալիսմանը 226
Արտելից դուրս եր յեկել 228
Ի. Միրզա
Երկու գիշեր 234
Մ. Սուլթան
Աղիզ 337
«Երկնքի մարդը» 245
Մ. Ռահիմ
Երբ թնդանոթները խոսում եյին 250
Վերադարձը 252
Ապրիլի հարվածը 254
Հաջի Աղիմզադա
№ 101 հանքատեղին 259
Ենվեր Ուլվի
Մի նավաստու հիշողություններ 268

ՀՀ Ազգային գրադարան
NL0376213

73640